Ս(47.5ՀՀ)
Օ-45

Բ. Ս. ՕՏԱՆՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Б. С. ОГАНДЖАНЯН

ИЗ ИСТОРИИ СОЮЗА РАБОЧЕГО КЛАССА И КРЕСТЬЯНСТВА АРМЕНИИ (1953—1965 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)
О - 45

Բ. Ս. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1953—1965 թթ.)

419



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

Փաստական նյութերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս Հայկական ՍՍՀ տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում 1950—1956 թվականներին տեղի ունեցած փոփոխությունները։

Լուսաբանվում է բանվոր դասակարգի գործունեությունը կոմունիստական հասարակության կառուցման բնագավառում։

Գրքում բացահայտվում են բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի առանձնահատկությունները նոր փուլում (Հայկական ՍՍՀ օրինակով)։

ԱՌԱՋԱԲԱՆ

Կապիտալիստական հասարակարգի տապալման և սոցիալիստական հեղափոխության հաղթանակի գործում վիթխարի է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի դերը։ Այդ դաշինքի տեսական հիմքերը դրեցին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Հետագայում այն զարգացրեց Վ. Ի. Լենինը, որն այդ դաշինքի մեջ տեսնում էր կալվածատերերի ու բուրժուազիայի տիրապետության տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման բարձրագույն սկզբունքը, պրոլետարիատի քաղաքական իշխանության հիմքերի հիմքը։

Ներկա աշխատությունը նվիրված է սոցիալիզմի վերջնական կառուցման ավարտման և կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում Հայաստանի բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի պատմությանը։ Ինչպես նշեց ՍՄԿԿ 23-րդ համագումարը, այդ ժամանակամիջոցում խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման գործում։ «Ամրապնդվեցին սովետական հասարակության քաղաքական հիմքերը՝ բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը, բազմազգ Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը, բոլոր աշխատավորների համախմբվածությունը ՍՄԿԿ շուրջը։ Բարձրացավ կուսակցության քաղաքական ու կազմակերպչական դերը սովետական հասարակության մեջ։ Կուսակցության մեջ ամուր կերպով հաստատվեցին կուսակցական կյանքի լենինյան սկզբունքները»[1]։

---

[1] Սովետական Միության կոմունիստական կուսակցության 23-րդ համագումարի բանաձևը, էջ 12—13։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը անձնվեր աշխատանքով հաջողությամբ կատարեց ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը։ 23-րդ համագումարը գոհունակությամբ նշեց, որ յոթնամյա պլանի կատարման շնորհիվ կարևոր քայլ արվեց կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին։ Երկրի արտադրողական ուժերի զարգացման հետ միաժամանակ կատարելագործվեցին սոցիալիստական հասարակական հարաբերությունները, էլ ավելի ամրապնդվեցին սոցիալիստական սեփականության համաժողովրդական և կոլտնտեսային-կոոպերատիվ ձևերը։

Ամփոփելով յոթնամյա պլանի արդյունքները, 23-րդ համագումարն արձանագրեց, որ աճեցին երկրի հանրային հարստությունը և աշխատավորների եկամուտները, բարձրացվեց աշխատավարձը, ընդլայնվեցին արտադրության կառավարման դեմոկրատական հիմունքները։ Յոթնամյակի տարիներին երկրի բանվորների թիվը ավելացավ 14 միլիոնով։ Բանվորների թվի նման աճը վկայում է մեր երկրի ինդուստրացման արագ տեմպերի, բանվոր դասակարգի դերի հետագա բարձրացման և սովետական կարգերի կայունության մասին։ Այժմ երկրի բնակչության 75,4 տոկոսը բանվորներն ու ծառայողներն են իրենց ընտանիքներով, իսկ 24,6 տոկոսը՝ կոլտնտեսային գյուղացիությունը։

Համագումարն արձանագրեց, որ կուսակցության կոչով երկրի բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան կուսակցության քսանմեկերորդ համագումարից հետո լայն մրցություն ծավալելով սովետական էկոնոմիկայի նոր հուժկու վերելքի համար, էլ ավելի ամրապնդեցին երկրի տնտեսական հզորությունը։ Համագումարը միաժամանակ բացահայտեց գյուղատնտեսության ղեկավարման թերությունները և նշելով, որ յոթնամյա պլանն այդ բնագավառում թերակատարվել է, մշակեց զարգացման ուղիներ։

Սովետական պատմաբանները որոշ աշխատանք են կատարել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի

պատմության ստեղծման ճանապարհին։ Պատմագիտության այդ կարևոր պրոբլեմի մասին քիչ թե շատ արժեքավոր ուսումնասիրություններ ստեղծվեցին միայն վերջին տարիներին։ Մինչ այդ դաշինքի հարցերը պատմաբանները հատուկ ուսումնասիրության առարկա չէին դարձնում։ Բացի այդ, դաշինքին նվիրված գրականությունն ըստ սովետական հասարակության պատմության էտապների խիստ անհամաչափ է բաշխված։ Այսպես, մի ժամանակահատվածի մասին ստեղծվել է համեմատաբար հարուստ գրականություն, իսկ մյուսի մասին՝ քիչ բան կա։ Դա, իհարկե, լուրջ թերություն է։ Մինչև այժմ դաշինքին նվիրված ուսումնասիրություններից առանձնապես կարևոր են՝ «Բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի զարգացումը ՍՍՀՄ-ում»[1], «Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդումը գյուղատնտեսության շեշտակի վերելքի ժամանակաշրջանում»[2] և «Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ժամանակակից էտապում»[3] հոդվածների ժողովածուները։ Այդ երեք ժողովածուներն էլ, իհարկե, կարևոր նշանակություն ունեն, բայց պետք է նշել, որ վերջին երկու ժողովածուների հեղինակները փորձ չեն անում բացահայտելու իրենց ընդգրկած ժամանակաշրջանում գյուղատնտեսության ղեկավարման թերությունները։

Հայտնի է, որ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմության պարբերացումը համընկնում է սովետական հասարակության պատմության պարբերացմանը։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև դաշինքը անխզելիորեն կապված է այդ հասարակության պատմության հետ, կազմում է նրա անբաժանելի մասը։ Ելնելով դրանից դաշին-

---

[1] «Развитие союза рабочего класса и крестьянства СССР», М., 1958.

[2] «Укрепление союза рабочего класса и крестьянства в период крутого подъема сельского хозяйства», М., 1961.

[3] «Союз рабочего класса и крестьянства на современном этапе», М., 1962.

քին նվիրված գրականությունը կարելի է, մոտավորապես, խմբավորել հետևյալ կերպ.

ա) Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարի ժամանակաշրջան։ Դաշինքի այդ ժամանակաշրջանի պատմությանն են նվիրված Պ. Ն. Սոբոլևի աշխատությունները[4], որոնց մեջ հեղինակը վերլուծում է Հոկտեմբերյան հեղափոխության նախօրեին և հեղափոխության ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցության ստրատեգիան և տակտիկան՝ գյուղացիությանը պրոլետարիատի շուրջը համախմբելու գործում։

Մեկ ուրիշ հեղինակ, Ա. Ֆ. Դանիլևսկին, իր բրոշյուրում[5] շոշափում է դաշինքի հետ կապված միայն մեկ հարց՝ լենինյան դեկրետը հողի մասին։ Բայց նա գիտական շրջանառության մեջ է դնում արխիվային հարուստ նյութ, որի հիման վրա ցույց է տալիս դեկրետի նշանակությունը դաշինքի ամրապնդման գործում։ Հեղինակն ընդգծում է, որ հողի մասին դեկրետը հնարավորություն տվեց ստեղծելու ռազմա-քաղաքական դաշինք, ապահովեց հաղթանակը քաղաքացիական կռիվների ժամանակ։ Ա. Ֆ. Դանիլևսկու բրոշյուրը նույնպես գիտական արժեքավոր ուսումնասիրություն է։

Վ. Ս. Զայցևի մենագրությունը[6] ընդգրկում է Հոկտեմբերյան հեղափոխության և մասամբ քաղաքացիական պատերազմների ժամանակաշրջանը, մինչև կուսակցության 8-րդ համագումարը (1919 թվականի մարտ)։ Հատկապես հաջող է տրված այդ տարիներին կուսակցական շինարարությունը, գյուղում բանվորական բրիգադների գործունեությունը, նրանց դերը աշխատավոր գյուղացիությանը պրոլետարիատի շուրջը համախմբելու գործում։ Համեմատաբար ընդհանուր գրույթներով է տրված միջակի ժամանակավոր չեզոքացումից նրա հետ դաշինքի անցնելու հարցերը, ցավոք, դրանք չեն հիմնավորված փաստական նյութերով։ Հեղինակը բավարարվում է միայն ՌԿ(բ)Կ 8-րդ համագումարի որոշումների շարադրանքով և ցույց չի տալիս դրանց կենսագործումը։

Բանվոր դասակարգի և գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքի հարցերին է նվիրված նաև Ի. Պրուսանովի աշխատությունը[7], ուր հաջող է տրված բանվոր դասակարգի և գյուղացիության միջև ռազմա-քաղաքական դաշինքի նշանակությունը քաղաքացիական կռիվներում հաղթանակն ապահովելու համար։

Քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանում բանվոր դասակարգի և գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքի հարցերին է նվիրված Վ. Ի. Անդրիանովի, Բ. Դ. Ալտշտուլլերի, Պ. Մ. Վոլկովի կոլեկտիվ աշխատությունը[8]. փաստական նյութերի հիման վրա հեղինակները ցույց են տալիս կուսակցության 8-րդ համագումարի որոշումների իրականացումը գյուղում։ Հարուստ փաստեր են բերվում Յարոսլավլի նահանգից։

Ուկրաինայի արխիվային նյութերի հիման վրա Ի. Ի. Շևչենկոն[9] հանդամանորեն քննարկում է, թե դենիկինյան հրոսակների դեմ սովետական ուժերի հարձակման ժամանակ ինչպես էր ամրապնդվում ուկրաինական բանվորների և գյուղացիների դաշինքը։ Հաջող է տրված միջակ գյուղացու

---

4 **П. Н. Соболев,** Беднейшее крестьянство — союзник пролетариата в Октябрьской революции. Госполитиздат, 1958, его же, Союз рабочего класса и беднейшего крестьянства — основная общественная сила Великой Октябрьской социалистической революции. См. Сборник «Развитие союза рабочего класса и крестьянства в СССР».

5 **А. Ф. Данилевский,** Ленинский Декрет о земле и его роль в укреплении союза рабочего класса и крестьянства. М., 1956.

6 **В. С. Зайцев,** Политика партии большевиков по отношению к крестьянству в период установления и укрепления Советской власти, М., 1963.

7 **И. Прусанов,** КПСС — организатор военно-политического союза рабочих и крестьян, М., 1956.

8 **В. И. Андрианов, Б. Д. Альтштуллер, П. М. Волков,** Союз рабочих и крестьян в первые годы Советской власти, Ярославль, 1958.

9 **И. И. Шевченко,** Коммунистическая партия Украины в борьбе за укрепление союза рабочих и крестьян в 1919—1920 гг., Киев, 1958.

հետ դաշինքի առանձնահատկությունները և դժվարությունները Ուկրաինայում, ընդգծվում է անկուսակցական գյուղացիական կոնֆերանսների նշանակությունը միջակին պրոլետարիատի կողմը գրավելու գործում, մանրամասնորեն խոսվում է գյուղական կուսակցական կազմակերպությունների կատարած աշխատանքների մասին։ Թուրքմենստանում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի առանձնահատկություններին է նվիրված Ե. Ն. Կուպրիկովայի աշխատությունը[10]։

Լույս են տեսել նաև մի շարք աշխատություններ, որոնք վերաբերում են մեր երկրի զարգացման հետագա ժամանակաշրջանի՝ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին։ Ուշադրության արժանի է Ա. Պ. Մալչանովի «Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1924—1925 թթ)» մենագրությունը[11]։

Գյուղում տարվող աշխատանքի մասին կուսակցության 13-րդ համագումարի (1924 թվականի մայիս) որոշման ոգով, հեղինակը ցույց է տալիս դասակարգային նոր տեղաշարժերը գյուղում, սովետների աշխատանքը և այն, թե ինչպես կուսակցությունը ուժեղացրեց քաղաքական աշխատանքը գյուղում, ակտիվացրեց քաղաքի շեֆական օգնությունը, լայն ծավալ ստացան կոոպերացիայի հասարակ ձևերը, ուժեղացվեց սովետների աշխատանքը, ստեղծվեցին չքավորական խմբեր և այլն։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանին է վերաբերում Բ. Ա. Գավրիլովի բրոշյուրը[12]։

[10] **Е. Н. Куприкова,** Союз русского рабочего класса и туркменского трудового дейханства в период Великой Октябрьской социалистической революции и гражданской войны 1917—1920 гг., 1960.

[11] **А. П. Молчанов,** Из истории борьбы за укрепление союза рабочего класса и крестьянства (1924—1925), Киев, 1956.

[12] **Б. А. Гаврилов,** Борьба Коммунистической партии за укрепление союза рабочего класса с крестьянством в период восстановления народного хозяйства (1921—1925), М., 1956.

Այդտեղ հեղինակը ընդգծում է տրոցկիզմի և «բանվորական օպոզիցիայի» դեմ՝ կուսակցության մղած պայքարի շրջանում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման կարևոր խնդիրները, ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի որոշումների վիթխարի նշանակությունը նոր տնտեսական քաղաքականության անցնելիս։ Վեր է հանված լենինյան կոոպերատիվ պլանի նշանակությունը դաշինքի ամրապնդման գործում։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ա. Է. Լիֆշիցի բրոշյուրը[13]։ Սամարայի նահանգի նյութերի հիման վրա հեղինակը հանդամանորեն ցույց է տալիս կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գործունեությունը Մերձվոլգյան շրջաններում սովի և «բանվորական օպոզիցիայի» դեմ պայքարի գործում։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Բելոռուսիայի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հարցերն է լուսաբանում Մ. Ե. Շկլյարի մենագրությունը[14]։

Բելոռուսիայում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հարցին է նվիրված նաև Վ. Ի. Մարտովիցկու աշխատությունը[15]։ Հեղինակը հանդամանորեն ցույց է տալիս Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության գյուղում տարած աշխատանքները, հատկապես 1924 և 1925 թվականներին, տվյալներ են բերվում Բելոռուսիայի կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացման, սովետների աշխատանքների բարելավման, հարկային քաղաքականության կիրառման վերաբերյալ, որոնց շնորհիվ զարգանում էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

[13] **А. Э. Лифшиц,** КПСС в борьбе за укрепление союза рабочих и крестьян в первые годы нэпа (1921—1925 гг.), 1961.

[14] **М. Э. Шкляр,** Борьба Компартии Белоруссии за укрепление союза рабочего класса и крестьянства в восстановительный период (1921—1925 гг.), Минск, 1960.

[15] **В. И. Мартовицкий,** Лозунг партии «лицом к деревне» и его осуществление в СССР, Минск, 1961.

Սովետական հասարակության զարգացման առաջին շրջանում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմության հարցերը բավականին լայն լուսաբանված են սովետական պատմագրության կողմից, սակայն այդ չի կարելի ասել սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ժամանակաշրջանների վերաբերյալ։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման ժամանակաշրջանում դաշինքի զարգացման հարցերին նվիրված Վ. Պ. Դանիլովի հոդվածը[16] պարունակում է հետաքրքիր փաստական նյութ և պատկերացում է տալիս այդ ժամանակաշրջանում դաշինքի առանձնահատկությունների և ձևերի մասին։

Վ. Ն. Կալաշնիկովի գիրքը[17] նվիրված է դաշինքի զարգացմանը 1935—1937 թվականների ժամանակաշրջանում։ Հեղինակը ցույց է տալիս բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդումը ծանր արդյունաբերության զարգացման և կոլտնտեսային կարգի ամրապնդման պայմաններում։ Նա միաժամանակ ընդգծում է գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրության նշանակությունը բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում։

Հայրենական պատերազմի տարիներին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմության մասին հրատարակվել են Է. Ա. Կոգրեմանովի[18] և Ն. Ա. Մանսվետովի[19], Վ. Դ. Կարտավբխի[20], Լ. Լ. Զակարժևսկու[21], Վ. Մ. Ալեքսեևի[22], Ն. Գ. Կարատամմի[23] հոդվածները, 1950-ական թվականներին լույս են տեսել դաշինքին նվիրված Մ. Պ. Կիմի[24], Ա. Մ. Մեդվեդևի[25], Գ. Ե. Գլեզերմանի[26], Ի. Գորիչևի[27] և Ս. Ն. Սոսկինի[28] բրոշյուրները։

Այդ ժամանակաշրջանի դաշինքի հարցերին են նվիրված գիտական աշխատությունների ժողովածուներ, մի քանի հոդվածներ, որոնցից կարևոր ենք համարում նշել Մ. Ս.

---

16 **В. П. Данилов,** Развитие и укрепление союза рабочего класса и крестьянства в годы коллективизации сельского хозяйства (1930—1935), Сборник «Развитие рабочего класса и крестьянства в СССР» М., 1958.

17 **В. Н. Калашников,** Борьба КПСС за укрепление и развитие союза рабочего класса и колхозного крестьянства в период подготовки и введения новой конституции, М., 1959.

18 **Э. А. Когреманов,** Деятельность партии по укреплению союза рабочего класса и колхозного крестьянства в годы Отечественной войны (на материалах Узбекистана). Ученые труды Узбекского Гос. ин-та иностранных языков, вып. V, изд. 1962.

19 **Н. А. Мансветов,** Союз рабочего класса и колхозного крестьянства—одно из важнейших условий победы Советского Союза в Великой Отечественной войне. Сб. «Развитие союза рабочего класса и крестьянства в СССР», М., 1958.

20 **В. Д. Картавых,** Шефство—одна из форм укрепления союза рабочего класса и крестьянства. Сб. научных трудов кафедры общественных наук Ростовского-на-Дону инженерно-строительного института, вып. XII, Ростов-на-Дону, 1957.

21 **Л. Закаржевский,** Союз рабочего класса и трудового крестьянства — неизбежная основа диктатуры пролетариата и строительства коммунизма. Ученые записки Моск. гос. пед. ин-та им. В. И. Ленина, т. 68, вып. 2, 1957.

22 **В. М. Алексеев,** Экономические основы союза рабочего класса и крестьянства на современном этапе. Сб. «Новый этап в развитии колхозного строя», 1959.

23 **Н. Г. Каратамм,** Экономические основы союза рабочего класса и крестьянства на современном этапе. Сб. «Новый этап в развитии колхозного строя», 1959.

24 **М. П. Ким,** Нерушимый союз рабочих и крестьян—великая сила в борьбе за коммунизм, 1957.

25 **А. М. Медведев,** Укрепление союза рабочего класса и колхозного крестьянства на современном этапе, 1959.

26 **Г. Е. Глезерман,** Союз рабочего класса и крестьянства — могучая основа построения коммунизма, 1954.

27 **И. Горичев,** XXI съезд КПСС о всемерном укреплении союза рабочих и крестьян.

28 **С. Н. Соскин,** Союз рабочего класса и колхозного крестьянства великая сила в борьбе за коммунизм, М., 1957.

Սլուցկու[29], Բ. Ա. Լեբեդևի[30], Վ. Ս. Կոկորևի[31], Բ. Պ. Կովալևսկու[32] հոդվածները։ Համեմատաբար ամբողջական է Յու. Վ. Հարությունյանի[33] հոդվածը։ Բայց այդ հոդվածներում բազմակողմանիորեն չեն բացահայտվում դաշինքի զարգացման պատմությունը, գրեթե անտեսվում են բանվոր դասակարգի և գյուղացիության սոցիոլոգիայի, գյուղատնտեսության մեջ գիտության ներդրման, քաղաքի և գյուղի կուլտուրական կապերի ամրապնդման, գյուղի կուլտուրական վերելքի և այլ հարցեր[34]։

Կոմունիստական հասարակություն կառուցելու հզոր զորավիգ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմության վերաբերյալ Հայաստանում առանձին աշխատություն չկա։ Բայց չի կարելի ասել, որ այդ հարցերն ամբողջովին անտեսվել է սովետահայ պատմագիտության կողմից։ Հանրապետության սոցիալիստական շինարարության պատմությանը նվիրված աշխատություններում հեղինակները[35] այս կամ այն չափով անդրադարձել են այդ հարցերին։

* * *

Սույն աշխատությունը գրելիս ղեկավարվել ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններով, Սովետական Միության կոմունիստական կուսակցության համագումարների, Կենտկոմի պլենումների, սովետական կառավարության, ինչպես նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության համագումարների, Հայաստանի կառավարության, Հանրապետության Գերագույն սովետի սեսիաների որոշումներով։

Նկատի ունենալով, որ կուսակցական ու պետական արխիվներում տակավին չեն կենտրոնացված 1953—1965 թվականների ժամանակաշրջանին վերաբերող նյութերը, օգտվել ենք ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի ընթացիկ արխիվներից, տվյալներ ենք վերցրել Հանրապետության գյուղատնտեսության, կուլտուրայի, լուսավորու-

---

29 **М. С. Слуцкий**, Союз рабочего класса и крестьянства—решающая сила развития социалистического общества. Уч. записки Орехово-Зуевского пед. ин-та, т. XII, вып. 2, 1958.

30 **Б. А. Лебедев**, Пути укрепления союза рабочего класса с крестьянством в период завершения строительства социализма и постепенного перехода к коммунизму. Уч. записки Горьковского университета им. Г. И. Лобачевского, вып. 42, 1958.

31 **В. С. Кокорев**, Союз рабочих и крестьян—главная сила строительства коммунизма. Сб. научных работ Саратовского юридического ин-та, посвященных 40 годовщине Великой Октябрьской соц. революции, 1957.

32 **Б. П. Ковалевский**, Борьба КПСС за дальнейшее укрепление союза рабочего класса и крестьянства в современных условиях. Уч. записки Академии общ. наук при ЦК КПСС, вып. 38, изд. 1958.

33 **Ю. В. Арутюнян**, Развитие союза рабочего класса и крестьянства в послевоенный период. Сб. «Развитие союза рабочего класса и крестьянства в СССР», Изд. АН СССР, 1958.

34 *Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմագրությունը հանգամանորեն տրված է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Կ. Վ. Գուսևի* «Освещение в Советской исторической литературе некоторых вопросов укрепления союза рабочего класса и крестьянства на современном этапе», М., 1962 *և* «Историография союза рабочего класса и крестьянства», (см. «Очерки по историографии советского общества», М., 1965 г.) *հոդվածներում, որոնք գիտական արժեքավոր ուսումնասիրություններ են։*

35 *Հայաստանի կոմունիստական կուսակցության ուրվագծերը, Երևան, 1967,* Ա. Մ. Հակոբյան, *Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին (1921—1925 թթ.), Երևան, 1955, նույնի՝ Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին, Երևան, 1962,* Վ. Ներկարարյան, *Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում,* Վ. Ղազախեցյան, *Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում,* Բ. Օհանջանյան, *Հայաստանի կոմունիստական կուսակցությունը գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին (1930—1934 թթ.), Երևան, 1955,* Փ. Նենգյան, *Հայաստանի կոմկուսի պայքարը հանրապետության ինդուստրացման համար, Երևան, 1965,* Ս. Խարմանդարյան, *Սովետական Հայաստանը IV հնգամյակի տարիներին, Երևան, 1959,* Ա. Գրիգորյանց, *Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960։*

թյան և առողջապահության մինիստրությունների, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի «Գյուղատնտեսություն» հանրապետական միավորման, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության կոմիտեի արխիվներից, օգտագործել ենք նաև Հայկական ՍՍՀ վիճակագրական վարչության հրատարակությունները։

Մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը հիմնականում ծառայում էր գյուղատնտեսության վերելքի կազմակերպման գործին։ Ճիշտ է, արդեն 1950 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը հասավ նախապատերազմյան մակարդակին, բայց հաջորդ տարիներին էկոնոմիկայի այդ կարևոր ճյուղի զարգացումը դանդաղեց, որի պատճառով որոշակի դժվարություններ առաջացան բնակչությանը պարեն, իսկ թեթև ու սննդի արդյունաբերությանը՝ հումք մատակարարելու գործում։ Եռպատերազմյան առաջին շրջանում գյուղատնտեսության ֆինանսավորման և նյութա-տեխնիկական ապահովման հնարավորությունները դեռևս սահմանափակ էին։ Կոլտնտեսությունները և սովխոզները դեռևս լրիվ չափով չէին օգտագործում բոլոր հնարավորություններն ու ռեզերվները։ ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումը լայն միջոցներ ձեռնարկեց գյուղատնտեսությանը նյութա-տեխնիկական օգնություն ցույց տալու, կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը ուժեղացնելու նպատակով։

Հայտնի է, որ Սովետական Միությունում սոցիալիստական արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ, 1950 թվականին աճեց 15 անգամ, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ մոտ երկու անգամ։ Մոտավորապես նույն պատկերն էր նաև Սովետական Հայաստանում։ Ճիշտ է, կուսակցության ինդուստրացման քաղաքականությունը անպայմանորեն պետք է հասցներ արդյունաբերության բուռն զարգացմանը, բայց գյուղատնտեսության զարգացումը տակավին ետ էր մնում։ 1950-

419

ական թվականների սկզբներին սոցիալիստական արդյունաբերությունը հասել էր այնպիսի բարձր մակարդակի, որ ավելի նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ուժեղացնելու քաղաքի, բանվոր դասակարգի օգնությունը գյուղին։ Հրամայական պահանջ դարձավ բարձրացնելու գյուղատնտեսության մակարդակը։ Այդ խնդրի լուծման համար ստեղծվել էին անհրաժեշտ նախադրյալներ, որոնք արտահայտվում էին ոչ միայն արդյունաբերության բուռն զարգացմամբ, այլ նաև երկրի միջազգային դրության բարելավմամբ, որը հնարավորություն ստեղծեց գյուղատնտեսության մեջ ներդնել ավելի շատ միջոցներ։ Գյուղատնտեսության վերելքի կազմակերպումը դարձավ բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի գլխավոր նպատակը։

Сектор Всесоюзная АН СССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄԱՍԻՆ

Մշակելով պրոլետարական հեղափոխության, կոմունիստական հասարակարգի կառուցման ծրագիրը, Մարքսը և Էնգելսը միաժամանակ առաջ էին քաշում հեղափոխության ժամանակ պրոլետարիատի օժանդակ ուժերի՝ ռեզերվների հարցը։ Մարքսիզմի կլասիկները ցույց են տվել, որ պրոլետարիատը հաղթանակի կարող է հասնել միայն այն դեպքում, երբ նա իր շուրջը կհամախմբի և իր ղեկավարությամբ պայքարի կտանի ոչ պրոլետարական, բայց աշխատավորական մյուս խավերին, որոնց կազմակերպիչը և ղեկավարը պետք է լինի բանվոր դասակարգը։ Չէ՞ որ եղած մյուս դասակարգերի ու աշխատավորական խավերի համեմատությամբ, պրոլետարիատը ամենահեղափոխական դասակարգն է, որը կապված է անհամեմատ առաջավոր հասարակական արտադրության ձևի հետ և առաջնակարգ դեր է խաղում երկրի արտադրողական ուժերի զարգացման գործում։

Պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունն ունեն պատմական կապեր։ Եթե ֆեոդալական հասարակարգում շահագործման ամբողջ ծանրությունն ընկնում էր գյուղացիության վրա, ապա կապիտալիստական հասարակարգում այն ընկնում է և՛ բանվորների, և՛ գյուղացիների վրա։ Հենց

այդ հանգամանքը՝ շահագործման առկայությունը, հարկադրում է աշխատավորական այդ երկու դասակարգերին միավորել իրենց ուժերը կապիտալի տիրապետության դեմ։ 19-րդ դարում Եվրոպայի բուրժուական հեղափոխություններում պրոլետարիատը հաղթանակի չհասավ հենց այն պատճառով, որ չկարողացավ դաշինք կնքել գյուղացիության հետ։

Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ամրակուռ դաշինքի պայմաններում, պրոլետարական հեղափոխությունը կարող է հաղթանակել անգամ այն դեպքում, երբ երկրում բնակչության մեծ մասը կազմում է գյուղացիությունը։

Այդ կապակցությամբ «Գյուղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում» աշխատության մեջ Ֆ. Էնգելսը գրել է. «Որքան ավելի լինի այն գյուղացիների թիվը, որոնց մենք կգատենք պրոլետարիատի շարքն իսկապես անցնելուց, այնքան ավելի շատ ու ավելի հեշտ տեղի կունենա հասարակական հեղաշրջումը։ Կարիք չկա, որ մենք այդ հեղաշրջմանն սպասենք, երբ կապիտալիստական արտադրությունն ամեն տեղ կգարգանա, հասնելով իր ծայրահեղ հետևություններին, երբ վերջին մանր արհեստավորը և վերջին մանր գյուղացին կապիտալիստական խոշոր արտադրության զոհը կդառնա»[1]։

Մարքսը և Էնգելսը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքում ղեկավար դերը հատկացնում էին պրոլետարիատին։ Պրոլետարիատը սեփականազուրկ լինելով, ամենակազմակերպված դասակարգն է և ունի իր հեղափոխական կուսակցությունը, որը հանդիսանում է բանվոր դասակարգի գիտակից ու ղեկավար ջոկատը, զինված է հասարակության զարգացման, դասակարգային պայքարի ճանաչման օրենքներով։ Պրոլետարիատի կուսակցությունն ուժեղ է և իր կազմակերպվածությամբ, ունի երկաթյա միասնություն և զինված է հեղափոխական թեորիայով։ Մարքսը և Էնգելսը շեշտելով պրոլետարիատի դերը կապիտալիստական հասարակարգի տապալման և կոմունիստական հասարակարգի կառուցման գործում, միաժամանակ ցույց են տվել, որ կապիտալիզմի դեմ մղվող պայքարում պրոլետարիատը մենակ չի լինի, որ բանվոր դասակարգը իր ազատագրման պայքարում անխզելիորեն կապված է աշխատավոր և շահագործող մյուս խավերի հետ։ Ուստի ելնելով պրոլետարիատի և գյուղացիության դասակարգային ընդհանուր շահերից, բանվոր դասակարգի և գյուղացիության ազատագրումը կարող է տեղի ունենալ կապիտալիզմի տիրապետության դեմ, նրանց համատեղ պայքարով։

Կապիտալիստական հասարակարգում, հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին, ավելի էին սրվում հակասությունները աշխատավոր գյուղացիության և նրանց կեղեքող կապիտալիստների, կալվածատերերի միջև։ Խորապես ուսումնասիրելով այդ ժամանակ Ֆրանսիայում ստեղծված դասակարգային հարաբերությունները, Մարքսը ցույց տվեց, որ «...գյուղացիության շահերը այլևս ոչ թե ներդաշնակ են բուրժուազիայի շահերին, կապիտալի հետ, ինչպես Նապոլեոնի ժամանակ էր, այլ անհաշտելիորեն հակասական են։ Այդ պատճառով գյուղացիներն իրենց բնական դաշնակիցն ու առաջնորդն են գտնում քաղաքային պրոլետարիատի մեջ, որը կոչված է բուրժուական կարգը տապալելու»[2]։

19-րդ դարի 50-ական թվականների սկզբներին, Մարքսը եկավ այն եզրակացության, որ գյուղացիական երկրներում պրոլետարական հեղափոխությունը կարող է հաղթանակի հասնել միայն այն դեպքում, երբ նրան օգնության կհասնի գյուղացիական հեղափոխությունը, առանց դրան հեղափոխությունը չի հաղթանակի։ 1856 թվականին Էնգելսին գրած նամակներից մեկում Մարքսը ուղղակի ասում է, որ Գերմանիայում պրոլետարական հեղափոխության բախ-

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Ընտիր երկեր*, հատ. 2-րդ, Երևան, 1950, էջ 562։

2 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Ընտիր երկեր*, հատ. 1, էջ 394, 1950։

տը կախված կլինի գյուղացիական պատերազմի երկրորդ հրատարակությունից։

Մարքսի «Դասակարգային պայքարը Ֆրանսիայում 1848—1850 թվականներին» աշխատության հրատարակման առթիվ 1895 թվականի սկզբներին (այսինքն իր մահվանից մի քանի ամիս առաջ) Էնգելսը նշում էր, որ «...անգամ Ֆրանսիայում սոցիալիստներն ավելի ու ավելի են համոզվում, որ իրենց համար հաստատուն հաղթություն հնարավոր է միայն այն դեպքում, եթե նրանք նախօրոք ժողովրդի լայն մասսային, այսինքն, տվյալ դեպքում գյուղացիներին, իրենց կողմը դրավեն»[3]։

Այսպիսով, Մարքսը և Էնգելսը տվեցին բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական դաշինքի ուսմունքը պրոլետարիատի հեգեմոն դերով, որը հետագայում զարգացրեց Վլադիմիր Իլյիչ Լենինը։

20-րդ դարի սկզբներին սոցիալ-քաղաքական իրադարձությունները պատմականորեն ընթացան այնպես, որ Ռուսաստանը դարձավ աշխարհի հեղափոխության կենտրոնը։ Ահա թե ինչու Ռուսաստանի բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ստեղծմանը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության փառապանծ պատմությունը հանդիսանում է նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ստեղծման, ամրապնդման և կենսագործման համար մղվող պայքարի պատմություն։

Լենինի կուսակցությունը այդ դաշինքի մեջ տեսել է և տեսնում է ցարիզմի և բուրժուազիայի տիրապետության տապալման, սոցիալիստական հասարակարգի կառուցման ավարտման և կոմունիստական հասարակարգի ստեղծման ու ամրապնդման երաշխիքը։

3 Նույն տեղում, էջ 139։

«Ինչ՞ է «ժողովրդի բարեկամները» և ինչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ, Լենինը ցարիզմի տապալման հիմնական պայման է համարում բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական դաշինքի ստեղծումը։

Իր հետագա աշխատություններում Լենինը զարգացրեց ու նոր աստիճանի բարձրացրեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մարքսիստական թեորիան։ Ռուսական առաջին հեղափոխության փոթորկալից օրերին, 1905 թվականի ապրիլին, Լոնդոնում տեղի ունեցավ բոլշևիկների կուսակցության երրորդ համագումարը, որը և մշակեց տակտիկական հարցեր։ Հուլիսին լույս տեսավ Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» աշխատությունը, ուր առաջ է քաշվում բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոն դերը և ինքնակալության տապալման, դեմոկրատական հասարակարգի ստեղծման գործում բանվոր դասակարգի դաշնակիցը համարվում է գյուղացիությունը։

«Պրոլետարիատը մինչև վերջը պետք է կենսագործի դեմոկրատական հեղաշրջումը,— գրում է Լենինը,— իրեն միացնելով գյուղացիության մասսան, որպեսզի ուժով ճզմի ինքնակալության դիմադրությունը և ջլատի բուրժուազիայի անկայունությունը։ Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի, իրեն միացնելով բնակչության կիսապրոլետարական տարրերի մասսան, որպեսզի ուժով կոտրի բուրժուազիայի դիմադրությունը և ջլատի գյուղացիության և մանր բուրժուազիայի անկայունությունը»[4]։

Լենինը ուսումնասիրելով ագրարային հարաբերությունները Ռուսաստանում, տվեց գյուղացիական տնտեսությունների շերտավորման գիտական ընդհանրացումը, որի հիման վրա ռուսական պրոլետարիատը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կողմնորոշվեց ինչպես բուրժուա-դեմոկրատական, այնպես էլ սոցիալիստական հեղա-

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 114։

փոխությունների նախապատրաստման և կենսագործման ժամանակաշրջանում գյուղացիության տարբեր շերտերի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցում։

Ելնելով գյուղացիության շերտավորման ընդհանուր պատկերից, Լենինը կուսակցությանը, պրոլետարիատին դիմեց գյուղացիության նկատմամբ տակտիկական նոր դրույթներով, առաջ քաշեց գյուղացիության նկատմամբ երեք լոզունգներ, որոնք ուղեցույց դարձան կուսակցության ստրատեգիայի երեք էտապների՝ բուրժուա-դեմոկրատական, սոցիալիստական հեղափոխությունների և սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում։

Ղեկավարվելով այդ դրույթներով, բոլշևիկների կուսակցությունը հաղթանակի հասավ ինչպես բուրժուա-դեմոկրատական (փետրվարյան), այնպես էլ սոցիալիստական հեղափոխություններում։

Լենինյան այդ երեք լոզունգները դարձան մեր կուսակցության գործունեության ծրագիրը բուրժուա-դեմոկրատական առաջին հեղափոխությունից մինչև մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը։

Հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի շնորհիվ։ Սոցիալիստական հեղափոխության հենց առաջին օրը՝ սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարում Լենինի առաջարկությամբ ընդունվեց հողի մասին դեկրետը, որով հողը ազգայնացվում և դառնում է համաժողովրդական, պետական սեփականություն։ Հողը տրվեց աշխատավոր գյուղացիությանը։ Այդ փաստաթղթով կենսագործվում էր բոլշևիկների կուսակցության ագրարային ծրագիրը, իրականացվում աշխատավոր գյուղացիության դարավոր իղձերը։

Սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարում բնութագրելով հողի մասին դեկրետը, Լենինը ասում է. «Բանվորա-գյուղացիական հեղափոխական կառավարությունն առաջին հերթին պետք է լուծի հողի հարցը,—մի

հարց, որը կարող է հանգստացնել ու բավարարել գյուղացիական շքավորության հսկայական մասսաներին»[5]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով կոմունիստական կուսակցությունը դարձավ կառավարող կուսակցություն, ստեղծվեց բանվորա-գյուղացիական իշխանություն, պրոլետարիատի դիկտատուրա։ Նոր պայմաններում կուսակցությունը նոր ձևով դրեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, այն վերածվեց պետական դաշինքի, երկրում իշխանությունն անցավ բանվորների և գյուղացիների ձեռքը։

Ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղվող պայքարի ժամանակաշրջանում, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը բոլշևիկների կուսակցության հզոր զենքն էր։ Դաշինքի այդ ձևը ուներ միայն քաղաքական բնույթ, հետապնդում էր միայն քաղաքական նպատակ՝ փոխել գոյություն ունեցող պետական կարգերը։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակով բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ավելի բովանդակալից դարձավ՝ նրա քաղաքական բնույթին ավելացավ տնտեսականը։

Այդ ժամանակ կուսակցությունը առաջ քաշեց քաղաքի և գյուղի տնտեսական համագործակցության սկզբունքը, որը պետք է հասցներ սոցիալիզմի կառուցմանը մեր երկրում։

Ընդհանրացնելով Հոկտեմբերյան հեղափոխության և սովետական պետության առաջին տարիների փորձը, Լենինը 1921 թվականին նշում էր, որ պրոլետարիատի դիկտատուրան նշանակում է քաղաքի և գյուղի միլիոնավոր աշխատավորության դաշինք, որի առաջնահերթ նպատակն է ճնշել նախկինում շահագործող դասակարգերի դիմադրությունը, կառուցել սոցիալիստական հասարակարգ։ Բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական ու քաղաքական համագործակցության ստեղծման ու ամրապնդման գործում վճռական նշանակություն ունեցավ հողի հանձնումը իր իսկական տիրոջը՝ աշխատավոր գյուղացուն։

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 308։

Միայն սոցիալիստական հեղափոխությունն էր, որ ապահովեց հողի ձրիաբար անցումը աշխատավոր գյուղացիությանը, նա էր, որ իրագործեց կալվածատերերի գույքի բռնագրավումը, հողագործության մեջ վարձու բանվորների շահերի լիակատար պաշտպանությունը, վարձու կապիտալիստական սարկության ամբողջ սիստեմի ոչնչացումը։

Գյուղացիների հարցումներին, 1917 թվականի նոյեմբերի 5-ին տված պատասխանում, Լենինը բնութագրելով սովետական կառավարությանը, նշում էր, որ նա «ապահովում է գյուղացիական մասսայի, չքավորագույն գյուղացիների, գյուղացիության մեծամասնության դաշինքը բանվորների հետ՝ ընդդեմ կալվածատերերի, ընդդեմ կապիտալիստների»[6]։

Հողի աղգայնացման դեկրետի կենսագործումը, գյուղում նոր հողաբաժանության անցկացումը, աշխատավոր գյուղացիությանը հողի տեր դարձնելը, չքավորական կոմիտեների ստեղծումը, թշնամաբար ընդունեցին կուլակները և մյուս շահագործող դասակարգերի մնացորդները։ Հողային դեկրետի կենսագործումը սրեց դասակարգային պայքարը գյուղում՝ չքավորների և կուլակների միջև, այդ պայքարում գյուղական չքավորությունը էլ ավելի համախմբվեց իր դաշնակցի՝ քաղաքի բանվոր դասակարգի շուրջը, նա պաշտպան կանգնեց պրոլետարիատի դիկտատուրային, գյուղում պայքար ծավալվեց հանուն կուսակցության առաջադրած խնդիրների կենսագործման։

Քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանում՝ 1918—1920 թվականներին, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը տնտեսական ու քաղաքական բովանդակությունից զատ, ստացավ նաև ռազմական բնույթ։ Չքավորական կոմիտեների գործունեությունը ղեկավարելու համար կոմունիստական կուսակցությունը գյուղ ուղարկեց սոցիալիստական հեղափոխության բովով անցած բանվորների, որոնք խոշոր դեր կատարեցին այնտեղ սովետական կարգերի ամրապնդման գործում։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 356։

Քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանում, երբ օտարերկրյա իմպերիալիստները և սպիտակգվարդիականները ժամանակավորապես գրավում էին այս կամ այն երկրամասը, մարզը, անմիջապես տապալում էին սովետական իշխանությունը և նորից վերականգնում կալվածատերերի և կուլակների իշխանությունը, կեղեքում ու ճնշում էին ոչ միայն չքավոր, այլ նաև միջակ գյուղացուն։ Ահա այդ հանգամանքը վճռականորեն ներգործեց միջակի հոգեբանության վրա։ Քաղաքացիական կռիվների բոցերի մեջ միջակ գյուղացին կողմնորոշվեց դեպի սովետական իշխանությունը, նա մինչ այդ ունեցած չեզոք դիրքից կանգնեց սովետական իշխանության դիրքերի վրա։

Հաշվի առնելով միջակ գյուղացու կյանքում տեղի ունեցած այդ վճռական բեկումը, կոմունիստական կուսակցությունը վերանայեց միջակ գյուղացու չեզոքացման մասին Հոկտեմբերյան հեղափոխության նախօրեին տրված լոզունգը։ Սովետական իշխանությունը փոխեց վերաբերմունքը միջակի նկատմամբ։ Պրոլետարիատը հենվում էր չքավորի վրա, ամուր դաշինք կնքում միջակ գյուղացու հետ՝ ընդդեմ կուլակի և այլ շահագործողների։

Լենինյան այս նոր լոզունգը, բանվոր դասակարգի և միջակ գյուղացիության միջև դաշինքի ստեղծման կարևոր քայլ էր, ստեղծվել էին բոլոր նախադրյալները միջակ գյուղացու նկատմամբ ժամանակավոր չեզոքությունը վերացնելու։

1919 թվականի մարտի 18—23-ը տեղի ունեցավ ՌԿ(բ)Կ 8-րդ համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիր։ Համագումարի բացման ժամանակ արտասանած ճառում Լենինը ասաց. «Մենք սոցիալիստական հեղափոխության այնպիսի ստադիա ենք մտել, երբ հարկավոր է կոնկրետ, մանրամասն մշակել գյուղի աշխատանքի փորձով ստուգված այն հիմնական կանոնները և ցուցումները, որոնցով մենք պետք է ղեկավարվենք, որպեսզի միջակ գյուղացու վերաբերմամբ ամուր դաշինքի հողի վրա կանգնենք, որպեսզի բացառենք այն հաճախակի պատահող շեղումների և

անկանոնությունների հնարավորությունը, որոնք մեզանից պոկում էին միջակ գյուղացուն, այնինչ իրապես մենք, իբրև ղեկավար կոմունիստական կուսակցություն, որ առաջին անգամ ռուս գյուղացուն օգնել ենք մինչև վերջ դեն շպրտելու կալվածատերերի լուծը և նրա համար հիմնել ենք իսկական դեմոկրատիա,—մենք լիովին կարող ենք հույս ունենալ նրա լիակատար վստահության վրա։ Սա այն տիպի խնդիր չէ, որ անխնա, արագ ճնշում և հարձակում է պահանջում։ Սա, անկասկած, ավելի բարդ է։ Բայց ես ինձ թույլ եմ տալիս վստահություն արտահայտել, որ մեկ տարվա նախնական աշխատանքից հետո մենք այս խնդիրը կկարգավորենք»[7]։

Կուսակցության համագումարը բանաձև ընդունեց միջակ գյուղացու նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին և որոշեց, որ բանվոր դասակարգը պետք է դաշնակցի միջակ գյուղացու հետ։

Միջակ գյուղացու հետ դաշինքը վճռական նշանակություն ունեցավ քաղաքացիական կռիվներում սովետական իշխանության հաղթանակի գործում։ 1922 թվականի մարտին «Բեղնոտա» օրաթերթի քառամյա հոբելյանի առթիվ ողջույնում, Լենինը գրում էր, որ սովետական իշխանությունը մեզ տվեց բանվորների և գյուղացիների դաշինք։ «Այդ դաշինքը մեզ հաղթանակ տվեց Կոլչակի և Դենիկինի դեմ, որոնք փորձում էին կապիտալիստների կողմից ուղարկվող օտարերկրյա զորքերի օժանդակությամբ, վերականգնել կալվածատերերի իշխանությունը Ռուսաստանում»[8]։

Քաղաքացիական կռիվներում ստեղծվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի նոր ձև՝ ռազմա-քաղաքական դաշինք, որը իրականացվում էր միայն ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանում։

Խաղաղ շինարարության անցնելուց հետո վերացավ ռազմական կոմունիզմը և դաշինքի այդ ձևը։ 1921 թվականի մարտին կուսակցության X համագումարն ընդունեց Լենինի մշակած նոր տնտեսական քաղաքականությունը՝ Նեպը, որը հանդիսացավ մեր երկրում կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի քաղաքականությունը։ Նեպին անցնելը նշանակում էր քաղաքացիական կռիվների ռազմա-քաղաքական դաշինքի փոխարեն կիրառել դաշինքի նոր ձևը՝ տնտեսական դաշինքը, որը պետք է ծառայեր սոցիալիզմի կառուցմանը։ Նեպն ամրապնդեց բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական և քաղաքական դաշինքը, որի հիման վրա կուսակցությունը առաջ քաշեց «ով-ում»-ի լոզունգը։

ՌԿ(բ)Կ X համագումարը Լենինի ղեկուցման հիման վրա որոշում ընդունեց պարենամասնատումը պարենհարկով փոխարինելու մասին։ Համագումարում Լենինը ուղղակի ասաց. «Մենք գիտենք, որ միայն գյուղացիության հետ համաձայնությունը կարող է փրկել սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում»։ Լենինը հանձնարարում էր կոմունիստներին և բանվորներին, որ «այսպես էլ պետք է ասել բոլոր ժողովներում, ամբողջ մամուլի մեջ»։

Նեպին անցնելու շրջանում կուսակցությունը, սովետական կառավարությունը մտահոգված էին երկրի գյուղացիության բախտով, նրան սոցիալիստական ուղու վրա փոխադրելու հարցով։ Այդ ժամանակ գյուղացիությունը իր սոցիալական դրությամբ լինելով սեփականատեր աշխատավոր դեռևս տատանվում էր բուրժուազիայի ու բանվոր դասակարգի միջև։ Մեր դասակարգային թշնամիներն օգտագործում էին գյուղացու տատանումները, նրանք ուզում էին գրժտեցնել գյուղացիությանը բանվոր դասակարգի հետ։ Բայց նրանք հաջողության չհասան։

Նեպի շրջանում նոր զարգացում ապրեց նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Այդ ժամանակ դաշինքի ամրապնդման միակ հնարավոր միջոցը քաղաքի և գյուղի միջև տնտեսական կապերի ամրապնդումն էր, որը պետք է արտահայտվեր առևտրի միջոցով։

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 161։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 293—294։

Նէպի առաջին շրջանում, երբ բանվոր դասակարգը դեռևս հնարավորություն չուներ տեխնիկայով զինել գյուղատնտեսությունը, քաղաքի և գյուղի միջև զոդման հիմնական ձևը մնում էր առևտուրը և ապրանքաշրջանառությունը։ Այդ ժամանակ առևտուրը հանդիսանում էր զոդման օղակ պետական արդյունաբերության և մասնավոր գյուղացիական տնտեսությունների մեջ։

Բանվոր դասակարգն իր ձեռքում ունենալով պետության հրամանատարական բարձունքները, առևտուրը և ապրանքաշրջանառությունը ծառայեցրեց սոցիալիստական արտադրության ամրապնդմանն ու ծավալմանը։ «Նէպով մենք գիջում արինք գյուղացուն, իբրև առևտրականի, մասնավոր առևտրի սկզբունքին,—գրում է Լենինը,—հենց դրանից էլ բխում է (հակառակ այն բանին, ինչ որ մտածում են) կոոպերացիայի հսկայական նշանակությունը։ Նէպի տիրապետության ժամանակ Ռուսաստանի բնակչությունը բավականաչափ լայն ու խոր կոոպերացման ենթարկելը, էապես ասած, այն բոլորն է, ինչ հարկավոր է մեզ, որովհետև այժմ մենք գտել ենք մասնավոր շահի, մասնավոր առևտրային շահի միացման, այդ շահը պետության միջոցով ստուգելու և վերահսկողության ենթարկելու աստիճանը, նույն շահն ընդհանուր շահերին ենթարկելու աստիճանը, որն առաջ դայթակղության քար էր հանդիսանում շատ ու շատ սոցիալիստների համար»[9]։

Կենսագործելով լենինյան ուսմունքը, կուսակցությունը երկրում ծավալեց գյուղատնտեսության կոոպերացման գործը։ Այդ տեղի էր ունենում դասակարգային սուր պայքարի պայմաններում։ Բանվոր դասակարգը պայքարում էր միջակ և չքավոր գյուղացիներին կուլակային ճնշումից ու աղդեցությունից ազատելու համար։ Կոոպերացիայի միջոցով աշխատավոր գյուղացիներն ստացան վարկ, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ, արդյունաբերական

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 556։

ապրանքներ։ Այս ամենի շնորհիվ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին գյուղում տեղի ունեցան դասակարգային նոր տեղաշարժեր, երկրում աճեց միջակ գյուղացիության թիվը։ Բանվոր դասակարգի դաշինքը միջակ գյուղացիության հետ ամրապնդելու նպատակով, կուսակցությունն ուժեղացրեց կոոպերացիայի, փոխադարձ օգնության դրամարկղների գործունեությունը գյուղում, ծավալեց քաղաքի, արդյունաբերության, բանվոր դասակարգի շեֆական օգնությունը գյուղի նկատմամբ, ստեղծվեցին գյուղին կուլտուրական օգնություն ցույց տվող հասարակական կազմակերպություններ, ընդլայնվեց ընթերցարանների և գրադարանների ցանցը։ Ուժեղացվեց գյուղական սովետների գործունեությունը։

1925 թվականի վերջին հիմնականում ավարտվեց ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Նույն թվականի դեկտեմբերին տեղի ունեցավ ՌԿ(բ)Կ 14-րդ համագումարը, որի ընդունած որոշումներով կուսակցությունը վերցրեց երկրի սոցիալիստական ինդուստրացման կուրս։ «Համագումարը ելնում էր այն բանից,—ասված է բանաձևում,—որ մեր երկիրը, պրոլետարիատի դիկտատուրայի երկիրը, ունի «անհրաժեշտ ամեն բան լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար» (Լենին)[10]։ Համագումարը գրտավ, որ «ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության հաղթանակի համար պայքարը մեր կուսակցության հիմնական խնդիրն է»[11]։

Երկրի ինդուստրացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի նոր ձևը արտադրական զոդումն էր։ Դաշինքի այդ նոր ձևը կենսագործվում էր գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի և կոնտրակտացիայի միջոցով, ինչպես և անմիջականորեն

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 556։

11 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների ու Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, մասն 2-րդ, էջ 246։

բանվորական բրիգադներ էին քաղաքից ուղարկվում գյուղ։ Քաղաքի և գյուղի փոխադարձ հարաբերությունների մեջ, առաջին պլանի վրա դնելով արտադրական զորումը (մեքենաների, հատկապես տրակտորների մատակարարում և այլն), պահպանվում էին նաև առևտուրը և ապրանքափոխանակությունը, որոնք երկրի սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանում լրացնում էին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի նոր ձևը։

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը վրճռական ուժ հանդիսացավ սոցիալիզմի ամբողջ ճակատով հարձակման անցնելուն, գյուղի սոցիալիստական վերակառուցմանը։

1929 թվականի երկրորդ կեսից սովետական գյուղում ստեղծվեց մեծ բեկում։ Երկրում սկսվեց համատարած կոլեկտիվացում, որի հիման վրա լիկվիդացվում էր ամենաբազմամարդ շահագործող դասակարգը՝ գյուղական բուրժուազիան—կուլակությունը։ Համատարած կոլեկտիվացումը նշանակում էր՝ գյուղացիության հիմնական մասսայի արմատական շրջադարձ դեպի սոցիալիզմը, արմատական հեղաշրջում սովետական հողագործության զարգացման մեջ։ Չքավոր և միջակ գանգվածների անցումը համատարած կոլեկտիվացմանը, ամենախոր հեղափոխական հեղաշրջումն էր, այսինքն արտադրական միջոցների նկատմամբ աշխատավոր գյուղացիության մասնավոր սեփականության վերափոխումը հանրային սեփականության, անցումը անհատական մանր արտադրությունից սոցիալիստական կոլեկտիվ խոշոր արտադրության։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման հիմքը հանդիսացավ բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության դաշինքը միջակի հետ՝ ընդդեմ կապիտալիզմի մնացուկների՝ թե քաղաքում և թե գյուղում։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման հաղթանակով և գյուղի կապիտալիստական դասակարգի վերացումով լիովին կենսագործվեց նաև գյուղացիության հարցում լենինյան ստրատեգիական երրորդ լոզունգը։

Ամբողջ ճակատով սոցիալիզմի հարձակման ժամանակաշրջանում ևս բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հիմնական ձևը մնում էր արտադրական զորումը։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումով ավելի բարձրացավ բանվոր դասակարգի ղեկավար դերը սոցիալիստական գյուղատնտեսության նկատմամբ։ Զարգացավ գյուղատնտեսության մեքենայացումը, ստեղծվեցին մեքենա-տրակտորային կայանները, որոնք օգնեցին գյուղատնտեսության արտադրության բարձրացմանը։

Բանվոր դասակարգի օգնությամբ աճեց կոլտնտեսությունների արտադրողականությունը, ամրապնդվեց կարգապահությունը։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի, սոցիալիստական հասարակարգն ամրապնդելու և զարգացնելու ժամանակաշրջանում կուսակցությունը ու սովետական կառավարությունը լայն միջոցառումներ կենսագործեցին կոլտնտեսությունների ամրապնդման ուղղությամբ։

Կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ սոցիալիստական հասարակարգի ակտիվ կառուցող և բանվոր դասակարգի ղեկավարությամբ խոշոր ներդրում կատարեց սոցիալիստական շինարարության մեջ։ Գյուղացիությունը ըստանալով բանվոր դասակարգի օգնությունը, իր հերթին բազմակողմանիորեն օգնում է նրան լուծելու սոցիալիստական շինարարության դժվարագույն խնդիրները։

Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը բարձրացրեց նոր աստիճանի։ Երկրորդ հնգամյակի տարիներին սոցիալիստական արդյունաբերության բուռն աճը արմատական փոփոխություններ մտցրեց քաղաքի և գյուղի տնտեսական կապերի մեջ, ավելի ևս ամրապնդվեցին արտադրական կապերը քաղաքի և գյուղի միջև։

Ապրանքաշրջանառությունից կապիտալիստական տարրերին դուրս մղելով, ոչ միայն արդյունաբերության, այլև գյուղատնտեսության մեջ ապրանքային արտադրությունը

ստացավ նոր սոցիալիստական ձև, փոխվեց առևտրի ձևը քաղաքի և գյուղի միջև, պետական-կոոպերատիվ-կոլտնտեսային առևտուրը դարձավ իշխող:

Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակով, մասնավոր ձեռնարկությունների վերացմամբ փոխվեց բանվոր դասակարգը, նա դարձավ միասնական սոցիալիստական դասակարգ: Նոր դասակարգ դարձավ նաև գյուղացիությունը: Սովետական իշխանության տարիներին ձևավորվեց և ստեղծվեց նոր սոցիալիստական ինտելիգենցիա, որը ամբողջովին կապված է բանվոր դասակարգի և գյուղացիության հետ:

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում խոշոր դեր խաղաց կուլտուրական հեղափոխության ծավալումը քաղաքում և գյուղում: Բանվոր դասակարգի օգնությամբ գյուղում ընդլայնվեց դպրոցական ցանցը, վերացվեց անգրագիտությունը: Այդ հեղափոխությունը օգնեց ամրապնդելու սոցիալիստական քաղաքի և գյուղի միջև գաղափարական միասնությունը, բարձրացվեց կոլտնտեսականի կենսամակարդակը, գյուղը սկսեց էլեկտրիֆիկացվել, ռադիոֆիկացվել, դրվեցին հեռախոսներ, ավելի մեծ չափերով տարածում գտավ գրադարանը, մամուլը, կինոն, թատրոնը, արվեստը, սպորտը, աճեց աշխատավորական զանգվածների ակտիվությունը:

Սովետական հասարակության մեջ տեղի ունեցած այդ խոշոր փոփոխությունները իրենց լիակատար արտահայտությունը գտան Սովետական Միության երկրորդ սահմանադրությունում, որն ընդունվեց 1936 թվականին:

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը կենսագործելով Լենինի ցուցումները, երկիրը հասցրեց սոցիալիզմի հաղթանակին: Բանվոր դասակարգը գյուղացիությանը դուրս բերեց տնտեսական, քաղաքական և կուլտուրական վերելքի լայն ուղի և իր գործունեությամբ կոլտնտեսային գյուղացիության աչքում նվաճեց մեծ հեղինակություն, էլ ավելի ուժեղացրեց իր ազդեցությունը սովետական հասարակարգում:

Շնորհիվ բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության անխախտ դաշինքի, սովետական ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հաջողությամբ ավարտեց սոցիալիզմի կառուցումը մեր երկրում:

1941 թվականի հունիսին ֆաշիստական Գերմանիան ուխտադրուժ հարձակում գործեց սովետական երկրի վրա: Սկսվեց Հայրենական պատերազմը, մի պատերազմ, որը ժողովուրդների պատմության մեջ ամենածանրն էր և մեծ փորձություն էր սոցիալիստական հասարակարգի համար: Պատերազմի տարիներին էլ ավելի ամրապնդվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, այն դարձավ հզոր ուժ ֆաշիզմի դեմ մղվող պայքարում, նա հանդիսացավ սովետական ժողովրդի հաղթանակի հիմնական պայմաններից մեկը:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԻՄՔԵՐԸ

Մեր կուսակցության ծրագիրը ընդհանրացնելով ՍՍՀՄ-ի անցած հարուստ փորձը, տվեց սոցիալիզմից կոմունիզմին անցնելու կոնկրետ ձևերն ու ուղիները: Ուստի հասկանալի է, թե ինչու կարևոր է սովետական ժողովրդի, բանվոր դասակարգի և գյուղացիության սոցիալ-դասակարգային հարցերի գիտական մշակումը:

Համառոտակի անդրադառնանք, թե ինչպիսի հարաբերություններ են ստեղծվում սոցիալիզմի և կոմունիզմի ժամանակ: Սոցիալիզմի ժամանակ դեռևս մնում են բանվորների և գյուղացիների դասակարգերը: Ճիշտ է, այդ երկու դասակարգերն էլ աշխատավորական են, մեկը մյուսին չի շահագործում, բայց քանի որ սոցիալիզմը դասակարգային հասարակություն է, ուստի մարդկանց հարաբերությունների մեջ մնում են դասակարգային տարբերություններ:

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելը բնորոշվում է նրանով, որ վերացվում են բոլոր շահագործող դասակարգերը, ոչնչացվում են մարդու կողմից մարդու շահագործումը ծնող բոլոր հնարավորությունները: Խորը փոփոխություններ են

տեղի ունենում նաև աշխատավորական դասակարգերի և խավերի մեջ։ Սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում արմատական փոփոխությունների ենթարկվեցին գյուղացիական տնտեսությունները և գյուղացիական դասակարգը։ Վերացվեցին մանրգյուղացիական տնտեսությունները և ստեղծվեցին կոոպերատիվ-կոլեկտիվ տնտեսություններ, որոնք իրենց բնույթով հանրային-սոցիալիստական են։ Այդ նշանակում է՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում վերացան բանվոր դասակարգի և գյուղացիության միջև գոյություն ունեցող արմատական դասակարգային հակասությունները և մնացին որոշ տարբերություններ միայն։ Գյուղատնտեսությունը սոցիալիստական ուղու վրա փոխադրել, նշանակում է՝ մասնավոր սեփականատիրական, մանր ապրանքարտադրողների դասակարգից գյուղացիությանը դարձնել սոցիալիզմի ակտիվ կառուցող դասակարգ։

Շահագործողական դասակարգերի լրիվ վերացումը ՍՍՀՄ-ում տեղի ունեցավ 1930-ական թվականների առաջին կեսին, որը և վավերացվեց Սովետական Միության 1936 թվականի սահմանադրությամբ։ Շահագործող դասակարգերի վերացումից հետո էլ շարունակում էին մնալ դասակարգային տարբերություններ, չնայած այն արմատական խորը փոփոխություններին, որոնք տեղի էին ունեցել բանվոր դասակարգի և գյուղացիության կյանքում։ Որպես սոցիալական հատուկ խավ մնաց նաև ինտելիգենցիան, որը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում խորը վերափոխումների ենթարկվեց։

Ստեղծվեց նոր, սոցիալիստական ինտելիգենցիա։

Այսպիսով, սոցիալիզմի ժամանակ դեռևս մնում են դասակարգեր, դասակարգային տարբեր խմբեր, մեկը մյուսից որոշ չափով տարբերվելով հասարակական արտադրության մեջ ունեցած իրենց դերով, արտադրողական միջոցների նկատմամբ ունեցող վերաբերմունքով, հասարակական բարիքներից օգտվելու եղանակով, որով և արտահայտվում են բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության միջև գոյություն ունեցող տարբերությունները։ Բանվոր դասակարգի և գյուղացիության միջև տարբերություններ այժմ գոյություն ունեն միայն տնտեսության սոցիալիստական սիստեմի շրջանակներում և կապված են սոցիալիստական սիստեմի երկու ձևերի՝ պետական և կոոպերատիվ-կոլտնտեսային, որոնք իրենց սոցիալիստական բնույթով միատիպ են։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության միջև կան նաև այլ տարբերություններ, այն, որ կոլտնտեսականներն ունեն անձնական սեփականություն՝ տնամերձ հող, անասուններ, իսկ բանվորներն այդպիսիք չունեն, բանվոր դասակարգն իր աշխատանքի դիմաց ստանում է աշխատավարձ, իսկ կոլտնտեսային գյուղացիությունը՝ մեծ մասամբ բնամթերք, որը իր տնամերձից ստացած մթերքների հետ վաճառքի է հանում։

Չնայած այդ տարբերությունների առկայությանը, սոցիալիստական հասարակությունը առանց դասակարգային հակամարտությունների հասարակություն է, որը զարգանում է աշխատավորական երկու դասակարգերի համագործակցությամբ և օգնությամբ։

1936 թվականի սահմանադրությամբ վերացվեցին քաղաքային և գյուղական բնակչության ընտրական իրավունքներում եղած տարբերությունները. ստեղծվեց սովետական ժողովրդի միասնությունը։

Մարքսիզմ-լենինիզմը լինելով բանվոր դասակարգի գաղափարախոսությունը, դարձավ սովետական ամբողջ ժողովրդի գաղափարախոսությունը, որով առաջնորդվում են և՛ կոլտնտեսային գյուղացիությունը, և՛ ինտելիգենցիան։ Եթե կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում դասակարգային պայքարը համարվում է հասարակության զարգացման շարժիչ ուժերից մեկը, ապա սոցիալիզմի հաղթանակով հասարակության զարգացման շարժիչ ուժը հանդիսանում է բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և սոցիալիստական ինտելիգենցիայի բարեկա-

մական համագործակցությունը։ Կոմունիզմի կառուցման ներկա էտապում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության մերձեցումը դրսևորում է այդ երկու դասակարգերի հասարակական արտադրության մեջ նրանց նյութական շահագրգռվածության բարձրացման ճանապարհով, հասարակական արտադրության մեջ զբաղած իրենց դրությամբ, արտադրական միջոցների նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով, իրենց աշխատանքի բնույթով։

Կոլտնտեսային արտադրությունը աստիճանաբար դառնում է ինդուստրիալ, որով վերանում են մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները։ Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը հասցվում է ինտելիգենցիայի մակարդակին, գյուղի կուլտուր-կենցաղային պայմանները հասցվում են քաղաքի պայմաններին։ Ժողովրդական տնտեսության, այդ թվում նաև գյուղատնտեսության համատարած էլեկտրիֆիկացումը, աշխատատար պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը և ավտոմատացումը, քիմիայի լայնորեն ներդրումը գյուղատնտեսության մեջ, գյուղատնտեսության ինտենսիֆիկացումը, արագացնում են քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունների վերացումը։

Ներկայումս կոլտնտեսությունները, շնորհիվ գյուղատնտեսության բազմակողմանի մեքենայացման, ավելի են մերձենում պետական տնտեսություններին։

Սոցիալիստական այդ երկու սեկտորներում էլ գործում է ժողովրդական տնտեսության միասնական տնտեսական օրենքը, նրանցում տնտեսության զարգացումը ենթարկվում է պլանավորման օրենքին, տնտեսության համաչափ զարգացմանը և սոցիալիզմի ու կոմունիզմի զարգացման մյուս օրենքներին։ Գյուղացիության մերձեցումը բանվոր դասակարգի հետ, կոմունիզմի կառուցման ներկա ժամանակաշրջանում համարվում է օբյեկտիվ անհրաժեշտություն և օրինաչափություն։

Բայց սոցիալիստական այդ երկու տնտեսությունները լինելով միասնական, ունեն նաև որոշ տարբերություններ։ Նրանք իրարից տարբերվում են, առաջին հերթին, արդյունաբերության և գյուղատնտեսության հանրայնացման մակարդակով։ Արդյունաբերությունը պետական սեփականություն է, նա համաժողովրդական է, որը պատկանում է նաև գյուղացիությանը։ Կոլտնտեսային սեփականությունը պատկանում է տվյալ արտելի անդամներին, հասարակության մյուս անդամները չեն համարվում տվյալ արտելի սեփականատերեր։ Պետական արտադրությունը հարմարեցվում է ամբողջ երկրի շահերին, կոլտնտեսային արտադրությունը՝ տվյալ գյուղի, կամ մի քանի գյուղերի պահանջներին։ Արդյունաբերության արտադրանքը ամբողջ ժողովրդի, այդ թվում նաև գյուղացիների սեփականությունն է, իսկ կոլտնտեսային ունեցվածքը պատկանում է միայն տվյալ արտելի անդամներին։ Աշխատանքի վարձատրությունը կոլտնտեսություններում պայմանավորված է տվյալ տնտեսական վիճակով, բերքատվության ու անասունների մթերատվության մակարդակով և այլն։ Կոլտնտեսականները մասնակցելով հանրային արտադրությանը, ունեն նաև անձնական սեփականություն։

Այսպիսով, ակնհայտ է, որ արդյունաբերությունը ամբողջովին հանրայնացված է, իսկ կոլտնտեսություններում արտադրական բոլոր միջոցները դեռևս չեն հանրայնացվել։ Դրա հետևանքով գյուղացին մի կողմից կոլեկտիվիստ է, մասնակցում է հանրային արտադրությանը, իսկ մյուս կողմից նա ունի մասնավոր, անձնական սեփականություն, որից ստացած եկամուտները դեռևս զգալի մաս են կազմում կոլտնտեսականի բյուջեում։

Բանվոր դասակարգը և կոլտնտեսային գյուղացիությունը շահագրգռված են ժողովրդական տնտեսության վերելքով, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումով։ Այդ նպատակի համար մղվող պայքարում էլ ամրապնդվում է սոցիալիստական երկու դասակարգերի՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Բանվոր դասա-

կարգը, ինչպես սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում և սոցիալիզմի ավարտման ժամանակաշրջանում, այնպես էլ այժմ կապված է արտադրության ավելի առաջավոր ճյուղի հետ և հանդիսանում է հասարակության առաջատար ուժը, իսկ գյուղացիությունը ինչպես նախորդ շրջանում, նույնպես էլ այժմ, գնում է բանվոր դասակարգի հետևից, ղեկավարվում է նրա կողմից։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Արդ համառոտակի բնութագրենք այն ուղին, որ անցել են Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը և կոլտնտեսային գյուղացիությունը։ Մեր հանրապետության օրինակով ցույց տանք, թե կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ինչպես է ամրապնդվել բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը, որը հանդիսանում է դեպի կոմունիստական հասարակություն մեր երկրի առաջընթացի կարևորագույն, բախտորոշ նախապայմանը։

Հայաստանի բանվոր դասակարգը Սովետական Միության բանվոր դասակարգի բաղկացուցիչ մասն է։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ նա անցել է հերոսական պայքարի մեծ ուղի, դարձել է հզոր ուժ կոմունիստական հասարակության կառուցման գործում։

Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը կարելի է բաժանել երեք էտապի։ Առաջին էտապը՝ դաշնակների արյունոտ տիրապետության տապալման և հանրապետությունում սովետական կարգերի հաստատումից մինչև սոցիալիզմի հաղթանակը ընկած ժամանակաշրջանն է։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու այդ ժամանակաշրջանում Հայաստանի բանվոր դասակարգը, որը հատկապես 20-ական թվականների սկզբներին փոքր ուժ էր, իր քանակով բնակչության ընդհանուր թվի մեջ, ղեկավարվելով կոմունիստական կուսակցության ցուցումներով, հետևելով Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգի օրինակին, վիթխարի կազմակերպչական դեր կատարեց դաշնակների

ողորմելի տիրապետության տարիներին քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար։ Որպեսզի պատկերացնենք, թե հայկական կյանքի ցեցերի՝ դաշնակների անփառունակ տիրապետության տարիներին արդյունաբերությունն ինչ վիճակի էր հասել, բերենք միայն երկու թիվ։ Եթե 1913 թվականին Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 20,7 միլիոն ռուբլի, ապա 1919 թվականին այն իջավ մինչև 1,7 միլիոն ռուբլու։ Իզուր չէ, որ դաշնակների տիրապետության տարիները պատմության մեջ համարվում են ժողովրդական տնտեսության լիակատար քայքայման, սովի, ազգամիջյան կոտորածների ու համաճարակի տարիներ։

Սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրերին, Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կազմակերպվեցին արհեստակցական միություններ։ Դրանք բանվոր դասակարգին մղում էին ստեղծագործական աշխատանքի։ Ամենուրեք կազմակերպվում էին բանվորական շաբաթօրյակներ։ Աստիճանաբար սկսեցին ազգայնացվել արդյունաբերական ձեռնարկությունները։ Փոքրաթիվ բանվոր դասակարգը, Հայաստանի յուրահատուկ պայմաններում, ծավալում էր լայն աշխատանք։ Բայց դաշնակցական բախտախնդիր շեֆերը կազմակերպեցին 1921 թ. փետրվարի ավանտյուրան։ 45 օր տևող քաղաքացիական կռիվներում Հայաստանի բանվորները, աշխատավոր գյուղացիները, Կարմիր բանակի ջոկատների հետ մեկտեղ կենաց ու մահու պայքար մղեցին հայ ժողովրդի ոխերիմ թշնամիների դեմ։ Աշխատավորության պայքարը հաղթանակով պսակվեց, ջախջախվեց դաշնակների ավանտյուրան։

Նորից անցնելով խաղաղ աշխատանքի, Հայաստանի բանվոր դասակարգը վերստեղծեց իր արհեստակցական միությունները, նորից ծավալեց եռանդուն աշխատանք՝ ժողովրդական տնտեսության զարգացման ուղղությամբ։

1921 թվականի մայիսին ստեղծվեց Հայաստանի ժողովրդական կոմիսարների առաջին սովետը, որի գլուխն ան-

ցավ հայանի լենինյան, կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Ա. Ֆ. Մյասնիկյանը և ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի և ժողտնտխորհի նախագահի պաշտոնին անցավ հին բոլշևիկ, մասսաների տաղանդավոր կազմակերպիչ, բարիս բուն իմաստով խսկական շինարար Ս. Լուկաշինը (Սրապիոնյան)։ ՀԿԿ Կենտկոմը և Հայաստանի ժողկոմսովետը աշխատավորության ուժերն ուղղեցին ժողովրդական տնտեսության զարգացման գործին։ Առաջին կարևոր խնդիրը դա Ալավերդու և Սիսիմանդանի պղնձարդյունաբերության ու նրա գործարանների վերականգնումն էր։ ՀԿԿ Կենտկոմի և հանրապետության կառավարությաս կոչով ոտքի ելան այդ ձեռնարկությունների նախկին կադրային բանվորները, որոնք անցել էին ռուսական երեք հեղափոխությունների բովով, ակտիվորեն մասնակցել էին սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարին։ Հաղթահարելով սովը և բազմաթիվ այլ դժվարություններ, նրանք 1921 թվականի հունիսին շահագործման հանձնեցին պղնձահանքերը և գործարանները։ Սկսվեց նոր բանվորների հավաքագրումը։ Կարճ ժամանակում ստեղծվեց Հայաստանի ծանր արդյունաբերության բանվորական մեծ զանգվածը, որը հետագայում էլ առաջնակարգ դեր կատարեց հանրապետության բանվոր դասակարգի կյանքում։ 1924 թվականի նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 7-րդ տարեդարձի օրը, վերսկսվեցին Ղափանի պղնձահանքերի և ձուլարանի աշխատանքները։

1922 թվականին ստեղծվեցին Անդրկովկասյան ֆեդերացիան, և ՍՍՀՄ-ը, որոնք խոշոր դեր կատարեցին ազգային հանրապետությունների աշխատավորների միջև սոցիալիստական բարեկամությունը ամրապնդելու, փոխադարձաբար օգնելու, ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու գործում։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից մինչև սոցիալիզմի հաղթանակն ընկած ժամանակաշրջանում, հանրապետությունում ծավալվեց շինարարական խոշոր աշխատանք։ Հաջողությամբ կատարվեցին ժողովրդական տնտեսության վերականգնման, երկրի ինդուստրացման ու հետագա զարգացման առաջադրանքները։ Հայաստանի բանվոր դասակարգը հանդիսացավ նոր հասարակարգի ղեկավար ու կառուցող ուժը։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու այդ ժամանակաշրջանում կառուցվեցին մի շարք խոշոր էլեկտրակայաններ՝ Երևանի, Լենինականի, Զորագետի, Քանաքեռի և այլն, որոնք արդյունաբերության զարգացման հզոր աղբյուր հանդիսացան։ Ամեն մի արդյունաբերական ձեռնարկություն շահագործման հանձնելիս բանվոր դասակարգը հաշիվ էր տալիս կոմունիստական կուսակցությանը, երկրին, թե ինչպես է նա մասնակցում սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցմանը, հայրենիքի պաշտպանության ամրապնդմանը, ժողովրդի նյութական պայմանների բարելավմանը։

Մեր կարծիքով բանվոր դասակարգի պատմության գնահատականի տեսանկյունը հենց այդ պետք է լինի։

Բերենք մեր հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման պատմությունից միայն մի քանի բնորոշ օրինակներ։ Դեռևս 1922 թվականին որոշվեց Լենինականում կառուցել տեքստիլ գործարան։ Հեղափոխական փայլուն ավանդույթ ունեցող Իվանովո-Վոզնեսենսկու տեքստիլագործները պատրաստակամություն հայտնեցին եղբայրական Հայաստանում կառուցվող այդ գործարանին օգնել ոչ միայն մեքենաներով ու սարքավորումներով, այլ նաև մասնագետներով, որոնք հայ բանվորներին կսովորեցնեն այդ մեքենաների «լեզուն»։ Իվանովցիների այդ օգնությունը խանդավառություն առաջացրեց Լենինականի տեքստիլ գործարանի շինարար բանվորների մեջ, ի նշան ռուս մեծ ժողովրդի նկատմամբ ունեցած անսահման երախտագիտության, շինարար բանվորները որոշեցին գործարանը շահագործման հանձնել ժամկետից շուտ։

Հայաստանի բանվոր դասակարգի պատմության վառ էջերից են Զորագետի, Քանաքեռի հիդրոէլեկտրակայան-

ների, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան կաուչուկի գործարանի և արդյունաբերական մյուս հսկաների շինարարությունը։

Սովետական Հայաստանի կառավարությունը Զորագէսի շինարարություն ուղարկեց լավագույն ինժեներա-տեխնիկական կադրեր՝ ականավոր ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանի ղեկավարությամբ։ Հիդրոկայանի սարքավորումները պատրաստվում էին Լենինգրադի, Կիևի և Խարկովի գործարաններում։ Զորագէսի շինարար բանվորները նամակներով դիմեցին վերոհիշյալ գործարանների բանվորներին՝ կոչ անելով արագացնել սարքավորումների ուղարկումը, իսկ իրենք պարտավորվեցին ժամկետից շուտ ավարտել շինարարությունը։ Ծավալվեց սոցիալիստական խանդավառ մրցություն Զորագէսի շինարարների և այդ գործարանների բանվորների միջև։ 1932 թվականի նոյեմբերի 15-ին, հանդիսավոր իրադարձության պայմաններում, գործարկվեց հիդրոէլեկտրակայանը։ Դա Հայաստանի բանվոր դասակարգի մեծագույն հաղթանակներից մեկն էր։ Հիդրոկայանը շահագործման հանձնելու կապակցությամբ նույնն էին ընդգծում իրենց ուղարկած հեռագրերում Մ. Ի. Կալինինը, Ա. Ի. Միկոյանը և Անդրկովկասյան ֆեդերացիայի ու Հայաստանի ղեկավարները։

Հերոսական աշխատանքի մի ամբողջ էպոպեա է սինթետիկ կաուչուկի գործարանի կառուցումը։ 1933 թվականի մայիսի 3-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի որոշմամբ Երևանում պետք է կառուցվեր սինթետիկ կաուչուկի հսկա գործարան։ Այդ գործարանի շինարարությունը համարվեց հանրապետության բանվոր դասակարգի ամենահարվածային ճակատը։ Այնտեղ աշխատանքի ուղարկվեցին հազարավոր բանվորներ, ինժեներներ, տեխնիկներ, կուսակցական-կոմերիտական փորձված աշխատողներ։ Կաուչուկի շինարարության պետ նշանակվեց Հայաստանի ժողկոմսովետի նախագահի տեղակալ, հին բոլշևիկ, լավագույն կազմակերպիչ Նիկոլայ Կուրսելը։

Հարվածային աշխատանքի ճակատներ դարձան, դեռևս առաջին հնգամյակի տարիներին, նաև Կիրովականի քիմիական կոմբինատի և Քանաքեռգէսի շինարարությունները։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ, 1932 թվականի սկզբներից սկսվեցին Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերության ձեռնարկությունների արմատական վերակառուցումը։ Պղնձագործներն իրենց առջև դրված խնդիրները պատվով կատարեցին։

Հայաստանի բանվոր դասակարգի պատմության փայլուն էջերից է ստախանովյան շարժման ծավալումը։ Արտադրության բարձրացման փայլուն ցուցանիշների հասան Ղափանի և Ալավերդու հանքագործները, կաուչուկի շինարարները, երկաթուղայինները, քիմիական և շատ այլ ձեռնարկությունների բանվորներ։ Հայաստանի բանվոր դասակարգը մեծագույն հաղթանակների հասավ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի կատարման գործում։ Դրա վառ արտահայտությունն է արդյունաբերության համախառն արտադրանքի աճը։ Եթե 1927—1928 տնտեսական տարում արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 28,2 միլիոն ռուբլի, 1937 թվականին այն հասավ 255,2 միլիոն ռուբլու։ Ըստ որում 1937 թվականին արտադրության ամբողջ համախառն արտադրանքի մեջ ծանր արդյունաբերության բաժինը կազմում էր 84 տոկոս։ Այդ նշանակում է, որ լուրջ տեղաշարժ է կատարվել արդյունաբերության էկոնոմիկայում, ծանր արդյունաբերությունը իշխող է դարձել հանրապետության արդյունաբերության մեջ, իսկ բանվոր դասակարգի առաջատար ուժը դարձել է ծանր արդյունաբերության ձեռնարկությունների բանվորությունը։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում բանվոր դասակարգն իր ղեկավար ու կազմակերպիչ դերը, իր ստեղծագործական կարողությունները դրսևո-

դրեց ոչ միայն արդյունաբերության զարգացման բնագավառում, այլև գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման, կուլտուրական հեղափոխության գործում։ Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ տակավին 1930-ական թվականներին ստեղծվեց միասնական բանվոր դասակարգ, որն ուժեղացրեց իր ազդեցությունը սովետական հասարակության վերափոխման վրա։ Ամբողջ արդյունաբերությունը ենթարկվեց սոցիալիստական օրինաչափություններին, պլանավորման։ Նշված ժամանակաշրջանում բանվոր դասակարգը աճեց քանակապես, որակապես և կազմակերպչորեն։

Առաջին հնգամյակի տարիներին նոր թափով ծավալվեց սոցիալիստական մրցությունը՝ խնդիր ունենալով կատարել ու գերակատարել արտադրական-ֆինանսական պլանները, երկրորդ հնգամյակի վերջին տարիներին սոցիալիստական մրցության բարձր ձևը հանդիսացավ ստախանովյան շարժումը, որի խնդիրն էր՝ գերազանցել սահմանված նորմաները, դրավել ավելի բարձր բնագծեր։

Վերջապես Հայաստանի բանվոր դասակարգի ամրապնդման կարևոր խնդիրը դա նրա շարքերի համալրումն է։ Եթե 1927—1928 տնտեսական տարում հանրապետությունում կային 6142 բանվորներ, երկրորդ հնգամյակի վերջում դրանց թիվը հասավ 22100-ի։

Մինչև գյուղատնտեսության կոլեկտիվացումը բանվոր դասակարգի շարքերը համալրվում էին մեծ մասամբ մանրբուրժուական տարրերով՝ գյուղացիներով և արհեստավորներով։ 1930-ական թվականների սկզբներից, գյուղատնտեսական արտելներում աշխատանքի մեքենայացման շնորհիվ, գյուղում գոյանում էին բանվորական ազատ ձեռքեր, դրանք պլանավորված ձևով փոխադրվում էին արդյունաբերության մեջ աշխատելու։ Այսպիսով բանվոր դասակարգը քանակապես աճում էր սոցիալիստական դասակարգի՝ կոլտնտեսային գյուղացիության հաշվին, ոչ թե տարերային այլ կազմակերպված, պլանավորված։ Սա արդեն բանվոր դասակարգի աճման նոր որակ էր։

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը, ինչպես մեր երկրի ժողովուրդների, այնպես էլ բանվոր դասակարգի պատմության մեջ յուրահատուկ էտապ է։ Պատերազմի տարիներին Հայաստանի բանվոր դասակարգն իր ստեղծագործական աշխատանքով, պլանների կատարումով ու գերակատարումով, հայրենանվեր գործունեությամբ, փայլուն քննություն տվեց։ Նա կարճ ժամանակում կարողացավ արդյունաբերությունը փոխադրել ռազմական ռելսերի վրա։ Պատերազմի տարիներին Հայաստան փոխադրվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ։ Անհրաժեշտ էր կարճ ժամանակում տեղադրել դրանք և յուրացնել արտադրության տեխնոլոգիան։ Եթե 1920—1930-ական թվականներին բանվորների որակավորումը կատարվում էր ֆաբգործուսների, բանֆակների, բանվորական համալսարանների, տեխնիկումների և տեխնիկական մինիմումի երկարատև դասընթացների միջոցով, ապա պատերազմի տարիներին պահանջվում էր ամենակարճ ժամանակում գործարկել այդ նոր ձեռնարկությունները, ուստի մի կողմից տեղադրվում ու մոնտաժվում էին մեքենաները, նույն ժամանակամիջոցում էլ յուրացվում էր տեխնիկան։ Չնայած նրան, որ պատերազմի տարիներին մեծ փոփոխություններ էին կատարվել Հայաստանի բանվոր դասակարգի կազմում՝ կադրային բանվորների մեծ մասը մեկնել էր ռազմաճակատ, նրանց փոխարինել էին մեծ մասամբ կանայք և պատանիներ, սակայն, այս պայմաններում էլ Հայաստանի բանվոր դասակարգը տիտանական ջանքեր գործադրելով, պատվով կատարեց ռազմաճակատի ու թիկունքի առաջադրանքները։ Արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող ձեռքի պակաս լինելու պատճառով բանվորները պարտավորություն էին ստանձնում աշխատել միաժամանակ մի քանի դազգահի վրա, նրանք աշխատում էին սահմանված ժամերից ավելին, երբեմն երկու հերթ։

Նրանց հայրենանվեր լարված աշխատանքի արդյունքն եղավ սոցիալիստական մրցության նոր ձևը՝ պլանները երկու

հարյուր տոկոսով կատարելու շարժումը։ Երկուհարյուրականների շարժումը ծավալվեց հանրապետության արդյունաբերական բոլոր ձեռնարկություններում։ Դա սոցիալիստական մրցության նոր, բարձր ձևն էր, որը ծնվեց պատերազմի օրերին։ Հայաստանի բանվոր դասակարգը ռազմաճակատներում և թիկունքում պատվով կատարեց իր առաջատար պատմական դերը։

Հայաստանի բանվոր դասակարգի պատմության երկրորդ էտապը ընդգրկում է պատերազմի ավարտից մինչև սոցիալիզմի վերջնական հաղթանակը։

Պատերազմից հետո մեր հանրապետության բանվոր դասակարգը կարճ ժամանակում արդյունաբերությունը փոխադրեց խաղաղ ռելսերի վրա, խնդիր ունենալով ժամկետին կատարել ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյակի առաջադրանքները։

Հետպատերազմյան տարիներին էլ ավելի զարգացավ Հայաստանի արդյունաբերությունը։ Մեր հանրապետությունը դարձավ Սովետական Միության արդյունաբերական խոշոր շրջաններից մեկը։ Այդ ժամանակի բնորոշ առանձնահատկություններից էր հանրապետության արդյունաբերության բազմաճյուղությունը, որի մեջ գերակշռող տեղ են բռնում ծանր արդյունաբերությունը՝ քիմիան, գունավոր մետալուրգիան, լեռնահանքային, էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային, սարքաշինական, մեքենաշինական, դաղդահաշինական և ճշգրիտ չափիչ ձեռնարկությունները և այլն։

Բանվոր դասակարգի պատմության հետպատերազմյան ժամանակաշրջանի բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծվեցին ոչ միայն խոշոր քաղաքներում, այլ նաև շրջկենտրոններում, անգամ գյուղերում։ Եթե նախապատերազմյան ժամանակաշրջանում կոլտնտեսությունների ազատ բանվորական ուժը փոխադրվում էր հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները, մեծ մասամբ Երևան, Լենինական, Կիրովական, ապա հետպատերազմյան ժամանակաշրջանում փոփոխություններ մտան բանվորական ուժի և արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման մեջ։ Կոլտնտեսությունների ազատ աշխատանքային ուժը օգտագործվում է շրջաններում և գյուղերում ստեղծված արդյունաբերական ձեռնարկություններում։ Հետպատերազմյան տարիներին արդյունաբերական ձեռնարկությունները տեղաբաշխելիս հաշվի էր առնվում նաև այն, թե որ շրջանի կոլտնտեսություններում ավելի շատ ազատ բանվորական ուժ կա և այն հնարավոր կլինի օգտագործել այնտեղ կառուցվող արդյունաբերական ձեռնարկություններում։ Այդ օրինաչափ երևույթ էր։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետությունում ստեղծվեցին նոր քաղաքներ, որոնց թիվը հասավ 23-ի և քաղաքատիպ ավաններ, որոնց թիվը հասավ 27-ի։ Դա նույնպես Հայաստանի բանվոր դասակարգի զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկն է։

Այդ ժամանակաշրջանում բանվոր դասակարգի գործունեության բնորոշ կողմերից մեկը դա նրա կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումն է։

Առաջավոր գիտության նվաճումների հիման վրա նոր տեխնիկայով հագեցված ձեռնարկություններում աշխատելու համար պահանջվում է գիտելիքների ավելի հարուստ պաշար։ Հանրապետությունում նորագույն տեխնիկայով հագեցված ձեռնարկություններում հավաքագրվեցին միջնակարգ ու բարձր կրթություն ունեցող բանվորներ։ Այս էտապում հանրապետության բանվոր դասակարգի գերակշռող մասը կազմում են միջնակարգ կրթություն ունեցողները։ Բանվոր դասակարգի կազմի որակական այս փոփոխության շնորհիվ մեծ ծավալ ստացավ գյուտարարությունը, նորարարությունը և ռացիոնալիզատորությունը։ Այդ շարժմանը ակտիվորեն մասնակցում են հաղարավոր բանվորներ, որոնց առաջարկություններից շատ--շատերը ներդրվել են արտադրության մեջ։ Նորարարական շարժումը սոցիալիստական մրցության բարձր ձևերից մեկն է։ Այստեղ հարկ է նշել նաև բանվոր դասակարգի ազգային կազմում տեղի ունեցող փոփոխու-

թյունները։ Հետպատերազմյան տարիներին նոր, կատարելագործված ձեռնարկությունների ստեղծումով հազարավոր ռուս մասնագետներ, բանվորներ երկրի տարբեր ծայրերից փոխադրվեցին մեզ մոտ։ Հայաստանի բանվոր դասակարգն իր կազմով դարձավ ավելի քան ինտերնացիոնալ։

ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի հուլիսյան պլենումի և կուսակցության 20-րդ համագումարի որոշումներից հետո մեր հանրապետությունում նույնպես վիթխարի չափերով ծավալվեց տեխնիկական առաջադիմությունը, արտադրության ավտոմատացումը և կոոպերացումը։ Սրանք էական փոփոխություններ մտցրին բանվորական ուժի տեղաբաշխման, բանվոր դասակարգի որակական աճի մեջ։ Եթե կապիտալիստական հասարակարգում տեխնիկական առաջադիմությունը և արտադրության ավտոմատացումը առաջ է բերում գործազրկություն և սրվում է դասակարգային պայքարը աշխատանքի և կապիտալի միջև, ապա սովետական հասարակարգում, շնորհիվ տնտեսության պլանային սիստեմի, գործազրկության առաջացումը դառնում է անհնարին։ Կոմունիստական կուսակցությունը, սովետական կառավարությունը կարգավորում են աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխումը։ Սովետական Միությունում, և նրա անբաժանելի մասը կազմող Հայաստանում, ստեղծվեց առաջնակարգ ծանր ինդուստրիա՝ երկրի տեխնիկական առաջադիմության և տնտեսական հզորության հիմքը։

Հանրապետությունում մեծ չափերով աճեց հատկապես մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերությունը։ Եթե 1950 թվականին այդ ճյուղերում աշխատում էր 11,6 հազար բանվոր, ապա 1958 թվականին՝ 18,5 հազար բանվոր։ Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության արտադրանքը, 1940 թվականի համեմատությամբ, 1958 թվականին աճեց 31,35 անգամ։ Քիմիական արդյունաբերության արտադրանքը 1950 թվականի համեմատությամբ՝ 4,65 անգամ։ Արդյունաբերության արտադրանքի աճը պայմանավորված է նախ՝ նոր ձեռնարկությունների ստեղծումով և, երկրորդ, տեխնիկական առաջադիմությամբ։ Նյութական միջոցների արտադրության ոլորտներում կրճատվում է ծառայողների և օժանդակ աշխատողների թիվը և դրա փոխարեն աճում է բանվորների և ինժեներների թիվը։ Այսպիսով, հանրապետության արդյունաբերության մեջ ավելանում են անմիջապես նյութական բարիքներ ստեղծողները՝ բանվորները և ինժեներա-տեխնիկական աշխատողները։ Բնորոշը Հայաստանի բանվոր դասակարգի կյանքում ոչ միայն նրա թվական, այլև որակական աճն է։ Այսպես, էլեկտրակայանների բանվորների գերակշռող մասը աշխատում է հիմնական արտադրամասերում՝ էլեկտրամոնտյորներ, մեքենավարներ, փականագործներ և այլն։ Քիմիական արդյունաբերության մեջ մեծ տոկոս են կազմում ապարատավարները, լաբորանտ բանվորները, մեքենավարները, փականագործները և այլն։ Նույն պատկերն է արդյունաբերության մյուս ճյուղերում։ Այսպիսով, հանրապետությունում աճում է որակյալ բանվորների թիվը։ Արդյունաբերության արտադրական պրոցեսների ավտոմատացումով, մեքենաների մոդեռնացումով բանվոր դասակարգի կազմում տեղի են ունենում որակական նոր փոփոխություններ, վերանում է ձեռքի ծանր ֆիզիկական աշխատանքը, այն փոխարինվում է մեքենայի աշխատանքով։ Այդ միջոցին լուրջ տեղաշարժեր են կատարվում բանվորների մասնագիտացման մեջ։ Հին, ֆիզիկական ծանր աշխատանքում ստեղծված մասնագիտությունները հետզհետե վերանում են, և ստեղծվում են նոր մասնագիտություններ, որոնք տեխնիկական հեղաշրջում են առաջացնում արտադրության մեջ։ Վերցնենք թեկուզ շինարարությունը, որը ամենահետամնաց ճյուղերից մեկն էր։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում շինարարության մեջ ներդրվեցին էքսկավատորներ, բուլդոզերներ, ամբարձիչներ, մեքենայացվեց՝ բետոնման և բետոնաթափման, հողային և երկաթ-բետոնային աշխատանքների գերակշռող մասը։ Հասկանալի է, որ շինարարության մեջ տեղի ունեցած այդ հեղաշրջումն իր հետ բերում է նոր՝ ավե-

լի կատարելագործված մասնագիտություններ։ Մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության մեջ 1954 թվականից ներդրվեցին ավտոքարշակները և էլեկտրաքարշակները, և նյութերի տեղափոխման ձեռքի աշխատանքներին փոխարինեց մեքենան։ Անտառային արդյունաբերության մեջ ձեռքի ծանր աշխատանքին փոխարինեց էլեկտրամոտորը և բենզոպիլը, մեքենայացվեց անտառանյութի փոխադրումը։ Այսպիսով, Հայաստանում տեխնիկական առաջադիմության բնական հետևանքը հանդիսացավ ձեռքի աշխատանքի հետ կապված հին մասնագիտությունների վերացումը, արտադրությունից հանվեցին պարզունակ գործիքները և մեքենաները, ներդրվեց առաջավոր տեխնիկա, որի շնորհիվ բարձրացավ բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը, ստեղծվեցին նոր ավելի բարձր որակի մասնագիտություններ։

Հայաստանի բանվոր դասակարգի պատմության մեջ կադրերի պատրաստումը և վերապատրաստումը միշտ եղել են ուշադրության կենտրոնում։ Հանրապետությունում հազարավոր բանվորներ ստացել են նոր մասնագիտություններ, բարձրացրել են իրենց որակը։ Ժամանակակից տեխնիկական առաջադիմությունը և անցումն ամբողջ արտադրության կոմպլեքսային մեքենայացմանը և ավտոմատացմանը, բերում է իր հետ մարդկանց, առաջին հերթին բանվորների, նոր, բարձր մասնագիտացում։ Բանվորները տիրապետում են ոչ թե մի, այլ բազմաթիվ մասնագիտությունների, ձեռք են բերում տեխնիկական լայն գիտելիքներ, կարողանում են հաջողությամբ համագործակցել ֆիզիկական և մտավոր ունակությունները աշխատանքում։ Արտադրության նման կազմակերպումը պարտավորեցնում է բանվորին մշտապես հոգ տանել իր կուլտուր-լուսավորական մակարդակի բարձրացման մասին։ Սա հասարակական արտադրության պատմության մեջ զարգացման նոր աստիճան է, բարձրանում է կոմունիստական հասարակություն կառուցող մարդը, նոր մարդը, որի համար աշխատանքը դառնում է առաջին և բնական պա-

հանջ։ Յուրաքանչյուր նոր մեքենայի արտադրության մեջ ներդրելը առաջ է բերում նոր մասնագիտություն։ Իսկ դրան տիրապետելու համար բանվորին անհրաժեշտ է տեխնիկական նոր գիտելիքներ և նոր որակ։ Ժամանակակից բարդ տեխնիկայի հմուտ օգտագործումը բանվորից պահանջում է ունենալ տեսական գիտելիքներ, իմանալ մեխանիկայի, ֆիզիկայի, քիմիայի, էլեկտրոնիկայի և էլեկտրատեխնիկայի հիմունքները, նրան անհրաժեշտ է տիրապետել մեքենաների ու մեխանիզմների ղեկավարման գործը, յուրացնել բարդ տեխնոլոգիան։ Ժամանակակից բանվորը լավ է հասկանում, որ արտադրության ավտոմատացումը միացնում է տարբեր արտադրական պրոցեսները, որոնք նախկինում կատարում էին տարբեր բանվորներ։ Բանվորի անձնական շահերը զուգակցում է պետական շահերին։ Ինչպես բանվորը, նույնպես և ձեռնարկությունը շահագրգռված են տալ ավելի շատ և բարձրորակ արտադրանք։ Ընդհանուր հանրակրթական և կուլտուր-տեխնիկական հարուստ գիտելիքների ձեռքբերման գործում շահագրգռված են և՛ բանվորը և՛ ձեռնարկությունը։ Հանրապետությունում ստեղծված է բանբիտ դպրոցների լայն ցանց, որտեղ սովորում են և միջնակարգ կրթություն են ստանում հազարավոր բանվորներ։ Արդյունաբերական ձեռնարկություններում պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ և արտադրական դպրոցներ, ուր բանվորները ձեռք են բերում նոր գիտելիքներ։ Հարյուրավոր բանվորներ սովորում են բարձրագույն ուսումնական հաստատությունների երեկոյան և հեռակա բաժիններում, մասնագիտական տեխնիկումներում և այլն։ Մարդու բազմակողմանի զարգացումը, կոմունիստական շինարարության ներկա էտապում, դարձել է պատմական անհրաժեշտություն։ Այսպիսով, Հայաստանի բանվոր դասակարգի պատմության նոր էտապը բնորոշվում է նրանով, որ ստեղծվում է կոմունիզմ կառուցող մարդը, որն օժտված է հարուստ գիտելիքներով։

Հայաստանի բանվոր դասակարգի որակական աճի չափանիշ է նաև ռացիոնալիզատորական շարժումը։ Այդ ժամա-

նակաշրջանում Հանրապետությունում նոր ուժով ծավալվեց ռացիոնալիզատորական շարժումը։ Այն հատկապես ամուր խարիսխ ձգեց ծանր արդյունաբերության մեջ։ Մեքենաշինարարները յուրացրին նոր ավելի կատարելագործված «Լ-Լ-61» խառատային պտուտահան հաստոցի, կոմպրեսորների, պոմպերի, կոմպլեքս տրանսֆորմատորային ենթակայանների, էլեկտրաշարժիչների, ղեկավարման վահանների, քարհատ հաստոցների, աշտարակավոր կռունկների և կազմային ամբարձիչների թողարկումը, կազմակերպվեց բարակ պտուտաթելերի գլանումը։ Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի բանվորների և ինժեներատեխնիկական անձնակազմի ջանքերով ստեղծվեցին մի շարք նոր և տնտեսապես շահավետ էլեկտրական մեքենաներ և սարքեր։ Ուշագրավն այն է, որ նոր մեքենաները՝ կոմպլեքսային տրանսֆորմատորային ենթակայանները, միասնական սերիայի սինխրոնային գեներատորները, կառավարման փականները, ուժային տրանսֆորմատորները այդ գործարանի օրինակով սկսեցին թողարկել նաև միութենական էլեկտրամեքենաշինական մյուս ձեռնարկությունները։ Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի ստեղծագործական կոլեկտիվը հնացած խառատապտուտահան մեքենան փոխարինեց նոր տիպի, ավելի հզոր հաստոցով և սկսեց նրա սերիական թողարկումը։ Այնուհետև ստեղծվեցին նոր հաստոցներ, որոնք բարելավեցին արտադրական պրոցեսը, բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը։ Հանրապետությունում պատրաստվեցին նաև քար տաշող հաստոցների, ավտոմորիլի մասերի, էլեկտրական ճշգրիտ գործիքների նոր մեքենաներ։ Մեքենաշինական և հաստոցաշինական ձեռնարկություններում յուրացվեցին նոր գեներատորների, պղնձի և այլումինի գլանվածքների թողարկումը։ Ստեղծվեցին նոր ռեգուլատորներ, կոնվեյերներ և այլն։ Թեթև արդյունաբերության ձեռնարկություններում յուրացվեցին բազմաթիվ նոր տեսակի գործվածքներ, տեղադրվեցին ավտոմատ գործվածքային հաստոցներ և այլն։

* * *

Բանվոր դասակարգի պատմության երրորդ էտապը՝ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանն է։ Հայաստանի բանվոր դասակարգը առաջնորդվելով ՍՄԿԿ 22 և 23-րդ համագումարների, կուսակցության կենտկոմի 1965 թվականի սեպտեմբերյան պլենումի որոշումներով, ավելի լայնորեն ծավալեց արդյունաբերական ձեռնարկությունների մասնագիտացումը, կոոպերացումը և ավտոմատացումը։ Հայաստանում ստեղծվեցին արդյունաբերական նոր ձեռնարկություններ։ Տեխնիկական առաջադիմությունը նպաստեց բանվոր դասակարգի կազմում կանանց տեսակարար կշռի բարձրացմանը։ Բարձրացավ հասարակական կյանքի վրա բանվոր դասակարգի ներգործող դերը, աճեց նրա ստեղծագործական ակտիվությունը։ Հայաստանի բանվոր դասակարգն այս էտապում ունեցավ քանակական մեծ աճ։ Նրա աճի հիմնական աղբյուրը այժմ քաղաքն է։ Եթե 1926 թվականին Հայաստանում քաղաքային բնակչությունը կազմում էր ընդամենը 19 տոկոս, այժմ այն հասել է 56 տոկոսի։ Բանվոր դասակարգի շարքերը համալրում է նաև արդյունաբերական կոոպերացիան, որի ձեռնարկությունների մի զգալի մասը պետականացվեց։ Բայց արդյոք գյուղը դադարո՞ւմ է բանվորական ուժի աղբյուր լինելուց։ Իհարկե ոչ։ Այժմ գյուղը երկու ճանապարհով է համալրում բանվոր դասակարգի շարքերը։ Նախ, պլանավորված ձևով շարունակում է արդյունաբերությանը տալ իր ազատ ուժերը, մյուս կողմից, կոլտնտեսությունները սովխոզների են վերածվում։ Եթե 1955 թվականին Հանրապետությունում կար 805 կոլտնտեսություն, ապա այժմ դրանց թիվն իջել է 536-ի, որովհետև 269 կոլտնտեսություններ դարձան սովխոզներ և իրենց աշխատող ուժերով համալրեցին բանվոր դասակարգի շարքերը։

Այս էտապում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հիմնական խնդիրը նորից մնում է գյուղատնտեսության էկոնոմիկայի համակողմանի բարձրացումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը, քիմիացումը, աշխատա-

տար պրոցեսների մեքենայացումը։ Բավական է ասել, որ ընթացիկ հնգամյակում գյուղատնտեսության մեջ էլեկտրաէներգիայի կարողությունը կաճի մոտ 3 անգամ, ծավալվում է ոռոգման լայն շինարարություն և այլն։ Այդ խնդիրները կարող են լուծվել միայն բանվոր դասակարգի համակողմանի օգնությամբ։

Մեր ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գնում է դեպի կոմունիզմ՝ անդասակարգ հասարակություն։

Հայաստանի բանվոր դասակարգի կյանքում կարևոր իրադարձություն է մերձեցման ուժեղացումը եղբայրական մյուս հանրապետությունների բանվորական կոլեկտիվների հետ։ Դրանցից հարկ է նշել Երևան-Կիև, Լենինական-Քութայիսի, Կիրովական-Սուխումի սոցիալիստական մրցությունը։ Հանրապետության տասնյակ ձեռնարկությունների կոլեկտիվներ մրցում են մյուս հանրապետությունների նույնատիպ ձեռնարկությունների կոլեկտիվների հետ։ Հայաստանի բանվոր դասակարգը ակտիվորեն մասնակցում է կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով մեր երկրում ստեղծվեց բանվորա-գյուղացիական իշխանություն, պրոլետարիատի ղեկավարությամբ։ Նոր պայմաններում կոմունիստական կուսակցությունը նոր ձևով դրեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, այն ծառայեցրեց սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործին։ Շնորհիվ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի երկրում ազգայնացվեց հողը։ Դա ագրարային առաջին հեղափոխությունն էր, որը ընթացավ պրոլետարիատի, սովետական պետության ղեկավարությամբ և հանդիսանում էր պրոլետարական հեղափոխության անբաժանելի մասը։

Սովետական Հայաստանը ծանր ժառանգություն ստացավ դաշնակցության անփառունակ տիրապետությունից։ Եթե 1913

թվականին Հայաստանի գյուղատնտեսությունը տվել էր 65,8 միլիոն ռուբլու համախառն արտադրանք, ապա 1919 թվականին այն իջավ մինչև 11 միլիոն ռուբլու։ Նույն ժամանակում մշակելի հողատարածությունը 345,7 հազար հեկտարից իջավ մինչև 82,7 հազար հեկտարի։ Դաշնակցականների իշխանության տարիներին սովը և համաճարակը տարածվել էին ոչ միայն քաղաքներում, այլ նաև գյուղերում։ Զգալիորեն պակասել էր գյուղատնտեսական ինվենտարը, եթե 1913 թվականին կար 17585 գութան և 99900 արոր, ապա 1919 թվականին մնացին 5300 գութան և 22300 արոր։

Հայաստանի աշխատավոր գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մոբիլիզացրին բոլոր միջոցները 1921 թվականի գարնանացանը հաջողությամբ անցկացնելու համար։ Դաշնակցականների սկսած ավանտյուրայի պատճառով Արարատյան դաշտավայրում, Սևանի ավազանում, ապա Դարալագյազում և Զանգեզուրում սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով էլ ավելի քայքայվեց ժողովրդական տնտեսությունը, հատկապես գյուղատնտեսությունը։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ Ալեքսանդրապոլի գավառը, Շիրակի դաշտավայրի գյուղերը կողոպտեցին թուրքական զավթիչները, հանրապետության գյուղատնտեսության պատկերն ավելի պարզ կլինի։ Հայաստանի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ջախջախեցին դաշնակցականների խռովությունը, ազատագրեցին Զանգեզուրը, իսկ սովետական կառավարության վճռական պահանջով թուրքական ենիչերիները հարկադրված հեռացան Ալեքսանդրապոլի գավառից։

Նորից սկսվեց աշխատավորության խաղաղ ստեղծագործական աշխատանքը։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական օրգանները գործադրեցին բոլոր միջոցները գյուղատնտեսությունը քայքայված վիճակից դուրս բերելու համար։ Բայց հանրապետության միջոցներն անբավարար էին այդ մեծ խնդիրը լուծելու համար։ Մեր ժողովրդի

այս ծանր օրերին օգնության հասավ Ռուսաստանի սովետական կառավարությունը, ռուս մեծ ժողովուրդը, Հայաստանին ուղարկելով պարեն, գյուղատնտեսական գործիքներ և սերմացու։ Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ամենուրեք ստեղծվեցին սերմնավորման կոմիտեներ, որոնք սերմը և գործիքները բաշխում էին աշխատավոր գյուղացիներին, օգնում էին նրանց հողը մշակելու համար։ Դա սովետական իշխանության դասակարգային քաղաքականությունն էր, որով ամրապնդվում էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը նոր պայմաններում։ Կովկասի, այդ թվում նաև Հայաստանի կոմունիստական կուսակցությանը գործունեության լայն ծրագիր տվեց հանճարեղ Լենինը՝ երկրամասի կոմունիստներին ուղարկած իր 1921 թվականի ապրիլի 14-ի հայտնի նամակով։ Առաջնորդը Կովկասի կոմունիստներին նախազգուշացնում էր, որ մեխանիկորեն չկրկնեն Ռուսաստանի օրինակը, այլ հաշվի առնեն ազգային հանրապետությունների առանձնահատկությունները։ Լենինը գրում էր, որ «Իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքները։ Ոռոգումը ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[12]։ Լենինյան ցուցումները դրվեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության հիմքում։ Հանրապետությունում, ծավալվեցին էլեկտրիֆիկացման և ոռոգման աշխատանքները։ Ժողովրդական տնտեսության, հատկապես գյուղատնտեսության զարգացման գործում որոշակի դեր կատարեցին ՌԿԿ X համագումարի որոշումները նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու մասին։ Այդ քաղաքականության հիմքում դրվեց քաղաքի և գյուղի միջև առևտրի ծավալումը։ Գյուղատնտեսությունը սոցիալիզմի ուղու վրա փոխադրելու գործում ծրագրային փաստաթուղթ հանդիսացան «Կոոպերացիայի մասին» Լենինի հոդվածները (1923 թ. հունվար)։ Այդ հոդվածները հանդիսացան բեկման էտապ կոոպերատիվ քաղաքականության զարգացման մեջ։ Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հանրապետությունում ծավալվեց կոոպերատիվ շարժումը, ստեղծվեցին կոոպերացիայի բազմաթիվ ձևեր, հատկապես գյուղում։ Կոոպերացիայի ծավալումը հանրապետությունում հետապնդում էր պաշտպանել չքավոր ու միջակ գյուղացիության շահերը կուլակների աղճատությունից ու ճնշումից։ Այդ պատճառով էլ գյուղում ավելի քան սրվեց դասակարգային պայքարը։ Կոոպերացիայի միջոցով աշխատավոր գյուղացիներն ստացան վարկ, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, արդյունաբերական ապրանքներ և այլն։

Այս բոլորի շնորհիվ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Հայաստանի գյուղերում տեղի ունեցան դասակարգային տեղաշարժեր, աճեց միջակ գյուղացիների թիվը։

Սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրերից Հայաստանի կոմունիստական կուսակցությունը քաղաքական լայն գործունեություն ծավալեց գյուղում։ Մասսայական աշխատանքի ձևերից էին անկուսակցական գյուղացիների ժողովների, շրջանային կոնֆերանսների և գավառային համագումարների հրավիրումը։ Այդ հավաքներում գյուղացիների առաջ զեկուցումներով հանդես էին գալիս Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ղեկավարները՝ Ա. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Ս. Համբարձումյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ։ Նրանք գյուղական աշխատավորությանը բացատրում էին Սովետական հանրապետությունների միության միջազգային դրության, Անդրկովկասյան ֆեդերացիայի, սովետական կառավարության ներքին քաղաքականության, ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Այդ ժամանակաշրջանում գյուղում լայնորեն ծավալվեց կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների, կանանց միությունների ու կոոպերացիայի և սովետների գործու-

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 404։

նեությունը, որոնք հանդիսանում են աշխատավորական մասսաներին կոմունիստական կուսակցության հետ կապող կարևոր օղակները։ Տեղական սովետները ղեկավարվելով կոմունիստական կուսակցության ցուցումներով, գյուղում տանում էին դասակարգային հատուկ քաղաքականություն՝ պաշտպանելով չքավոր ու միջակ մասսաների շահերը։ Այդ արտահայտվում էր, առաջին հերթին, չքավոր և միջակ գյուղացիության լայն մասսաներին սովետների աշխատանքում ներգրավելու, չքավոր գյուղացիներին հարկերից ազատելու, միջակ տնտեսատերերի հարկերը պակասեցնելու ձևով, կուլակների նկատմամբ գործադրած ճնշումով, ընտրական իրավունքից նրանց զրկելու, կուլակային տնտեսությունների սահմանափակման և արտամղման, պրոգրեսիվ հարկային քաղաքականության կիրառման միջոցով։

1925 թվականի վերջերին Հայաստանում նույնպես ավարտվեց ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Երկրի սոցիալիստական ինդուստրացման տարիներին (1926—1929 թթ.), աշխատավոր գյուղացիները պետական փոխառությունների միջոցով ակտիվորեն մասնակցեցին երկրի ինդուստրացման քաղաքականության կենսագործմանը։ Կոմունիստական կուսակցության պայքարը լենինյան կոոպերատիվ պլանի իրականացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարը (1927 թ. դեկտեմբեր), որը պատմության մեջ մտավ որպես «Կոլեկտիվացման համագումար»։ Համագումարը նշեց միջոցներ գյուղատնտեսության կոլեկտիվացմանը անցնելու համար։

1928—1929 թվականներին Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գյուղում ընդլայնվեցին գյուղատնտեսական կոոպերացիայի ձևերը, սկսեցին ստեղծվել կոլտնտեսություններ։ ՀԿԿ 6-րդ համագումարը (1929 թ. հունվար) և ՀԿԿ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը (1929 թ.) ղեկավարվելով կուսակցության 15-րդ համագումարի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով, ուժեղացրեց գյուղատնտեսության կոլեկտիվացման գործը։ 1927 թվականի դեկտեմ-

բերին հանրապետությունում կար 7 կոլտնտեսություն, 1928 թվականի վերջին 55 կոլտնտեսություն, որոնց մեջ մտնում էին նաև հողը միատեղ մշակող և մեքենա օգտագործող ընկերություններն ու կոմունաները, իսկ 1929 թվականի նոյեմբերին կոլտնտեսությունների թիվը հասավ 178-ի։ Գյուղում ստեղծված այդ բեկումը հասցրեց համատարած կոլեկտիվացման, որի հիման վրա լիկվիդացվում էր ամենաբազմամարդ շահագործող դասակարգը՝ կուլակությունը։ Համատարած կոլեկտիվացումը նշանակում էր՝ գյուղացիության հիմնական մասսաների արմատական շրջադարձ դեպի սոցիալիզմ, արմատական հեղաշրջում սովետական հողագործության զարգացման մեջ։ Չքավոր և միջակ մասսաների անցումը համատարած կոլեկտիվացմանը, դա ամենախորը հեղափոխական հեղաշրջումն էր, այսինքն արտադրական միջոցների նկատմամբ աշխատավոր գյուղացիության մասնավոր սեփականատիրության վերափոխումը հանրային սեփականության, անցումը անհատական մանր արտադրությունից սոցիալիստական կոլեկտիվ խոշոր արտադրության։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման հիմքը հանդիսացավ բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության դաշինքը միջակի հետ ընդդեմ կապիտալիզմի մնացուկների թե՛ քաղաքում և թե՝ գյուղում։ Հայաստանի գյուղը որ մինչև սովետական կարգերի հաղթանակը անգրագիտության մի ծով էր, դարձավ համատարած գրագետ, գյուղը կանգնեց կուլտուրական զարգացման մեծ ուղու վրա։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը անշեղորեն կենսագործելով Լենինի ցուցումները հանրապետությունում դարկ տվեց ոռոգման սիստեմի ընդարձակմանը։ Բավական է ասել, որ սովետական իշխանության 20 տարիներին հանրապետությունում կառուցվեցին բազմաթիվ ջրանցքներ, որոնք ոռոգում էին մոտ 78 հազար հեկտար տարածություն։ Շնորհիվ կոլեկտիվացման հաղթանակի ծավալվեց գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման գործը։ 1939 թվականին հանրապետության գյուղատնտեսության մեջ գործադրվել էր 7450 կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա։ Մեծ թափ ստացավ գյուղա-

տնտեսության մեքենայացումը։ 1940 թվականին հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատում էին 1555 տրակտոր և 288 կոմբայն։ Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար 1940 թվականին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցեցին հանրապետության 407 կոլտնտեսություն, 6 սովխոզ, 2 ՄՏԿ, 9 գիտական հիմնարկ, բազմաթիվ անասնապահական ֆերմաներ, բրիգադներ, օղակներ և այլն։ Նրանցից շատերը համարվեցին առաջավորներ և արժանացան պարգևների։

Այսպիսով, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ սոցիալիստական հասարակարգի ակտիվ անդամը և խոշոր ներդրում կատարեց սոցիալիզմի կառուցման գործում։

Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ակտիվորեն մասնակցեց գերմանա-ֆաշիստական դավթիչների դեմ Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմին։ Հանրապետության հարյուրավոր կոլտնտեսություններ, սովխոզներ և շրջաններ պատվով կատարեցին իրենց պարտավորությունները հայրենիքի նկատմամբ։ Հազարավոր կոլտնտեսային գյուղացիներ մեկնեցին ռազմաճակատ և ակտիվորեն մասնակցեցին ֆաշիզմի ջախջախմանը։ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը ոչինչ չխնայեց պատերազմի հաղթանակի համար, դա հերոսական սխրանքների, մեծ զրկանքների մի ժամանակաշրջան էր, որը հավերժ կմնա մեր հանրապետության կոլտնտեսային գյուղացիության պատմության մեջ։

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից հետո, մեր երկրի ժողովուրդները նորից անցան խաղաղ ստեղծագործական աշխատանքի։ Պատերազմը լուրջ վնաս էր հասցրել նաև մեր հանրապետության գյուղատնտեսությանը։ Պակասել էր անասունների գլխաքանակը, կրճատվել տեխնիկան, իսկ հացահատիկային կուլտուրաների ցանքատարածություններն ավելացել էր ի հաշիվ տեխնիկական կուլտուրաների և այլն։ Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ կոլտնտեսային գյուղացիությունը մոբիլիզացնելով իր ուժերը կարճ ժամանակում վերացրեց պատերազմի հասցրած վնասները և նորից բռնեց զարգացման վերընթաց ուղին։

Գյուղատնտեսության ղեկավարման բնագավառում սրբալները և թերությունները վերացնելու ուղիներ նշեց ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումը։ Ձգված այդ պլենումի որոշումներով Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի նոյեմբերյան (1953 թ.) պլենումը և ՀԿԿ 17-րդ համագումարը (1954 թվականի փետրվար) լայն միջոցառումներ նշեցին հանրապետության գյուղատնտեսության վերելքի համար։ Այն դարձավ համաժողովրդական գործ։ Հանրապետության բանվոր դասակարգը, ինտելիգենցիան ակտիվորեն մասնակցեցին գյուղատնտեսության էկոնոմիկայի բարձրացմանը և գյուղատնտեսությունը հասավ մեծ հաջողությունների։ 1958 թվականի դեկտեմբերին հանրապետությունը արժանացավ բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի։ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը ակտիվորեն մասնակցում է կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը։ Նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել հանրապետության կոլտնտեսային գյուղացիության ապրելակերպի և հոգեբանության մեջ։

Կոլտնտեսային գյուղը այսօր ապրում է խորը վերափոխություններ։ Եթե 1950 թվականին էլեկտրիֆիկացված էր հանրապետության կոլտնտեսությունների միայն 60 տոկոսը, ապա այժմ այն ավարտվել է, իսկ ընթացիկ հնգամյակում գյուղատնտեսության մեջ էլեկտրաէներգիայի օգտագործումը կաճի 3 անգամ։ Մեծ չափերով ընդարձակվեց տրակտորային պարկը։ Եթե հանրապետությունում 1950 թվականին գյուղատնտեսության մեջ աշխատում էր 2055 տրակտոր և 295 կոմբայն, ապա 1965 թվականին դրանց թիվը հասավ 7156 տրակտորի և 1574 կոմբայնի։ Գյուղատնտեսական աշխատանքի աշխատատար շատ պրոցեսներ մեքենայացված են։ Ընթացիկ

հնգամյակում գյուղատնտեսության մեքենայացումն ավելի է ուժեղանալու։ Այժմ տեղի է ունենում կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության կատարելագործում։ Զարգանում են միջկոլտնտեսային արտադրական կապերը, որոնք հնարավորություն են տալիս մասնագիտացնելու և խոշորացնելու գյուղատնտեսական արտադրությունը, հասնելու տնտեսական բարձր ցուցանիշների։ Միջկոլտնտեսային կոոպերացիան կոլտնտեսությունների զարգացման նոր աստիճանն է։ Այժմ կոլտնտեսություններն իրենց փաստական վիճակով մոտենում են համաժողովրդական սեփականությանը։ Կոլտնտեսային արտադրությունը դառնում է ինդուստրիալ, որով աստիճանաբար վերանում են մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները։ Կոլտնտեսականների ավելի քան 25 տոկոսը մեխանիզատորներ են, գյուղի կուլտուր-կենցաղային պայմանները հասցվում են քաղաքի մակարդակին։ Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը, աշխատանքային պրոցեսների մեքենայացումը և ավտոմատացումը, քիմիկատների, պարարտանյութերի մասսայական ներդրումը, գյուղատնտեսության ինտենսիֆիկացումը արագացնում են քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունների վերացումը։ Սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ գործում է տնտեսական միասնական օրենքը, տնտեսության զարգացումը հենթարկվում է պլանավորման տնտեսության համաչափ զարգացմանը և մեր հասարակության զարգացման մյուս օրենքներին։

Սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման գործում առաջնակարգ նշանակություն ունի կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի քանակական աճը։ Գյուղատնտեսական արտելներում անբաժանելի ֆոնդերը սոցիալիստական արտադրողական հարաբերությունների հիմքն է։ Եթե 1955 թվականին Հանրապետությունում եղած 872 կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդը կազմում էր 111 միլիոն ռուբլի, 1965 թվականին 536 կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդը կազմում էր 242 միլիոն ռուբլի։ Կոլտնտեսությունները այդ միջոցները օգտագործում են ոչ միայն գյուղատնտեսության վերարտադրության, այլ նաև կուլտուր-կենցաղային ձեռնարկությունների շինարարության և պահպանման նպատակով։

Կոլտնտեսային գյուղացիության պատմության մեջ կարևոր տեղ է բռնում տեղական կազմակերպությունների նախաձեռնությունը։ 1957 թվականին Արտաշատի շրջանի կոլտնտեսականները գիմեցին Հայաստանի բոլոր կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին՝ ծավալել կուլտուր-կենցաղային հիմնարկների շինարարությունը։ Արտաշատցիների կոչին արձագանքեցին բոլոր կոլտնտեսությունները։ 1958—1961 թվականներին գյուղական վայրերում կառուցվեցին հարյուրավոր դպրոցների, հիվանդանոցների, ակումբների, բաղնիքների, մանկական հիմնարկների, կենցաղ սպասարկման արհեստանոցների, ճաշարանների շենքեր։ Կուլտուր-կենցաղային հիմնարկների շենքերի կառուցումը նոր թափ ստացավ ընթացիկ հնգամյակում։ Այժմ Հանրապետության բոլոր գյուղերն ունեն ակումբներ և գրադարաններ։ Շարքային կոլտնտեսականները, մեխանիզատորները և ինտելիգենցիան դարձել են կուլտուրական բազմաթիվ գործերի նախաձեռնողներ։ Սովետական իշխանության տարիներին քանակապես և որակապես աճեց գյուղական ինտելիգենցիան, որը կուսակցական կազմակերպությունների օգնությամբ գլխավորում է կոլտնտեսականների կոմունիստական դաստիարակության մեծ գործը։ Հայաստանի գյուղում մեծ ծավալ են ստացել ինքնագործ գեղարվեստական ստեղծագործական խմբերը, որոնց մեջ ընդգրկված է ավելի քան 41 հազար մարդ։ Հանրապետության շատ գյուղերի ինքնագործ խմբեր իրենց ճանաչումն են գտել ոչ միայն Հայաստանի, այլ նաև համամիութենական և համաշխարհային ֆեստիվալներում։ Մեր հանրապետության պարծանքն է Թալինի շրջանի Աշնակ գյուղի սասունական պարի խումբը, որը բազմիցս արժանացել է համամիութենական և համաշխարհային մրցանակների։ Հայաստանի 20 գյուղերում գործում են ժողո-

վերդական համալսարանները, որոնք դարձել են կոլտնտեսային աշխատավորության հոգևոր դաստիարակության օջախներ։ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմության մեջ փայլուն էջեր են գրել սոցիալիստական մրցության նախաձեռնողները և առաջավորները։ Դեռևս 1930 թվականին սոցիալիստական մրցություն ծավալվեց կոլտնտեսային առաջին տարվա գարնանացանը հաջողությամբ կատարելու համար։ Այդ ժամանակից սկսած սոցիալիստական մրցությունը դարձել է կոլտնտեսային աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր լծակներից մեկը։ Սոցիալիստական մրցությունը անցել է զարգացման հարուստ ուղի, կոլտնտեսականների միջև անհատական մրցության ձևից հասել է մինչև կոմունիստական աշխատանքի բրիգադների շարժմանը։

ԴԱՇԻՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի քաղաքական հիմքը, աշխատավորների դեպուտատների սովետներն են։ Հայտնի է, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով մեր երկրում տապալվեց շահագործող դասակարգերի տիրապետությունը և հաստատվեց պրոլետարիատի դիկտատուրա։ Պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևը սովետներն են, որոնք հանդիսանում են պետական իշխանության կենտրոնական և տեղական ընտրական օրգաններ։

Ընդհանրացնելով Փարիզի կոմունայի, ռուսական առաջին (1905—1907 թվականների) և երկրորդ (1917 թվականի փետրվարյան) հեղափոխությունների փորձը, Լենինը եկավ այն եզրակացության, որ պրոլետարիատի պետական իշխանության ձևը պետք է լինի ոչ թե պառլամենտը, այլ բանվորների, գյուղացիների և զինվորների պատգամավորների սովետը։ Սովետների իշխանությունը դարձավ սոցիալիստական հասարակարգի կազմակերպման բարձրագույն ձևը։ ՍՍՀՄ սահմանադրությունում նշված է, որ երկրում ամբողջ իշխանությունը հանձին աշխատավորների պատգամավորների սովետների հանդիսանում են ՍՍՀՄ-ի քաղաքական հիմքը։ Սովետներն իրենց մեջ ընդհանրացնում են պետական օրենսդիր և գործադիր իշխանությունը։ Սովետները, որպես պետական իշխանության ձև, ամենից մասսայական, համապարփակ, դեմոկրատական, ինտերնացիոնալիստական կազմակերպություններն են։ Աշխատավորների պատգամավորների սովետները ներքևից վերև կառուցված են դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով, կենտրոնական ղեկավարությամբ, ուր սահմանված են խստագույն կարգապահություն և աշխատանքի նկատմամբ բարձր պատասխանատվության ըստ կրզբունքները։

Աշխատավորների դեպուտատների սովետների գործունեությունը ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը։ Սովետական սոցիալիստական պետության ամբողջ պատմությունը հաստատում է սովետների ուժը և կենսունակությունը։

Սոցիալիզմի հաղթանակի և շահագործող դասակարգերի վերացման շնորհիվ ստեղծված նյութական նախադրյալների հիման վրա, փոփոխվեց նաև հասարակության քաղաքական վերնաշենքը։ Շահագործող դասակարգերի խսպառ վերացման շնորհիվ վերացան հակառակորդ դասակարգերի նկատմամբ ճնշման ֆունկցիաները։

Երկրի էկոնոմիկայի, դասակարգային կառուցվածքի և ազգային հարաբերությունների բնագավառում տեղի ունեցած փոփոխություններն իրենց իրական ձևակերպումը գտան 1936 թվականի՝ հաղթանակած սոցիալիզմի սահմանադրության մեջ, որով սովետական հասարակության քաղաքական և իրավական վերնաշենքը լիովին համապատասխանեցվեց տնտեսական բազայի հետ։ Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ փոխվեց նաև սովետների ընտրության ձևը։ Եթե մինչև 1936 թվականի սահմանադրությունը սովետների ընտրությունները անց էին կացվում ոչ ընդհանուր, ապա այժմ այն դարձավ համընդհանուր, ոչ հավասարը՝ հավասար, բազմաստիճանը՝ ուղղակի, բացը՝ փակ-գաղտնի քվեարկությամբ։ Ընտրական սիստեմում տեղի ունեցած այդ փոփոխությունները սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման նոր աստիճանն է։

Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ, բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների մինչև այդ գոյություն ունեցող պատգամավորների սովետների փոխարեն ստեղծվեցին աշխատավորների դեպուտատների սովետներ։ Եթե մինչև 1936 թվականը սովետական դեմոկրատիան մեծամասնության դեմոկրատիա էր, ապա սոցիալիզմի հաղթանակից հետո այն դարձավ համաժողովրդական։ Սովետների համագումարների հրավիրման փոխարեն մտցվեց սեսիաների գումարման կարգը, սովետների սեկցիաների փոխարեն ստեղծվեցին մշտական հանձնաժողովներ և այլն։ Այդ փոփոխություններն արդյունք էին մեր երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած մեծ վերափոխումների։ Սովետներն ամենամասսայական կազմակերպություններն են։ Բավական է ասել, որ 1953 թվականին ՍՍՀՄ-ի միայն տեղական սովետներում ընտրված էին 1509577 դեպուտատ, իսկ 1965 թվականին ավելի քան 1 600 000 դեպուտատ։

Հայրենական մեծ պատերազմում ՍՍՀՄ պետական սիստեմը փայլուն քննություն տվեց։ Պատերազմի հաղթական ավարտից հետո աշխատավորների դեպուտատների սովետները կուսակցության ղեկավարությամբ վերակառուցելով աշխատանքը, բոլոր ուժերը ի սպաս դրեցին ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման մեծ գործին։

Պատերազմից հետո էլ ավելի ամրապնդվեցին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի քաղաքական հիմքերը՝ սովետները։ Գյուղական, ավանային և շրջանային սովետներն իրենց ամենօրյա աշխատանքի հիմքում դրեցին կոմունիստական կուսակցության կենտկոմի և սովետական կառավարության որոշումները։ Տեղական սովետներին կից ստեղծվեցին նաև արտադրական հանձնաժողովներ, որոնք ավելի ընդհուպ զբաղվեցին արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հարցերով։ «Աշխատավորների դեպուտատների սովետների գործունեությունը բարելավելու և մասսաների հետ նրանց կապերն ուժեղացնելու մասին»

ՍՄԿԿ Կենտկոմի 1957 թվականի հունվարի որոշումը առաջադրեց սովետների հիմնական խնդիրները նոր պայմաններում։ Ուժեղացվեց տեղական սովետների դերը տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ, էլ ավելի ամրապնդվեց կապը մասսաների հետ, աշխատավորական լայն մասսաները ներգրավվեցին տեղական սովետների հանձնաժողովների և այլ ինքնագործ օրգանների աշխատանքում։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի այդ որոշումով, Հայաստանի կուսակցական ու սովետական օրգանները գործնական միջոցներ ձեռնարկեցին ընդլայնելու տեղական սովետների իրավունքները։ Սովետները խորամուխ եղան ամենից առաջ ժողովրդական տնտեսության պլանավորման, տեղական և կոոպերատիվ ձեռնարկությունների արտադրանքի թողարկման և բաշխման, բնակարանային, կուլտուր-կենցաղային, ճանապարհային շինարարության կազմակերպման, ֆինանսական-բյուջետային և այլ հարցերի լուծմանը։

Կոմունիստական շինարարության գործնական խնդիրների լուծման գործում սովետների դերի բարձրացման կուսակցության կիրառած այդ ճիշտ կուրսը ավեց իրեն դրական արդյունքները։ Բայց, դժբախտաբար հետագայում, սկսած 1962 թվականից, երբ անցկացվեցին արդյունաբերության և գյուղատնտեսության ղեկավարման անհաջող վերակառուցումները, զգալիորեն թուլացավ սովետների դերը ժողովրդական տնտեսության ղեկավարման գործում։

ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թվականի հոկտեմբերյան, նոյեմբերյան և 1965 թվականի մարտյան պլենումները խիստ քննադատության ենթարկեցին այդ անհաջող վերակառուցումները և միջոցներ նշեցին սովետների դերի հետագա ուժեղացման և ամրապնդման ուղղությամբ։ Կուսակցության կտրուկ միջոցառումների շնորհիվ ավելի բարձրացավ սովետների դերը, որպես ժողովրդի համապարփակ կազմակերպություն, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ամրապնդող կարևոր օղակներից մեկը։ Սովետներում անընդհատ նորացվում է ղեկավար օրգանների կազմը, ընտրողներն իրավունք

ունեն ետ կանչել վստահությունը չարդարացրած դեպուտատներին։ Բարձրացվում է սովետների մշտական հանձնաժողովների դերը, ընդլայնվում են աշխատավորների դեպուտատների տեղական սովետների իրավունքները։

Մեր կուսակցության ծրագիրը նախատեսնում է հետզհետե տեղական սովետների մշտական հանձնաժողովների լուծմանը տալ գործադիր օրգանների վարչությունների և բաժինների իրավասությանը ենթակա ավելի ու ավելի մեծ թվով հարցեր։ Ընդլայնվում են սովետների շրջանային օղակների իրավունքները։ Կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում կոլտնտեսային, կոոպերատիվ սեփականությունը համաժողովրդական սեփականությանը մոտեցնելու համեմատ աստիճանաբար կկազմավորվի շրջանային նշանակություն ունեցող բոլոր ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների կառավարման միասնական դեմոկրատական օրգան։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՇԻՆՔԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմից հետո, կոմունիստական կուսակցությունը սովետական ժողովրդի ուժերն ուղղեց ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման, սոցիալիզմի վերջնական կառուցումն ավարտելու և կոմունիզմին անցնելու նպատակին։

Հայտնի է, որ պատերազմը մեծ վնաս հասցրեց Սովետական Միության ժողովրդական տնտեսությանը։ Գերմանական ֆաշիստները ժամանակավորապես զավթելով մեր երկրի մի զգալի մասը, ոչնչացրին միլիոնավոր խաղաղ բնակիչների։ Ռազմաճակատում և զավթված շրջաններում զոհվածների թիվը հասավ ավելի քան 20 միլիոնի։ Հիտլերականները ավերեցին հսկայական արժեքներ, կողոպտեցին 1710 քաղաք, 98 հազար կոլտնտեսություն, 1876 սովխոզ և 2890 մեքենա-տրակտորային կայան, ավերակույտի վերածվեցին ավելի քան 70 հազար գյուղ։ Ամբողջովին կամ մասնակիորեն ոչնչացվեց արդյունաբերությունը, տրանսպորտը և այլն։ Ավերվեցին բազմաթիվ հիվանդանոցներ, դպրոցներ, տեխնիկումներ, բուհեր ու գրադարաններ։ Պատերազմի տարիներին սովետական ժողովրդի կրած նյութական կորուստը, ամբողջովին վերցրած, հասավ մոտ 2600 միլիարդ ռուբլու[1]։

---

1 Սովետական Միության Կոմունիստական կուսակցության պատմություն, 1959, էջ 730—731։

Սովետական ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հերոսական աշխատանք կատարեց պատերազմի հետևանքները վերացնելու համար։ 1946 թվականին ընդունվեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության չորրորդ հնգամյա պլանը, որի հիմնական խնդիրն էր՝ վերականգնել երկրի ռուժած շրջանները, հասնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակին, իսկ այնուհետև զգալի չափով գերազանցել այն։

Կարճ ժամանակամիջոցում վերականգնվեցին արդյունաբերությունը և տրանսպորտը։ Երկրի ազատագրված շրջաններում դեռևս պատերազմի ժամանակ, վերականգնվեցին կոլտնտեսությունները, սովխոզները և մեքենա-տրակտորային կայանները, միջոցներ մշակվեցին կոլտնտեսային կարգի ամրապնդման ուղղությամբ։ Մեր կուսակցությունը հրատապ միջոցներ ձեռնարկեց, որպեսզի երկրում ապահովվի գյուղատնտեսական արտադրության վերելքը։ 1947 թվականին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան պլենումը ընդունեց «Կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջոցառումների մասին» որոշումը, ուր բացահայտվեցին կոլտնտեսային կյանքի թերությունները և նշվեցին դրանց վերացման ուղիները։ Այդ որոշումների հիման վրա զանազան կազմակերպությունների և հիմնարկների կողմից օգտագործվող կամ թե այսօրինաբար կոլտնտեսականներին ու այլ անձանց հանձնված հանրային հողերը, կոլտնտեսության անասունները և մյուս նյութական արժեքները վերադարձվեցին կոլտնտեսություններին, զգալիորեն կրճատվեց կոլտնտեսությունների վարչական ապարատը։ Արտադրության մեջ ներգրավվեցին նոր ուժեր։

Կենտկոմի այդ որոշումների իրագործման պայքարում բազալիորեն բարձրացավ կոլտնտեսային աշխատավորների քաղաքական ակտիվությունը, ամրապնդվեց գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան, ծավալվեց կոլտնտեսությունների, սովխոզների, ՄՏԿ-ների էլեկտրիֆիկացման աշխատանքը։ Տեխնիկան արդյունավետ օգտագործելու, վարչական ծախսերը կրճատելու, արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու նպատակով, մանր կոլտնտեսությունները միավորվեցին և ստեղծվեցին խոշոր կոլտնտեսություններ։ 1949—1950 թվականներին գյուղատնտեսության կոլեկտիվացումը ավարտվեց նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մոլդավիայի արևմտյան շրջաններում, ինչպես նաև Էստոնիայում, Լատվիայում և Լիտվայում, որոնք Սովետական Միության կազմի մեջ էին մտել պատերազմի նախօրյակին։ Պատերազմից հետո զգալի չափով ամրապնդվեցին գյուղական կուսակցական կազմակերպությունները։ Գյուղ վերադարձան բանակից զորացրված շատ կոմունիստներ։ Կուսակցության միջոցառումների կենսագործման շնորհիվ, հիմնականում կատարվեց գյուղատնտեսության վերականգնման և զարգացման չորրորդ հնգամյա պլանը։

Ինչ վերաբերում է Հայաստանի գյուղատնտեսությանը, ապա պատերազմի տարիներին մեր հանրապետությունում կրճատվել էին մշակվող հողատարածությունը, անասունների գլխաքանակը, կապիտալ ներդրումները ժողովրդական տնտեսության մեջ, մի շարք խոշոր կառույցներ ժամանակավորապես դադարեցված էին, զգալի էր որակյալ կադրերի պահանջը։

1946 թվականի հուլիսին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի սեսիան օրենք ընդունեց Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման չորրորդ հնգամյա պլանի մասին։ Հնգամյակի գլխավոր խնդիրն էր՝ վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և զգալի չափով գերազանցել այն։

Հայաստանի կուսակցական կազմակերպությունները ավելի լայնորեն ծավալելով սոցիալիստական մրցությունը, մոբիլիզացրին աշխատավորության ուժերը հնգամյակի առաջադրյալները կատարելու և գերակատարելու համար։ Առանձնապես ուժեղ պայքար կազմակերպվեց գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումների, կոլտնտեսություն-

ին պատկանող հողերի հատկացման, հանրային սեփականության շռայլումների դեմ։

Միջոցառումներ մշակվեցին գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումն արագացնելու ուղղությամբ։ Այդ գործում գյուղատնտեսության աշխատողներին օգնության եկան հանրապետության արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները։

1948 թվականի նոյեմբերի 12—14-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության 14-րդ համագումարը, որը հանրագումարի բերելով ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյա պլանի կատարման առաջին երեք տարիների արդյունքները, վեր հանեց արդյունաբերության և, հատկապես, գյուղատնտեսության ղեկավարման թերությունները։

Հայաստանի կոմկուսի կենտկոմը, քաղաքային և շրջանային կոմիտեները, սկզբնական կուսկազմակերպությունները լայն աշխատանք ծավալեցին, որպեսզի կենսագործվեն համագումարի որոշումները։

Հանրապետության աշխատավորների ջանքերի շնորհիվ արդյունաբերությունը հաջողությամբ կատարեց հնգամյա պլանը, որոշ նվաճումների հասավ նաև գյուղատնտեսությունը։ Անցկացվեց կոլտնտեսությունների խոշորացում, ավելացան կոլտնտեսությունների դրամական եկամուտները, անբաժանելի ֆոնդերը և այլն։

Հայաստանի կոմկուսի 15-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1951 թվականի մարտին, ամփոփելով չորրորդ հնգամյա պլանի կատարման արդյունքները, նշեց, որ թեև ընդարձակվել են հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները, բայց թերակատարվել են բերքատվության բարձրացման պլանային առաջադրանքները։ «Խոշոր թերություններ կան անասնաբուծության ասպարեզում,— ասված է համագումարի բանաձևում,— անասունների գլխաքանակի աճը չի զուգակցված նրա մթերատվության

բարձրացման հետ»[2]։ Համագումարը բացահայտեց մեքենատրակտորային կայանների աշխատանքի թերությունները և նշեց, որ նրանք խախտում են սահմանված ագրոտեխնիկական կանոնները, անբավարար է մեխանիզատորների, հատկապես տրակտորիստների պատրաստման վիճակը։

Մեր հանրապետությունում սխալներ թույլ տրվեցին գյուղատնտեսական կուլտուրաների պլանավորման և տեղաբաշխման ասպարեզում։ Հատկապես այդ զգացվում էր հացահատիկային կուլտուրաների մշակման բնագավառում։ Այսպես. հայտնի է, որ ի հաշիվ բարձրարժեք գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների ավելացման՝ ընդարձակվեցին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները, բայց բերքատվությունը չբարձրացավ։

Բացահայտելով գյուղում տարվող քաղաքական աշխատանքի, կադրերի ընտրության և տեղաբաշխման գործում եղած թերությունները, համագումարը մշակեց կուսակցական կազմակերպությունների հետագա գործունեության ծրագիրը։

Չնայած այդ միջոցառումներին գյուղատնտեսությունը լուրջ տեղաշարժ չկատարեց և զարգացման տեմպերով խիստ հետ էր մնում արդյունաբերության տեմպերից։ Գյուղատնտեսությանը այդ վիճակից դուրս բերելը դարձավ հրամայական պահանջ։ Ինչ խոսք, որ գյուղատնտեսության վերելքը կարելի էր ապահովել միայն բանվորների, կոլտնտեսային գյուղացիների և մտավորականների սերտ համագործակցությամբ։

ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

Սովետական Միության Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումը քննարկեց երկրի գյուղատնտեսության վիճակը և բացահայտելով գոյություն ունեցող թերություններն ու սխալները, ցույց տվեց դրանց վերացման ուղիները։ Պլենումը նը-

---

2 Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության 15-րդ համագումարի բանաձևը Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, Երևան, 1951, էջ 11։

չեց, որ չնայած կոլտնտեսային կարգի հաղթանակով ունեոր և կուլտուրական կյանքի լայն ճանապարհ բացվեց սովետական գյուղի աշխատավորների համար, բայց գյուղատնտեսության զարգացման տեմպերը խիստ անբավարար են։ Այդ հետևանք է այն բանի, որ լրիվ չեն օգտագործվում գյուղատնտեսության ռեզերվները, ցածր է բերքատվությունը կոլտնտեսություններում, վատ է կազմակերպվում աշխատանքը, խախտվում են կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության սկզբունքները, անբավարար է օգտագործվում գյուղատնտեսական տեխնիկան։ Դեռևս ցածր է հանրային անասունների գլխաքանակի աճը և մթերատվությունը, խոշոր եղջերավոր անասունների մեջ քիչ է կովերի գլխաքանակը։ Ահա թե ինչու տարեցտարի չի կատարվում անասունների գլխաքանակի աճի պետական պլանը, ցածր է նրանց մթերատվությունը։ Անասնապահական ֆերմաներում անբավարար է աշխատատար պրոցեսների մեքենայացումը, շատ կոլտնտեսություններում թերակատարվում է գոմերի կառուցման պլանը, թույլ է կերի բազան և այլն։

Պլենումն առանձնապես ընդգծեց, որ վատ հիմքերի վրա է դրված գյուղատնտեսության կադրերի ընտրության, տեղաբաշխման գործը, անբավարար է գյուղում, հատկապես կոլտնտեսականների մեջ տարվող քաղաքական դաստիարակչական աշխատանքը։

Երկրում գյուղատնտեսության բոլոր ճյուղերի վերելքն ապահովելու նպատակով, Կենտկոմի պլենումը որոշեց բարձրացնել կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների մթերման ու գնման գները, վերացնել կոլտնտեսականների տնտեսություններից անասնապահական մթերքների պետական պարտադիր հանձնումների անցած տարիների ամբողջ պարտքը, ուժեղացնել մեքենա-տրակտորային կայանների դերը կոլտնտեսային արտադրության կազմակերպման ու ղեկավարման գործում։

Կենտրոնական կոմիտեի սեպտեմբերյան պլենումից հետո փոխվեց գների քաղաքականությունը՝ զգալիորեն բարձրացվեցին գյուղատնտեսական մթերքների պետական գնման գները, վերականգնվեցին հանրային արտադրության մեջ կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման սկզբունքները, ուժեղացավ կուսակցական-քաղաքական աշխատանքը գյուղում և արդյունաբերության շեֆական օգնությունը գյուղատնտեսության նկատմամբ և այլն։ Նոր հատկանիշներ մտան բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական հարաբերությունների մեջ, նոր ձևով դրվեցին բանվոր դասակարգի և գյուղացիության համագործակցության խնդիրները։

Սեպտեմբերյան պլենումում բացահայտված սխալներն ու թերությունները տեղ էին գտել նաև Հայաստանի գյուղատնտեսության մեջ։ Հանրապետության շատ կոլտնտեսություններ տարիներ շարունակ չէին կատարում հացահատիկի, տեխնիկական կուլտուրաների, կարտոֆիլի և բանջարեղենի բերքատվության բարձրացման պետական պլանները։ Դրա հիմնական պատճառներից էր կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման անտեսումը։ Սխալ պլանավորման հետևանքով զգալիորեն պակասել էր կերի արտադրությունը։ Օրինակ, 1953 թվականին 198700 տոննա պակաս կեր կուտակվեց, քան 1952 թվականին։

Հանրապետության կոլտնտեսություններում ցորենի ցանքատարածությունը ավելացել էր, և այդ ավելացումը կատարվում էր լեռնային շրջաններում՝ Ապարանում, Արթիկում, Հրազդանում, Ղուկասյանում, Մարտունիում, Կամոյում, Սիսիանում և Սևանում։ Թեև 1952 թվականի համեմատությամբ, 1953 թվականին ցորենի ցանքատարածությունն ավելացավ 10.200 հեկտարով, բայց բերքատվությունը ոչ միայն չբարձրացավ, այլ նվազեց։ Հակառակ կոլտնտեսությունների ցանկության փոփոխություններ էր մտցվում ցանքատարածությունների ստրուկտուրայում։ Այսպես, եթե 1946

թվականին զարու ցանքատարածությունը կազմում էր 86.207 հեկտար, ապա 1953 թվականին այն կազմում էր միայն 59.520 հեկտար[3]։

Այդ նույն ժամանակ եգիպտացորենի ցանքատարածությունը 1361 հեկտարից պակասեց և կազմեց միայն 603 հեկտար։ Եգիպտացորենի ցածր բերք էր ստացվում հատկապես լեռնային շրջաններում։

Գյուղատնտեսական կուլտուրաների սխալ տեղաբաշխումը կարելի է ցույց տալ Ախուրյանի և Կիրովականի շրջանների օրինակով։ Հայտնի է, որ Ախուրյանը հանրապետության ճակնդեղագործական խոշոր շրջան է։ 1953 թվականին շրջանի կոլտնտեսությունները պլանով պետք է ստանային 15.000 տոննա քուսպ, բայց ստացան 7500 տոննա, այսինքն 50 տոկոսը միայն և հրաժարվեցին ստանալ մյուս կեսը։ Չընայած դրան, Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությունը Ախուրյանի շրջանի կոլտնտեսությունների համար շարունակում էր պլանավորել 120 հեկտար կերի արմատապտղի ցանք։ Նույն ձևով էր պլանավորված կերի արմատապտուղների ցանքը Կիրովականի շրջանում։

Փոխանակ ճակնդեղագործական շրջաններում ավելացնելու ճակնդեղի ցանքատարածությունը, անհասկանալի տրամաբանությամբ այն կրճատվում էր, և ավելացվում կերի արմատապտուղների ցանքը։

Չէր կատարվում նաև շաքարի ճակնդեղի բերքատվության բարձրացման պլանը։ 1953 թվականին հեկտարից նախատեսված էր հավաքել 245 ցենտներ, բայց կոլտնտեսությունները հավաքեցին միայն 153,4 ցենտներ[4]։

Սխալ պլանավորման հետևանքով կերի կուտակման գործում ստեղծվել էին դժվարություններ։ Կերի պակասության պատճառով զգալիորեն իջել էր մսի և կաթի արտադրությունը,

3 ՀԿԿ Կենտկոմի 1954 թվականի մարտյան պլենումի սղագրական հաշվետվությունը։ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մ.Լ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 83, թ. 48։

4 ՀԿԿ Կենտկոմի 1954 թվականի մարտյան պլենումի որոշումը, էջ 10։

տեղի էին ունենում անասունների գլխաքանակի խոշոր անկումներ։

Անհրաժեշտ պայքար չէր մղվում հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման համար։ Բավական է ասել, որ 1953 թվականին հանրապետության կոլտնտեսությունների 15 տոկոսը ստացավ հեկտարից միայն 4 ցենտներ հացահատիկ, իսկ Ազիզբեկովի և Մեղրու շրջաններում դրանից էլ պակաս։ Հասկանալի է, որ պետական պարտավորությունները կատարելուց հետո կոլտնտեսականներին աշխատանքի դիմաց այլևս չնչին բան էր մնում։

Այդպես էր վիճակն, օրինակ, Աշտարակի շրջանի Փարպի, Ուջան, Կարբի, Թալիշ, Կիրովականի շրջանի Լերմոնտովո, Սպիտակի շրջանի Սարալ և այլ կոլտնտեսություններում։ Այդ հետևանք էր ինչպես սխալ պլանավորման, այնպես էլ ագրոտեխնիկական կանոնների խախտման և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման սկզբունքների խախտման։

Երկարամյա փորձից հայտնի է, որ հանրապետությունում աշնանացան ցորենը տալիս է 1,5—2 անգամ ավելի բերք, քան գարնանացանը։ Չնայած դրան անհիմն կերպով կրճատվել էր աշնանացան ցորենի ցանքատարածությունը։ Այսպես, եթե 1940 թվականին կատարվել էր 107 հազար հեկտար աշնանացան, ապա 1953 թվականին, 65,782 հեկտար[5]։ Անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում սերմնաբուծությանը։ Կոլտնտեսություններն ապահովված չէին սեփական, բարձրորակ սերմերով և ամեն տարի գարնանը ստիպված սերմեր էին գնում։ Բարձրորակ սերմերի պակասության պատճառով, հացահատիկային կուլտուրաների բերքը ոչ միայն չէր բարձրանում, այլ իջնում էր։ Այսպես, օրինակ, եթե 1950 թվականին մեկ հեկտարից ստացվել էր 8,2 ցենտներ, ապա 1953 թվականին՝ 7 ցենտներ հացահատիկ։

5 Նույն տեղում, էջ 48—50։

Խորհնու արտադրության պլանը և ոչ մի տարի չէր կատարվում, քանի որ կոլտնտեսություններում նյութական շահագրգռվածություն չէր ստեղծվել։ Խաղողագործությունը և պտղաբուծությունը բարձիթողի վիճակում էին։

Արովյանի շրջանում 1950—1953 թվականներին ամբողջովին շարքից դուրս եկան 1043 հեկտար խաղողի և պտղատու այգիներ[6]։ Նույն վիճակն էր նաև Աշտարակի և մյուս շրջաններում։ Փոխանակ շրջանի կոլտնտեսություններում զարկ տրվեր խաղողագործությանը, որը շատ եկամտաբեր է, ծավալվում էր այնպիսի մշակություն, որը կոլտնտեսություններին տնտեսական վնաս էր պատճառում։

Չնայած 1953 թվականին ծխախոտի մշակման տարածությունը հասնում էր 11.200 հեկտարի, այսինքն 1940 թվականի համեմատությամբ ավելի քան կրկնապատկվել էր, բայց բերքատվությունը չէր բարձրանում։ Տարիներ շարունակ ծխախոտագործական կոլտնտեսություններից շատերը ծխախոտի հումքի հանձնման պետական պլանը չէին կատարում։

Լեռնային մի շարք շրջաններում կոլտնտեսությունները գտնվում էին տնտեսապես վատ վիճակում, շատ տեղերում ցածր էր արտադրողականությունը, ընկած էր աշխատանքային կարգապահությունը, կոլտնտեսականների զգալի մասը չէր մասնակցում հանրային աշխատանքին, չէր կատարում աշխօրերի սահմանված մինիմումը։

Անմխիթար վիճակում էին գտնվում կարտոֆիլացան և բանջարացան կոլտնտեսությունները։ 1953 թվականին հանրապետության 381 կոլտնտեսություններ զբաղվում էին կարտոֆիլի մշակությամբ, բայց դրանց մեծ մասը ստացավ շատ ցածր բերք՝ հեկտարից ընդամենը 50 ցենտներ։ Եթե կարտոֆիլի բերքատվությունը հանրապետությունում կազմում էր միջին հաշվով հեկտարից 63 ցենտներ, իսկ Էջմիածնի շրջանում՝ 200 ցենտներ, Շամշադինի շրջանում՝ 89 ցենտներ, ապա Վեդու շրջանում հեկտարից ստացվեց միայն

[6] Նույն տեղում, էջ 50—52։

10, Զուկասյանի շրջանում՝ 15, Եղեգնաձորի շրջանում 28 ցենտներ կարտոֆիլ[7]։

Ցածր էր նաև բանջարեղենի բերքատվությունը։ Դրությունն ավելի ծանր էր անասնապահության բնագավառում։ Անասունների ընդհանուր հոտում խիստ դանդաղ էր աճում կովերի գլխաքանակը, ցածր էր կովերի մթերատվությունը։ Այսպես, եթե 1941 թվականին հանրապետությունը ուներ 212 հազար գլուխ կով, ապա 1951 թվականին այդ թիվն իջավ մինչև 141 հազարի։

Մեկ կթան կովից միջին հաշվով հանրապետության կոլտնտեսություններում 1953 թվականին ստացվել էր 921 կիլոգրամ կաթ, որը, իհարկե, շատ ցածր էր, իսկ առանձին շրջաններում (Անի, Ազիզբեկով, Արթիկ, Ախուրյան, Գորիս, Եղեգնաձոր, Կամո, Կիրովական, Նոյեմբերյան, Սիսիան, Շամշադին և այլն) մեկ կովից ստացվում էր մոտավորապես 800 կիլոգրամ կաթ, ապա Զափանի շրջանում ստացվել էր 518, Մեղրու շրջանում՝ 574 կգ[8]։

Բերված թվերը վկայում են կաթի արտադրության ցածր մակարդակը հանրապետության կոլտնտեսություններում։

Անասնապահության զարգացման առաջին նախապայմանը անհրաժեշտ քանակությամբ հյութալի կերն է։ Բայց անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում կերային կուլտուրաների զարգացմանը, ցածր էր սիլոսային կուլտուրաների բերքատվությունը։

1950—1953 թվականներին յուրաքանչյուր տարի հատիկա-ֆուրաժային կերի համար առանձնացնում էին միայն 13—13,5 հազար հեկտար, որը չափազանց քիչ էր։

Անմխիթար էր թռչնաբուծության զարգացման վիճակը, ցածր էր հավերի ձվատվությունը։ Եթե 1953 թվականին հանրապետության կոլտնտեսություններում արտադրվել էր 6,4

[7] Նույն տեղում։

[8] Советская Армения за 40 лет. Статистическ. сборник. Ереван. 1960.

միլիոն հատ ձու, ապա կոլտնտեսականների տնտեսություններում արտադրվել էր մոտ 57 միլիոն հատ ձու[9]։ Անդամ բանվոր-ծառայողների տնտեսություններում ավելի շատ ձու էր արտադրվում (12,8 միլիոն հատ), քան կոլտնտեսություններում։ Չի կարելի չնշել նաև այն, որ կոլտնտեսություններում արտադրվող ձվի ինքնարժեքը շատ բարձր էր։ Այդ բացատրվում էր հիմնականում նրանով, որ կոլտնտեսությունների թռչնաբուծական ֆերմաները չափազանց գաճաճ էին, թեև նրանց վրա հսկայական գումարներ էին ծախսվում։

Թերություններ և սխալներ կային հանրապետության գյուղատնտեսության պլանավորման բնագավառում։ Ցանքատարածությունների տիպերը որոշելիս Հայկական ՍՍՀ Պետպլանը և գյուղատնտեսության մինիստրությունը «թույլ էին տվել շաբլոն մոտեցում խոտաղաշտային ցանքատարածությունների կիրառման նկատմամբ, առանց բավականաչափ հաշվի առնելու դրանց տնտեսական նպատակահարմարությունը և առանձին կոլտնտեսությունների բնակլիմայական կոնկրետ պայմանները»[10]։ Պլանային ու գյուղատնտեսական օրգանները ձևական մոտեցում էին ցուցաբերել անասունների գլխաքանակի աճը սահմանելիս, որի հետևանքով ճիշտ չէին օգտագործվում բնական պայմանները և հնարավորությունները։ «Մասնավորապես չհիմնավորված կերպով թույլատրվել էր ոչխարների և այծերի գլխաքանակի ավելացումը բամբակացան շրջանների կոլտնտեսություններում, փոխանակ այնտեղ պայմաններ ստեղծելու կաթնատու անասնաբուծության զարգացման համար»[11]։ Բացի դրանից, սխալներ էին թույլ տրվել նաև խոզաբուծության զարգացման գործում, խոզերի գլխաքանակի և մթերատվության աճը պլանավորվել էր

9 ՀԿԿ Կենտկոմի 1954 թվականի մարտյան պլենումի սղագ. հաշվետվութ.։

10 «Երկրում հացահատիկի արտադրության հետագա ավելացման և խոպան ու խամ հողերի իրացման վերաբերյալ» ՍՄԿԿ Կենտկոմի փետրվար-մարտյան պլենումի որոշումն իրագործելու միջոցառումների մասին ՀԿԿ Կենտկոմի 2-րդ պլենումի որոշումը ընդունված 1954 թ. մարտի 31-ին, էջ 7։

11 Նույն տեղում։

առանց նրա կերի բազան հաշվի առնելու։ Գյուղատնտեսության պլանավորման ժամանակ հաշվի չէին առնվում կոլտնտեսությունների փորձը, տեղական կուսակցական, սովետական և գյուղատնտեսական օրգանների կարծիքը։

Չնայած տարեցտարի աճում էր ՄՏԿ-ների տեխնիկական կարողությունը, բայց ՄՏԿ-ները 1953 տնտեսական տարին փակեցին արտադրական ցածր ցուցանիշներով։

Եթե հանրապետության ՄՏԿ-ներում 1940 թվականին կար 1555 տրակտոր, ապա 1953 թվականին դրա թիվը հասավ 2734-ի[12], այսինքն աճեց ավելի քան 75 տոկոսով, բայց ՄՏԿ-ները տնտեսական տարին փակեցին արտադրական ցածր ցուցանիշներով։ Հայաստանի 53 մեքենա-տրակտորային և 5 մեքենա-անասնապահական կայաններից ոչ մեկը չկատարեց տրակտորային աշխատանքի պլանը։ Դրությունը ավելի վատ էր Կամոյի, Թալինի, Սիսիանի ՄՏԿ-ներում։

Մեքենա-տրակտորային կայաններից շատերը չէին կատարել կոլտնտեսությունների նկատմամբ ունեցած իրենց պայմանագրային պարտավորությունները։ Կալինինոյի ՄՏԿ-ն գյուղատնտեսական աշխատանքի շրջանում բոլորովին չէր կատարել վեց կոլտնտեսությունում ստանձնած պարտավորությունները։ Շատ ՄՏԿ-ներում գերածախսվում էին վառելիքը, վերանորոգման գումարները, բարձրանում էր վարի ինքնարժեքը։ Առանձնապես վատ էր վիճակը Ստեփանավանի, Աշտարակի, Կիրովականի ՄՏԿ-ներում։

ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան և 1954 թվականի փետրվար-մարտյան պլենումները խիստ քննադատության ենթարկեցին սովխոզների գործունեությունը։ Սովխոզների դրությունը ոչնչով մխիթարական չէր նաև մեր հանրապետությունում։ Կուսակցական, սովետական և մյուս կազմակերպությունները գրեթե անուշադրության էին մատնել սովխոզների ղեկավարման գործը, նրանց վերահսկողությունը թողնելով միայն գերատեսչություններին։

12 Советская Армения за 40 лет. Статистическ. сб., Ереван, 1960.

1953 թվականի վերջին Հանրապետությունն ուներ 39 սովխոզ, որից 15-ը անասնապահական, 24-ը խաղողագործական, այգեգործական և բանջարաբուծական։ Սովխոզների արտադրական մակարդակը խիստ ցածր էր, անբավարար էր օգտագործվում տեխնիկան, շարունակ չէին կատարվում պետական պլանները, արտադրանքի ինքնարժեքը խիստ բարձր էր։ Թերություններն աչք էին ծակում հատկապես անասնապահական սովխոզներում։ 1953 թվականի մսուրային շրջանում յուրաքանչյուր կովի համար պետք է կուտակվեր 60—70 ցենտներ կեր, մինչդեռ կուտակել էին միայն 20—30 ցենտներ։ Վատ էին օգտագործվում հողային տարածությունները։ Կերի կուտակման պլանը չկատարելու հետևանքով սովխոզները հաճախ դիմում էին պետության օգնությանը։ Սովխոզների մեծ մասը վնասով էին աշխատում։ Անհրաժեշտ էր բարձրացնել սովխոզներում աշխատանքի արտադրողականությունը։

Գյուղատնտեսության արտադրության բարձրացման գործում մեծ է գիտության դերը։ Կուսակցությունը և կառավարությունը գիտնականների առաջ խնդիր դրեցին արմատախիլ անել դոգմատիզմը և ծավալել գիտական լայն գործունեություն, ցուցաբերել քննադատական մոտեցում գյուղատնտեսության զարգացման խնդիրների լուծման ժամանակ։

Մինչ այդ կոորդինացված չէին գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկների և գիտնականների ուժերը։ Յուրաքանչյուր գիտահետազոտական հիմնարկություն աշխատում էր մեկուսացված, կտրված մյուսներից։ Այսպես, ֆիզիոլոգները և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտը ամբողջովին կտրված էին անասնապահական-անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտներից։ Գյուղատնտեսական կուլտուրաների, ագրոտեխնիկայի, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման, վնասատուների դեմ պայքարելու և այլ պրոբլեմների գիտական մշակումը չէր կոորդինացվել։

Գիտահետազոտական ինստիտուտների միմյանցից անջատ գործելը հասցնում էր նեղ գերատեսչական հարաբերությունների։ Գյուղատնտեսական արտադրության բարձրացումը պահանջում էր ոչ միայն կոորդինացնել գյուղատնտեսության գիտնականների, մեխանիզատորների, հողագործների, զոոտեխնիկների և մյուսների աշխատանքը, այլև գյուղատնտեսական գիտության հարցերի լուծմանը մասնակից դարձնել նաև ֆիզիկոսներին, քիմիկոսներին և գիտության այլ ճյուղերի մասնագետներին։

Հանրապետության գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկները չունեին ընդհանուր կենտրոն, որտեղից կարողանային ստանալ ուղղություն և ղեկավարություն։ Հիշյալ ինստիտուտները բաժանված էին գիտությունների ակադեմիայի, Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության և պարենային ապրանքների արդյունաբերության մինիստրության միջև։ Եթե պտղաբուծական ինստիտուտը ենթարկվում էր գիտությունների ակադեմիային, խաղողագործական ինստիտուտը ենթարկվում էր պարենային ապրանքների արդյունաբերության մինիստրությանը, տեխնիկական կուլտուրաների ինստիտուտը ենթարկվում էր ՍՍՀՄ գյուղատնտեսության մինիստրությանը, իսկ բույսերի պաշտպանության ինստիտուտը գիտությունների ակադեմիային, անասնաբուծականը՝ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությանը և այլն։

Գերատեսչությունների միջև ինստիտուտների նման բաժանումը ոչնչով հիմնավորված չէր։ Գիտահետազոտական հիմնարկների և գիտական ուժերի ապակենտրոնացումը հասցնում էր զուգահեռականության, թեմաների մանրացման, գիտահետազոտական ինստիտուտների և գիտնականների ուժերի ցրմատման։ Գիտահետազոտական հաստատությունների թերություններից մեկն էլ այն էր, որ նրանք թույլ էին կապված կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների հետ, ետ էին մնում հրատապ այն խնդիրների գիտական ու գործնական լուծումից, որոնք դրված էին գյուղատնտեսության առաջ։ Գյուղատնտեսությանը սպասարկող գիտահետազոտական ինստիտուտները սահմանափակվում էին

միայն առանձին հողատարածություններում կամ ֆերմաներում փորձեր կազմակերպելով, իսկ հաճախ հասնելով որոշ արդյունքի, այլևս չէին հոգում այն ներդնելու գյուղատնտեսության արտադրության մեջ։

Գիտահետազոտական հիմնարկներն անհրաժեշտ ուշադրություն չէին դարձնում կարտոֆիլի, բանջարեղենի և մյուս կուլտուրաների մշակման աշխատատար պրոցեսների մեքենայացմանը։

Բնորոշ է, որ պահածոների արդյունաբերության համամիութենական ինստիտուտի Հայաստանի հենակետը մինչև 1949 թվականը մեծ մասամբ զբաղվում էր արտադրական հարցերով, բայց երբ այն ենթարկվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիային, դադարեց արտադրական հարցերով զբաղվելուց և սկսեց զբաղվել «միայն գիտությամբ»։

Անհրաժեշտ էր ճիշտ կազմակերպել գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքները և դրանք ի սպաս դնել գյուղատնտեսության արտադրության բարձրացմանը։

Գյուղատնտեսության առջև դրված վիթխարի խնդիրների լուծումը հրամայական պահանջ էր դնում բարելավելու կադրերի հետ տարվող աշխատանքը։ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի 1954 թվականի մարտյան պլենումը արձանագրեց, որ չնայած ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից անցել էր յոթ ամիս, հանրապետության կուսակցական, սովետական և գյուղատնտեսական օրգանները դեռևս դանդաղ են վերակառուցում իրենց գործունեությունը։ Շատ ղեկավարներ իրենց աշխատանքի ժամերի մեծ մասը հատկացնում են նիստերին, խորհրդակցություններին, հաշվետվություններ և որոշումներ գրելուն։ Անհրաժեշտ էր վերջ տալ բյուրոկրատական մեթոդներին, բարձրացնել կադրերի պատասխանատվությունը և գործնական աշխատանքով մասնակցել կուսակցության դիրեկտիվների կատարմանը։

Հանրապետության գյուղատնտեսության մինիստրությունը մեծ թվով մասնագետներ ուղարկեց կոլտնտեսությունները և ՄՏԿ-ները։ Բայց, ինչպես նշեց ՀԿԿ Կենտկոմի 1954 թվականի մարտյան պլենումը, գյուղատնտեսության մինիստրությունը մասնագետներին ուղարկում էր մեծ մասամբ Երևանի մոտակա շրջանները, որտեղ կային բավական ուժեղ ՄՏ կայաններ և կոլտնտեսություններ։ Բայց լեռնային շրջաններում, ուր կային ետ մնացող շատ կոլտնտեսություններ, ուղարկվեցին հատուկենտ որակյալ կադրեր։

Այդ են վկայում հետևյալ փաստերը։ Արտաշատի ՄՏ կայանում աշխատում էին 57 մասնագետ, որից 30-ը բարձրագույն կրթությամբ, այդ թվում 6 ինժեներ, 19 ագրոնոմ և 5 զոոտեխնիկ[13]։ Սեպտեմբերյան պլենումից հետո այդտեղ ուղարկվեց ևս 36 մասնագետ, որից 24-ը բարձրագույն կրթությամբ։ Էջմիածնի 4-րդ ՄՏ կայանն ուներ իր պահանջին համապատասխան մասնագետներ։ Դրանցից 25-ը բարձրագույն կրթությամբ, բայց ահա այնտեղ ուղարկվեցին ևս 17 մասնագետ։

Իսկ Սիսիանի շրջանի Անգեղակոթի ՄՏԿ-ն հաստիքով պետք է ունենար 40 մասնագետ, ուներ 37-ը, որոնցից միայն 13-ն էր բարձրագույն կրթությամբ։ Սեպտեմբերյան պլենումից հետո ավելացավ միայն 6 մասնագետ, այն էլ ի հաշիվ շրջանի գյուղատնտեսական վարչության։

Գորիսի շրջանի Շինուհայրի ՄՏ կայանում 45 մասնագետի փոխարեն աշխատում էր 40-ը, որոնցից միայն 7-ը բարձրագույն կրթությամբ։ Կոլտնտեսություններին սպասարկող 16 ագրոնոմի փոխարեն ՄՏԿ-ն ուներ, բարձրագույն կրթությամբ, միայն մեկը։

Հայաստանի կոմունիստական կուսակցության 17-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1954 թվականի փետրվարին և Կենտկոմի մարտյան պլենումը մանրամասն միջոցառումներ մշակեցին գյուղատնտեսության բնագավառում տեղ գտած թերությունները վերացնելու համար։

---

13 ՀԿԿ Կենտկոմի 1954 թվականի մարտյան պլենումի սղագրական հաշվետվություններից։

Հանրապետությունում խաղողագործության և պտղաբուծության հետագա զարգացման նպատակով նախատեսվեց 2—3 տարիների ընթացքում այգիների տարածությունը ավելացնել 6000 հեկտարով։ Ալավերդու, Իջևանի, Շամշադինի շրջանները պետք է դառնային հանրապետությունում խաղողագործության երկրորդ բազան։ Արովյանի ջրանցքը շահագործման հանձնելով ոռոգելի էր դառնալու 7500 հեկտար տարածություն, որից 1800 հեկտարը հատկացվելու էր խաղողագործությանը, իսկ 1200 հեկտարը պտղաբուծությանը։ Արզնի-Շամիրամ ջրանցքի կառուցման ավարտումով 3900 հեկտար տարածություն հատկացվելու էր խաղողագործությանը և 1300 հեկտար՝ այգեգործությանը[14]։ Խաղողագործության զարգացման գործում մեծ աշխատանք պետք է կատարվեր Արարատյան դաշտավայրում և Շահումյանի շրջանում։ Խաղողագործության զարգացման կարևոր նախապայմանը այգիների նոսրության վերացումն էր։ Պետք է տնկվեին նոր տեսակի խաղողի վազեր, մեքենայացվեին աշխատատար պրոցեսները։ Նախատեսվում էր երկու-երեք տարիների ընթացքում բերքատվությունը հասցնել նախապատերազմյան 1940 թվականի մակարդակին, իսկ հետագա տարիներին ավելի բարձրացնել։ Ոռոգման միջոցով յուրացվելու էին հողային նոր տարածություններ։ Այդ նոր հողերում ստեղծվելու էին այգեգործական նոր սովխոզներ։

Նախատեսվեց Ներքին Զանգվի ջրանցքի ոռոգման տարածություններից 700 հեկտարը հատկացնել խաղողագործությանը, 200 հեկտարն՝ այգեգործության և 300 հեկտարը՝ արևմատաձային կուլտուրաներին։ Թալինի ջրանցքի կառուցումից հետո պետք է ստեղծվեին 5000 հեկտար նոր այգիներ, որոնցից 3000 հեկտարը խաղողագործական։

Բայց գյուղատնտեսության բնագավառում տեղ գտած թերությունները չէին վերանում միանգամից։ Պահանջվում էր համառ ու լարված աշխատանք։ Այդ նպատակով Հայաստանի

---

14 ՀԿԿ Կենտկոմի 1954 թվականի պլենումի որոշումը, էջ 10։

կոմունիստական կուսակցությունը մոբիլիզացրեց ոչ միայն գյուղական աշխատավորության, այլ նաև հանրապետության բանվոր դասակարգի և ինտելիգենցիայի ուժերը։

Հանրապետության մեքենա-տրակտորային կայանները և կոլտնտեսությունները համալրվեցին քաղաքից, արդյունաբերական ձեռնարկություններից ուղարկված նոր որակյալ կադրերով, ինժեներա-տեխնիկական աշխատողներով։ Զգալիորեն ամրապնդվեցին մեքենա-տրակտորային կայանները, որոնք բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման վճռական ու կարևոր օղակներից էին։ ՄՏԿ-ների տրակտորային պարկը զգալիորեն ընդլայնվեց, ներբանց աշխատանքի ծավալը մեծացավ, ստեղծվեցին մեխանիզատորների մշտական որակյալ կադրեր։

«Մեքենա-տրակտորային կայանները,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի փետրվարյան պլենումի որոշման մեջ,— մեր երկրում հսկայական դեր խաղացին գյուղի սոցիալիստական վերակառուցման, բանվորների և գյուղացիների դաշինքի ամրապնդման համար մղված պայքարում։ Կուսակցության և պետության ձեռքում ՄՏ կայանները եղան այն ուժը, որի օգնությամբ ապահովեցին կոլտնտեսային կարգի հաղթանակն ու հաջող զարգացումը, աշխատանքի ու արտադրության սոցիալիստական կազմակերպման նոր ձևերի ամրապնդումը։ Նախադրյալներ ստեղծվեցին գյուղի արտադրական ուժերի էլ ավելի հուժկու զարգացման համար»[15]։

Կուսակցությունը ՄՏԿ-ների առաջ խնդիր դրեց կոլտնտեսություններում բարձրացնել աշխատանքային կարգապահությունը, արտադրության մեջ արմատավորել առաջավոր փորձը, բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և սոցիալիստական անասնաբուծության մթերատվությունը։

---

15 ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի փետրվարյան պլենումի նյութերը, Երևան, 1958, էջ 35։

Հանրապետության մեքենա-տրակտորային կայաններն իրենց առջև դրված խնդիրները հաջողությամբ կատարեցին։

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԸՌՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունի կոլտնտեսությունների և կոլտնտեսականների կենսական խնդրի՝ նյութական շահագրգռվածության բարձրացումը։ Փաստերը ցույց են տալիս, որ երկար տարիներ կոլտնտեսությունները գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների մշակությունից ոչ միայն օգուտ չէին ստանում, այլ մեծ քանակով հումք՝ վնասով հանձնում էին պետությանը։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը բարձրացվեց, զգալիորեն աճեց պետության կողմից գյուղատնտեսության ֆինանսավորումը։ Տարեցտարի ավելացան կոլտնտեսություններին բաց թողնվող երկարատև և կարճատև վարկերի չափերը։

ՍՄԿԿ Կենտկոմը և սովետական կառավարությունը վերանայեցին գյուղատնտեսական մթերքների գների քաղաքականությունը, մշակեցին և կենսագործեցին գների նոր քաղաքականություն, որը զգալիորեն ավելացրեց կոլտնտեսությունների եկամուտները և բարձրացրեց աշխատանքի արժեքը։ Կոլտնտեսականների համար ստեղծվեցին կյանքի ավելի բարվոք պայմաններ։

Բարձրացվեցին գյուղատնտեսական շատ մթերքների պետական գնման գները։ Այսպես, եթե մեկ ցենտներ հացահատիկը 1952 թվականին պետությունը գնում էր 9 ռուբլի 70 կոպեկով, 1958 թվականին գնում էր 64 ռուբլով, այսինքն վճարում էր 6,6 անգամ ավելի, քան 1952 թվականին։ Կարտոֆիլի պետական գնման գները բարձրացավ 7,7 անգամ, շաքարի ճակնդեղինը՝ 2,1 անգամ, խոշոր եղջերավոր անասունների մսինը՝ 29,4 անգամ, խոզի մսինը՝ 11,8 անգամ, կաթինը՝ 4,5 անգամ, ձվինը՝ 3,3 անգամ և այլն[16]։

Գների նոր քաղաքականության շնորհիվ Հայաստանի կոլտնտեսությունների դրամական եկամուտները զգալիորեն ավելացան։ Այսպես, եթե հանրապետության կոլտնտեսությունների դրամական եկամուտները (չհաշված կոլտնտեսականներին տրված բնամթերքները, ինչպես նաև սերմերի գնման, հոտի աճի, շինարարության և այլ նպատակներով ծախսած գումարները) 1953 թվականին կազմում էր 53,3 միլիոն ռուբլի, ապա գների նոր քաղաքականության և աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ կոլտնտեսություններում դրամական եկամուտները 1958 թվականին հասան 102,5 միլիոն ռուբլու, այսինքն մոտավորապես կրկնապատկվեցին։ Ուրեմն հանրային անտեսության զարգացումն առաջ տանելու համար կոլտնտեսությունները ունեցան անհրաժեշտ շրջանառու միջոցներ։

Գյուղատնտեսության աշխատողներին նյութական օգնություն էր նաև հարկերի նշանակման կարգում կատարված փոփոխությունները։

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում զոհվածների և անհայտ կորածների, զինծառայողների ու պարտիզանների ընտանիքների տնտեսություններին գյուղատնտեսական հարկ սահմանելիս, 1954 թվականի հունվարից տրվեցին արտոնություններ, ըստ որի այն տնտեսությունները, որոնց ընտանիքի կազմում կար մեկ աշխատունակ, մինչև 16 տարեկան հասակ ունեցող երեք երեխաներ, զեղչվեց գյուղատնտեսական հարկի սահմանված գումարի 25 տոկոսը, իսկ այն տնտեսությունները, որոնց ընտանիքի կազմում կա մեկ աշխատող և մինչև 16 տարեկան հասակ ունեցող երեքից ավելի երեխա, զեղչվեց հարկի 50 տոկոսը։ Սովետական կառավարության այդ որոշումները զգալի օգնություն էին կոլտնտեսային գյուղացիությանը և բարձրացնում էին գյուղատնտեսա-

16 Նկատի ունենք դրամի մինչ 1961 թվականի մասշտաբները։

կան արտելում աշխատողների նյութական շահագրգռվածությունը հանրային աշխատանքում։

Հայտնի է, որ մինչև 1953 թվականը հացահատիկի բերքը հաշվվում էր արմատի վրա, բերքատվությունը որոշող պետական հանձնաժողովի միջոցով, որի համաձայն գանձվում էր ՄՏԿ-ների աշխատանքի դիմաց բնավարձը։ Պետական պարտավորությունները տալուց հետո, բազմաթիվ կոլտնտեսություններում անգամ սերմացու չէր մնում։ Այդ դրությանը վերջ տալու նպատակով, ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1954 թվականի հուլիսի 5-ին որոշեց անցկացնել փաստացի ստացած բերքի հաշվառում, միաժամանակ սահմանեց, որ բոլոր տնտեսություններում բերքը որոշում են վիճակագրական վարչությունները կոլտնտեսություններից և սովխոզներից ստացված գյուղատնտեսական կուլտուրաների փաստացի բերքի հաշվետվությունների, ինչպես նաև ՄՏԿ-ների հաշվետվությունների և վիճակագրական վարչությունների այլ նյութերի հիման վրա, իսկ վերջնականը՝ կոլտնտեսությունների, սովխոզների և օժանդակ տնտեսությունների տարեկան հաշվետվությունների հիման վրա։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1954 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ, իրավունք տրվեց հանրապետության գյուղատնտեսության և պարենային ապրանքների մինիստրություններին, անասնապահական սովխոզների հայկական տրեստին և Հայկական ՍՍՀ վիճակագրական վարչությանը՝ ՄՏԿ-ների և սովխոզների պարբերական հաշվետվությունները լրացնել կոմբայնով հնձված տարածություններից փաստորեն կալված հացահատիկի և փաստորեն հավաքված այլ գյուղատնտեսական կուլտուրաների ցուցանիշներով[17]։

Խիստ հսկողություն սահմանվեց գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների և մուտք արված ամբողջ բերքի լրիվ հաշվառման վրա։

---

17 Հայկական ՍՍՀ օրենքների... ժողովածու, 1953—1956 թթ., էջ 25։

Կոլտնտեսություններին և սովխոզներին պատկանող խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, այծերի և ձիերի անկման մեջ մեղավոր անձինք, համաձայն ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1954 թվականի փետրվարի 17-ի որոշման, կանչվեցին պատասխանատվության և նրանցից գանձվեցին կորցրած անասունների արժեքը՝ ըստ գնման գների։ Մեղավոր ճանաչված անձանց թույլատրվում էր պատճառած վնասը հատուցել՝ հավասար արժեքի անասուն հանձնելու միջոցով։ ՍՍՀՄ կառավարության այդ որոշման մեջ նաև նշվում է, որ կոլտնտեսություններին և սովխոզներին պատկանող խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, այծերի և ձիերի հափշտակման մեջ մեղավոր անձանց դեմ հարց հարուցելիս՝ վնասների գումարը սահմանել անասունի մեկուկես արժեքի չափով։

Այս որոշման նպատակն էր կոլտնտեսականների մեջ ստեղծել բարձր գիտակցականություն և ուժեղացնել պատասխանատվությունը հանրային հոտի պահպանման նկատմամբ, օգնել կոլտնտեսությանը հանրային անասունները կողոպուտից և անտեղի անկումից փրկելու։

ՍՄԿԿ Կենտկոմը և սովետական կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեցին կերերի պատրաստման և անասնապահական ֆերմաների աշխատանքի մեքենայացման գործում մշտապես զբաղված կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացմանը։ 1953 թվականի դեկտեմբերին ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշմամբ խորհուրդ տվեց կոլտնտեսություններին աշխօրերով սահմանված վարձատրությունից զուրս դրանց տալ լրացուցիչ վարձատրություն։

ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի հունիսյան պլենումի որոշման համաձայն վերացվեցին ՄՏԿ-ների աշխատանքների համար տրվող բնամթերքները և այլ վճարումները։ Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի պլենումը, որը տեղի ունեցավ 1958 թվականի հուլիսին, ընդգծեց հանրապետության հանրային տնտեսության մեջ տեղի ունեցած

որակական փոփոխությունները՝ ամրապնդվել են կոլտնտեսությունները, աճել են նրանց բնամթերային և դրամական եկամուտները, ուստի նրանք հնարավորություն ունեն ձեռք բերելու գյուղատնտեսական անհրաժեշտ տեխնիկա։ Ստեղծվել են բոլոր նախադրյալները փոխելու նաև պետության պարտադիր հանձնումների և ՄՏԿ-ներին տրվող բնամթերքի վճարման կարգը և անցնելու կոլտնտեսությունների մթերքները պետությանը վաճառելու միասնական գնին։ Պլենումի այդ որոշման հիման վրա Հայաստանում փոխվեց կոլտնտեսություններից պետությանը հանձնվող գյուղատնտեսական մթերքների հանձնման կարգը, ինչպես նաև վերացավ ՄՏԿ-ների աշխատանքի դիմաց տրվող բնամթերքի վճարումը։ Պետությանը գյուղատնտեսական մթերքների պարտադիր հանձնման նախորդ տարիների բոլոր պարտքերը վերացվեցին։

ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան պլենումի որոշումները հնարավորություն տվեցին կոլտնտեսություններին լիովին օգտագործելու հողը և տեխնիկան, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, ավելացնելու մթերքների ապրանքային արտադրությունը, իջեցնելու նրա ինքնարժեքը։ Այդ ամենը քաղաքի և գյուղի աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման գործում նոր ներդրումներ էին։

Կոլտնտեսություններին, սովխոզներին օգնելու նպատակով Հայաստանի կառավարության որոշումներով վերացվեց նրանցից գանձվող մի շարք վճարումները։ 1957 թվականի հունվարի մեկից վերացվեց ոռոգվող հողագործության շրջաններում պետական ջրային տնտեսություններին տրվող ցանքերի, ծառատունկերի ու կենցաղային կարիքների համար կոլտնտեսություններին և ջրօգտագործող մյուս տնտեսություններին բաց թողնվող ջրի վարձը։ Բամբակացան կոլտնտեսություններին հանքային պարարտանյութեր վաճառվեցին սահմանված մեծածախ գներով։

Նույն տարվանից ոռոգման նոր սիստեմին անցնելու կապակցությամբ, ներկոլտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքը կատարում էին ՄՏԿ-ները, իսկ ջրային

տնտեսության օրգանները ցույց էին տալիս ձրի տեխնիկական օգնություն[18]։

Հետագայում կենսագործվեցին նոր միջոցառումներ, որոնք նույնպես բարձրացրեցին կոլտնտեսությունների նյութական շահագրգռվածությունը, ամրապնդեցին կոլտնտեսության ու պետության կապերը՝ գյուղատնտեսության արտադրության բերքատվության բարձրացման համար։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1963 թվականի մարտի 15-ի «Բամբակի հումքի գնման ու հանձնման գները բարձրացնելու և բամբակացան կոլտնտեսություններին հաց վաճառելու մասին» որոշման համաձայն, սկսած 1963 թվականից միջին հաշվով 20 տոկոսով բարձրացվեցին կոլտնտեսությունների կողմից պետությանը վաճառվող սովետական սորտերի (միջին թելավոր) բամբակի հումքի գնման գները և 12 տոկոսով՝ սովխոզների ու այլ գյուղատնտեսական ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից պետությանը հանձնվող բամբակի հումքի հանձնման գները»[19]։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1962 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ կոլտնտեսություններից, կոլտնտեսականներից ոչ-ֆերմենացված ծխախոտի գնման գները բարձրացվեցին 10 տոկոսով, իսկ այն կոլտնտեսություններում, ուր առաջին տարին էր սկսվում ծխախոտի մշակությունը, առաջին երեք տարիներին գները բարձրացվեցին 20 տոկոսով։ Կոլտնտեսություններում կառուցվեցին ծխախոտի չորանոցներ, հումքի պահեստներ և այլն, որոնք հնարավորություն տվեցին կոլտնտեսություններին անկորուստ հավաքած ամբողջ բերքը վաճառել պետությանը։

1957 թվականի հուլիսի 4-ին ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեցին կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների տնտեսություններից պետու-

---

18 Հայկական ՍՍՀ օրենքները, ժողովածու, էջ 543։

19 ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումները, 1963 թ. ապրիլ, էջ 60։

թյանը մթերքների պարտադիր հանձնումները վերացնելու մասին, ըստ որում վերացվեց գյուղատնտեսական բոլոր մթերքների պետական պարտադիր հանձնումները կոլտնտեսականների և բանվոր-ծառայողների տնտեսություններից։ Պետությունը և կոոպերացիան սկսեցին նրանցից գնել գյուղատնտեսական մթերքների ավելցուկները։ Պակասեցվեց կոլտնտեսականների օգտագործվող էլեկտրաէներգիայի վարձը։

Կոլտնտեսություններին պետական օգնությունը ուժեղացնելու, վարկավորումը բարելավելու նպատակով, ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1955 թվականի փետրվարի 16-ին որոշում ընդունեց. «Գյուղբանկի կողմից կոլտնտեսությունների վարկավորման կարգը բարելավելու մասին»։ Այդ որոշման համաձայն կոլտնտեսություններին վարկեր տրվեցին նրանց հայերի հիման վրա՝ կոլտնտեսությունների արտադրական պլաններում և մուտքի-ելքի նախահաշիվներում նախատեսված միջոցառումների համար[20]։

Հանրապետության Մինիստրների սովետը երեք տարով երկարաձգեց ֆինանսապես թույլ կոլտնտեսությունների կողմից անբարժանելի ֆոնդին մուծվող դրամական պարտքերը[21]։

Մեծ օգնություն էր արդյունաբերական, կոմունալ և գյուղական էլեկտրակայանները պետական էներգոսիստեմներին միացնելը և կոլտնտեսություններին էլեկտրահաղորդման գծերի շինարարության համար վարկեր բաց թողնելը։

Կոլտնտեսային կյանքում կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսականներին ծերության կենսաթոշակ նշանակելու մասին ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1956 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը, դա նպաստեց բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը, բարելավելու կոլտնտեսականների նյութական դրությունը։ Առանձին կոլտնտեսություններ սովխոզների վերակազմելու կապակցությամբ, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1961 թվականի օգոստոսի

[20] Հայկական ՍՍՀ օրենքների... ժողովածու, էջ 281։

[21] Նույն տեղում։

1-ի որոշմամբ կենսաթոշակ տրվեց զառամյալներին, 1-ին ու 2-րդ խմբի հաշմանդամ նախկին այն կոլտնտեսականներին, որոնք պետական թոշակ չէին ստանում և վարձու աշխատանք չէին կատարում։

Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների կողմից գյուղատնտեսական մթերքների ավելցուկներն իրացնելու և այդ մթերքների կոոպերատիվ առևտուրը քաղաքներում ու բանվորական ավաններում լավ կազմակերպելու նպատակով, հանրապետության սպառողական կոոպերացիան կոլտնտեսություններից և կոլտնտեսականներից սկսեց գնել այդ մթերքները ինչպես նաև կազմակերպվեց դրանց վաճառքը հանրապետությունից դուրս։

Կոլտնտեսությունների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով, ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1961 թվականի ապրիլի 3-ի որոշման համաձայն վերակառուցվեց գյուղատնտեսական մթերքների պետական գնումների կազմակերպումը։ Այդ որոշման հիման վրա Հայկական ՍՍՀ մթերումների մինիստրությունը և աշխատավորների դեպուտատների շրջանային սովետների գործկոմները գյուղատնտեսական մթերքների գնումների հաստատված պլաններին համապատասխան, պայմանագրեր կնքեցին։ Ըստ որի, կոլտնտեսությունների կողմից պետությանը վաճառված գյուղատնտեսական մթերքների և հումքի արժեքը վճարվում է գնման զոնալ գներով, իսկ հացահատիկի, շաքարի ճակնդեղի և կարտոֆիլի արժեքը՝ ՍՍՀՄ Մինիստրների սովետի սահմանած գներով։ Ելնելով դրանից, մթերող կազմակերպությունները կոլտնտեսություններին վճարում են դրամական ավանսներ 30 տոկոսի չափով։ Կոլտնտեսությունների և սովխոզների կողմից պետությանը վաճառված գյուղատնտեսական մթերքների փոխադրավարձը (կոլտնտեսությունից, սովխոզից մինչև հանձնման կետը) վճարում են մթերքներն ընդունող կետերը՝ պետության հաշվին։

1961 թվականի ապրիլի 20-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետը ընդունեց որոշում «Կոլտնտեսություններին ու սովխոզ-

ներին դրամական ավանսներ տալու կարգի մասին», ըստ որի ավանսները տրվում են 2—3 նվագով։ Առաջին դրամական ավանսը տրվում է պայմանագրի կնքումից հետո, բայց հունվարի 1-ից ոչ շուտ, պայմանագրում նշված արտադրանքի արժեքի 15 տոկոսի չափով, մնացած 15 տոկոսը տրվում է 1—2 նվագով։

Կոլտնտեսություններին ավանսավորելու նպատակով, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշումով պետական բանկը բաց թողեց կարճատև վարկեր։

Կարտոֆիլի արտադրությունն ավելացնելու գործում կոլտնտեսությունների և սովխոզների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու, պարենային կարտոֆիլի որակը լավացնելու նպատակով, ղեկավարվելով ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1963 թվականի սեպտեմբերի 10-ի՝ «Կարտոֆիլի գնման և հանձնման մասին» որոշումով, հանրապետությունում կազմակերպվեց խոշոր, ընտրովի կարտոֆիլի առանձին մթերում, բարձրացվեցին այդ տեսակի կարտոֆիլի գնման և հանձնման գները։

1961 թվականի երաշտի հետևանքով մեր հանրապետության շրջանների մեծ մասում տուժեցին հացահատիկային և կերային կուլտուրաների ցանքերը, ինչպես նաև բնական խոտհարքները, որի հետևանքով տնտեսական դժվարություններ ստեղծվեցին։

Երաշտից խիստ տուժեցին Անիի, Ազիզբեկովի, Ալավերդու, Արթիկի, Թալինի, Աշտարակի, Նոյեմբերյանի, Իջևանի, Շամշադինի, Եղեգնաձորի, Աբովյանի, Ղափանի, Սիսիանի, Սպիտակի և մի շարք այլ շրջանների կոլտնտեսություններն ու սովխոզները։

Պետությունը մեծ օգնություն ցույց տվեց երաշտից տուժած կոլտնտեսություններին։ Միութենական կառավարությունը Հայաստանին բաց թողեց 15 հազար տոննա հացահատիկի սերմացու, որը բաշխվեց գյուղական 32 շրջանների կոլտնտեսություններին։ Երաշտից տուժած կոլտնտեսություններին

մանրածախ գներով վաճառելու համար բաց թողնվեց 25 հազար տոննա պարենային հացահատիկ։

Երաշտից տուժած շրջաններին բաց թողնվեց 6,2 միլիոն ռուբլի երկարատև վարկ՝ 5 տարի ժամանակով։

Հինգ տարով երկարաձգվեցին մինչև 1961 թվականը վերցված պետական վարկերի վերադարձման ժամկետները։ Անասնաբուծությունը կորստից փրկելու նպատակով երաշտից տուժած կոլտնտեսություններին օգնության հասան մյուս շրջանների կոլտնտեսությունները։

Չնայած այս միջոցառումներին, այնուամենայնիվ կոլտնտեսությունները և սովխոզները չապահովվեցին կոշտ և հյութալի կերով։ Անհրաժեշտ եղավ Սովետական Միության մյուս հանրապետությունների, մարզերի և պետական ֆոնդերի օգնությունը։

1961 թվականի երաշտից տնտեսական և այլ կարգի դժվարությունների առաջ կանգնեց հատկապես Ղուկասյանի շրջանը։ Նրա էկոնոմիկայի արագ վերականգնման և զարգացման նպատակով կարուկ միջոցներ ձեռնարկվեցին։ Այնտեղ մշտական աշխատանքի ուղարկվեցին ագրոնոմներ, զոոտեխնիկներ, անասնաբույժներ, ինժեներ-մեխանիզատորներ, բժիշկներ։ Պետբանկի հայկական գրասենյակը որպես բացառություն շրջանի կոլտնտեսություններին բաց թողեց երկարատև վարկ՝ գյուղատնտեսության մասնագետների համար բնակելի տներ կառուցելու համար։ «Հայգյուղտնտեխնիկա» միավորումը շրջանի կոլտնտեսություններին ու սովխոզներին լրացուցիչ բաց թողեց կոմբայններ, տրակտորներ, ավտոմեքենաներ և այլն։

Արտաշեն գյուղում կառուցվեց պանրագործարան, ավարտվեցին շրջկենտրոնի պանրագործարանի վերակառուցման և Ամասիա—Ղուկասյան խճուղային ճանապարհի շինարարական աշխատանքները, բացվեցին դպրոցներ, հիվանդանոց և այլն։ Պետական այդպիսի օգնություն ցույց տրվեց նաև երաշտից տուժած մյուս շրջաններին։

1961 թվականի դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ ուժեղ

երկրաշարժ, որից տուժեցին Ղուկասյանի, Ամասիայի, Ախուրյանի և Սպիտակի շրջանները։ Այդ շրջանների բնակչությանը և տնտեսություններին օգնության հասավ պետությունը։ Նրանց ցույց տրվեց միանվագ օգնություն՝ քանդված ու վնասված շենքերը վերակառուցելու և վերանորոգելու համար։ Սովխոզներին և կոլտնտեսություններին Հայաստանի կառավարությունը տրամադրեց խոշոր գումարներ։

Պետական բանկի հայկական գրասենյակը, կենսագործելով Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1962 թվականի հունվարի 3-ի որոշումը՝ դուրս գրեց Ղուկասյանի, Ամասիայի, Ախուրյանի և Սպիտակի շրջանների կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների երկարատև վարկերի բոլոր պարտքերը։

1961—1963 թվականներին տարերային աղետից առավել տուժած կոլտնտեսականներին ու բանվոր-ծառայողներին պետությունն անվերադարձ բաց թողեց շինանյութ։

Միաժամանակ կոլտնտեսականներին անհատական բնակարանային շինարարության համար պետբանկը հատկացրեց ավելի քան 2.100 հազար ռուբլի վարկ մարման յոթ տարվա ժամկետով, վերականգնվեցին և վերանորոգվեցին աղետից տուժած 17 շրջանների ճանապարհները և այլն։

Պետությունը ամենալայն օգնություն ցույց տվեց երկրաշարժից և հեղեղումներից տուժած շրջաններին։

Կարելի է հիշատակել կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին պետական օգնության ուրիշ շատ փաստեր։ Այսպես, 1961 թվականին դիջվեցին Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Շահումյանի, Արտաշատի, Աբովյանի, Ստեփանավանի, Սպիտակի, Ալավերդու և Աշտարակի շրջանների կոլտնտեսությունների և այլ կազմակերպությունների ոռոգման ջրի վարձի 1956 թվականի պարտքերը 94.297 ռուբլի գումարով[22]։ Հանրապետության կոլտնտեսություններին 1963 թվականին

22 Տե՛ս Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1961 թ. ապրիլի որոշումը, էջ 283։

բաց թողնվեց երկարատև վարկ 5 միլիոն ռուբլու գումարով և մարվեցին 3300 հազար ռուբլու երկարատև վարկերը։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1962 թվականի մայիսին ընդունած երկու որոշումներով բարձրացվեց խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, խոզերի, թռչունների, ճագարների մսի և կենդանական յուղի գնման և հանձնման գները։

Կոլտնտեսություններում, ինչպես նաև Արզնի-Շամիրամ և Թալինի ջրանցքների ջրովի և Արազդայանի չորացվող հողերում կազմակերպված սովխոզներում վերաբնակեցվողներին, որպես բացառություն, թույլատրվեց գնել կովեր և այլ խոշոր եղջերավոր անասուններ, որի համար ամեն մի ընտանիքին տրվեց 1500 ռուբլի վարկ[23]։ Վերաբնակները բնակարանային շինարարության համար պետությունից ստացան երկարատև վարկեր։ Վերաբնակվողներ ընդունած կոլտնտեսությունները 5 տարով ազատվեցին եկամտահարկի վճարումից, իսկ միայն վերաբնակվողներից կազմակերպված կոլտնտեսությունները բոլորովին ազատվեցին եկամտահարկից։

Հինգ տարի ժամկետով գյուղատնտեսական հարկից ազատվեցին նաև սովխոզներ փոխադրված ընտանիքները։ Վերաբնակվողներ ընդունող կոլտնտեսությունները, արտոնություններ ստանալու շնորհիվ իրենց միջոցներից ստեղծեցին վերաբնակվողներին տեղավորելու ֆոնդ։ Այդ ֆոնդը ծախսվում էր կարիքավոր վերաբնակվողների տնտեսական գործերի կարգավորման և նրանց նյութական օժանդակություն ցույց տալու համար։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից վերաբնակեցման և բանվորական ուժի կազմակերպված հավաքագրման գլխավոր վարչությունը, պետբանկի հայկական գրասենյակը և շրջսովետների գործկոմները վերահսկողություն սահմանեցին վերաբնակվողների բնակելի տների շինարարության որակի և նրանց ժամանակին շահագործման հանձնելու վրա։

23 Դրամի նոր մասշտաբով։

* * *

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցավ պետական-կոլտնտեսային համատեղ ձեռնարկությունների և կառույցների ստեղծումը։ Այդ բնագավառում առանձնակի տեղ են գրավում ջրաշինարարական և էլեկտրիֆիկացման աշխատանքները։

Կենսագործելով Լենինյան պատգամները, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը սովետական կարգերի հենց առաջին օրերից ձեռնամուխ եղավ արագորեն վերականգնելու շարքից դուրս եկած ոռոգման սիստեմները և սկսեց նորերի կառուցումը։ Սովետական իշխանության առաջին տարիներին Հայաստանում վերականգնվեցին 430 ջրանցք՝ 3220 կիլոմետր ընդհանուր երկարությամբ և սկսվեց նորերի կառուցումը։ 1925—1940 թվականների ժամանակամիջոցում արդեն շահագործման հանձնվեցին Շիրակի, Հոկտեմբերյանի, Կարճևանի, Մազրայի, Նոր Դալմայի, Նալբանդի, Սիսիանի և այլ ջրանցքները, ինչպես նաև ջրհան կայանները՝ որոնք ապահովեցին 40 հազար հեկտարից ավելի նոր հողերի ոռոգումը։

Մինչև 1940 թվականը ջրաշինարարական կառույցների վրա ծախսվել էր 100 միլիոն ռուբլուց ավելի, իսկ միայն հինգերորդ հնգամյակում՝ 136 միլիոն ռուբլի[24]։ Հայաստանի գետերը գարնան ամիսներին շատ ջրառատ են, իսկ ամռան ամիսներին, երբ գյուղատնտեսությանը ջուր է հարկավոր, գետերի ջուրը զգալիորեն պակասում է։ Ստեղծված դրությունը ստիպում է որոնել այնպիսի ջրաղբյուրներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու գյուղատնտեսական կուլտուրաների կանոնավոր ոռոգումը ամբողջ վեգետացիոն շրջանում։

Բանն այն է, որ մեր հանրապետության լեռների մեծ թեքությունները հնարավորություն չեն տալիս փրենց ավա-

24 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի 4-րդ գումարման երրորդ սեսիայի նիստերի ստենոգրաֆիական հաշվետվությունը, 1956 թ. հուլիս, Երևան, 1957։

գաններում ստեղծել խոշոր ջրամբարներ՝ գարնանային ջրերը կուտակելու։ Ամառվա ամիսներին Քասախ, Գառնի և Վեդի գետերի ջրի պակասը լրացնելու նպատակով հրամայական պահանջ դարձավ օգտագործել Հրազդան գետի ջուրը։ 1930-ական թվականներին մշակվեց Սևան-Հրազդան հիդրոցիրոն էներգետիկ կասկադի համակարգը, ըստ որի ջուրը կասկադի յոթ հիդրոէլեկտրակայաններն աշխատեցնելուց հետո ոռոգման է ենթարկում 105 հազար հեկտար տարածություն։ Այդ համակարգի հիդրոցիրոն առաջին ձեռնարկությունն էր Շահումյանի անվան ջրանցքը, որը շահագործման հանձնվեց 1932 թվականին և ոռոգելու էր Շահումյանի, Արտաշատի և Վեդու շրջանի հողերը՝ 22 հազար հեկտար։

1954 թվականին սկսվեց Աբովյանի ոռոգման սիստեմի շինարարությունը՝ 7,5 հազար հեկտար հողերի ոռոգման համար։ Այդ ջրանցքն ունի 42 կիլոմետր երկարություն։ Ոռոգման խոշոր ձեռնարկությունների հետ զուգընթաց հանրապետության տարբեր շրջաններում կառուցվեցին նաև համեմատաբար փոքր ջրանցքներ։ Շահագործման հանձնվեցին Գառնիի, Լոռու, Ագիյամանի, Նորքի և այլ ջրանցքները։ 1956 թվականի սկզբներին հանրապետության պետական մայր ջրանցքների ընդհանուր երկարությունը կազմում էր 550 կիլոմետր, որոնք ոռոգում են 90 հազար հեկտարից ավելի տարածություն։

Սկսած 1954 թվականից խոշոր աշխատանքներ կատարվեցին ջրհան կայանների կառուցման ուղղությամբ և երկու տարի անց տարբեր շրջաններում արդեն գործում էին 51 ջրհան կայան, որոնք ոռոգում էին 10 հազար հեկտարից ավելի հող։ Լայն աշխատանք տարվեց ինչպես Արարատյան դաշտավայրում, այնպես էլ մյուս շրջաններում ճահիճների և ճահճացված հողերի չորացման համար։ 1947—1956 թվականներին չորացվեցին 7,5 հազար հեկտար[25]։ Ջրովի հողերի ընդարձակման գործում կարևոր դեր են կատարում նաև ա-

25 Նույն տեղում։

ռանձին կոլտնտեսություններ կատարելով փոքր ծախսերի հետ կապված աշխատանքներ։ Դրանց շարքին են դասվում փոքր ջրամբարներ և արտեզյան ջրհորները։ 1956 թվականին գործում էր 220 ջրամբար, իսկ Արարատյան դաշտավայրում՝ 350 արտեզյան ջրհոր։

Հանրապետությունում լայն աշխատանք էր տարվում վերակառուցելու ներտնտեսային ոռոգման ցանցը։ Եթե ոռոգվող հողերի ընդհանուր տարածությունը 1920 թվականին կազմում էր 62 հազար հեկտար, ապա 1956 թ.՝ 213 հազար հեկտար[26]։ Սկսած 1954 թվականից ջրաշինարարության մեջ կոլտնտեսությունների նյութական ներդրումների չափերը զգալիորեն պակասեցին, որովհետև պետությունն իր վրա վերցրեց այդ ծախսերի մեծ մասը, և այնուամենայնիվ, կոլտնտեսություններն իրենց միջոցներով շարունակում էին մասնակցել ոռոգման շինարարությանը։ ՍՄԿԿ 20-րդ համագումարի որոշումներով նախատեսվեց Հայկական ՍՍՀ-ում ոռոգվող հողերի տարածությունները ընդարձակել 39 հազար հեկտարով և ջրարբի դարձնել 150 հազար հեկտար արոտավայր։ Այդ նպատակով վեցերորդ հնգամյակում նախատեսվում էր ներդնել 238,5 միլիոն ռուբլի, որից 216 միլիոնը պետական բյուջեից և 22,5 միլիոնը կոլտնտեսությունների միջոցներից։ Այսպիսով, նախորդ հնգամյակի համեմատությամբ, վեցերորդ հնգամյակում ջրաշինարարական աշխատանքներում կապիտալ ներդրումների գումարը աճեց 57 տոկոսով։

Ավարտվեցին Արզնի-Շամիրամ ջրանցքի կառուցման առաջին հերթի աշխատանքները, կառուցվեցին Թալինի և Աբովյանի ջրանցքները։ Այդ ջրանցքների շինարարության ավարտումով Աբովյանի, Աշտարակի և Թալինի շրջաններում ապահովվեց 30 հազար հեկտարից ավելի ոռոգելի նոր տարածություններ։

Ավարտվեց նաև Ներքին Հրազդանի ջրանցքի 2-րդ հերթի, Ալափարսի, Դվինի ջրանցքները, Արմաշի, Շնողի, Ճոճ-

26 Նույն տեղում։

կանի, Լճաձորի, Սպիտակի, Արջուտի, Սովետականի, Խալիսայի ջրհան կայանների կառուցումը, որոնք ապահովեցին 6000 հեկտարից ավելի նոր հողերի ոռոգումը և 4500 հեկտար հողերի ջրապահովումը՝ Ալավերդու, Նոյեմբերյանի, Սպիտակի, Կիրովականի, Հրազդանի, Վեդու, Արտաշատի, Իջևանի և Հոկտեմբերյանի շրջաններում։

1954—1965 թվականներին լայն թափ ստացավ ոչ միայն խոշոր ջրանցքների, այլ նաև միջտնտեսային ոռոգման սիստեմների, ջրհան կայանների, արհեստական լճակ-ջրամբարների կառուցումը։ Միայն 1953—1962 թվականներին ոռոգվող տարածությունը ավելացավ 46.428 հեկտարով, չորացվեցին 5670 հեկտար ճահիճներ, որով գրեթե ամբողջովին վերացան ճահիճները։ 1957 թվականին սկսվեց արոտավայրերի ջրարբիացումը, որը կարևոր նշանակություն ունի անասնապահության մթերատվության բարձրացման համար։

Հայաստանում 1959—1965 թվականներին ջրային տնտեսության կարիքների համար ներդրվել է մոտ 20 միլիոն ռուբլի, որն ավելի քան երեք ու կես անգամ գերազանցեց նախորդ քսանամյակի ներդրումները։ Կոլտնտեսությունները այդ կառուցումներին մասնակցել են բանուժով և ներդրել են 1050,7 հազար ռուբլի։

Ոռոգման սիստեմի ընդլայնումը հնարավորություն է տալիս մշակության ոլորտի մեջ առնել հազարավոր հեկտար անմշակ տարածություններ, ուր ստեղծվում են պետական խոշոր ձեռնարկություններ՝ սովխոզներ։ Կոլտնտեսությունները հնարավորություն են ստանում նախկին անջրդի վարելահողերում մշակելու բարձրարժեք կուլտուրաներ, ոռոգումը բարձրացնում է գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը։

Ջրաշինարարական աշխատանքների շնորհիվ հանրապետությունում լայն թափ ստացավ գյուղի էլեկտրիֆիկացումը, որին՝ պետության հետ մեկտեղ մասնակցում էին նաև կոլտնտեսությունները։

Այսպիսով էլեկտրիֆիկացման բնագավառում բանվոր դասակարգը և կոլտնտեսային գյուղացիությունը հանդես էին գալիս համատեղ ջանքերով։

ՔԱՂԱՔԻ ՇԵՖՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻՆ

Հետպատերազմյան տարիներին էլ ավելի զարգացավ Հայաստանի էկոնոմիկան, նա դարձավ ՍՍՀՄ-ի արդյունաբերական խոշոր շրջաններից մեկը։ Մեր հանրապետությունն ունի բազմաճյուղ արդյունաբերություն, որի մեջ գերակշռող տեղ է բռնում ծանր արդյունաբերությունը՝ քիմիական, գունավոր մետալուրգիական, լեռնահանքային , էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային, սարքաշինական, մեքենաշինական և դազգահաշինական ձեռնարկություններով։ Իսկ ինչ վերաբերում է արդյունաբերության մյուս ճյուղերին՝ սննդի, թեթև, տեքստիլ, փայտամշակման և շինանյութերի, դրանք ստեղծվեցին տակավին 1920—1930 թվականներին և ավելի լայն թափով զարգացան հետագայում։

Հետպատերազմյան շրջանում խոշոր տեղաշարժ կատարվեց նաև բանվոր դասակարգի կազմում։ Եթե 1920—1930-ական թվականներին հանրապետության բանվորները մեծ մասամբ կենտրոնացած էին տեքստիլ, թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկություններում, ներկայումս բանվորների առաջատար ուժը գտնվում է ծանր արդյունաբերության ու մեքենաշինության ձեռնարկություններում։

Քաղաքի և գյուղի միջև տնտեսական կապերը ուժեղացնելու, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքն ամրապնդելու գործում խոշոր նշանակություն ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների շեֆական օգնությունը տնտեսապես ետ մնացող կոլտնտեսություններին։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1953 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ արդյունաբերական ձեռնարկություններին և կազմակերպություններին թույլատրվեց շեֆության կարգով օգնել կոլտնտեսություններին՝ կատարելու ջերմոցների շինարարություն և այդ նպատակով ծախսել արդյունաբերության մնացորդները, չֆոնդավորվող նյութերը։

Այդ որոշումից հետո Հայաստանում ավելի ծավալվեց արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների շեֆական օգնությունը գյուղին։ Մեր երկրում սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի հարցերը հուզում են ոչ միայն կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատավորներին, այլ նաև բանվոր դասակարգին, ինտելիգենցիային։

Արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները ակտիվորեն աջակցեցին գյուղատնտեսության նոր վերելքին։ Այդ շեֆությունը շատ դեպքերում անցավ ջերմոցների և ջերմատների կառուցման շրջանակներից և ստացավ բազմակողմանի օգնության ձև։ Ենթաշեֆ կոլտնտեսություններին օգնություն ցույց տալու գրական աշխատանքի օրինակներ տրվեցին Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Ղափանի և այլ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվները, կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները։

Կուսակցության կոչով քաղաքներից կոլտնտեսություններ ու ՄՏԿ-ներ աշխատելու մեկնեցին ինժեներա-տեխնիկական և մեխանիզատորական կադրեր։ Քաղաքից գյուղ ուղարկված մասնագետները նշանակվեցին ՄՏԿ-ների դիրեկտորներ, գլխավոր ինժեներներ, վերանորոգման արհեստանոցների վարիչներ և այլն։

Արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները կոլտնտեսություններում կազմակերպեցին դարբնոցներ, սղոցարաններ և այլ արհեստանոցներ, կարգավորեցին գյուղի էլեկտրացանցը, ջրատար խողովակները, արտադրական շենքերը, բաղնիքները, կուլտուր-լուսավորական հիմնարկները։ Կոլտնտեսականների համար շեֆ կազմակերպությունների ուժերով կազմակերպվեցին բազմաթիվ զեկուցումներ, զրույցներ, ինքնագործ խմբերի ելույթներ, գյուղական գրադարանները հարստացվեցին թարմ գրականությամբ, կահավորվեցին գյուղական ակումբները, ստեղծվեցին պատվո տախտակներ և այլն։ Բժշկական հիմնարկների մասնագետները կոնսուլտացիաներ էին տալիս շրջանային ու գյուղական

բժիշկներին։ Ուշագրավ է նաև այն, որ քաղաքների կոմերիտական կազմակերպությունները ենթաշեֆ գյուղերում կազմակերպում էին շաբաթօրյակներ, օգնում հասարակական կազմակերպություններին։

Երևանի կուսակցական կազմակերպությունը ամենօրյա գործնական օգնություն էր ցույց տալիս գյուղին։ ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեն լայն բացատրական աշխատանք տարավ հիմնարկ-ձեռնարկություններում, գյուղատնտեսական և գիտական լավագույն մասնագետներին, մեխանիզատորներին ՄՏԿ-ներ և կոլտնտեսություններ մշտական աշխատանքի ուղարկելու համար։ Մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկություններից 1954 թվականին գյուղ ուղարկվեցին 56 ինժեներ-մեխանիկ, 7 տեխնիկ-մեխանիկ, 114 ագրոնոմ, զոոտեխնիկ, ինժեներ,70 տրակտորիստ, խառատ, կոմբայնավար և այլ մասնագետներ։ Գյուղ մեկնածներից շատերը կոմունիստներ և կոմերիտականներ էին։ Շինարարական-մոնտաժային տրեստի ինժեներ-մեխանիկ Գ. Գուրգենյանը նշանակվեց Իջևանի ՄՏԿ-ի դիրեկտոր։ Նա արհեստանոցի վարիչ՝ քաղաքից ուղարկված Լ. Գասպարյանի և գլխավոր անասնաբույժ Ա. Վարդանյանի հետ եռանդուն գործունեություն ծավալեց, որի շնորհիվ ապահովվեց ՄՏԿ-ի առջև դրված խնդիրների կատարումը։

Երևանի գյուղմեխանիզացիայի տեխնիկումի նախկին դասախոս, ինժեներ-մեխանիկ Ա. Պողոսյանը նշանակվեց Ստեփանավանի շրջանի ՄՏԿ-ի վերանորոգման արհեստանոցի վարիչ։ Աշխատանքի անցնելու հենց առաջին օրվանից, Ա. Պողոսյանը կահավորեց արհեստանոցը, կառուցեց ծածկոցներ, որը հնարավորություն տվեց ձմռան պայմաններում անխափան անցկացնելու տրակտորների վերանորոգումը։

Կոմպրեսորների գործարանի ինժեներ-մեխանիկ Ա. Հակոբյանը նշանակվեց Էջմիածնի ՄՏԿ-ի վերանորոգման արհեստանոցի վարիչ և շատ բան արավ տնտեսության մեջ ներդնելու գիտության ու տեխնիկայի նվաճումները։ Իրենց նոր աշխատանքում լիովին արդարացրին ինժեներ-մեխանիկներ

Ռաֆիկ Սարվազյանը, (գյուղատնտեսության մինիստրությունից), Վահան Շահբազյանը (էլեկտրամեքենաշինական գործարանից) և շատ ուրիշներ։ Նրանք նշանակվեցին արհեստանոցների վարիչներ, կազմակերպեցին տրակտորների բարձրորակ վերանորոգումը և ապահովեցին գյուղատնտեսական մյուս մեքենաների վերանորոգումը։ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը վերցրել էր Աշտարակի ՄՏԿ-ի շեֆությունը և օգնեց վերանորոգելու հինգ էլեկտրամոտոր, մեկ խառատային հաստոց և այլն։ Գործարանի կոմերիտական կազմակերպությունը պարտավորվեց պատրաստել տրակտորների և կոմբայնների պահեստամասեր։

Ավտոդողերի գործարանը վերցրել էր Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղի կոլտնտեսության շեֆությունը։ Ավտոդողցիներն օգնեցին կոլտնտեսությանը շինարարության և գործիքների վերանորոգման գործում։ Գործարանի դիրեկցիան միջնորդեց Մինիստրների սովետի առջև և վերջինիս թույլտվությամբ կոլտնտեսությանը տվեց մեկ օդափոխիչ և 20 գույգ ավտոդողեր։

Երքաղսովետի մեխանիկական գործարանը վերցրել էր Էջմիածնի շրջանի Ջրառատի ՄՏԿ-ի շեֆությունը։ Գործարանի առաջավորներն իրենց սոցիալիստական պարտավորություններում ստանձնեցին առաջին հերթին կատարել ենթաշեֆի պատվերները։ Գործարանը մեծ օգնություն ցույց տվեց ՄՏԿ-ին, նրան բաց թողեց գործիքներ, մեքենաների մասեր և այլն։

№ 1 շինարարական-մոնտաժային վարչությունը վերցրել էր Աբովյանի շրջանի Պողնի և Մայակովսկի գյուղերի շեֆությունը։ Շինարարներն օգնում էին կոլտնտեսություններին կառուցելու արտադրական շենքեր և ակումբներ։ Վարչությունը բանվորական ուժ և շինանյութ տրամադրեց այդ կոլտնտեսություններին։

ՄՏԿ-ներին և կոլտնտեսություններին լայն օգնություն ցույց տվեցին Ջերժինսկու անվան դաշգահաշինական, Ս. Մ.

Կիրովի անվան, ռետինա-տեխնիկական իրերի, էլեկտրատեխնիկական, պահածոների գործարանների, ծխախոտի ֆաբրիկայի, Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի կոլեկտիվները։ 1953 թվականի սեպտեմբերից 1954 թվականի հունվար ամիսն ընկած ժամանակամիջոցում, Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպությունը գյուղերում անց էր կացրել ավելի քան 500 դասախոսություն, կոլտնտեսություններում կազմակերպել էին ինքնագործ խմբերի երեկոներ։ Երևանի նուրբ մահուդի կոմբինատի կուսակցական կազմակերպությունը ստանձնել էր Արտաշատի շրջանի Փարիզի կոմունայի անվան կոլտնտեսության շեֆությունը։ Կոմբինատի ղեկավար աշխատողները մի քանի անգամ եղան այդ կոլտնտեսությունում, ուսումնասիրեցին նրա հնարավորությունները։ Կոլտնտեսության արհեստանոցին կոմբինատը բաց թողեց 3 տոննա ածուխ և մեկ տոննա երկաթ։ Կոլտնտեսության փայտամշակման արհեստանոցը աշխատեցնելու համար կոմբինատի տեխնիկական անձնակազմի միջոցով կարգավորվեց կոլտնտեսության էլեկտրական տնտեսությունը, պատրաստվեց էլեկտրամոտոր։ Կոմբինատն ուներ մի կաթսա, որը չէր օգտագործվում և վերադաս օրգանների թույլտվությամբ այն հանձնեց ենթաշեֆ կոլտնտեսությանը, որն օգտագործվեց բամբակի չորացման, մանկապարտեզի, դպրոցի և ակումբի ջեռուցման համար։

ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կոմիտեն հանրապետության ՄՏԿ-ները և սովխոզները ուղարկեց ավելի քան 30 ագիտբրիգադ, որոնք մասսայականացրին գյուղատնտեսության մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումները։ Մայրաքաղաքի կոմերիտական կազմակերպությունները շրջաններում անցկացրին շաբաթօրյակներ, օգնեցին կոլտնտեսություններին կազմելու ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև նորոգելու գյուղատնտեսական մեքենաները։

Պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոմելիորատիվ ֆակուլտետի դասախոսները օգնեցին կոլտնտեսություններին խմելու ջուր ստանալու։ Գողթն գյուղում խմելու ջուրը բերում էին հեռու տեղից։ Ինստիտուտը զբաղվեց այդ հարցով, այնտեղ դրեց հիդրոտրանսֆորմատոր և բնակիչներին ապահովեց ջրով։ Ինստիտուտը նման աշխատանք կատարեց նաև Հրազդանի շրջանի Սոլակ և Բջնի գյուղերում, օժանդակեց Շահումյանի շրջանի կոլտնտեսությունների ֆերմաների մեքենայացմանը։

Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի հիմնարկ-ձեռնարկությունները վերցրել էին էջմիածնի, Սևանի շրջանների շեֆությունը և 16 ինժեներներ, մեխանիկներ ուղարկվեցին ՄՏԿ-ները մշտական աշխատանքի։

1954 թվականի հունվարի 26-ին ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի երկրորդ պլենումը քննարկեց ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի «ՍՍՀՄ-ում գյուղատնտեսության զարգացման հետագա միջոցառումների մասին» որոշման կատարման ընթացքը, բացահայտեց գյուղի նկատմամբ շեֆական աշխատանքում տեղ գտած թերությունները, միջոցներ մշակեց այն վերացնելու համար[27]։

Կուսակցությունը խնդիր դրեց մոբիլիզացնել բոլոր միջոցները և կարճ ժամանակամիջոցում բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, զարգացնել անասնապահությունը, բարձրացնել անասունների մթերատվությունը, բարելավել մեքենա-տրակտորային կայանների աշխատանքը, ուժեղացնել ղեկավարությունը գյուղատնտեսության նկատմամբ և բարձրացնել քաղաքական աշխատանքի մակարդակը գյուղում։ Այս խնդիրների իրականացումը պահանջում էր ավելի ուժեղացնել արդյունաբերական ձեռնարկությունների շեֆությունը կոլտնտեսությունների և մեքենա-տրակտորային կայանների նկատմամբ։ Այդ շարժումն ավելի մեծ ծավալ ստացավ Երևան քաղաքի Լենինյան շրջանի արդյունաբերական ձեռնարկություններում, հատկապես ՀԿԿ

27 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 47, կապ. 5, գ. 35, 1954։

Երևանի քաղաքային կոմիտեի 1954 թվականի հունվարյան պլենումից հետո։ Շրջանի 83 ձեռնարկություններ ստանձնեցին հանրապետության 5 շրջանների, 14 ՄՏԿ-ների և 96 կոլտնտեսությունների շեֆությունը։ Գյուղ ուղարկվեց 39 ինժեներ-մեխանիկ և 17 տեխնիկ։ Շրջանի արդյունաբերական ձեռնարկություններից գյուղ ուղարկվեցին 30 մեխանիզատորներ, որոնք ՄՏԿ-ներում աշխատում էին որպես տրակտորիստներ, կոմբայնավարներ, խառատներ և այլն։

Լենինյան շրջանի բազմաթիվ գործարաններ և ֆաբրիկաներ, շինարարական և տրանսպորտային կազմակերպություններ, կոլտնտեսությունների էկոնոմիկայի ուսումնասիրության շնորհիվ, ելնելով այդ տնտեսությունների զարգացման պահանջներից, ապահովում էին գործնական օգնություն։ Արդյունաբերական ձեռնարկությունները ենթաշեֆ ՄՏԿ-ներ և կոլտնտեսություններ ուղարկեցին հաստոցներ, գործիքներ, պատրաստեցին պահեստային մասեր, ակտիվորեն օգնեցին կառուցելու սայլատնակներ, ծածկոցներ, անասնապահական շենքեր։ Նրանք օգնում էին կոլտնտեսություններին մեքենայացնելու աշխատանքը, անց էին կացնում և վերանորոգում էլեկտրական գծերը և ջրատար ուղիները, կազմակերպում էին գյուղատնտեսական մեքենաների վերանորոգում, միաժամանակ գյուղատնտեսական մեխանիզատորներին հաղորդելով ինդուստրիալ աշխատանքի առաջավոր մեթոդները և կուլտուրան։ Արդյունաբերական և տրանսպորտային ձեռնարկությունների կոլեկտիվները գյուղատնտեսական մեխանիզատորներին օգնություն էին ցույց տալիս արտադրողականության բարձրացման և աշխատանքի կազմակերպումը բարելավելու ուղղությամբ։

Շրջանի արդյունաբերական ձեռնարկությունները ՄՏԿ-ներն ու կոլտնտեսություններն ուղարկեցին 12 հաստոց, 65 էլեկտրամոտոր, 7 սղոցային հարմարանք, 8 ջրհան մեքենա, 3 գեներատոր, 5 տրանսֆորմատոր և այլն։ Ձեռնարկությունների կոլեկտիվները օգնություն կազմակերպեցին կոլտնտեսությունների դարբնոցների և արհեստանոցների կարգավորման,

սղոցարանների կառուցման, էլեկտրացանցի, ջրմուղների կարգավորման, արտադրական շենքերի, բաղնիքների, կուլտուրայուսավորական հիմնարկների կառուցման, վերանորոգման և այլ աշխատանքներում։ Շրջանի ձեռնարկությունները շեֆ գյուղերին տրամադրեցին 300 հազար ռուբլուց ավելի շինանյութ։

Բացի այդ քաղաքի շատ կոլեկտիվներ, ՄՏԿ-ներին և կոլտնտեսություններին տնտեսա-տեխնիկական օգնություն ցույց տալու հետ մեկտեղ, լայն գործունեություն ծավալեցին քաղաքական, ագիտացիոն-մասսայական, կուլտ-կենցաղային աշխատանքների բարելավման ուղղությամբ։ Այսպես, ՄՏԿ-ներում և կոլտնտեսություններում տրվեցին ավելի քան 50 զեկուցում ու դրույց, 26 համերգ, գյուղ ուղարկվեց ավելի քան 2000 կտոր գրականություն, կահավորվեց 7 ակումբ և այլն։ Արդյունաբերական ձեռնարկությունների կոմերիտական կազմակերպությունների ուժերով ենթաշեֆ գյուղերում և ՄՏԿ-ներում անցկացվեցին շաբաթօրյակներ, որոնց մասնակցեցին ավելի քան 1200 երիտասարդներ։ Կոմերիտականների ուժերով փոխադրվեց 160 ավտոմեքենա խոտ, պատրաստվեց 45 տոննա սիլոս, փորվեց 2 սիլոսային հոր և այլն։ 30 կոմերիտական ինժեներ և տեխնիկներ գյուղ ուղարկվեցին։

Ավելորդ չի լինի այստեղ բերել Լենինյան շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների շեֆական աշխատանքներից մի քանի օրինակներ։

Ծխախոտի ֆաբրիկայի կոլեկտիվը վերցրել էր Աշտարակի շրջանի Ուջան գյուղի կոլտնտեսության շեֆությունը։ Ֆաբրիկայի կոլեկտիվի ուժերով կոլտնտեսությունում կազմակերպվեց երկու շաբաթօրյակ, բերքահավաքի ժամանակ ֆաբրիկան օգնեց տրանսպորտով, կազմակերպեց դասախոսություն և ինքնագործ խմբի ելույթներ։ Ավտոպահեստամասերի գործարանի կոլեկտիվը վերցրել էր Հրազդանի ՄՏԿ-ի, Ներքին և Վերին Հրազդան գյուղերի կոլտնտեսությունների շեֆությունը։ Գործարանից մի քանի բրիգադներ մեկնեցին շեֆ գյուղերը, նորոգեցին ՄՏԿ-ի գյուղատնտեսական մեքենաները։ Բանվոր-

ներն ու ինժեներները լայն օգնություն ցույց տվեցին նաև բերքահավաքին։ Ներքին Հրազդանում գործարանի ուժերով պատրաստվեցին սղոցարան և դարբնոց։ ՄՏԿ-ում պատրաստվեց արհեստանոց և այն հարստացվեց սարքավորումներով։

Կաբելի գործարանի ուժերով փոխվեցին Սիսիանի շրջանի Դարբաս և Գետաթաղ գյուղերի էլեկտրական լարերը, կարգավորվեց կալսիչը և այլն։ Փարպիի կոլտնտեսության շեֆն էր հանդիսանում գաջի գործարանը, որը մեքենայացրեց ՄՏԿ-ի արհեստանոցը, տեղափոխեց շինանյութը։ Երևանի 3-րդ հացի գործարանը Սասունիկի կոլտնտեսության 130 կովերի համար գոմ պատրաստեց։ Լավ օգնություն ցույց տվեց կաշվի գործարանը, որը լուսավորություն անցկացրեց շեֆ գյուղերում։

Շեֆական աշխատանքի դրական օրինակ տվեց կոմպրեսորների գործարանի կոլեկտիվը։ Այստեղ առանձնացվեց հատուկ հանձնաժողով, որը զբաղվում էր ենթաշեֆ ՄՏԿ-ին և կոլտնտեսությանը օգնություն կազմակերպելու հարցով։ Հանձնաժողովը, Սիսիանի շրջանի Նոր Ավանի ՄՏԿ-ի ղեկավարների և կոլտնտեսության վարչության հետ միասին, մանրամասն ուսումնասիրեց աշխատանքի կազմակերպման վիճակը և արդյունքները քննության դրեց գործարանի և ենթաշեֆ արտելի կոլեկտիվներում։ Նրանք միջոցներ մշակեցին վերացնելու գոյություն ունեցող թերությունները։ Բնորոշն այն է, որ շեֆական աշխատանքի կազմակերպման հարցով զբաղվում էր ոչ միայն հանձնաժողովը, գործարանի դիրեկցիան ու կուսակցական կազմակերպության բյուրոն, այլև ամբողջ կոլեկտիվը, որի յուրաքանչյուր անդամ գիտեր իր անելիքները։ Մոբիլիզացվեց ինժեներա-տեխնիկական ողջ կազմը և կոլտնտեսության համար պատրաստվեց և տեղադրվեց 2 հաստոց, շահագործման հանձնվեց խափանված ջրմուղ մեքենան, անցկացվեց էլեկտրական գիծ, լրիվ էլեկտրիֆիկացվեց սղոցարանը, կոլտնտեսությանը տրվեց մեծ քանակությամբ մետաղամշակման գործիքներ, էլեկտրական և շինարարական սարքավորումներ, մետաղ, վերանորոգվեցին ՄՏԿ-ի մեքենաները և տրակտորները։ Գործարանի կոլեկտիվի ուժերով կազմակերպվեցին և անցկացվեցին ագիտացիոն-պրոպագանդիստական և կուլտուր-լուսավորական աշխատանքներ[28]։

Ս. Մ. Կիրովի անվան գործարանի կոլեկտիվը շեֆական լայն օգնություն ցույց տվեց Աղիգբեկովի ՄՏ կայանին և Մարտիրոս գյուղի կոլտնտեսությանը։ Գյուղ ուղարկվեցին էլեկտրամոտորներ, էլեկտրազոդման և դարբնոցի լրիվ հարմարանքներ, էլեկտրասարքավորումներ, բաղնիքի կառուցման լրիվ հարմարանք, մեծ քանակությամբ կարբիդ, թթվածին, խողովակներ, ցեմենտ, պահեստային մասեր և այլ նյութեր։ Օգնության կարգով գործարանից ՄՏԿ ուղարկվեց 7 մասնագետ։ Մարտիրոս գյուղի կոլտնտեսություն ուղարկվեց մասնագետների բրիգադ, որը կոլտնտեսության աշխատողներին հաղորդեց մոնտաժային աշխատանքի իր փորձը, մոնտաժեց սղոցարանը, օգնեց մեքենայացնելու գյուղատնտեսական արտադրությունը, վերանորոգեց կոլտնտեսության երկու ավտոմեքենան և այլն։

Շեֆական դրական մեծ գործ կատարեց նաև տրամվայտրոլեյբուսի վարչության կոլեկտիվը։ Նա վերցրել էր Ապարանի ՄՏԿ-ի շեֆությունը և վերանորոգեց էլեկտրասարքավորումները, նորոգեց 5 բուրդ խուզող մեքենա, 7 էլեկտրամոտոր, պատրաստեց նոր տիպի դարբնոց՝ իր բոլոր սարքավորումներով, վերանորոգեց ջրմուղը, որի շնորհիվ ՄՏԿ-ն և արհեստանոցը ապահովվեցին ջրով։ ՄՏԿ-ի համար պատրաստվեցին էլեկտրաչափիչ գործիքներ, բաց թողնվեցին մեծ քանակությամբ պահեստամասեր, շինանյութեր, էլեկտրասարքավորումներ, գյուղի աշխատավորության համար տրվեցին համերգներ, անցկացվեցին ֆիզկուլտ մրցումներ և այլն[29]։

Ավտոդոզերի գործարանի կոլեկտիվը շեֆական օգնություն էր ցույց տալիս Սիսիանի շրջանի Ուղ գյուղի կոլտնտեսությանը։ Այնտեղ ուղարկվեց վերանորոգման բրիգադ, որը կոլտնտեսությունում անցկացրեց ջրամատակարարման ցանց,

---

28 Նույն տեղում, թ. 53։

29 Նույն տեղում, էջ 64—65։

այգիները ոռոգելու համար պատրաստեց և տեղադրեց ջրհան մեքենա։ Գործարանի միջոցներով վերանորոգվեցին կոլտնտեսության երկու ավտոմեքենաները և սայլերը, կոլտնտեսությանը բաց թողնվեց 6 ավտոդող, ռետինե խողովակներ, էլեկտրալարեր, էլեկտրասարքավորումներ, պատրաստվեց մեղրի 5 փեթակ և այլն։

Կաշվի գործարանը վերցրել էր Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի կոլտնտեսության շեֆությունը։ Գործարանի միջոցներով վերանորոգման ենթարկվեց էլեկտրաենթակայանը, լրիվ նորոգվեց գյուղի լուսավորության ցանցը, մեքենայացվեց դարբնոցը, պատրաստվեց և շահագործման հանձնվեց սղոցարանը, վերանորոգվեց ակումբը և այլն։ Կոլտնտեսության ակումբին տրվեց 70 աթոռ, վերանորոգվեց կոլտնտեսության ավտոմեքենան, բաց թողնվեց 4 ավտոդող։

Ենթաշեֆ կոլտնտեսություններին մեծ օգնություն ցույց տվեցին նաև Անդրկովկասյան մոնտաժային վարչության, լայն սպառման առարկաների արտադրության մինիստրության և էլեկտրաարդյունաբերական շինարարական-մոնտաժային վարչությունների, բեռնատար № 1 ավտոպարկի, Հայկոոպի տրանսպորտի, կաշվի № 3 գործարանի կոլեկտիվները։ Շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների դրական աշխատանքներից մեկն էլ այն էր, որ մի շարք գործարաններ ձեռնարկեցին կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների կադրերի պատրաստումը։ Դրանցից են նուրբ բրդյա և մահուդի կոմբինատը, ավտոդողերի, Ջերժինսկու անվան դաղգահաշինական և կոմպրեսորների գործարանները, ծխախոտի ֆաբրիկան և այլն։

1954 թվականի օգոստոսի 24-ին ՀԿԿ Երևանի կազմակերպության Լենինյան շրջանի կուսակցության ակտիվի ժողովը, որին մասնակցում էին նաև ենթաշեֆ շրջանների, ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների ներկայացուցիչները, հանգամանորեն քննարկեց շեֆական օգնության արդյունքները, ապա բացահայտվեցին տեղ գտած թերությունները և նշվեց միջոցներ դրանք վերացնելու համար։ Գյուղին ցույց տրվող շեֆական աշխատանքի հարցերը սիստեմատիկորեն քննության դրվեցին ՀԿԿ Լենինականի և Կիրովականի քաղկոմներում, Ղափանի, Ալավերդու և մյուս շրջկոմներում։

Այսպիսով հանրապետության արդյունաբերական հարյուրավոր ձեռնարկությունների կոլեկտիվներ, ողջ բանվոր դասակարգը հանդիսացան գյուղատնտեսության նոր վերելքի ակտիվ կազմակերպիչներ և իրենց պարտքը կատարեցին գյուղի աշխատավորության նկատմամբ։

Գյուղին ցույց տրվող շեֆական օգնությունը հանդիսացավ բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի կարևոր ձևերից մեկը։

1955 թվականից փոխվեցին գյուղին ցույց տրվող շեֆական օգնության ձևերը։ Առաջին պլանի վրա մղվեց արտադրական օգնությունը և ավելի ներդաշնակվեց պետական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների շահերը։ Այսպես. հանրապետության պահածոների արդյունաբերության ձեռնարկությունները շահագրգռված են կոլտնտեսություններից ստանալ ոչ միայն քանակով շատ, այլ նաև ավելի բարձր որակի հումք, որը շահավետ է և՛ պետական ձեռնարկությունների, և՛ կոլտնտեսությունների համար։ Ելնելով այդ պահանջից պահածոների ձեռնարկությունները ոչ միայն պայմանագրեր են կնքում կոլտնտեսությունների հետ և հետևում նրանց կատարմանը, այլ նաև մշտական շեֆական օգնություն են ցույց տալիս այդ կոլտնտեսություններին՝ ընդարձակելու հումքի բազան, բարելավելու գյուղատնտեսական մթերքների որակը։ Գրեթե բոլոր պահածոների գործարաններում ստեղծվել են մեքենայական սարքեր, որոնք զտում են բանջարաբոստանային կուլտուրաների սերմերը և դրանք հանձնվում են կոլտնտեսություններին, իսկ վերջիններս այն օգտագործելով արտադրության մեջ, զգալիորեն բարելավում են մթերքների որակը։ Նույն հարաբերություններն են ստեղծվել նաև գինու-կոնյակի, շաքարի, ծխախոտի, կաթի արտադրական ձեռնարկությունների և խաղողագործական, ճակնդեղագործական, ծխախոտագործական, անասնապահական կոլտնտեսությունների միջև։

Բանվոր դասակարգը ակտիվորեն մասնակցում է գյուղա-

տնտեսական աշխատանքների մեքենայացմանը, գյուղատնտեսության քիմիացմանը, գիտության նվաճումները գյուղատնտեսական արտադրության մեջ ներդնելուն։ Ավելին, արդյունաբերական այն ձեռնարկությունները, որոնք հումքը ստանում են կոլտնտեսություններից, ամեն ինչով օգնում են կոլտնտեսություններին հաջողությամբ կատարելու գյուղատնտեսական առաջադրանքները։ Շեֆական աշխատանքի ձևերը հետզհետե կատարելագործվում են և ավելի կոնկրետորեն են լուծվում գյուղատնտեսության բարձրացման հարցերը։

Եթե 1953—1954 թվականներին անկախ արտադրության բնույթից արդյունաբերական ձեռնարկություններն օգնում էին մեծ մասամբ ետ մնացող կոլտնտեսություններին՝ բարձրացնելու արտադրողականությունը, ապա շեֆական օգնությունը հետագայում խիստ մասնագիտացվեց և ավելի ցայտուն դրսևորվեց պետության ու կոլտնտեսությունների շահերի ընդհանրությունը։ Ենթաշեֆ տնտեսությունների նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների օգնությունը եթե առաջ կրում էր պատահական բնույթ, ապա ներկայումս այն դարձել է պլանավորված, մշտական։ Դա բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի նոր ավելի բարձր ձևերից մեկն է։

Այժմ շատ գործարաններ ու ֆաբրիկաներ, օրինակ՝ Վ. Ի. Լենինի անվան Հայէլեկտրամեքենաշինական, Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, հիդրոպոմպերի, խտացրած կերերի, ավտոպահեստամասերի, ավտոդողերի գործարանները և այլ արտադրական ձեռնարկություններ, արդեն կատարում են գյուղատնտեսության պատվերներ և կոլտնտեսությունները սերտորեն կապվում են արդյունաբերական այդ ձեռնակությունների հետ։

* * *

Արդյունաբերության և կոլտնտեսային-սովխոզային արտադրության մեջ կուսակցական կազմակերպություններին տրված է վերահսկողության իրավունքը։ Այդ նշանակում է, որ

նրանք պետք է ոչ թե ընդհանուր ձևով ղեկավարեն արտադրությունը, այլև թափանցեն նրա ոլորտները, օգնեն բանվորներին, կոլտնտեսականներին, քաղաքի և գյուղի ամբողջ աշխատավորությանը՝ պատվով կատարելու այն բոլոր խնդիրները, որ դրել է նրանց առաջ մեր կուսակցությունը, ապահովեն արտադրության վերելքը։ Խորապես ըմբռնելով իրենց անելիքները, մեր հանրապետության կուսակցական կազմակերպությունները լայն հնարավորություններ են ստեղծում, որպեսզի օր-օրի բարձրանա աշխատավորների ակտիվությունը, նախաձեռնությունը։ Դրա լավագույն օրինակն է սոցիալիստական մրցության ծավալումը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության միասնաբար ակտիվ մասնակցությունը արտադրության վերելքին։ 1954 թվականի փետրվարին տեղի ունեցած Հայաստանի կոմկուսի XVII համագումարը ամփոփեց հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության ձեռք բերած հաջողությունները։ Անդրադառնալով գյուղատնտեսությանը, համագումարն ընդգծեց, որ մեքենա-տրակտորային կայանները, կոլտնտեսությունները, սովխոզները համալրվել են գյուղատնտեսական նոր, որակյալ շատ կադրերով։

Համագումարը բացահայտեց նաև գյուղատնտեսության կուսակցական ղեկավարման մեջ գոյություն ունեցող արմատական թերությունները և ինչպես կուսակցական կազմակերպությունների, այնպես էլ ամբողջ աշխատավորության հիմնական խնդիրը համարեց գյուղատնտեսության բոլոր կուլտուրաների բերքատվության բարձրացումը։

Կուսակցության կոչով մեր հանրապետությունից հազարավոր բանվոր և գյուղացի երիտասարդներ մեկնեցին Ղազախստան և Սիբիր՝ ակտիվորեն մասնակցելու խամ ու խոպան հողերի յուրացմանը։

Ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի 1954 թվականի փետրվարմարտյան պլենումի, Հայաստանի կոմկուսի XVII համագումարի որոշումներից, հանրապետությունում լուրջ ուշադրություն դարձվեց հացահատիկային կուլտուրաների բերքատվու-

թյան բարձրացմանը։ Ծավալվեցին Արարատյան դաշտավայրում աղակալած, ճահճակալած հողատարածությունների մշակման աշխատանքները։ Մաքրման և ոռոգման շնորհիվ 4—5 տարիներում մոտ 4000 հեկտար հողային տարածություն մշակելի դարձավ։ Գործի լծվեցին ոչ միայն կոլտնտեսականները, սովխոզների բանվորները, այլ նաև պետական հիմնարկները, ջրային տնտեսության կազմակերպություններն իրենց տեխնիկայով և բանվորական ուժով, ինժեներներով։ Հանրապետության խոպան, խամ, աղակալած, ճահճակալած հողերը մշակելի դարձնելու գործում Հայաստանի բանվոր դասակարգը հանդես եկավ կոլտնտեսային գյուղացիության հետ ձեռք-ձեռքի տված։

ՍՄԿԿ Կենտկոմի փետրվար-մարտյան պլենումից հետո, Հայաստանի կուսակցական կազմակերպությունները առաջ քաշեցին կիրճերում մինչև այդ անմշակ հողային տարածությունների օգտագործման հարցը։ Զափանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու, Վեդու, Կիրովականի, Ալավերդու, Իջևանի, Շամշադինի և մյուս շրջաններում սկսեցին մշակել կիրճերի հողային տարածությունները, այդ տեղերում զարգացնելով հատկապես այգեգործությունը։

Մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում գյուղատնտեսության հարցերի քննարկմանը ավելի հաճախ էին անդրադառնում կուսակցական կազմակերպությունները, նպատակ ունենալով օգնել գյուղատնտեսական օրգաններին, կոլտնտեսություններին ու սովխոզներին՝ տեղ գտած թերությունները վերացնելու, գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնելու։ Գյուղատնտեսության վերելքի կազմակերպման հարցերով պարբերաբար զբաղվում էր Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն։

ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1956 թվականի մարտի 6-ին որոշում ընդունեցին «Գյուղատնտեսական արտելի կանոնադրության և կոլտնտեսային արտադրության կազմակերպման ու արտելի գործերի կառավարման ասպարեզում կոլտնտեսականների նախաձեռնության հետագա զարգացման մասին» և «Կոլտնտեսականների ամենամյա ավանսավորման ու կոլտնտեսություններում աշխատանքի լրացուցիչ վարձատրության մասին»։

ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը նշեցին, որ շնորհիվ կուսակցության քաղաքականության, գյուղում ստեղծվեց նոր, սոցիալիստական հասարակարգ, որը արմատապես վերակառուցեց գյուղացիական տնտեսությունները և միլիոնավոր գյուղացիների կենցաղը։ Փոշիացած և հետամնաց գյուղացիական տնտեսությունների փոխարեն երկրում ստեղծվեց խոշոր կոլեկտիվ գյուղատնտեսության արտադրություն, որը հնարավորություն ստեղծեց լայնորեն օգտագործել նոր տեխնիկան, յուրացնել առաջավոր գիտության նվաճումները և տալ ավելի շատ ապրանքային արտադրանք։ Կոլտնտեսային կարգը ստեղծեց նոր, սոցիալիստական կարգապահություն և ավելի բարձր աշխատանքային արտադրողականություն, բաց արեց լայն ուղի երջանիկ կյանքի համար սովետական գյուղի բոլոր աշխատավորների համար[30]։

Կոլտնտեսային կարգի ամրապնդման գործում խոշոր դեր կատարեց գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը, որն ընդունվել էր կոլտնտեսականների համամիութենական երկրորդ համագումարում, 1935 թվականին, որն ընդհանրացրեց կոլտնտեսային ղեկավարման այն ժամանակվա փորձը։ Կոլտնտեսային կանոնադրության ընդունման օրվանից անցել էր ավելի քան քսան տարի։ Այդ ժամանակամիջոցում գյուղի կյանքում տեղի էին ունեցել խոշոր փոփոխություններ, կուտակվել էր նոր, խոշոր փորձ բազմաճյուղ հանրային տնտեսության մեջ։

Աճել էր կոլտնտեսային գյուղացիության քաղաքական գիտակցությունը, էլ ավելի էր ամրապնդվել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը՝ բանվոր դասակարգի ղեկա-

30 КПСС в борьбе за завершении строительства социализма, М., 1961, стр. 532.

վարությամբ։ Ստեղծվել էր կոլտնտեսային արտադրության նոր նյութա-տեխնիկական բազա[31]։ Կոլտնտեսությունները և ՄՏԿ-ները ամրապնդվել էին նոր կադրերով, մեքենայացվել էին գյուղատնտեսական աշխատանքները, նշանակալից չափով կենսագործվել էին կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման ուղղությամբ կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցները, մտցվել էր գյուղատնտեսության պլանավորման նոր կարգ։

Կոլտնտեսային շինարարության նոր պայմաններում գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունն այլևս չէր ընդգրկում կոլտնտեսության բազմակողմանի կյանքի և գործունեության բոլոր կողմերը։ Ընդհակառակը, մի շարք դեպքերում սահմանափակում էր նրանց նախաձեռնությունը հանրային տնտեսության ղեկավարման բնագավառում և այլն[32]։

Կոլտնտեսությունները և կոլտնտեսականները բազմաթիվ նամակներ էին ուղարկում ՍՄԿԿ Կենտկոմ և ՍՍՀՄ Մինիստրների սովետ, խնդրելով փոփոխություններ մտցնել գյուղատնտեսական արտելի կանոնադրության մեջ, հատկապես կոլտնտեսականների օգտագործմանը թողնող հողամասերի, անասունների քանակի, աշխօրերի մինիմումի, կոլտնտեսականին կոլտնտեսությունից հեռացնելու, եկամուտների բաշխման, վարձատրությունների, կոլտնտեսականների իրավունքների և այլ հարցերի մասին։

Ելնելով դրանցից, ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը գտան, որ անհրաժեշտ է խորհրդակցել կոլտնտեսությունների հետ, որ հողագործության և անասնաբուծության մեջ վերելքի պահանջների համապատասխան իրենք՝ կոլտնտեսությունները, լրացնեն ու փոփոխեն գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության առանձին դրույթները, հաշվի առնելով կոլտնտեսության տեղական, կոնկրետ պայմանները։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

Կուսակցության և կառավարության այդ որոշմամբ կոլտնտեսականների տնամերձ հողամասերի չափերը սահմանելիս պահանջվում էր՝ հաշվի առնել կոլտնտեսականի ընտանիքի աշխատունակ անդամների մասնակցությունը արտելի հանրային տնտեսությանը։ Կոլտնտեսականների ընտանիքներից նրանց, որոնց կազմում կան կոլտնտեսությունում չաշխատող կամ հանրային տնտեսությանը անբավարար մասնակցություն ցուցաբերող աշխատունակ կոլտնտեսականներ, ավելի պակաս չափի տնամերձ հողամաս տալ, քան կոլտնտեսությունում բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականների ընտանիքներին։

Հարկ է նշել, որ մեզանում բավականին դժվարություններ առաջացան այդ որոշման կատարման ճանապարհին։ Առանձին կոլտնտեսություններում տեղական կուսակցական ու սովետական օրգանները ճիշտ չըմբռնելով որոշման ոգին, մեխանիկորեն կրճատեցին անգամ կոլտնտեսություններում ազնվորեն աշխատող կոլտնտեսականների տնամերձ հողերը և անասունների քանակը, երբեմն առանց հաշվի առնելու կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովի կարծիքը և որոշումը։

Փոխանակ կոլտնտեսության հողային տարածությունը միացնեին կոլտնտեսությունից կապերը խզած, հանրային տնտեսության մեջ չաշխատողների տնամերձները, կրճատում էին հանրային արտադրության մեջ աշխատող կոլտնտեսականների տնամերձը։ Դա, իհարկե, վնաս հասցրեց կոլտնտեսային արտադրությանը։ Սխալներ թույլ տրվեց կոլտնտեսականների անձնական օգտագործման անասունների քանակի հարցում։ Առանց անհրաժեշտ ուսումնասիրության՝ կրճատվեցին կոլտնտեսականների անձնական օգտագործման անասունների քանակը, որը ոչնչով չավելացրեց կոլտնտեսությունների անասունների թիվը և մթերատվությունը։

Սխալներ թույլ տվեցին նաև կոլտնտեսականների ամենամսյա ավանսավորման հարցերում։ Հանրապետության շատ կոլտնտեսություններում դժվարություններ ստեղծվեցին ամենամսյա ավանսավորմանն անցնելու գործում։ Բանն այն է,

որ հանրապետության կոլտնտեսությունների մեծ մասում այդ նպատակի համար դրամական կամ բնամթերային փոխանցիկ ֆոնդերը անցյալում չկային, դրանք ստեղծվեցին միայն 1956 թվականից։ Կոլտնտեսություններն անհրաժեշտ միջոցներ չունեին, շատ կոլտնտեսություններ այնքան քիչ դրամ էին բաշխում աշխատանքի համար, որն ինքնըստինքյան դժվարացնում էր ամենամսյա ավանսավորումը։

1956 թվականի հունվարի մեկի դրությամբ հանրապետությունում կար 872 կոլտնտեսություն, դրանցից 1955 թվականին 217 կոլտնտեսություն աշխատանքի դիմաց դրամ էր բաշխել մինչև մեկ ռուբլու սահմաններում, իսկ 12 կոլտնտեսություն աշխատանքի դիմաց դրամ չէր տվել։ Այս բանն, անշուշտ, մեծ դժվարություն էր ստեղծում բոլոր կոլտնտեսություններում անցնելու ամենամսյա դրամական ավանսավորմանը։ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի նշված որոշման համաձայն երակարատև վարկերի պարտքերը, 1956 թվականից սկսած, կարող էին մարվել դրամական անբաժանելի ֆոնդի հաշվին, այդ ֆոնդի հաշվին պետք է կատարվեր նաև անասնապահական և արտադրական շենքերի ու կառուցվածքների շինարարության, ցանքերի մշակման համար ծախսած աշխատանքի դրամական վարձատրությունը։

Ճիշտ է, այս ծախսերը կատարելով անբաժանելի ֆոնդերի հաշվին, որոշակիորեն բարձրանում էր աշխատանքին բաշխվող դրամական եկամտի չափը, բայց այն չբարձրացավ այնպես, որ հնարավորություն ստեղծեր անցնելու ամսական դրամական ավանսավորմանը։

Ամենամսյա դրամական ավանսավորում կատարելու գործում կարևոր նշանակություն ստացավ գերավանսավորումների խսպառ վերացումը։ 1955 թվականին կոլտնտեսականների գերավանսավորումների պարտքերը կազմում էին ավելի քան 22 միլիոն ռուբլի[33]։ Պետք է կրճատվեին վարչա-տնտեսական ծախսերը և դեբիտորական պարտքերը։ Բայց հանրապետության գյուղատնտեսական օրգաններն ու կոլտնտեսությունների վարչությունները վճռական պայքար չկազմակերպեցին գերավանսավորումների և դեբիտորական պարտքերի վերացման համար։ Կրճատվեցին լրացուցիչ վարձատրության չափերը։ Աշխատանքի պարտադիր մինիմումի չափը սահմանելիս, ոչ բոլոր կոլտնտեսությունների վարչություններն էին, որ անհրաժեշտ շերտավորման էին ենթարկում տղամարդկանց և կանանց աշխատանքի նորմաները, հաշվի չէին առնվում հղի, ծծմայր, երեխաներով ծանրաբեռնված մայրերի, երիտասարդների և ծերերի աշխատանքի առանձնահատկությունները։

Երկրի, այդ թվում նաև Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության զարգացմանը լրջորեն վնասեցին կուսակցական օրգանների անհարգի վերակառուցումները, որոնք տեղի ունեցան 1961—1962 թվականներին։ Այնուհետև սխալ կուրս էր տարվում գյուղատնտեսության վարկավորման, կոլտնտեսություններին վաճառվող մեքենաների, նրանց մասերի և սարքավորումների գների, կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման նկատմամբ։ Այդ պատճառով էլ 1961—1964 թվականներին գյուղատնտեսության արտադրության բարձրացման առթիվ կուսակցական ու սովետական օրգանների ընդունած բազմաթիվ որոշումներ մնում էին անկատար։ Այսպես, օրինակ, ՀԿԿ Կենտկոմը, հանրապետության կառավարությունը, գյուղատնտեսական օրգանները, ՀԿԿ 22-րդ և 23-րդ համագումարները բազմաթիվ միջոցառումներ նշեցին գյուղատնտեսության զարգացման մասին, բայց դրանք չկատարվեցին։

ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թվականի հոկտեմբերյան, նոյեմբերյան և 1965 թվականի մարտյան պլենումները բացահայտեցին երկրի գյուղատնտեսության մեջ տեղ գտած թերություններն ու սխալները և լայն միջոցառումներ նշեցին դրանց վերացման ուղղությամբ։

Ինչպես ցույց է տալիս փորձը, այնտեղ, ուր կուսակցական կազմակերպությունները քննադատության լայն ծավա-

33 Դրամի մինչ 1961 թ. մասշտաբներով։

լումով բացահայտում են գյուղատնտեսության ղեկավարման թերությունները և հետևողական պայքարում դրանց վերացման համար, հաջողություններն ավելի մեծ են։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԻՆՈՒՄԸ

Կոմունիստական կուսակցության հրատապ միջոցառումների շնորհիվ Հայրենական պատերազմից հետո բուռն թափ ստացավ մեր երկրի գյուղատնտեսության մեքենայացումը։ Հանրապետության գյուղատնտեսության մեջ 1950 թվականին աշխատում էր 2055 տրակտոր, 1965 թվականին տրակտորների թիվը հասավ 7156-ի։ Նույն ժամանակաշրջանում հացահատիկային կոմբայնների թիվը 295-ից հասավ 1574-ի[34]։

Պայքարելով ՍՄԿԿ 20-րդ համագումարի որոշումների կենսագործման համար, հանրապետության կուսակցական կազմակերպություններն իրենց կարևոր խնդիրը համարեցին գյուղատնտեսական արտադրության աշխատանքների մեքենայացումը։ Առավել ուշադրություն դարձվեց գյուղատնտեսության կադրերի ամրապնդմանը։ Կուսակցական, սովետական և գյուղատնտեսական օրգանները լայն գործունեություն ծավալեցին ՄՏԿ-ներից մասնագետներին կոլտնտեսություններ փոխադրելու ուղղությամբ։ Եթե մինչև 1955 թվականի օգոստոսը հիմնական ուշադրությունը դարձվում էր մեքենա-տրակտորային կայանները մասնագետներով ուժեղացնելու վրա, հետագայում կուսակցության ցուցումով ՄՏԿ-ներից մասնագետները ստիպանաբար փոխադրվում էին կոլտնտեսությունները, որոնք դառնում էին արտելի իրավահավասար անդամներ և ավելի պատասխանատու դառնում կոլտնտեսային արտադրության բարձրացման գործում։

Այդ նոր երևույթ էր կոլտնտեսային կյանքում, գյուղի սոցիալիստական արտադրության մեջ։

ՍՄԿԿ Կենտկոմի ու սովետական կառավարության համապատասխան որոշման կենսագործումով, միաժամանակ ստիպանաբար կրճատվում էր ՄՏԿ-ների դերը կոլտնտեսային արտադրության մեջ, որն ի վերջո հանգեցրեց մեքենա-տրակտորային կայանների վերակառուցման և վերացման անհրաժեշտությանը։

Կոլտնտեսային կյանքում կարևոր իրադարձություն էր 30-հազարականների շարժումը։ 1955 թվականի մարտին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշման համաձայն քաղաքներից, արդյունաբերական ձեռնարկություններից առանձնացվեցին մասսաների լավագույն կազմակերպիչներ և ուղարկվեցին կոլտնտեսություններում ղեկավար աշխատանքի։

Առաջին անգամ չէր, որ կուսակցությունը գյուղ էր ուղարկում արդյունաբերության փորձառու մարդկանց, ժողովրդական հմուտ կազմակերպիչների։ Հայտնի է, որ 1929 թվականին Համ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի որոշումով 25 հազար բանվորներ մոբիլիզացվեցին և ուղարկվեցին գյուղ՝ ղեկավարելու կոլտնտեսային շարժումը։ Եթե 25-հազարականների խնդիրն էր՝ ստեղծել նորանոր կոլտնտեսությունները, 30-հազարականների խնդիրն էր ապահովել գյուղատնտեսության վերելքը, բարձրացնել գյուղի սոցիալիստական էկոնոմիկան ու կուլտուրան։

Մեր հանրապետության քաղաքներից և արդյունաբերական ձեռնարկություններից 1954—1955 թվականներին գյուղ ուղարկվեցին ավելի քան 3500 մասնագետներ և ղեկավար աշխատողներ։

ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, հանրապետության Մինիստրների սովետը և գյուղատնտեսական օրգանները լայն գործունեություն ծավալեցին գյուղատնտեսության մեքենայացման ուղղությամբ։ Արդյունքը եղավ այն, որ գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը հնարավորություն տվեց 1958 թվականին մեքենայացնել բամբակագործության և ճակնդեղագործության աշխատանքների մեծ մասը։ Այդ նույն ժամանակում 82 տոկոսով մեքենայացվեց հացահատիկային կուլտուրաների մշակումը,

[34] Народное хозяйство Арм. ССР в 1965 г., статистический ежегодник, Ереван, 1966, стр. 140.

իսկ բերքահավաքը՝ 65 տոկոսով[35]։ Մեքենայացման էին ենթարկվում նաև գյուղատնտեսական մյուս կուլտուրաների մշակումն ու բերքահավաքը, անասնապահական ֆերմաների աշխատատար պրոցեսները։ Տարեցտարի գյուղատնտեսության մեջ աճում էր մեքենաների քանակը։ Դա այն վճռական նախապայմանն է, որով աստիճանաբար վերանում էին քաղաքի և գյուղի, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները։

Գյուղատնտեսական մեքենաները պետությունը վաճառեց կոլտնտեսություններին և վերացան մեքենա-տրակտորային կայանները։ 1959—1960 թվականներին ստեղծվեց մի վիճակ, երբ փաստորեն գյուղատնտեսության մեքենայացումը ղեկավարող ընդհանուր կենտրոն չկար։ Իսկ դրա կարիքը խիստ զգացվում էր։ Ճիշտ է, գյուղատնտեսական մեքենաների տնօրինողները կոլտնտեսություններն էին, բայց նրանք առանձին-առանձին վերցրած չէին կարողանում պատրաստել մեխանիզատորական նոր կադրեր, բացի այդ կոլտնտեսություններից, շատերը դեռևս չունեին վերանորոգման սեփական արհեստանոցներ։

Եվ ահա գյուղատնտեսական տեխնիկա, պահեստամասեր, հանքային պարարտանյութեր և այլ նյութատեխնիկական միջոցներ վաճառելու, կոլտնտեսություններում և սովխոզներում մեքենաների նորոգումն ու օգտագործումը կազմակերպելու համար ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1961 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ ստեղծվեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի համամիութենական միավորում՝ «Սոյուզսելխոզտեխնիկա»։ Այդ որոշման հիման վրա ստեղծվեցին «Գյուղտնտեխնիկայի» հանրապետական և շրջանային միավորումներ։ Դրանք պետական այն կազմակերպություններն են, որոնք կոչված են ապահովելու կոլտնտեսությունների և սովխոզների նյութատեխնիկական, արտադրական սպասարկման գործը։

[35] Сельское хозяйство Арм. ССР, статист. сборн., Ереван, 1961.

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի «Հայգյուղտնտեխնիկա» հանրապետական միավորում ստեղծվելուց հետո կազմակերպվեցին նաև նրա շրջանային միավորումները։ Դրանց հիմնական խնդիրն էր՝ բավարարել գյուղատնտեսական արտադրության և շինարարության համար անհրաժեշտ նյութա-տեխնիկական միջոցների պահանջները, հաշվի առնելով նրանց հայտերը, ապահովել կոլտնտեսություններին, սովխոզներին, գյուղատնտեսական այլ ձեռնարկություններին և կազմակերպություններին հանքային պարարտանյութերով, բույսերի պաշտպանության քիմիական միջոցներով և այլ քիմիկատներով ու նյութերով, պարարտացման և բույսերի պաշտպանության քիմիական միջոցների կիրառման համար անհրաժեշտ մեքենաներով[36]։

«Հայգյուղտնտեխնիկան» իր շրջանային միավորումների միջոցով բավարարում է տվյալ շրջանի բոլոր պետական, կոոպերատիվ ձեռնարկությունների ու կազմակերպությունների՝ տրակտորների, ավտոմեքենաների և գյուղատնտեսական մեքենաների պահեստամասերի պահանջը։

Ելնելով վերոհիշյալ որոշումից, «Հայգյուղտնտեխնիկայի» կարևոր խնդիրն է՝ ապահովել գյուղատնտեսության արտադրության կոմպլեքսային մեքենայացման զարգացումը, գյուղատնտեսական արտադրության մեջ նոր, բարձր արտադրողական տեխնիկայի և էլեկտրաէներգիայի, մեքենայացված աշխատանքների առաջավոր տեխնոլոգիայի, գյուղատնտեսական արտադրության մեքենայացման և էլեկտրիֆիկացիայի բնագավառում գիտության նվաճումների ու առաջավոր փորձի ներդրումը[37]։

Կոլտնտեսությունների և սովխոզների մեքենաների բարձր արտադրողական օգտագործման, տեխնիկական սպասարկման, նորոգման և պահպանման կազմակերպումը և

36 ՀՍՍՀ «Գյուղտնտեխնիկա» շրջանային միավորման կանոնադրությունը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը, սեպտեմբեր, 1961, էջ 31։
37 Նույն տեղում։

շրջանային միավորման աշխատանքը լայն դեմոկրատական հիմունքներով կազմակերպելու, ինչպես նաև տեխնիկայի և այլ նյութատեխնիկական միջոցների նկատմամբ շրջանի գյուղատնտեսության պահանջները ավելի լրիվ հաշվի առնելու և շրջանային միավորման աշխատանքի վրա կոլտնտեսությունների, սովխոզների և մյուս գյուղատնտեսական ձեռնարկությունների ու կազմակերպությունների ներգործության նպատակով ստեղծվեց խորհուրդ։ Այդ խորհրդի կազմի մեջ մտան կոլտնտեսությունների նախագահներ, միջկոլտնտեսային կազմակերպությունների ղեկավարներ, սովխոզների դիրեկտորներ, գյուղատնտեսության մասնագետներ և այլն։

Այսպիսով, գյուղատնտեսական տեխնիկայի միավորումները հանդիսացան պետական հաստատություններ, որոնք ղեկավարում են կոլտնտեսությունների և սովխոզների տեխնիկական զինվածության գործը։ Այստեղ կրկին դրսևորվում է բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ամրակուռ դաշինքը, պետության և կոլտնտեսության ընդհանուր շահերը։ Երկուսն էլ միմյանց հետ համագործակցում, պայքարում են հանուն գյուղատնտեսության զարգացման։

Հանրապետության գյուղատնտեսության կարիքներն ապահովելու նպատակով 1961 թվականին ժողտնտխորհի ձեռնարկություններում կազմակերպվեց գյուղատնտեսական գործիքների, սարքավորումների, պահեստամասերի և ռետինատեխնիկական առարկաների արտադրությունը, ապահովեց գյուղատնտեսական գործիքների և շինվածքների արտադրությունն ու թողարկումը։

Հանրապետության բանվոր դասակարգը դրանով գործնականորեն օգնում է կոլտնտեսություններին բարձրացնելու արտադրությունը։ Եթե մինչև կուսակցության 20-րդ համագումարը հանրապետության գյուղատնտեսության մեքենայացումը կատարվում էր մեծ մասամբ միութենական ենթակայության արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի հաշվին, 1956 թվականից այդ գործում ակտիվորեն

մասնակցում են հանրապետական արդյունաբերական ձեռնարկությունները։

Այդ արդյունաբերական ձեռնարկություններում գյուղատնտեսության պատվերների կատարումը անմիջականորեն սերտ կապ է ստեղծում արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, ամրապնդում աշխատավորական երկու դասակարգերի դաշինքը։

Գյուղատնտեսության արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը կատարում է պետությունն իր հիմնարկներով՝ գյուղատնտեսական տեխնիկայի շրջանային միավորումների և պետական արհեստանոցների միջոցով։ Մի երևույթ, որը մինչև այդ չկար։ Դա բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի նոր ձևն է, որը ստեղծվեց ՄՏԿ-ների վերացումից հետո։

Արդեն 1962 թվականից գյուղատնտեսական արտադրության մեջ գործարկվեցին կթի ագրեգատները։ Ներմուծվեց կթի 78 ագրեգատ, որոնք տեղադրվեցին կոլտնտեսություններում ու սովխոզներում։

Վճռական միջոցներ ձեռնարկվեցին կոլտնտեսություններում և սովխոզներում տեղադրված կթի հարմարանքներն օգտագործելու համար։ Առաջավոր փորձի փոխանակման նպատակով 1962 թվականին կովերի էլեկտրական կթի օրինակելի տնտեսություններ դարձան անասնապահական և անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի Լոռու փորձնական բազան, երկրագործության ինստիտուտի Լենինականի սելեկցիոն կայանը, անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի Էլարի ուսումնա-փորձնական տնտեսությունը, Սևանի և Բասարգեչարի սովխոզները և Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղի կոլտնտեսությունը։ Այդ տնտեսություններում կազմակերպվեցին կաթնա-ապրանքային ֆերմաների վարիչների, բրիգադիրների, մեխանիզատորների և կթվորուհիների դասընթացներ։

Կոլտնտեսություններում և սովխոզներում, անասնապահական ֆերմաներում ծավալվեց սոցիալիստական մրցություն

հանուն աշխատատար պրոցեսների մեքենայացման, առաջավոր փորձի և գիտության ու տեխնիկայի նվաճումների ներդրման։ Մրցության արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծվեց մրցանակաբաշխության հանրապետական հանձնաժողով։

Հողագործության մեջ կարևոր դեր էին կատարում տրակտորա-դաշտավարական կոմպլեքսային բրիգադները։ Դրանք մեքենա-տրակտորային պարկի, հողի և բանվորական ուժի օգտագործման ղեկավարությունը միավորում են մեկ ձեռքում, կիրառում աշխատանքի կազմակերպման, նորմավորման ու վարձատրության մի շարք այլ, նոր կատարելագործված միջոցներ, աշխատատար պրոցեսների մեքենայացում և այլն։ Միացյալ բրիգադների աշխատանքը տվեց դրական արդյունք։ Յուրաքանչյուր բրիգադի արտադրության պլանավորման և ղեկավարման գործում ստեղծվեց միասնություն, որն ամրապնդեց ղեկավարությունը, բարելավեց տրակտորային և ձեռքի աշխատանքների որակը, կրճատվեցին դրանց կատարման ժամկետները, վերացվեց դիմազրկությունը, բարելավվեց մեքենա-տրակտորային պարկի օգտագործումը։ Միացյալ բրիգադի ներսում մեխանիզատորների և ոչ մեխանիզատորների միջև աշխատանքի բաժանման հիման վրա ձեռք բերվեց լիակատար համաձայնություն, որի շնորհիվ բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, կրճատվեցին վերանորոգման ծախսերը[38]։

Այս ամենի շնորհիվ բարձրացավ միավորված բրիգադների բոլոր աշխատողների պատասխանատվությունը՝ բարձր բերքի ստացման, վառելանյութի ու քսվող նյութերի տնտեսման համար։ Արտադրական բրիգադների ղեկավար անձնակազմին վարձատրելիս կատարվեց աշխօրերի նշանակալի տնտեսում։

38 «Տրակտորա-դաշտավարական բրիգադների աշխատանքի փորձը Հայաստանի կոլտնտեսություններում», Երևան, 1963, էջ 9։

Կոլտնտեսություններում ստեղծվեցին տրակտորա-դաշտավարական բրիգադներ, որոնց օգնություն էր ցույց տալիս պետությունը՝ գյուղտնտեխնիկայի շրջանային միավորումների միջոցով։ Դա բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի նոր ձևն է, որը հանդես եկավ ՄՏԿ-ների վերացումից հետո։

Գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցման, անասունների խնամքի հաջող կազմակերպման գործում խոշոր նշանակություն ուներ կոլտնտեսություններում և սովխոզներում անասնապահական ֆերմաների կոմպլեքսային մեքենայացումը։ Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղի կոլտնտեսությունում 1961 թվականին տեղադրվեց մեքենայական կթի մեկ ագրեգատ, որով կթվում էր 70 կով, 1963 թվականին տեղադրվեց կթի երկրորդ ագրեգատը և տնտեսության 280 կովերից 220-ը կթվում էր դրանով։ Մեքենայական կթիթը կազմակերպելու շնորհիվ կոլտնտեսությունը 1963 թվականին տնտեսեց 517 աշխօր, որը դրամական արտահայտությամբ կազմում էր 1416 ռուբլի[39]։

Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսություններում և սովխոզներում տեղադրվեց կթի 10 ագրեգատ, Էջմիածնի շրջանի կոլտնտեսություններում և սովխոզներում՝ 14 ագրեգատ, Նոյեմբերյանի արտադրական վարչության կոլտնտեսություններում՝ կթի 11 ագրեգատ։

Աստիճանաբար ավելանում էր անասնապահական ֆերմաների աշխատանքների մեքենայացումը։ Գործի դրվեցին մինչ այդ չօգտագործվող բոլոր ագրեգատները, կոլտնտեսություններում առանձնացվեցին մեքենայական կթի ենթակա կովերը։ «Հայգյուղտնտեխնիկայի» շրջանային բաժանմունքները աշխատանք տարան ապահովելու անասնապահական գոմերում տեղադրված մեխանիզմների անընդմեջ և արդյունավետ աշխատանքը, ինչպես և տեխնիկական սպասարկումը։

39 Հայկական ՍՍՀ Գյուղ. մթերքների արտադր. և մթերումների մինիստրության 1963 թ. հոկտեմբերի 7-ի որոշումը։

Առաջավոր կոլտնտեսություններում, ուր տեղակայված էին կթի ագրեգատներ, կազմակերպվեցին համապատասխան դասընթացներ։

Նոր կառուցվող անասնապահական գոմերը շահագործման էին հանձնվում կոմպլեքսային մեքենայացում անցկացնելուց հետո։ Այսպիսով, կոլտնտեսային անասնապահական ֆերմաները ենթարկվում էին կոմպլեքսային մեքենայացման, որը մեծապես նպաստում էր բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի զարգացմանը։

«Հայգյուղտնտեխնիկա» հանրապետական միավորումը որոշակի աշխատանք կատարեց գյուղատնտեսական մեքենաների նորոգման, տեխնիկական սպասարկման և անասնապահական ֆերմաների մեքենայացման ուղղությամբ։ 1963 թվականին պլանով նախատեսված 200 կոմբայնի դիմաց նորոգեց 262 կոմբայն, 740 ավտոմեքենաների դիմաց 829 և 1313 ավտոտրակտորային շարժիչների դիմաց 1700 շարժիչ[40]։ Դրական աշխատանք կատարվեց նաև տնտեսությունների մեքենա-տրակտորային պարկի տեխնիկական սպասարկման, նորոգման և արդյունավետ օգտագործման ուղղությամբ։ 1963 թվականին ապահովվեց 124 տնտեսությունների տեխնիկական սպասարկումը։

Տեխնիկական սպասարկման 30 կայաններից առանձնապես լավ էին աշխատում Հոկտեմբերյանի, Արտաշատի, Էջմիածնի, Ախուրյանի, Շամշադինի միավորումների և բաժանմունքների կայանները[41]։

Խոշոր ներդրում կատարվեց անասնապահական ֆերմաների աշխատատար պրոցեսների մեքենայացման ուղղությամբ։ 1963 թվականի պլանով նախատեսված էր մեքենայացված ջրամատակարարումով ապահովել 43 հազար անասուն, ապահովվեց՝ 47070, նախատեսված 14200 ավտոմխոցի

40 Հայգյուղտնտեխնիկայի կոլեգիայի 1964 թվականի հունվարի 25-ի որոշումը։ (Տե՛ս «Հայգյուղտնտեխնիկայի» ընթացիկ արխիվ)։

41 Նույն տեղում։

դիմաց պատրաստվեց՝ 16350, անասնակերի բաշխման մեքենայացում նախատեսված 10600 գլխի համար, մեքենայացվեց 11154 գլուխ, անասնաշենքերի մաքրման մեքենայացում, կատարվեցին մեքենայական կթի և կովանոցների կոմպլեքսային մեքենայացման պլանները։

Գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունն ուժեղացնելու նպատակով 1964 թվականին ձեռնարկվեցին լրացուցիչ միջոցներ։ Վերանորոգման արհեստանոցները առաջադրանքը գերակատարեցին 11,4 տոկոսով, անասնապահական ֆերմաների նորոգմանը՝ 34,2 տոկոսով, եկամուտների պլանը գերակատարվեց 4 տոկոսով։

Այսպիսով «Հայգյուղտնտեխնիկա» միավորումը տարեկան պլանը հիմնական ճյուղերով գերակատարեց։ Բայց նրա աշխատանքում կային նաև թերություններ։ Շրջանային 34 բաժանմունքներից և միավորներից 15-ը չէր կատարել վերանորոգման պլանը, տրակտորների կապիտալ վերանորոգման պլանը թերակատարվեց 21,4 տոկոսով, 6 բաժանմունքներում չկատարվեց ապրանքաշրջանառության պլանը։ Կային դերնորմատիվային ապրանքների մնացորդներ։ Այդ տեսակետից հատկապես բնորոշ էին Արտաշատի, Ախուրյանի, Հրազդանի և Շահումյանի բաժանմունքները։

Ապարանի, Աբովյանի, Աշտարակի, Գորիսի և Մարտունու բաժանմունքները չկատարեցին անասնապահական ֆերմաների մեքենայացման պլանը, անասնապահական ֆերմաներում գրված ագրեգատներից 43-ը չէր աշխատում[42]։

«Հայգյուղտնտեխնիկայի» միավորումների աշխատանքների բարելավման գործում կարևոր դեր կատարեց ստավրոպոլցիների դիմումը։ Ինչպես հայտնի է, 1963 թվականի վերջերին Ստավրոպոլի երկրամասի Գեորգիևսկի շրջանային գյուղատնտեխնիկայի միավորման բանվորները, մասնագետները և Գեորգիևսկի արտադրական վարչության կոլտնտեսությունների ու սովխոզների մեխանիզատորները «Սելսկոյե ժիզն» թերթի միջոցով դիմեցին «Գյուղտնտեխնիկայի» բա-

42 Նույն տեղում։

ժանմունքների և միավորումների բոլոր բանվորներին ու մասնագետներին, երկրի բոլոր կոլտնտեսությունների ու սովխոզների մեխանիզատորներին, կոչ անելով սոցիալիստական մրցություն սկսել՝ գարնան դաշտային աշխատանքները ժամանակին նախապատրաստելու և դաշտերում ու ֆերմաներում տեխնիկան բարձր արտադրողականությամբ օգտագործելու համար։

«Հայգյուղտնտտեխնիկայի» բոլոր միավորումները և բաժանմունքները քննության առան գեորգիևսկցիների հայրենասիրական կոչը, և ելնելով իրենց հնարավորություններից, ըստանձնեցին նոր պարտավորություններ՝ բարձր որակով անցկացնելու 1964 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքները։ Վերոհիշյալ կոչին արձագանքեցին Էջմիածնի միավորման և արտադրական վարչության կոլտնտեսությունների ու սովխոզների մեխանիզատորները։ «Հայգյուղտնտտեխնիկայի» Էջմիածնի կոլեկտիվի այդ առթիվ նամակը մամուլում հրապարակելուց հետո, շրջանային բաժանմունքներում տեղի ունեցան հավաքներ, որտեղ սոցիալիստական նոր պարտավորություններ ստանձնեցին գարնան դաշտային աշխատաքներին կազմ ու պատրաստ դիմավորելու, կոլտնտեսությունների ու սովխոզների դաշտերում ու ֆերմաներում տեխնիկան բարձր արտադրողականությամբ օգտագործելու։ «Հայգյուղտնտտեխնիկայի» շրջանային միավորումները և բաժանմունքները սոցիալիստական մրցության մեջ մտան։ Այդ մրցությունը մասսայականացնում և ղեկավարում էին սկզբնական կուսակցական կազմակերպությունները և լուսաբանվում էր մամուլում։

Կենսագործելով ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թվականի փետրվարյան պլենումի որոշումները և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1964 թվականի ապրիլի 9-ի «Գյուղատնտեսության քիմիացման ասպարեզում համամիութենական «Սոյուզսելխոզտեխնիկա» միավորման գործունեության ընդլայնման մասին» որոշումը, «Հայգյուղտնտտեխնիկա» միավորումը կոլտնտեսությունները, սովխոզները և գյուղատնտեսական այլ կազ-

մակերպություններ ապահովեց հանքային պարարտանյութերով, գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների դեմ պայքարի քիմիկատներով ու այլ քիմիական նյութերով։

Միավորումը հսկողություն սահմանեց, որպեսզի քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները գյուղատնտեսությանը ժամանակին մատակարարեն հանքային պարարտանյութեր և քիմիական նյութեր։ Միավորման շրջանային բաժանմունքները զգալիորեն արագացրին քիմիական նյութերի փոխադրումը կոլտնտեսություններ, ուժեղացվեց արտադրատեխնիկական օժանդակությունը։ Հանքային պարարտանյութեր, բույսերի հիվանդությունների դեմ պայքարի քիմիկատներ և այլ քիմիական նյութեր փոխադրելու և պահպանելու նպատակով մշակվեցին գործնական միջոցներ։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1964 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ հանքային պարարտանյութերի, բույսերի հիվանդությունների դեմ պայքարի քիմիկատների պահպանման մեքենայացված բազաների և պահեստների շինարարությունը կատարվում էր Մինիստրների սովետի կողմից, ի հաշիվ կապիտալ ներդրումների։ Այդ բազաների և պահեստների շինարարության համար 1965 թվականից նախատեսվում էին նոր կապիտալ ներդրումներ։ Դրանում ևս դրսևորվում էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

«Հայգյուղտնտտեխնիկա» միավորման հանրապետական ապարատում կազմակերպվեց գյուղատնտեսության քիմիացման վարչություն։ Ստեղծվեց նաև հանքային պարարտանյութերի, թունաքիմիկատների և այլ քիմիական նյութերի ու ապրանքների իրացման վարչություն, որը կոնկրետ միջոցներ մշակեց կենսագործելու ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշումը։ Վարչությունը «Հայգյուղտնտտեխնիկայի» շրջանային միավորումների միջոցով կազմեց 14 տնտեսություններում ագրոքիմիական համապատասխան քարտեզներ, ուր ցույց էին տրվում գյուղատնտեսական կուլտուրաների լրիվ քիմիացման եղանակները։

Նախատեսվեց 1965 թվականի հանքային պարարտա-

նյութերի, թունաքիմիկատների կայարանամերձ մեքենայացված պահեստների և փակուղիների շինարարություն՝ Էլար, Արտաշատ, Արթիկ, Ախուրյան, Այգեվան, Արազդայան, Ղափան, Գագարին, Սպիտակ և Մասիս կայարաններում։

«Հայգյուղտնտեխնիկա» շրջանային բոլոր բաժանմունքներում ստեղծվեցին քիմիացման մասնագիտացված խմբեր։

Միավորումը կոլտնտեսությունների և սովխոզների մեքենա-տրակտորային պարկերը լրիվ նախապատրաստեց գարնանացանին։ Երևանի վերանորոգման արհեստանոցը գյուղատնտեսության տեխնիկան արդյունավետ օգտագործելու և ծախսերը նվազեցնելու, մեքենա-տրակտորային պարկի աշխատանքները բարելավելու նպատակով լայն գործունեություն ծավալեց։ Միավորման շրջանային բաժանմունքները վերցրին 300 կոլտնտեսության և սովխոզի կոմպլեքսային մեքենայացման ապահովումը, կազմակերպվեց տեխնիկական սպասարկման 33 կայան՝ 65 բրիգադով, Արտաշատի, Հրազդանի, Գուգարքի շրջաններում և Երևանում կազմակերպվեցին մասնագիտացված արհեստանոցներ։ Հատուկ ուշադրություն դարձվեց անասնապահական ֆերմաների աշխատատար պրոցեսների մեքենայացմանը։ Այդ կապակցությամբ մարտի սկզբներին Երևանում տեղի ունեցավ միավորման շրջանային բաժանմունքների ինժեներ-մեխանիզատորների 10-օրյա սեմինար։ Անասնապահական ֆերմաների առանձին աշխատատար պրոցեսները, ինչպես և կոմպլեքսային մեքենայացման պլանի կատարումն ապահովելու նպատակով ստեղծվեց 50 հատուկ բրիգադ։ Կերի վերամշակման գործում քիմիկատների օգտագործման նպատակով կազմակերպվեց ցուցադրական 5 կերախոհանոց և պրոպագանդվեց առաջավոր մեթոդը։ Հանքային պարարտանյութերը և քիմիկատները լավ պահպանելու նպատակով կառուցվեցին 21 հազար տոննա տարողությամբ պահեստներ, 5 կոլտնտեսությունում կազմակերպվեց գյուղատնտեսության մեջ քիմիկատները և թունավոր նյութերը առաջավոր մեթոդներով ներդնելու բրիգադներ։

«Հայգյուղտնտեխնիկայի» շրջանային միավորումների նախաձեռնությամբ կոլտնտեսություններում ստեղծվեցին գյուղատնտեսական կուլտուրաների մշակման և բերքահավաքի կոմպլեքսային մեքենայացված օղակներ։ Ուշագրավ է, որ այդ բրիգադները և օղակները ստեղծվում էին կոլտնտեսություններում, տեղի աշխատողների և Հայգյուղտնտեխնիկայի համատեղ ուժերով։

Կոլտնտեսություններում և սովխոզներում կազմակերպվեցին եգիպտացորենի կոմպլեքսային մշակման և բերքահավաքի 33 օղակ, որոնց մշակմանը հանձնվեց 1467 հեկտար հող, բամբակենու մշակման՝ 13 օղակ 534 հեկտար, շաքարի ճակնդեղի՝ 6 օղակ 254 հեկտար, խոտի բերքահավաքի՝ 2 օղակ 600 հեկտար, հացահատիկի՝ 4 օղակ 750 հեկտար, կարտոֆիլի մշակման և բերքահավաքի՝ 3 օղակ 75 հեկտար, կարտոֆիլի բերքահավաքի հարահոսք մեթոդով կատարող՝ 5 օղակ 145 հեկտար հող[43]։ Օղակներում ընդգրկվեցին առաջավոր մեխանիզատորներ։ Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման ինստիտուտի կոլեկտիվը ստեղծեց ՆԿՈՒ-4-61 և ՍԿՆԲ-4 մեքենաները, որոնք օգտագործվում են ծխախոտագործության մեջ։

Գյուղատնտեսության մեջ տեխնիկան լավ օգտագործելու նպատակով Արտաշատի շրջանի Արևշատ գյուղի կոլտնտեսությունում և Էջմիածնի շրջանի Լենինի անվան սովխոզում կազմակերպվել էին բամբակի և եգիպտացորենի աճեցման ու եգիպտացորենի կոմպլեքսային մեքենայացված օղակներ։ Արևշատի կոլտնտեսությունում ստեղծվեց մեկ օղակ, որին տրամադրվեց 21 հեկտար բամբակի և 18 հեկտար եգիպտացորենի հողամաս (օղակավար Խ. Խաչատրյան), Վ. Ի. Լենինի անվան սովխոզում՝ եգիպտացորենի երկու օղակ, յուրաքանչյուրին տրվեց 100 հեկտար հողամաս (օղակավարներ՝ Գ. Իսրայելյան, Զ. Կարապետյան)։ Այդ օղակներին հատկացված

43 Հայգյուղտնտեխնիկայի կոլեգիայի 1964 թվականի մայիսի 20-ի որոշումը (նույն տեղում)։

էին համապատասխան հողամասեր, ամրացված էին անհրաժեշտ քանակությամբ տրակտորներ, շարքացաններ, կոմբայններ և այլ գյուղատնտեսական մեքենաներ։

«Հայգյուղտնտեսիկայի» Էջմիածնի և Արտաշատի շրջանային միավորումները մեքենայացված օղակներին ցույց էին տալիս գործնական օգնություն և ապահովում էին անհրաժեշտ տեխնիկական սպասարկում։

Արևշատի կոլտնտեսության և Լենինի անվան սովխոզի օրինակով բոլոր շրջաններում կազմակերպվեցին մեկական մեքենայացված օղակներ, առաջավոր օղակների աշխատանքի փորձի փոխանակում։ Արևշատի կոլտնտեսության վարչությունը սահմանեց կոմպլեքսային մեքենայացված օղակի հավելյալ վարձատրության կարգը, կապելով այն բերքատվության բարձրացման և ինքնարժեքի իջեցման հետ։

Կոլտնտեսություններում և սովխոզներում ստեղծվեցին կարտոֆիլի աճեցման և բերքահավաքի մեքենայացված օղակներ։ Նման օղակներ էին ստեղծվել նաև Կամոյի շրջանի Հացառատ գյուղի կոլտնտեսությունում և Բատիկյանի անվան սովխոզում։ Նշված օղակները հաջողությամբ կատարեցին հողի նախացանքային մշակությունը և ցանքը։ Այդ օղակները 1964 թվականին առաջին անգամ կարտոֆիլի տնկում կատարեցին ԱՆ-4Բ մեքենայով, որը տվեց դրական արդյունք։

Եթե նախկինում Հացառատի կոլտնտեսությունը մեկ հեկտար կարտոֆիլի աճեցման համար ծախսում էր 105,5 աշխօր, ապա 1964 թվականին մեքենայացված օղակում ծախսվեց 22,5 աշխօր։

Կոմպլեքսային մեքենայացված օղակների աշխատանքի դրական փորձը տարածվեց շատ կոլտնտեսություններում։ Գյուղատնտեսության արտադրության մեջ ներդրվեցին կարտոֆիլ ցանող, գոմաղբ փոխադրող, ճակնդեղաբարձիչ, կարտոֆիլ հավաքող կոմբայններ և այլ մեքենաներ։

«Հայգյուղտնտեսիկայի» շրջանային միավորումները ագրոքիմիայի և հողագործության ու բույսերի պաշտպանության գիտահետազոտական ինստիտուտների հետ մեկտեղ

Բասարգեչարի, Գորիսի շրջանի Կորնիձորի, Իջևանի շրջանի Թալայի, Ալավերդու շրջանի Ղաշաղանի, Նոյեմբերյանի շրջանի Ղալաչայի, Ստեփանավանի շրջանի Վարդաբլուրի և Կալինինոյի շրջանի Նորաշենի կոլտնտեսություններում և յոթ սովխոզներում կազմակերպեցին հողի լրիվ քիմիացումը ագրոքիմիական քարտեզներով սահմանված նորմաներով, կազմակերպվեց գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների, հիվանդությունների ու մոլախոտերի դեմ պայքարը։

Պարարտանյութերի և թունաքիմիկատների ներդրումը այդ կոլտնտեսություններում ու սովխոզներում կատարեցին Հայգյուղտնտեսիկայի շրջանային միավորումները ագրոքիմիայի և բույսերի պաշտպանության ինստիտուտների հետ միասին։

Ուշադրավ է, որ մինչ այդ, «Հայգյուղտնտեսիկայի» հանրապետական միավորման նախաձեռնությամբ, ագրոքիմիայի և բույսերի պաշտպանության ինստիտուտների հետ միասին հրավիրվեց սեմինար խորհրդակցություն, որին մասնակցեցին լրիվ քիմիացման անցած կոլտնտեսությունների ու նրանց սպասարկող շրջմիավորումների ղեկավարները և համապատասխան մասնագետները։ Կազմվեց այդ տնտեսությունների աշխատանքների հաշվարկա-տեխնոլոգիական քարտեր, 1965 թվականին «Հայգյուղտնտեսիկա» միավորումը վերցրեց այդ տնտեսությունների տեխնիկական լրիվ սպասարկման գործը։

Այդ աշխատանքը ավելի կազմակերպված, գիտական հիմունքներով առաջ տանելու նպատակով բոլոր շրջաններում 1965 թվականին ստեղծվեցին մեկական ցուցադրական տնտեսություններ, որոնք լրիվ քիմիացված էին։

Մեքենա-փորձնական կայանի տնտեսությունում ապահովվեց պարարտանյութերի և քիմիկատների արդյունավետ օգտագործումը, պատրաստվեց բարձր արտադրողականությամբ աշխատող մեխանիզմների կոմպլեքս, կատարվեց հեղուկ պարարտանյութերի փորձարկում։ Բայց քիմիական նյութերի պահեստների շինարարության պլանը չէր կատար-

վում, որը բացասաբար էր անդրադառնում ընդհանուր ծրագրի կենսագործմանը։

«Հայգյուղտնտեխնիկա»-ի միավորման կապիտալ շինարարության 1964 թվականի պլանների կատարումը ընթանում էր ծայրահեղորեն վատ։ Թե որքան տագնապալից էր վիճակը Հայաստանում, բավական է ասել, որ պարարտանյութերի պահեստների շինարարության առաջին եռամսյակի պլանը կատարվել էր միայն 3 տոկոսով, թերակատարվել էր նաև կիսամյա պլանը։ Այդ ժամանակաշրջանում 798 հազար ռուբլու փոխարեն կատարված էր 440 հազար ռուբլու աշխատանք, կամ պլանի 55 տոկոսը[44]։ Կապիտալ շինարարության առաջին կիսամյակի պլանները նույնպես թերակատարվեցին։ Այսպես, կենտրոնացված կապիտալ ներդրումների շինարարության պլանը կատարվեց 60 տոկոսով, շինարարական-մոնտաժային աշխատանքներինը՝ 45 տոկոսով և այլն։

Շինարարության պլանների թերակատարումը հետևանք էր Հայկական ՍՍՀ շինարարության մինիստրության գյուղական շինարարության գլխավոր վարչության վատ աշխատանքի։ Չնայած հունվար ամսին նրան հանձնվել էին բոլոր տեխնիկական փաստաթղթերը, որոշված էին համապատասխան արհեստների բոլոր ֆոնդերը, բայց տապալվեց կիսամյակի պլանների կատարումը։ Շինարարության այս վիճակը բացատրվում էր նաև «Հայգյուղտնտեխնիկա» հանրապետական միավորման առանձին բաժինների վատ աշխատանքով»[45]։

Կոմպլեքսային մեքենայացման շնորհիվ զգալի չափով իջավ գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքը։ Արտաշատի շրջանի Արևշատի կոլտնտեսության եգիպտացորեն մշակող օղակը 10 հեկտար հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացավ 510 ցենտներ կանաչ մասսա, մեկ ցենտների

44 «Հայգյուղտնտեխնիկայի» հանրապետական միավորման կոլեգիայի 1964 թվականի մայիսի 18-ի որոշումը (նույն տեղում)։

45 Նույն տեղում։ 1964 թվականի հուլիսի 13-ի որոշումը։

ինքնարժեքը կազմեց 50 կոպեկ։ Այգեշատի կոլտնտեսության եգիպտացորեն մշակող օղակը նույնքան տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացավ 524 ցենտներ կանաչ մասսա, ինքնարժեքը կազմեց 61 կոպեկ։ Կամոյի շրջանի կարտոֆիլ մշակող օղակը 30 հեկտար հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացել էր 116 ցենտներ, մեկ ցենտների ինքնարժեքը կազմում էր ընդամենը 2 ռուբլի 30 կոպեկ, այն դեպքում, երբ կոլտնտեսության միջինը կազմում էր 6 ռուբլի 60 կոպեկ[46]։

Բայց կոմպլեքսային մեքենայացված օղակների գործունեության մեջ դեռևս կային թերություններ։ Դրանք առանձնապես նկատելի էին Գուգարքի, Ախուրյանի, Հոկտեմբերյանի շրջանների կոլտնտեսություններում, ուր վատ հիմքերի վրա էր դրված աշխատանքի հաշվառումը։

Նորոգման արհեստանոցները 1964 թվականի պլանները կատարեցին 104,8, մեքենայացման աշխատանքներինը՝ 112,3, անասնապահական ֆերմաների աշխատատար պրոցեսների մեքենայացումը՝ 105,9, նյութատեխնիկական մատակարարման ապրանքաշրջանառության պլանները՝ 102,7 տոկոսով։

Ցավոք, պետք է նշել, որ կոմպլեքսային մեքենայացումը հանրապետությունում դեռևս մասսայական բնույթ չի կրում, վատ է օգտագործվում գյուղատնտեսական տեխնիկան, դանդաղ է ընթանում քիմիացման գործը և այլն։

Յոթնամյակի վեց տարիներին զգալիորեն կրճատվեցին կապիտալ ներդրումները գյուղատնտեսության մեջ, պետական ներդրումները կազմում էին հանրապետության ժողովրդական տնտեսության ընդհանուր գումարի միայն 12,6 տոկոսը։ Կոլտնտեսություններում ու սովխոզներում ձգձգվում էր արտադրական և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարա-

46 «Հայգյուղտնտեխնիկայի» հանրապետական միավորման կոլեգիայի 1965 թվականի փետրվարի 15-ի որոշումը (միավորման ընթացիկ արխիվ)։

ությունը, որի հետևանքով վնաս էր հասցվում հանրային արտադրությանը[47]։

«Հայգյուղտնտեխնիկա» միավորման պահեստներում առ մեկը հունվարի 1965 թվականի տրակտորային պահեստամասերի կուտակումը սահմանված նորմայից գերազանցում էր 26 տոկոսով։ Սխալ պլանավորման և ապրանքների անբավարար պահպանման ու պահեստավորման հետևանքով 1964 թվականին գուրս էին գրված 307 հազար ռուբլու պահեստամասեր և այլ ապրանքներ[48]։

Սպիտակի, Սիսիանի և Գուգարքի շրջմիավորումներում թերակատարվեցին գյուղմեքենաների նորոգման պլանները։ Մի շարք մեքենաների հիմնական նորոգման ինքնարժեքը, 1963 թվականի համեմատությամբ, զգալիորեն բարձրացավ, թերակատարվեցին կթի ագրեգատների տեղադրման, կապիտալ ներդրումների, շինմոնտաժային աշխատանքների, էլեկտրաշարժիչների և սարքերի տեղադրման պլանները, խիստ շատ էին դեֆիտորական պարտքերը։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումի որոշումներով, Հայաստանի կոմունիստական կուսակցության և հանրապետության Մինիստրների սովետի օգնությամբ «Հայգյուղտնտեխնիկա» միավորումը վճռական քայլերի դիմեց գյուղատնտեսության նորոգման բազաների համակողմանի ամրապնդման, նորոգման առաջավոր արդյունաբերական մեթոդների ներդրման, արտադրանքի որակի բարձրացման և ինքնարժեքի իջեցման ուղղությամբ։ Որոշվեց երկու տարում վերակառուցել և գործի դցել նորոգման քսան ձեռնարկություն։ Այս բոլորի շնորհիվ «Հայգյուղտնտեխնիկայի» տեսակարար կշիռը զգալիորեն բարձրացավ և 1965 թվականին արդեն կատարեց տրակտորների նորոգման 68

47 ՀԿԿ Կենտկոմի 1965 թվականի ապրիլյան պլենումի որոշումը (ՀԿԿ Կկ-ի ռեֆերատիվ արխիվ)։

48 «Հայգյուղտնտեխնիկայի» կոլեգիայի 1965 թվականի մայիսի 3-ի որոշումը։

տոկոսը, կոմբայնների նորոգման՝ 57 տոկոսը, ավտոմեքենաների նորոգման՝ 44 տոկոսը։

1965 թվականին Աբովյանի և Էջմիածնի, իսկ 1966 թվականին Աշտարակի և Սպիտակի շրջաններում կառուցվեցին վերանորոգման մեկական արհեստանոց։ 1965 թվականին ընդլայնվեցին և վերակառուցվեցին Ալավերդու, Արտաշատի, Բասարգեչարի, Վեդու, Եղեգնաձորի, Իջևանի, Մարտունու, Հրազդանի, Թալինի և Երևանի, իսկ 1966 թվականին Ազիզբեկովի, Ամասիայի, Անիի, Ղուկասյանի, Կալինինոյի, Ղափանի, Գուգարքի, Նոյեմբերյանի, Սևանի արհեստանոցները։ 1965 թվականին վերանորոգման ենթարկվեց 1900 տրակտոր, 340 կոմբայն, 11090 ավտոմոբիլ, 120 տրակտորային շարժիչ, 2700 ավտոմոբիլային շարժիչ և այլն։

Կենտրոնացած մատակարարման և նորոգումների համար 1965 թվականին բաց թողնվեց 160 հազար ռուբլի, 1966 թվականին՝ 300 հազար։ Միջոցառումներ մշակվեցին ինչպես գյուղատնտեսական մեքենաների նորոգումը բարելավելու, այնպես էլ նորոգման ինքնարժեքն իջեցնելու ուղղությամբ։ 1965 թվականին ստեղծվեց կոլտնտեսությունների և սովխոզների մեքենա-տրակտորային պարկի տեխնիկական սպասարկման 57 բրիգադ, որը սպասարկեց 247 տնտեսության[49]։ Կոլտնտեսություններում և սովխոզներում ներդրվեց այգեգործական և անասնապահական կոմպլեքսային մեքենայացում, ստեղծվեց 32 անասնապահական օրինակելի ֆերմա, այդ թվում Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան և Հանֆիդա, Կալինինոյի շրջանի Պրիվոլնի և Սարատովկա, Շահումյանի շրջանի 22-րդ կուսհամագումարի անվան, Շամշադինի շրջանի Ղրղի, Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր և Ուռուտ, Արտաշատի շրջանի Նորվզլու և Այգեզարդ, Բասարգեչարի շրջանի Բասարգեչար, Կամոյի շրջանի Նորադուզ, Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղերի կոլտնտեսություններում[50]։

49 Նույն տեղում։

50 Նույն տեղում։

Այսպիսով, ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումից հետո ավելի քան ամրապնդվեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը խարսխող օղակներից մեկը՝ գյուղատնտեսական տեխնիկայի հանրապետական միավորումը, ավելի բարձրացավ նրա դերը գյուղատնտեսության զարգացման գործում։

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սոցիալիստական քաղաքի և գյուղի միջև դաշինքի զարգացմանը նպաստում է արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ գիտության նվաճումների ներդրումը։

Գիտության նվաճումները ներդնելով կոլտնտեսային արտադրության մեջ, զարգանում է գիտության բնագավառի աշխատողների, արդյունաբերական բանվորների, մասնագետների, գյուղատնտեսության աշխատողների փոխադարձ կապը, դա մի նոր բարձր աստիճան է գյուղի և քաղաքի աշխատավորների հարաբերությունների մեջ։

ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումից հետո վերակառուցվեցին հանրապետության գիտահետազոտական հիմնարկների աշխատանքները, դրանք ի սպաս դնելով գյուղատնտեսության վերելքի պահանջներին։ Վերանայվեցին ինստիտուտների գիտահետազոտական պլանները, նրանցում դրվեցին գյուղատնտեսության՝ հատկապես խաղողագործության, բանջարաբուծության և պտղաբուծության աշխատատար պրոցեսների մեքենայացման, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման հրատապ հարցերը։ Գիտահետազոտական ինստիտուտների գիտական աշխատողները ավելի սերտորեն կապվեցին կոլտնտեսությունների հետ։

1955—1956 թվականներին հանրապետության գիտությունների ակադեմիայի սիստեմից հանվեցին գյուղատնտեսական գիտահետազոտական ինստիտուտները և հանձնվեցին գյուղատնտեսության մինիստրությանը։ Ղեկավարվելով կուսակցության Կենտկոմի որոշումներով, վերակառուցվեցին

նաև գյուղատնտեսական տեխնիկումները, ճշտվեց դրանց ուղղությունը։

Հանրապետության հողագործության և անասնաբուծության զարգացման գործում կարևոր նշանակություն ուներ գյուղատնտեսական տարբեր ճյուղերի ճիշտ տեղաբաշխումը։ Այդ կարևոր աշխատանքը սկսվել էր տակավին 1930-ական թվականներից և ավարտվեց 1955 թվականին։

Գիտահետազոտական ինստիտուտները սկսեցին ուսումնասիրել գյուղատնտեսության կոմպլեքսային մեքենայացման, անասունների և թռչունների ցեղերը բարելավելու, կերի նոր բաղադրանյութերի ստեղծման, անասունների հիվանդությունները կանխելու, շերամապահության և մեղվաբուծության զարգացման հրատապ հարցերը։

Մի շարք կարևոր պրոբլեմների լուծման նպատակով կոորդինացվեցին հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքները։

Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը պատրաստեց նոր տիպի հելոջերմոցների շրջանակներ, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ տարվա ընթացքում բոլոր ամիսներին, արևի ճառագայթների օգնությամբ, Արարատյան դաշտավայրում աճեցնել բանջարանոցային կուլտուրաների սածիլներ։ Խաղողագործության-գինեգործության ինստիտուտի ուսումնասիրությունների հիման վրա Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում (Ալավերդի, Նոյեմբերյան, Իջևան և Շամշադին) դարկ տրվեց խաղողագործությանը։ Հայկական ՍՍՀ ԳԱ այգեգործության ինստիտուտի աշխատանքների շնորհիվ ստեղծվեցին ծիրանի, դեղձի, խնձորի, տանձի, սալորի և այլ պտուղների նոր տեսակներ։

Կուսակցության XX համագումարից հետո արմատապես վերակառուցվեց Հայաստանի գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկների աշխատանքը։ Մի շարք ինստիտուտների և լաբորատորիաների ու սեկտորների բազայի վրա ստեղծվեցին երկրագործության, անասնապահական ու անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտները։ Այդ

միջոցով պայմաններ ստեղծվեցին ժամանակին և հաջողությամբ լուծելու տնտեսական և գործնական հարցեր, գյուղատնտեսական արտադրության մեջ արմատավորելու գիտության և առաջավոր փորձի նվաճումները։

Արդեն 1956 թվականին գյուղատնտեսական բարձրորակ մասնագետներով համալրված էին երկրագործության, այգեգործության և պտղաբուծության, հիդրոտեխնիկայի և մելիորացիայի, անասնապահական և անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտները, գյուղատնտեսական, անասնաբուժական-անասնաբուծական բարձրագույն ուսումնական հաստատությունները, անտառային տնտեսության, ծխախոտագործական, բանջարաբուծական փորձնական կայանները և Լենինականի պետական սելեկցիոն կայանը։

Առանձին կոլտնտեսություններում կազմակերպվեցին փորձնական տնտեսություններ, ուր կոորդինացվում էին ՄՏԿ-ների, գիտահետազոտական հիմնարկների և կոլտնտեսությունների համատեղ աշխատանքները։

Դրա առաջին օրինակը հանդիսացավ Էջմիածնի շրջկենտրոնի Վ. Ի. Լենինի անվան կոլտնտեսությունում ստեղծված սելեկցիոն սերմնաբուծական փորձնական կայանը։ Հետագայում նման փորձնական կայաններ ստեղծվեցին նաև այլ խոշոր կոլտնտեսություններում։

Այդ նոր հիմնարկների ստեղծումը կոլտնտեսություններում ունի նաև այն դրական նշանակությունը, որ գյուղատնտեսական գիտության և գործնական խնդիրների լուծումը կատարվում է միաժամանակ, որին մասնակցում էին ոչ միայն գիտական աշխատողներ, ՄՏԿ-ի մասնագետներ, այլ նաև փորձառու կոլտնտեսականներ։ Գյուղատնտեսության արտադրության գիտական հարցերի մշակման գործում խոշոր աշխատանք են կատարում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բուսաբանական, կենդանաբանական և էկոնոմիկայի ինստիտուտները, բուսաբանական այգին, կենսաբանության սեկտորը և ագրոքիմիայի լաբորատորիան, ինչպես նաև

Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը։

Գյուղատնտեսության արտադրության զարգացման խնդիրների մշակումն ու կենսագործումը դարձավ գիտահետազոտական հիմնարկների ստեղծագործական կոլեկտիվների կարևոր բնագավառը։ Բավական է ասել, որ այդ պրոբլեմների մշակմանը 1958 թվականին մասնակցում էին գիտությունների ավելի քան 40 դոկտորներ, որոնցից 8-ը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, 274 գիտությունների թեկնածուներ, բարձրագույն կրթություն ունեցող 350 մասնագետներ, որոնք աշխատում էին գիտահետազոտական ինստիտուտներում։

Գիտահետազոտական ինստիտուտները սերտորեն համագործակցում են գյուղատնտեսության առաջավորների հետ։ Այսպիսի համատեղ ջանքերով լայն գործունեություն ծավալվեց հանուն գյուղատնտեսության վերելքի։ Երկրագործության ինստիտուտը մշակեց խոզանացան կուլտուրաների հողի նախացանքային մշակման նոր սիստեմ, որը տվեց տնտեսական բարձր շահավետություն։ Մշակվեց խաղողի և պտղատու ծառերի էտի ու ձևավորման, այգիների պարարտացման և ոռոգման, պտղատու տնկիների միջշարքային տարածությունների մշակման և խոտացանության ավելի արդյունավետ եղանակ։ Մշակվեց հյուսիսային շրջանների անջրդի պայմաններում խաղողի նոր այգիներ հիմնելու ագրոտեխնիկան։

Այգեգործական ինստիտուտի կոլեկտիվի ուսումնասիրությունների հիման վրա հնարավոր եղավ Հայաստանի լեռնային շրջաններում զարգացնել պտղաբուծությունը։

1956—1965 թվականներին գյուղատնտեսությանը սպասարկող գիտահետազոտական ինստիտուտները տվեցին բարձրորակ և բերքատու ցորենի, բանջարաբոստանային կուլտուրաների, բամբակի, ծխախոտի, խաղողի, պտղատու կուլտուրաների նոր սորտեր։

Գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկների փորձնական աշխատանքներն ընդլայնելու նպատակով Հայ-

կական ՍՍՀ Մինիստրների սովետի 1956 թվականի սեպտեմբերի որոշմամբ առանձնացվեցին նոր հողամասեր։ 1958 թվականին կար դաշտային կուլտուրաների 32, խաղողի և պտղատու կուլտուրաների 6 փորձադաշտ։ Առավել ներդործուն և արդյունավետ միջոցառումներ մշակվեցին բույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքար կազմակերպելու համար։ Ստեղծվեցին նոր, բարձր արդյունավետության թունաքիմիկատներ, հերբիցիդներ։ Մոլախոտերի, բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի կիրառմանը լայն չափով օգտագործման մեջ դրվեց ավիացիան։

Հատուկ ուշադրություն դարձվեց շերամապահության զարգացմանը։ Բանն այն է, որ տարիներ շարունակ շերամապահությունը մնում էր գյուղատնտեսության ետ մնացող ճյուղերից մեկը։ Գիտնականները զբաղվեցին շերամապահության արտադրության բարձրացման հարցով։ Նրանց աշխատանքի արդյունքներից մեկը եղավ այն, որ աճեց շերամապահության կերի բազան, թթենիների տերևատվությունը և բարելավվեց կերի որակը։

Փորձերը ցույց տվեցին, որ շերամի «Ազատ Ադրբեջան», «Բելակոկոն», «Բելակոկոն 2» սպիտակաբոժոժ տեսակները համեմատաբար մեր պայմաններում առավել արդյունավետ են և ավելի մեծ չափերով ներդրվեցին արտադրության մեջ։

Գիտնականները զգալի հաջողությունների հասան նաև անասնաբուծության-անասնաբուժության բնագավառում։ Կատարելագործեցին անասունների ցեղերը, ստեղծվեցին նորերը, բարելավվեցին անասունների կերակրման, խնամքի պայմանները, զգալի աշխատանք տարվեց կերի բազայի ամրապնդման, կերի մշակման նոր տեխնոլոգիայի և անասունների հիվանդությունների բուժման և կանխման համար։

Համագործակցելով գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատող մասնագետների հետ և տարիներ շարունակ կատարած փորձերի շնորհիվ, ստեղծվեց տավարի Լոռվա ցեղախումբը, որն աչքի է ընկնում բարձր կաթնատվությամբ և

կենդանի քաշով։ Այդ ցեղախումբը զարգանում է շատ շրջանների կոլտնտեսություններում։

Ստեղծվեցին՝ ոչխարների, խոզերի, թռչունների և ճագարների նոր ցեղախմբեր։ Զգալիորեն բարելավվեցին արոտներն ու խոտհարքները, կազմակերպվեց դրանց ինտենսիվ օգտագործումը։

Գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկները, հողագետները, ինժեներ-մելիորատորները և հիդրոտեխնիկները ստեղծեցին ոռոգման նոր սիստեմներ, մշակեցին ճահիճների չորացման նոր մեթոդներ։ Ուսումնասիրվեց Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի պաշարները, նրանց օգտագործելու հարցերը։ Գյուղատնտեսական էկոնոմիկայի բարձրացման, աշխատանքի կազմակերպման ու վարձատրման մեթոդների ուղղությամբ նրանց հետազոտությունները տվեցին դրական արդյունքներ։

Կուսակցությունը և կառավարությունը առաջ քաշեցին գյուղատնտեսության քիմիացման պլանը։ Անհրաժեշտ էր փորձնական լայն աշխատանքի հիման վրա նախապատրաստել քիմիական պարարտանյութերի ամենուրեք մասսայաբար առավել արդյունավետ օգտագործման խնդիրը։

Կոլտնտեսություններում պարարտացման նոր փորձերը ղեկավարելու համար գյուղատնտեսության գիտահետազոտական ինստիտուտները ամրացվեցին ըստ շրջանների և կոլտնտեսությունների։ Փորձա-ցուցադրական տնտեսություններում փորձնական աշխատանքների կազմակերպման համար Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը լրացուցիչ հատկացրեց 241 հաստիք։ 1961 թվականին 33 կոլտնտեսությունների և սովխոզների բազայի վրա կազմակերպվեցին փորձա-ցուցադրական տնտեսություններ։

Այսպիսով, բոլոր շրջաններում ստեղծվեցին փորձա-ցուցադրական տնտեսություններ, որոնք իրականացնում էին գիտության նվաճումների և առաջավոր փորձի ներդրումն արտադրության մեջ։

Կոլտնտեսականները և սովխոզների բանվորները անմիջականորեն մասնակցում էին գիտության և գործնականի միաձուլմանը։ Դա քաղաքի և գյուղի, գիտության և գյուղատնտեսության զոդումն էր, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի դրսևորումը։

Այդ փորձա-ցուցադրական տնտեսությունները, իրենց օրինակով, փորձերի արդյունքների մասսայականացումով մեծագույն ծառայություն էին մատուցում շրջանների կոլտնտեսություններին և սովխոզներին։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության գիտահետազոտական ինստիտուտները, բացի իրենց փորձերի արդյունքներից, օգտագործում էին նաև միութենական տարբեր գիտահետազոտական հիմնարկների նվաճումները, դրանք հարմարեցնելով Հայաստանի պայմաններին[51]։

Անասնապահական-անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի ջանքերով անցկացվեց կանաչ կերերի կոնսերվացումը, ներդրվեց կերա-բոստանային բույսերի մշակությունը, որի առաջին փորձը կատարվեց Կալինինոյի շրջանի երկու կոլտնտեսություններում։ Ինստիտուտի նախաձեռնությամբ Հրազդանի շրջանի երեք կոլտնտեսություններում կազմակերպվեցին ճաների և մատղաշների աճեցման նոր եղանակներ, երեք կոլտնտեսություններում և Էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկայում ներդրվեց մսաձվատու ցեղի հավերի արդյունաբերական տրամախաչումը, մի քանի կոլտնտեսություններում ներդրվեց կերի վերգետնյա սիլոսացումը։ Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Ալավերդու, Սիսիանի, Իջևանի, Աբովյանի, Կալինինոյի և Ստեփանավանի շրջանների կոլտնտեսություններում կազմակերպվեց գետնախնձորի ցանք, որը տվեց դրական արդյունքներ։

Հանրապետության գյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտի նախաձեռնությամբ գրեթե բոլոր կոլտնտեսություններում ստիճանաբար կազմակերպվեցին տրակտորա-դաշտավարական բրիգադներ՝ նրանցում առանձնացնելով մեքենայացված օղակներ՝ շարահերկ կուլտուրաների, ամենից առաջ բամբակենու, եգիպտացորենի մշակության համար։

Հայաստանի սովխոզների և կոլտնտեսությունների մեծ մասը 1960—1962 թվականներին անցավ տնտեսությունը վարելու տնտհաշվարկի մեթոդների։ Բոլոր շրջաններում կոլտնտեսությունները լայնորեն ծավալեցին արտադրական փոխադարձ կապերի զարգացումը։ Միջկոլտնտեսային արտադրական կապերում առանձին ուշադրություն էր դարձվում ջրատնտեսային շինարարությանը (ջրանցքներ, ջրհան կայաններ, արոտների ջրարբիացում), գյուղատնտեսական հումքի վերամշակման գործարանների, նորոգման արհեստանոցների, արհեստական սերմնավորման կետերի, ճանապարհների, կուլտուր-կենցաղային և այլ օբյեկտների շինարարության վրա։

Կենսաբան գիտնականները լուրջ նվաճումների հասան գենետիկայի, սելեկցիայի, սերմնաբուծության կարևոր հարցերի լուծման բնագավառում և որոշակի ավանդ ներդրեցին գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1963 թվականի հունիսի 3-ի որոշման մեջ նշվում է, որ «աճեցվել են խաղողի, պտուղների, ցորենի, ծխախոտի, բամբակենու, բանջարա-բոստանային և այլ կուլտուրաների արժեքավոր սորտեր։ Արտադրության մեջ լայնորեն արմատավորված է հիբրիդային եգիպտացորենի մշակությունը։ Հաջողություններ են ձեռք բերվել նաև գյուղատնտեսական կենդանիների բարձր մթերատու ցեղերի բազմացման բնագավառում։ Արժեքավոր հետազոտություններ են կատարվել ագրոքիմիայի, ագրոտեխնիկայի, բույսերի պաշտպանության, նոր հիբրիդների, գյուղատնտեսական կենդանիների հելմինտոզների բնագավառներում և այլն»[52]։

---

51 Հայկական ՍՍՀ Գյուղատնտեսության մինիստրության կոլեգիայի 1960 թ. ապրիլի 18 որոշումը։

52 Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշումները, 1963 թ. հունիս, էջ 54—55։

Իր հետագա զարգացումն ստացան նաև կենսաբանական գիտության բաժինները՝ բիոքիմիան, գենետիկան, ֆիզիոլոգիան, միկրոբիոլոգիան, ագրոքիմիան, բիոֆիզիկան, իմունոլոգիան և վիրուսոլոգիան։

Որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին նաև նոր դեղորայք ստեղծելու բնագավառում, արժեքավոր արդյունքներ ստացան ուղեղի բիոքիմիայի հետազոտության ուղղությամբ։

Բայց Հայաստանում չկար գենետիկայի, սելեկցիայի ու սերմնաբուծության միասնական կենտրոն, այդ բնագավառի աշխատանքների համատեղման համար։ Կենսաբանական հետազոտություններում անբավարար էին կիրառվում քիմիական ֆիզիկական ու մաթեմատիկական մեթոդները։ Կենսաբանական հիմնարկների տեխնիկական բազան թույլ էր, որի հետևանքով հետազոտությունների նոր մեթոդներ չէին կիրառվում, առանձին հիմնարկներում գիտնականները աշխատում էին գյուղատնտեսության և առողջապահության գործնական խնդիրներից կտրված։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1963 թվականի հունվարի 9-ի «Կենսաբանական գիտության հետագա զարգացման պրակտիկայի հետ նրա կապի ամրապնդման միջոցառումների մասին» որոշումով, Հայաստանի գիտնականները սկսեցին լայնորեն ուսումնասիրել գյուղատնտեսական բույսերի ու կենդանիների սելեկցիայի նոր արդյունավետ եղանակների ստեղծման մեթոդները։ Նրանք ուսումնասիրեցին ու զարգացրին բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների առաջացման, կենսականության, սպիտակուցների և այլ կենսաբանական կարևոր միացությունների ֆիզիկական հատկությունների, քիմիական կազմվածքի և ֆիզիոլոգիական ֆունկցիաների, հիվանդությունների բնույթի պարզաբանման և այդ հիման վրա մարդու, կենդանիների ու բույսերի հիվանդությունների բուժման ու կանխման նոր եղանակների մշակման պրոբլեմները և այլն։

Գրական աշխատանք կատարվեց հավերի երևանյան ցեղախմբի բազմացման ու տարածման ուղղությամբ։ Բայց հավերի գլխաքանակի ավելացման համար տարվող այդ աշխատանքն ընթանում էր անբավարար։ Կոլտնտեսություններում ու սովխոզներում երևանյան ցեղախմբի հավերի մասսայական տարածումն ու նրանց ցեղական և մթերային հատկությունների հետագա կատարելագործումն ապահովելու նպատակով ձեռնարկվեցին մի շարք միջոցներ, կազմակերպվեցին թռչնաբուծական ֆերմաներ, պայքար ծավալվեց թռչունների վարակիչ հիվանդությունների դեմ։ Գետամեջի թռչնաբուծական սովխոզը վերակառուցվեց երևանյան ցեղախմբի հավերի բազմացման ցեղական սովխոզի։ Շահումյանի և Ախուրյանի ինկուբատորային-թռչնաբուծական կայանների օրինակով, 1963 թվականին Ստեփանավանի, Գորիսի, Բասարգեչարի ինկուբատորային-թռչնաբուծական կայաններին կից կառուցվող ֆերմաների բազայի վրա կազմակերպվեցին երևանյան ցեղախմբի հավերի թռչնաբուծական ֆերմաներ։

Ճակնդեղագործական կոլտնտեսությունները և սովխոզները որոշակի հաջողությունների հասան գործարանային և կերի ճակնդեղի բերքատվությունը բարձրացնելու ուղղությամբ։ Ճակնդեղի պետական գնման պլանը կատարվեց 100,5 տոկոսով, պետությանը հանձնվեց 106.530 տոննա ճակնդեղ։ Բայց ցածր բերք ստացվեց անասունների կերի նպատակով ցանված ճակնդեղից (հեկտարից 103 ցենտներ)։ Դա բացատրվում է նրանով, որ անբավարար էին լուծվում տեղական ու հանքային պարարտանյութերի օգտագործման, հողի նախացանքային նախապատրաստման, հեկտարների լիարժեքությունն ապահովելու և աշխատատար պրոցեսների մեքենայացման հարցերը։

Շաքարի ճակնդեղի մշակությունը բարելավելու նպատակով 1963 թվականին կազմակերպվեց ճակնդեղի սերմերի կենտրոնացված ախտահանման գործը, պայքար ծավալվեց ճակնդեղի բույսի հիվանդությունների ու վնասատուների դեմ։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ս. Դավթյանի ղեկավարությամբ ագրոքիմիայի լաբորատորիայի և երկրի այլ գիտական ու արտադրական կազ-

մակերպությունների հետազոտական աշխատանքների շնորհիվ ապացուցվեց առանց հողի հիդրոպոնիկայի մեթոդով բանջարեղենի և անասնապահության համար վիտամինային կերի արտադրության արդյունավետությունը[53]։ 1964 թվականից հիդրոպոնիկ եղանակով ստացվեց բանջարեղեն։

Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի դոցենտ Ս. Գ. Մելիքսեթյանի նոր մեթոդով բուժվում է հասակավոր խոշոր եղջերավոր անասունների մեջ տարածված կերային տրավմա հիվանդությունը։ Այդ մեթոդը, որի կիրառումով բարձրանում է անասունների մթերատվությունը, կոլտնտեսությունների և սովխոզների անասնաբուժության մեջ արմատավորելու նպատակով, 1961 թվականից Երևանի մեռաղակերամիկայի և կիսահաղորդիչների գործարանում սկսվեց մասնագիտական զոնդերի և էլիպսաձև օղերի արտադրությունը։

1959—1962 թվականներին կոլտնտեսություններում և սովխոզներում ներդրվեցին թռչնապահության ֆաբրիկային եղանակը, որի շնորհիվ սովխոզներում ու կոլտնտեսություններում ձվի արտադրությունն ավելացավ երկու անգամ, թռչունների մսինը՝ 1,6 անգամ։ Բայց այդ մթերքների արտադրության ծավալը չէր ապահովում Երևան քաղաքի և արդյունաբերական մյուս կենտրոնների բնակչության աճող պահանջները։ Գոյություն ունեցող երեք թռչնաբուծական ֆաբրիկաներում 1962 թվականին արտադրվել էր ընդամենը 9,2 միլիոն ձու, կամ կոլտնտեսությունների ու սովխոզների ձվի արտադրության առաջադրանքի միայն 13 տոկոսը։ Էջմիածնի և Լենինականի թռչնաբուծական ֆաբրիկաները լրիվ չէին օգտագործում այն ռեզերվները, որոնք հնարավորություն կտային ավելացնելու ձվի և թռչունների մսի արտադրությունը։ Վատ էր կազմակերպված թռչունների կերի արտադրությունը, կերերը ցածր էին որակով, չէին հարստացվում անհրաժեշտ վիտամիններով։

53 ՀԿԿ ԿԿ-ի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1964 թ. մարտի 27-ի որոշումը։

Թռչնաբուծական ֆաբրիկաներում սկսեցին կիրառել լիարժեք համակված կերախառնուրդներով թռչունների կերակրման առաջավոր մեթոդներ։ Հողամասեր տրամադրվեցին թռչնաբուծական ֆաբրիկաներին՝ հացահատիկային և այլ կերային կուլտուրաների ցանքեր կատարելու համար։ Երևանի համակված կերի գործարանում կազմակերպվեց հատիկացված կերերի արտադրությունը, որի համար 1964 թվականին ավելացվեցին կապիտալ ներդրումները։

Առաջավոր փորձի ներդրման գործում վիթխարի դեր կատարեց համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը, որը բացվեց 1954 թ. օգոստոսին։ Դրանից հետո 1955 թ. բացվեց Հայաստանի գյուղատնտեսական ցուցահանդեսը։

Այդ ցուցահանդեսներն ամենայն իրավամբ կոչվեցին ժողովրդական համալսարաններ։ Հետագայում դրանք արդեն սկսեցին ներկայացնել ոչ միայն գյուղատնտեսության, այլև արդյունաբերության, գիտության, տեխնիկայի, կուլտուրայի նվաճումները։ Այդ համալսարանները, որոնք արդեն կոչվում են ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսներ, հանդիսանում են բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի շնորհիվ ձեռք բերած հաղթանակների պրոպագանդման մասսայական տրիբունաներ, գիտական և գործնական խոշոր օգնություն են արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորների փորձի փոխանակման, մեր երկրի տնտեսական նոր վերելքի գործում։

ՍՄԿԿ XX համագումարը Կենտկոմին հանձնարարեց՝ երբեք չթուլացնել աշխատանքը գյուղատնտեսության վերելքի ուղղությամբ։ Համագումարը պահանջեց «արմատապես բարելավել սովետական և արտասահմանյան գիտության ու տեխնիկայի նվաճումների, առաջավոր կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների ու սովխոզների փորձի պրոպագանդայի ու արտադրության մեջ դրանց արմատավորման գործը, այն հաշվով, որ այդ հիման վրա խիստ կրճատվեն գյուղատնտեսական արտադրանքի մեկ միավորի արտադրության վրա կատարվող աշխատանքի և նյութական միջոցների ծախսումները, բարձ-

բացվի բոլոր կուլտուրաների բերքատվությունն ու անասնաբուծության մթերատվությունը»։

ՀԿԿ Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը 1962 թվականին պարտավորեցրին հողագիտության և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտին՝ ավարտել կոլտնտեսությունների և սովխոզների խոշոր հողագիտական քարտեզները կազմելու աշխատանքը։

Հանրապետության բոլոր տնտեսությունների հողային ծածկոցի քարտեզագրման աշխատանքը ավարտվեց 1965 թվականին։ Ինստիտուտը կազմեց նաև 18 շրջանների հավաքական քարտեզները՝ իրենց բացատրագրերի հետ միասին։ Բայց պետք է խոստովանել, որ առանձին շրջանների (Գորիս, Եղեգնաձոր, Ստեփանավան և Կալինինո) կոլտնտեսություններում ինստիտուտի առաջարկած միջոցները վատ էին ներդրվում արտադրության մեջ։

Հողագիտական քարտեզների և հողային հետազոտությունների նյութերի հիման վրա մշակվեցին և արտադրության մեջ ներդրվեցին ագրոտեխնիկական միջոցառումներ, բարելավվեց հողերի ագրոմելիորատիվ վիճակը, բարձրացվեց հողերի բերքատվությունը։

Հողագիտական քարտեզների և հողային ուսումնասիրությունների նյութերին ծանոթանալու նպատակով գյուղատնտեսության մինիստրության բարձրագույն և միջնակարգ կրթության վարչությունը 1965 թվականի սկզբներին կազմակերպեց շրջանային գյուղատնտեսների, կոլտնտեսությունների ու սովխոզների մասնագետների հնգօրյա կուրսեր։ Հողագիտության և ագրոքիմիայի, երկրագործության, անասնապահության և անասնաբուժության գիտահետազոտական ինստիտուտները օգնություն ցույց տվեցին հողերի արդյունավետ օգտագործման հետ կապված խնդիրների լուծմանը։

Հողագործության քարտեզների և ուսումնասիրված նյութերի հիման վրա «Հայգյուղտնտեխնիկա» միավորման գյուղատնտեսության մեքենայացման և էլեկտրիֆիկացման ինստիտուտի թեմատիկայում նախատեսվեցին հողերի ենթա-

վարելաշերտերը փխրեցնող և վերաշրջող գործիքներ մշակելու հարցերը։

Արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրումը ավելի լայն չափերով իրագործելու նպատակով ընդարձակվեցին ՄՏԿ-ների խորհուրդների աշխատանքները, որոնք պարբերաբար լսում էին ինֆորմացիաներ այդ մասին։ Խորհուրդների աշխատանքներին մասնակցում էին գիտնականները և գյուղատնտեսության որակյալ մասնագետները։

Գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում վճռական նշանակություն ունի կադրերի որակավորումը։ Այդ նպատակով կազմակերպված դասընթացներում ընդգրկվեցին ֆերմաների վարիչները, բրիգադիրները, օղակավարները, գյուղատնտեսության աշխատողները, կոլտնտեսային ակտիվը։ Կուսակցության XX համագումարից հետո զգալիորեն բարելավվեցին դասընթացների աշխատանքները։ 1958 թվականին ագրո-զոոտեխնիկական դասընթացներում սովորող 13 հազար ունկնդիրներից լրիվ կուրսը ավարտեցին ավելի քան 10 հազարը[54]։

1956—1957 ուսումնական տարում, առանց արտադրությունից կտրվելու, ագրո-զոոտեխնիկական դասընթացներում սովորում էին ավելի քան 10 հազար հոգի։

Դասընթացներն ապահովված էին ծրագրերով, մեթոդական ձեռնարկներով և անհրաժեշտ պարագաներով։ Դասընթացներին օգնություն ցույց տալու նպատակով ՄՏԿ-ներին կից ստեղծվեցին ագրո-զոոկաբինետներ, ուր կենտրոնացված էին ուսումնա-մեթոդական նյութեր և անհրաժեշտ գրականություն։ Դասընթացներն ավարտողներին շնորհվում էր գյուղատնտեսության վարպետի կոչում։ Ագրո-զոոտեխնիկական դասընթացները կազմակերպում ու ղեկավարում էին ՄՏԿ-ները, գյուղատնտեսական օրգանները։ Ուսուցման նման սիս-

---

54 Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության կոլեգիայի 1958 թ. որոշումը։

տեմի ստեղծումը բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման ձևերից մեկն էր։ Այդ գործում դրսևորվում էին պետության և կոլտնտեսությունների ընդհանուր շահերը։ Ցավոք, 1960 թվականից նման խմբակներ չկազմակերպվեցին, թեև դրանց կարիքը մեծ էր։

Գյուղատնտեսության բնագավառի կադրերի պատրաստման և որակավորման գործում կարևոր դեր էին կատարում արտադրական սեմինարներն ու կոնֆերանսները, որոնք հրավիրվում էին առանց արտադրությունից կտրվելու և վերապատրաստման դասընթացները, որոնք կազմակերպվում էին արտադրությունից կտրված։ Հաճախակի գումարվում էին ագրո-զոոտեխնիկական խորհրդակցություններ, կոնֆերանսներ, համագումարներ և այլն։

Գումարվում էին նաև կոլտնտեսային արտադրության լավագույն կազմակերպիչների և մասնագետների աշխատանքի գրական փորձի փոխանակման և մասսայականացման հավաքներ։ Գյուղատնտեսության մասնագետների որակավորման ուղղությամբ խոշոր դեր կատարեցին Երևանի գյուղատնտեսական և անասնապահական-անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտին կից միամսյա և եռամսյա դասընթացները, որոնք ստեղծվեցին կուսակցության XX համագումարից հետո։ Այնտեղ դասախոսություններով հանդես էին գալիս գիտության մարդիկ՝ պրոֆեսորներ, դոկտորներ և դոցենտներ։

Գյուղատնտեսական կադրերի որակավորման լավագույն միջոցառում էր կոլտնտեսային մասնագետների և կոլտնտեսականների գործուղումները Հայաստանի և միութենական մյուս հանրապետությունների գյուղատնտեսական գիտահետազոտական ինստիտուտները, փորձադաշտերը և առաջավոր կոլտնտեսությունները, ուր նրանք ծանոթանում և սովորում էին կոլտնտեսային արտադրության բարձրացման, աշխատանքի լավ կազմակերպման մեթոդները և ձևերը։

1957 թվականից սկսած, յուրաքանչյուր տարի Երևանում, ապա շրջաններում անց էին կացվում երիտասարդ գիտական

աշխատողների և կոլտնտեսային մասնագետների, առաջավորների համատեղ կոնֆերանսներ։ Այդ կոնֆերանսները ցույց տվեցին, որ գյուղատնտեսության բնագավառի երիտասարդ գիտական աշխատողները հաջողությամբ են լուծում տեսական և գործնական նշանակություն ունեցող պրոբլեմները։ Կոնֆերանսները բացահայտում էին նաև երիտասարդ գիտնականների աշխատանքում տեղ գտած թերությունները, առանձնապես այն, որ նրանք իրենց ուսումնասիրությունները կատարում էին փոքր փորձադաշտերում և դրանք չունեին արտադրական լայն բնույթ։

1957 թվականի հունվարին Երևանում տեղի ունեցավ գյուղատնտեսական մասնագետների հանրապետական առաջին համագումարը, որն ամփոփեց գյուղատնտեսական գիտական հիմնարկների և օրգանների կատարած աշխատանքը։ Նման հավաքներ տեղի ունեցան նաև հետագա տարիներին։

Բայց այս հաջողությունների հետ կենսաբանական և գյուղատնտեսական գիտության զարգացման ուղղությամբ դեռևս կան թերություններ։ Ձեռք բերած հաջողությունները դեռևս անբավարար են։ Անասունների մատավության, կաթնատվության և ոչխարների բրդատվության, հավերի ձվատվության բարձրացման ուղղությամբ կատարվող աշխատանքը գտնվում է ցածր մակարդակի վրա։ Անբավարար է գյուղատնտեսության մեջ գիտության նվաճումների ներդրումը։ Գյուղատնտեսական գիտահետազոտական ինստիտուտների փորձերը կատարվում են փոքր հողատարածությունների վրա, դրանց դրական արդյունքները չեն մասսայականացվում կոլտնտեսություններում և սովխոզներում, չեն դառնում գյուղի աշխատավորության սեփականությունը։ Դեռևս խիստ ցածր է գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։

Կենսաբանական և գյուղատնտեսական գիտության հետագա զարգացման ուղղությամբ ծրագրային մեծ խնդիրներ առաջադրեց ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումը։ Ելնելով այդ որոշումներից, հանրապետության գյուղատնտեսական և կենսաբանական ինստիտուտները լայն

11—243

պայքար են ծավալում ՍՄԿԿ Կենտկոմի որոշումները անշեղորեն կատարելու համար։

ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայտնի է, որ 1954 թվականը ինչպես Սովետական Միության մեջ, այնպես էլ Հայաստանում գյուղատնտեսության նոր վերելքի առաջին տարին էր։ Այդ հաջողությունը ձեռք բերվեց կոլտնտեսային գյուղացիության և բանվոր դասակարգի համատեղ, եռանդուն ջանքերով։ Երկրի կոլտնտեսություններում ու սովխոզներում ավելացավ հացահատիկի համախառն արտադրանքը։ Ավելացան բանջարեղենի և կարտոֆիլի արտադրությունն ու մթերումները։

«Սովետական ինդուստրիան,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի հունվարյան պլենումի որոշման մեջ,—1954 թվականին ավելացրեց գյուղատնտեսության համար ժամանակակից հզոր տեխնիկայի արտադրությունը։ Հազարավոր ձեռնարկություններ և հիմնարկներ, որակյալ բանվորներ և մասնագետներ ուղարկվեցին յուրացնելու խամ ու խոպան հողերը, ավելացնելու ՄՏԿ-ները և սովխոզները։ Դրանում մեկ անգամ ևս դրսևորվեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության անխախտ դաշինքի մեծ ուժը»[55]։

Գյուղատնտեսության նոր վերելք ստեղծելու մասին մեր կուսակցության առաջադրած պատմական խնդրի անշեղ կատարման համար մղվող պայքարում էլ ավելի ամրապնդվեցին քաղաքի և գյուղի կապերը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը։ Շնորհիվ այդ ամրակուռ դաշինքի, գյուղատնտեսության վերելքի համար մղվող համաժողովրդական պայքարում հանրապետության կոլտնտեսությունները և ՄՏԿ-ները գյուղատնտեսության գիտական հիմնարկները, ձեռք բերեցին որոշակի հաջողություններ։ Գյուղատնտեսական աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին արդյունաբերական ձեռնարկությունների ամբողջ կոլեկտիվներ, որոնք լայն օգնություն կազմակերպեցին ենթաշեֆ կոլտնտեսություններին և ՄՏԿ-ներին։ 1953 թվականի համեմատությամբ, Հայաստանի կոլտնտեսությունների դրամական եկամուտները աճեցին 60,2 միլիոն ռուբլով[56] կամ 11 տոկոսով։ Միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը ավելացավ 19-ով, հասնելով 172-ի, աշխատունակ կոլտնտեսականների միջին վաստակը 1954 թվականին կազմեց 239 աշխօր, 1953 թվականի 224-ի փոխարեն։

Զգալի աշխատանք կատարվեց գյուղատնտեսության աշխատանքների մեքենայացման ծավալը ընդարձակելու, գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների և անասնապահական մթերքների արտադրությունը ավելացնելու գործում։ ՄՏԿ-ները նախորդ տարվանից, աշխատանքները փափուկ վարով արտահայտած, 285 հազար հեկտար ավելին կատարեցին։ Գերակատարվեց պետությանը ծխախոտի հանձնման պլանը, կոլտնտեսություններում զգալի չափով ավելացավ կովերի գլխաքանակը, մի կովի կաթնատվությունը նախորդ տարվա համեմատությամբ ավելացավ 55 կիլոգրամով, իսկ կաթի համախառն արտադրանքը՝ ավելի քան 10 հազար տոննայով։ Պետությանը ավելի հանձնվեց կարտոֆիլ՝ 1270 տոննա, բամբակ՝ 3000 տոննա, բանջարեղեն՝ 6425 տոննա, խաղող՝ 14.450 տոննա, անասնապահական մթերքներից կաթ՝ 17.000 տոննա, միս՝ 1466 տոննա[57] և այլն։

ՄՏԿ-ներն ամրապնդվեցին մասնագիտական կադրերով։ Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու միջոցով Հոկտեմբերյանի, Ախուրյանի, Բասարգեչարի, Ղարիբջանյանի և Նորակերտի մեքենա-տրակտորային կայանները գերակատարեցին պլանները։

1954 թվականին որոշ հաջողությունների հասավ անասնաբուծությունը, խոշոր եղջերավոր անասունների գլխաքա-

55 ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թ. հունվարյան պլենումի որոշումը, էջ 6։

56 Դրամի հին մասշտաբով։

57 Հայկական ՍՍՀ Գյուղատնտեսության մինիստրության կոլեգիայի 1955 թ. փետրվարի 18-ի որոշումը։

նակը ավելացավ 21,5 հազարով, որից կովերինը՝ 13,7 հազարով, մոտ 50 հազար գլխով ավելացավ մանր եղջերավոր անասունների գլխաքանակը, բայց ամբողջությամբ վերցրած անասնաբուծության զարգացման մակարդակը չէր բավարարում բնակչության հարաճուն պահանջը, ինչպես նաև թեթև և սննդի արդյունաբերության պահանջը։ Հանրային անասնաբուծությունը շարունակում էր մնալ գյուղատնտեսության առավել ետ մնացող ճյուղը։ 1955 թվականի հենց սկզբից կուսակցական ու սովետական օրգանները աշխատավորության ուշադրությունը բևեռեցին թերությունների վերացման և ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու ուղղությամբ։

Հայաստանի կոմկուսի XVIII և XIX համագումարները ամփոփելով հանրապետության գյուղատնտեսության 1954—1957 թվականների արդյունքները, արձանագրեցին, որ ձեռք են բերվել որոշակի հաջողություններ, զգալիորեն բարձրացել է գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Համեմատաբար լավ արդյունքների հասան Ղուկասյանի, Սևանի, Մարտունու, Բասարգեչարի, Շամշադինի, Գորիսի, Ապարանի, Հոկտեմբերյանի, Մեղրու, Հրազդանի, Էջմիածնի, Շահումյանի, Սիսիանի, Աշտարակի, Կամոյի մեքենա-տրակտորային կայանները՝ բանվոր դասակարգի դաշինքը կոլտնտեսային գյուղացիության հետ ամրապնդող այդ օղակները, որոնք 1954—1955 թվականներին մեքենայացրին անասնապահական 300 ֆերմաներում աշխատատար պրոցեսները։

Այս ամենի շնորհիվ 1955 թվականին հանրապետությունը հաջողությամբ կատարեց ժողովրդական տնտեսության զարգացման հինգերորդ հնգամյա պլանը։ Դա պատիվ է բերում Հայաստանի բանվոր դասակարգին, կոլտնտեսային գյուղացիությանը և ինտելիգենցիային։

Կենսագործելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1956 թվականի մարտի 6-ի գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության և ավանսավորման մասին որոշումները, հանրապետության կոլտնտեսությունները 1956 թվականին լրացուցիչ կարգով կոլտնտեսականներին տվեցին

9.600 ցենտներ հացահատիկ, 4.300 ցենտներ կարտոֆիլ, 800 ցենտներ բանջարեղեն, 105 հազար տոննա կեր, 700 ցենտներ կաթ, 1016 գլուխ հորթ, 12.800 հազար ռուբլի դրամ[58]։ Զգալիորեն բարձրացավ կոլտնտեսությունների շահաբերվածությունը։

Ուսանելի է Ախուրյանի շրջանի օրինակը։ Կուսակցության շրջկոմը, շրջսովետի գործկոմը և մեքենա-տրակտորային կայանը 1957 թվականի սկզբներից մանրամասն զբաղվեցին կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրման հարցերով, օգնեցին մշակելու կոլտնտեսականների լրացուցիչ վարձատրության կարգը։ Այդ միջոցառումները տվեցին իրենց դրական արդյունքները, ավելացավ շաքարի ճակնդեղի արտադրությունը։ Եթե 1956 թվականին շրջանում ստացվեց 76041 տոննա շաքարի ճակնդեղ, 1957 թվականին այդ միջոցառումների կենսագործման շնորհիվ ստացվեց 87,711 տոննա շաքարի ճակնդեղ։ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի, քաղաքային, շրջանային կոմիտեների և սկզբնական կուսակազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ավելի ծավալվեցին կոլտընտեսային կարգի ուժերը, գործի դրվեցին նոր ռեզերվներ, իրական հիմքերի վրա դրվեց գյուղատնտեսական մթերքների առատություն ստեղծելու պայքարը։ Այդ ամենի շնորհիվ 1953—1958 թվականները գյուղատնտեսության իսկական վերելքի տարիներ դարձան։

Ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումը քանի դեռ սեպտեմբերյան պլենումի որոշումները կենսագործվում էին, երկիրը որոշակի արդյունքներ ունեցավ։ 1953—1958 թթ. գյուղատնտեսությունը մեծ արդյունքի հասավ կոլտնտեսությունները և սովխոզները կազմակերպչորեն-տնտեսապես ամրապնդման, նրանց նյութա-տեխնիկական բազայի բարելավման և գյուղի աշխատողների նյութական շա-

58 ՀԿԿ 19-րդ համագումարի սղագր. արձանագրությունը, ՀԿԿ Կենտկոմի պարտ. արխիվ, ֆ. 1, գ. 83, թ. 145։

հագրգռվածության բարձրացման գործում[59]։ Այդ տարիներին կոլտնտեսությունները ստացան նոր որակյալ կադրեր, յուրացվեցին միլիոնավոր հեկտար խամ ու խոպան հողեր, ընդլայնվեցին ցանքատարածությունները, բարձրացավ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, ավելացավ գյուղատնտեսության համախառն ու ապրանքային արտադրանքը։ 1955—1959 թվականներին երկրի գյուղատնտեսության համախառն արտադրանքը տարեկան միջին հաշվով աճեց 7,6 տոկոսով։ Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, ապա 1954—1958 թվականներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը տարեկան, միջին հաշվով, աճում էր մոտ 8 տոկոսով։

Հաջողություններն առանձնապես ակնառու էին 1958 թվականին։ Գյուղատնտեսական բոլոր կուլտուրաներից ստացվեց բարձր բերք, արտադրվեցին ավելի շատ անասնապահական մթերքներ, դրա լավագույն վկայությունն է այն, որ 1958 թվականին հավաքվեց 35800 տոննա բամբակ, որին հանրապետությունը պետք է հասներ 1965 թվականին, այսինքն՝ յոթնամյակի վերջին։ 1953 թվականի համեմատությամբ, 1958 թվականին մեկ հեկտարից ավելի ստացվեց. ճակնդեղ՝ 84 ցենտներ, բանջարեղեն՝ 2,2 անգամ, կարտոֆիլ՝ 1,4 անգամ, խաղող՝ 13,2 ցենտներ, ծխախոտ՝ 3,1 ցենտներ և այլն։

Նշված հինգ տարիներին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացավ 23,9 տոկոսով։ Հաջողությամբ առաջ գնաց հատկապես ցեղական տավարի զարգացումը, բարձրացավ կովերի կաթնատվությունը և ոչխարների բրդատվությունը։

1958 թվականին գերակատարվեցին հացահատիկի, բամբակի, շաքարի ճակնդեղի, մսի, կաթի, բրդի պետական մթերումների պլանները։ 1953 թվականի համեմատությամբ 1958 թվականին 80 տոկոսով աճեցին կոլտնտեսությունների դրամական եկամուտները, զգալիորեն բարձրացավ բնակչության նյութական բարեկեցությունը։

Գյուղատնտեսության բնագավառում Հայաստանի ձեռք բերած հաջողությունները բարձր գնահատվեցին կուսակցության և կառավարության կողմից։ 1958 թվականի դեկտեմբերի 29-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու, պետությանը բամբակ, շաքարի ճակնդեղ, հացահատիկ, միս, կաթ և բուրդ վաճառելու պլանների կատարման ու գերակատարման համար Հայկական ՍՍՀ-ն պարգևատրվեց Լենինի շքանշանով։

ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի փետրվարյան պլենումը որոշում ընդունեց մեքենա-տրակտորային կայանները վերակառուցելու մասին։ Պլենումը միաժամանակ նշում էր, որ անտեսապես թույլ շրջաններում և կոլտնտեսություններում պահվելու են մեքենա-տրակտորային կայանները կամ տրակտորային բրիգադները։ Սակայն անտեսվեց պլենումի այդ կարևոր ցուցումը։

Խախտելով ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան պլենումի որոշումը, հանրապետության լեռնային շրջանների շատ կոլտնտեսություններ իրենց ամբողջ շրջանառու միջոցները հատկացրեցին ՄՏԿ-ներից մեքենաներ գնելու, որի հետևանքով ընկան տնտեսական դժվարությունների մեջ։

Արդեն 1961—1962 թվականներին զգալի թվով կոլտնտեսություններ անհրաժեշտ միջոցներ չունեին արտադրության և կապիտալ ներդրման համար։ Այդպիսի վիճակի հետևանքով բազմաթիվ կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը մի քանի անգամ պակաս էին հիմնական միջոցներից։ Այդպես էր վիճակը Մարտունու, Եղեգնաձորի, Արտաշատի և մի շարք այլ կոլտնտեսային-սովխոզային արտադրական վարչությունների կոլտնտեսություններում։

Շատ կոլտնտեսություններ ժամանակին չէին կարողանում վերադարձնել վարկերը, որի պատճառով անընդհատ եր-

59 ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումի նյութերը, Պրավդա, № 86, 1965։

կարաձգվում էին դրանց դանձման ժամկետները։ Կոլտնտեսությունների մի մասը չէր կարողանում փակել ժամկետանց վարկերը, նման կոլտնտեսությունների վճարողականությունն ընկել էր, ստեղծվել էր ֆինանսական ծանր դրություն։

ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1961 թվականի հունվարի 10-ին որոշում ընդունեցին կոլտնտեսությունների էկոնոմիկայի և ֆինանսական վիճակի հետագա ամրապնդման միջոցառումների մասին։ Այդ որոշման մեջ նշվեց, որ մեքենա-տրակտորային կայանները վերակառուցելու, տեխնիկան կոլտնտեսություններին վաճառելու, գյուղատնտեսական մթերումների կարգը փոխելու և գյուղատնտեսական մթերքների գնման նոր գներ սահմանելու միջոցառումների կենսագործման շնորհիվ կոլտնտեսությունների էկոնոմիկան զգալիորեն ամրապնդվեց[60]։ Կոլտնտեսություններն ավելի լավ են կատարում գյուղատնտեսական աշխատանքները, ընդարձակվում են ցանքատարածությունները, զարգանում է անասնապահությունը և ավելանում մթերատվությունը։ Ավելանում են կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը։ Բայց դեռևս կային շատ կոլտնտեսություններ, որոնք լիովին չէին օգտագործում եղած հնարավորությունները, նպատակին և խնայողաբար չէին ծախսում դրամական միջոցները։ Շատ կոլտնտեսություններ իրենց եկամուտներով չէին ծածկում բոլոր ծախսերը, ժամկետանց մեծ պարտքեր ունեին ՍՍՀՄ պետբանկին և մատակարարող կազմակերպություններին, ձգձգում էին կոլտնտեսությունների հետ տարվող հաշվարկները։ Որոշման մեջ ասվում է նաև, որ տեղական կուսակցական, սովետական և գյուղատնտեսական շատ օրգաններ կոլտնտեսություններին բավականաչափ օգնություն չէին ցույց տալիս արտադրությունը հաջող կազմակերպելու, նրա վերելքն ապահովելու, աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման և նրանց ֆինանսական տնտեսության ամրապնդման գործում։ Ելնելով այդ որոշումներից, ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների սովետը 1961 թվականի փետրվարի 15-ին միջոցառումներ նշեցին բարձրացնելու հանրապետության կոլտնտեսությունների էկոնոմիկան։ 1961 թվականի փետրվարի 1-ից գործածության մեջ դրվեցին տրակտորների, կոմբայնների, բեռնատար ավտոների և այլ մեքենաների նորոգման ժամանակավոր գնացուցակները, սահմանվեցին գյուղատնտեսական մեքենաների և ավտոների կապիտալ ու ընթացիկ նորոգման ժամանակավոր գներ, որոնք արհեստականորեն բարձրացվել էին։ 65 կոլտնտեսությունների պարտքերի ժամկետները տարկետվեցին, որոնց ընդհանուր գումարը կազմում էր 600 հազար ռուբլի։ Սահմանվեց, որ հիշյալ վարկերը մարվելու են հինգտարյա ժամկետում, սկսած 1963 թվականից։ Այդ միջոցներով նույնպես չբարձրացավ գյուղատնտեսությունը։

Կոլտնտեսություններից ու սովխոզներից գյուղատնտեսական մթերքների և հումքի գնումը կազմակերպող ձեռնարկությունների աշխատանքի հետագա բարելավման նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1963 թվականի սեպտեմբերի 21-ի որոշումով կազմակերպվեց հասարակական վերահսկողություն՝ գյուղատնտեսական մթերքների որակի որոշման և ձեռնարկությունների հաշվարկների ճշտակերպման նկատմամբ։

Հասարակական վերահսկողությունը և ընթացիկ աշխատանքը կատարվում էր առանց պետության լրացուցիչ ծախսերի, հասարակական վերահսկիչների խմբերի միջոցով։ Նման խմբեր ստեղծվեցին հացաբնդունման ձեռնարկություններում, հացի, կաթի, մսի, ճակնդեղի, շաքարի, բանջարեղենի, պահածոների, խաղողի, գինու գործարաններում և ընդունման կետերում, գյուղատնտեսական մթերքներ ու հումք ընդունող մթերման այլ կետերում ու ձեռնարկություններում։ Հասարակական վերահսկողության խմբերը ստեղծում էին սովյալ ձեռնարկության կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները։ Վերահսկիչ խմբերի

60 ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումները, 1961 թ. փետրվար, էջ 81—82։

հիմնական խնդիրն է՝ ստուգել գյուղատնտեսական մթերքների որակը, գնման ու վաճառքի փաստաթղթերի ճիշտ կազմումը, հետևել ընդունման կետերում և ձեռնարկություններում գյուղատնտեսական մթերքների ու հումքի ընդունմանը, նախնական մշակման և պահպանման սահմանված կարգի կիրառմանը և այլն։ Հասարակական վերահսկիչների ստուգման արդյունքները պարտադիր կարգով քննարկում էին ընդունող գործարանների ու կետերի, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, սովխոզների ղեկավարները և վերացնում բացահայտված թերությունները։

Գյուղատնտեսական մթերքների որակի որոշման և կոլտնտեսությունների ու սովխոզների հետ մթերող կազմակերպությունների և ձեռնարկությունների հաշվարկների ձևակերպման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը հանդիսանում է բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի նոր ձևերից մեկը, այդտեղ դրսևորվում է արդյունաբերության և կոլտնտեսության, բանվոր դասակարգի և կոլտնտեսականների շահերի ընդհանրությունը գյուղատնտեսական մթերքների որակի բարձրացման գործում։ Ինչ խոսք, որ պետության միջոցներով գյուղատնտեսական մթերքները հանձնման կետերը հասցնելը մեծ օգնություն էր կոլտնտեսություններին և սովխոզներին, բայց դրանով նույնպես չբարձրացավ հատկապես ետ մնացող կոլտնտեսությունների և սովխոզների էկոնոմիկան։

ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումի ընդունած ճիշտ կուրսը, ցավոք, հետագայում խախտվեց։ Ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումը, մինչև 1958 թվականը ձեռք բերած հաջողությունները չամրապնդվեցին և չզարգացվեցին։ Այդ բացատրվում է մի քանի հանգամանքներով։ Նախ՝ լրիվ հաշվի չէին առնվում սոցիալիստական տնտեսության օրենքների պահանջները, իսկ հաճախ նույնիսկ անտեսվում էին։ Խախտվում էր սոցիալիստական ընդլայնված վերարտադրության օրենքը, խախտվում էին նաև հանրային և անձնական շահերի զուգակցման, նյութական շահագրգռվածության սկզբունքները։ Վերջին տարիներին գյուղատնտեսության ղեկավարման մեջ գերակշռում էին կամայական բնույթի գործողություններ, որոնք առանձնապես արտահայտվում էին պլանավորման, գնագոյացման, ֆինանսավորման ու վարկավորման բնագավառում։ Գյուղատնտեսական մի շարք մթերքների գնման գները չէին արտահայտում դրանց արտադրական ծախսերը։ Դրանց հետևանքով կոլտնտեսությունները և սովխոզները մեծ վնաս էին կրում[61]։

Պլենումը նշեց, որ «գյուղատնտեսության ետ մնալու հիմնական պատճառներն էին՝ սոցիալիստական արտադրության զարգացման տնտեսական օրենքների խախտումը, հանրային տնտեսության վերելքի, հանրային և անձնական շահերի ճիշտ զուգակցման գործում կոլտնտեսականների և սովխոզների բանվորների նյութական շահագրգռվածության սկզբունքների խախտումը։ Զգալի չափով իր ներգործությունն ունեցավ սուբյեկտիվիզմը ղեկավարման ասպարեզում, որը հանգեցրեց սխալների գյուղատնտեսության պլանավորման, ֆինանսավորման և վարկավորման, գների քաղաքականության ասպարեզում։ Քիչ կապիտալ ներդրումներ էին հատկացվում արտադրական և կուլտուր-կենցաղային շինարարությանը, թույլ էր ամրապնդվում նյութատեխնիկական բազան։ Կոլտնտեսային և սովխոզային արտադրությանը մեծ վնաս հասցրին ղեկավար օրգանների չհիմնավորված վերակառուցումները, որոնք անպատասխանատվության և նյարդայնության իրադրություն էին ստեղծում աշխատանքում»[62]։

Այդ ամենը բացասաբար անդրադարձան նաև Հայաստանի գյուղատնտեսության վրա։

Թերենք անասնաբուծության մի կարևոր ճյուղի օրինակը։ ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո մեր հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում խո-

61 ՍՄԿԿ ԿԿ-ի մարտյան պլենումի նյութերը, Երևան, 1965։

62 ՍՄԿԿ ԿԿ-ի 1965 թ. մարտյան պլենումի որոշումը, «Պրավդա», № 88, 1965։

զաբուծության վիճակը գնալով բարելավվում էր և տարեցտարի ավելանում էր խոզերի գլխաքանակն ու բարձրանում խոզաբուծական ֆերմաների արտադրական ցուցանիշները։ Եթե 1952 թվականին խոզերի գլխաքանակը կազմում էր ընդամենը 100 հազար, ապա 1961 թվականին հասավ 127 հազարի[63], բայց ահա 1964 թվականին իջավ 68 հազարի[64]։

Կամ վերցնենք մի այլ ցուցանիշ։ Խոզի մսի տեսակարար կշիռը մսի ընդհանուր արտադրության մեջ 3,9 տոկոսից հասավ 10,9 տոկոսի։ Տարեսկզբին ունեցած մեկ հիմնական մերունի հաշվով խոզի մսի արտադրությունը 1960 թվականին հասավ 375 կիլոգրամի, 1953 թվականի 166 կիլոգրամի փոխարեն։ Յուրաքանչյուր 100 մերունից ստացվեց 948 խոճկոր, 1953 թվականի 480-ի դիմաց[65]։ Առանձին շրջաններ և առաջավոր կոլտնտեսություններ ավելի բարձր ցուցանիշների հասան։ Դրանց թվին էին պատկանում՝ Էջմիածնի, Շահումյանի, Շամշադինի, Հոկտեմբերյանի, Արտաշատի շրջանների շատ տնտեսություններ։ Նրանք վարելահողի յուրաքանչյուր 100 հեկտարի դիմաց արտադրել էին 35—40 ցենտներ խոզի միս։ Արտաշատի շրջանի Վ. Արտաշատ, Մրգաստան, Էջմիածնի շրջանի Վ. Քյոլանլու, Այգեշատ, Շահումյանի շրջանի Ն. Կողբ, Ն. Արեշ գյուղերի կոլտնտեսությունները տարեսկզբին ունեցած յուրաքանչյուր հիմնական մերունի հաշվով ստացան 1—1,4 տոննա միս, իսկ մեծ թվով տնտեսություններ 700—900 կիլոգրամ խոզի միս։ Ստեփանավանի, Շահումյանի, Արտաշատի, Աբովյանի և Կալինինոյի շրջանները տարեսկզբին ունեցած յուրաքանչյուր մերունից ստացան 12—14 խոճկոր, իսկ Շահումյանի շրջանի Դավիթաշեն, Ն. Կողբ, Ն. Կյանք, Ստեփանավանի շրջանի Պուշկինո, Կալինինոյի շրջանի Սարատովկա, Արթիկի շրջանի Փանիկ գյուղերի կոլտնտեսությունները յուրաքանչյուր հիմնական մերունի հաշվով ստանում և պահպանում էին 20—35 խոճկոր։

Բայց ի՞նչ եղավ հետագայում։ 1961 թվականի սկզբներից տնտեսությունները մասնագիտացման անվան տակ, խոզաբուծությունը «ոչ արդյունավետ» լինելու և խոզերի հիվանդությունը վերացնելու պատրվակով, շատ կոլտնտեսություններ և սովխոզներ, նույնիսկ առանձին շրջաններ, սկսեցին վերացնել խոզաբուծական ֆերմաները։ Շրջանային ղեկավար օրգանները, որոշ տնտեսություններում, վերացնելով ֆերմաները, միջոցներ ձեռք չառան ապահովելու խոզաբուծության արագ զարգացումը՝ դրա համար նպաստավոր պայմաններ ունեցող տնտեսություններում, որի հետևանքով 1961—1964 թվականներին խոզաբուծությունը ոչ միայն չզարգացավ, այլ զգալիորեն վայրէջք ապրեց։

1961—1962 թվականներին լուծարքի էին ենթարկվել 163 խոզաբուծական ֆերմա։ Խոզերի թվի կրճատումը շարունակվում էր։

Վատ էր կազմակերպված խոզերի բտումը, բարձր էր խոզերի անկումը։ Խոզաբուծության հարցերով անբավարար էր զբաղվում զոոանասնաբուծական անձնակազմը։ Խոզերը վատ էին կերակրվում, խոզաբուծական ֆերմաներում չէին լուծվում աշխատանքի վարձատրման և կազմակերպման հարցերը։ Ֆերմաներում բացակայում էր աշխատանքի բաշխումը և աշխատողներին նյութական շահագրգռվածության ու պատասխանատվության բարձրացումը։

Հասկանալի է, թե ինչու գաճաճ ֆերմաների առկայությունը խիստ բարձրացնում էր խոզի մսի ինքնարժեքը։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների մինիստրության կոլեգիան քննարկելով կոլտնտեսություններում և սովխոզներում խոզաբուծության վիճակի և այն բարելավելու միջոցառումների հարցը, ստիպված եղավ արձանագրել, որ «շատ կոլտնտեսություններ և սովխոզներ փոխանակ կոնկրետ միջոցներ ձեռք առնելու խոզաբուծությունը զարգացնելու, այն արդյունավետ դարձնելու, լուծարքի

63 Народное хозяйство Арм. ССР в 1964 г., Статистич. сборник, Е., 1965.

64 Նույն տեղում։

65 ՀՍՍՀ գյուղ. մինիստրության կոլեգիայի 1963 թ. հունվարի 17-ի որոշումը։

են ենթարկել խոզաբուծական ֆերմաները, կամ խիստ կրճատել են գլխաքանակը»[66]։ Դրա հետևանքով 1961—1962 թվականներին խոզերի գլխաքանակը հանրապետությունում պակասեց 17,3 հազար գլխով[67]։

Չնայած մինիստրության կոլեգիան կոլտնտեսային-սովխոզային արտադրական վարչությունների, սովխոզների ու կոլտնտեսությունների ղեկավարների կարևորագույն խնդիրներից մեկը համարեց խոզաբուծության վիճակի արմատական բարելավումը և նրա զարգացումը, որպես մսի արտադրությունն ավելացնելու լավ միջոցի, և կոլտնտեսային-սովխոզային արտադրական վարչություններին առաջարկեց ուսումնասիրել խոզաբուծության վիճակը և մշակել անասնաբուծության այդ կարևոր ճյուղի հետագա զարգացումն ապահովող կոնկրետ միջոցառումներ, բայց 1962 թվականին խոզաբուծությունը ոչ միայն չզարգացավ, այլև շարունակվեց գլխաքանակի պակասումը։

Միայն ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումի որոշման հիման վրա ՀԿԿ Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ապրիլյան պլենումը միջոցառումներ մշակեցին անասնաբուծության այդ կարևոր ճյուղի զարգացման համար։

Տարիներ շարունակ արմատավորվել էր այն սխալը, երբ կոլտնտեսությունները և սովխոզները, չունենալով անհրաժեշտ քանակությամբ բարձրորակ ու տեսակավոր սեփական սերմացու, ամեն տարի սերմ-վարկ էին ստանում, կամ գնում պետական միջոցներից։ Շատ տեղերում դեռևս ցանում էին աշնանացան և գարնանացան ցորենի անորակ սերմեր, որի հետևանքով ընկնում էր հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, վատանում էր դրանց որակը։ Այդ հասցրնում էր գյուղատնտեսական արտադրության կազմալուծման։

66 Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների մինիստրության կոլեգիայի 1963 թ. հունվարի 17-ի որոշումը։

67 Նույն տեղում։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1961 թվականի հունվարի 20-ի որոշման մեջ նշվեց, որ տեղական կուսակցական և սովետական օրգանների առանձին ղեկավարներ փոխանակ կանգնած լինելու կոլտնտեսությունների և սովխոզների կողմից սեփական սերմֆոնդեր ստեղծելու սահմանված կարգի պաշտպանության դիրքերում, ելնելով կարիերիստական նկատառումներից, ձգտելով առաջինը զեկուցել ստանձնած պարտավորությունների կատարման մասին, կոլտնտեսություններին և սովխոզներին ստիպում են սերմացու հացահատիկը հանձնել հացահատիկի գնումների պլանի կատարման դիմաց, որով և լուրջ վնաս են հասցնում կոլտնտեսություններին ու սովխոզներին և բռնում պետությանը խաբելու ուղին[68]։

Չնայած այդ որոշմանը, առանձնապես բարելավում չմտցվեց հանրապետության կոլտնտեսությունների աշխատանքում։ Ավելին, 1962—1963 թվականներին հացահատիկի արտադրությունը, 1958 թվականի համեմատությամբ, զգալիորեն պակասեց։

Հանրապետության կոլտնտեսությունները 1962 թվականի տնտեսական տարում թեև որոշ հաջողություններ ձեռք բերեցին գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակման (նախորդ տարվա համեմատությամբ ընդարձակվեց 21,5 հազար հեկտարով)[69], բերքատվության ու անասնաբուծության մթերատվության բարձրացման և պետությանը վաճառելու առաջադրանքները կատարելու գործում, բայց չհասան բերքատվության 1958 թվականի մակարդակին։

Հացահատիկային կուլտուրաների ծայրահեղ ցածր բերք ստացվեց Մեղրու, Կրասնոսելսկի, Եղեգնաձորի և Աշտարակի արտադրական վարչությունների կոլտնտեսություններում, առանձին շրջաններում ստացվեց կարտոֆիլի ցածր բերք։

68 Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշումները, 1961 թ., փետրվար, էջ 120։

69 Նույն տեղում։

Ցածր էր կերային կուլտուրաների բերքատվությունը։ Շատ էին անասունների անկումները։ Թռչունների անկումը Սպիտակի արտադրական վարչության կոլտնտեսություններում կազմել էր 46,3 տոկոս[70]։ Շատ տեղերում անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում անասունների ցեղը բարելավելու, բարձր մթերատու անասունների տնտակարար կշիռը հոտում ավելացնելու գործին։

Նվազել էին անբաժանելի ֆոնդերին կատարվող հատկացումները։ Եթե 1961 թվականին այդ նպատակին հատկացվել էր եկամուտների 19,2 տոկոսը, ապա 1962 թվականին հատկացվեց՝ 18,3 տոկոսը։ Կոլտնտեսությունների մի մասը գտնվում էր ֆինանսական դժվարությունների մեջ, ժամանակին չէր ապահովվում վարկերի մարումը։ 1963 թվականի հունվարի մեկի դրությամբ, պետբանկի վարկերի ժամկետանց պարտքերը կազմում էին 308,0 հազար ռուբլի[71]։

Չնայած ամեն տարի մշակվում էին միջոցառումներ վերացնելու դեբիտորական պարտքերը, բայց որոշումները մնում էին թղթի վրա, իսկ պարտքերը տարեցտարի աճում էին։ 1963 թվականի հունվարի մեկին դրանք հասնում էին 3.458, հազար ռուբլու, որից 210,5 հազար ռուբլու[72] պարտքը առաջացել էր պակասորդների և յուրացումների պատճառով։

Շատ կոլտնտեսություններ ավանսներ տալու ժամանակ հաշվի չէին առնում կոլտնտեսությունների աշխատանքի քանակը և նրանց հասանելիքի չափը։ Դրա պատճառով էլ աճում էին գերավանսավորումները, որից առաջացած պարտքը 1963 թվականի հունվարի մեկին հասնում էր 107 հազար ռուբլու։ Այդ պարտքերը զգալիորեն ավելի էին հատկապես Մարտունու, Նոյեմբերյանի, Հոկտեմբերյանի, Ստեփանավանի և Էջ-

70 ՀՍՍՀ գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների մինիստրության կոլեգիայի 1963 թ. հունիսի 24-ի որոշումը (տե՛ս մինիստրության ընթացիկ արխիվ)։

71 Նույն տեղում։

72 Նույն տեղում։

միածնի արտադրական վարչությունների կոլտնտեսություններում։ Կոլտնտեսություններում ցածր էր աշխատանքային կարգապահությունը, շատ բարձր էր գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքը։

1963 թվականին կոլտնտեսությունների տնտեսական-ֆինանսական գործունեության մեջ կային աղաղակող թերություններ։

«Անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել հանքային, օրգանական պարարտանյութերի կիրառման, հողի և տեխնիկայի, ինչպես նաև ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կորուստների կանխման և բերքատվության բարձրացման վրա։ Թերակատարվել են՝ բամբակի, խաղողի, ծխախոտի, բանջարեղենի, կարտոֆիլի ու շաքարի ճակնդեղի արտադրության և դրանք պետությանը վաճառելու առաջադրանքները։ Բամբակի վաճառքի պլանը կատարվել էր 48 տոկոսով, խաղողինը՝ 50, ծխախոտինը՝ 41, բանջարեղենինը՝ 77, կարտոֆիլինը՝ 14, շաքարի ճակնդեղինը՝ 88 տոկոսով»[73]։

Հայաստանի կոլտնտեսությունների 80 տոկոսը թերակատարել էր դրամական եկամուտների պլանները։ 1963 թվականին խոշոր եղջերավոր անասունների անկումները կազմեցին 3,6 տոկոս, մանր եղջերավորներինը՝ 4,5 տոկոս, խոզերինը՝ 7,5 տոկոս։ Անասունների անկումները մեծ չափերի էին հասել Ղուկասյանի, Սիսիանի, Աշտարակի, Անիի, Ապարանի, Եղեգնաձորի և Հոկտեմբերյանի, արտադրական վարչությունների կոլտնտեսություններում։ Անբավարար են կատարվել կոլտնտեսությունների կապիտալ շինարարության պլանները։

Կոլտնտեսությունների վարչա-կառավարչական անձնակազմի աշխատանքի վարձատրության սիստեմում եղած թերությունները վերացնելու և այդ գործում միասնական կարգ սահմանելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1963 թվականի նոյեմբերի 19-ի որոշումով սահմանվեց, որ տնտեսությունում, բրիգադում և

73 Նույն տեղում, 12-ը օգոստոսի, 1964, էջ 238։

ֆերմայում ստացված համախառն արտադրանքի արժեքից կախված աշխատանքի վարձատրությունը առավել առաջադիմական և ճիշտ սիստեմ է հանդիսանում։ ՀԿԿ Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը հավանություն տվեցին էկոնոմիկայի և գյուղատնտեսության կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտի մշակած կոլտնտեսությունների վարչա-կառավարչական անձնակազմի վարձատրության կարգին, ըստ որի կոլտնտեսությունների վարչությունների նախագահների, արտադրական բրիգադների բրիգադիրների և անասնաբուծական ֆերմաների վարիչների հիմնական վարձատրությունը կախման մեջ է դրվում տնտեսությունում (բրիգադում, ֆերմայում) ստացված համախառն արտադրանքի արժեքի համեմատ։ Կոլտնտեսությունների նախագահների, արտադրական բրիգադների բրիգադիրների և անասնաբուծական ֆերմաների վարիչների վարձատրության հաշվարկային չափերի սահմանման համար եզակետ է ընդունվել արտադրական միևնույն հզորություն ունեցող սովխոզների դիրեկտորների, բրիգադիրների և ֆերմաների վարիչների ամսական վարձատրության չափերը։

Սահմանվեց կոլտնտեսությունների վարչա-կառավարչական անձնակազմի վարձատրությունը և 1964 թվականի հունվարից սկսած բոլոր կոլտնտեսություններում անցան վարձատրության նոր սիստեմին։

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հայաստանում 1963 թվականի հոկտեմբերին կային 153 ետ մնացող կոլտնտեսություն և 24 սովխոզ։ Ետ մնացող տնտեսությունները շատ էին հատկապես Գորիսի, Սևանի, Անիի, Հոկտեմբերյանի, Սպիտակի և Ղուկասյանի արտադրական վարչություններում։

Հանրապետության կոլտնտեսությունների և սովխոզների տնտեսապես ետ մնալու գլխավոր պատճառներից մեկն այն է,— ասված է ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշման մեջ,— որ այդ տնտեսությունները երկար ժամանակ գլխավորել են անհրաժեշտ գիտելիքներ չունեցող, հանրային

բարդ արտադրության ղեկավարումը և գյուղատնտեսության առջև դրված խնդիրների կատարումն ապահովելու անընդունակ, ոչ բավականաչափ փորձառու կադրեր։ Գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների մինիստրությունը, կուսակցական կոմիտեները և արտադրական վարչությունները պատշաճ ուշադրություն չեն դարձրել տնտեսապես ետ մնացող տնտեսությունների ղեկավարման համար որակյալ, փորձառու մարդկանց ընտրության և անհրաժեշտ աշխատանք չեն տարել հանձնարարված գործի նկատմամբ նրանց պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ։ Քիչ ուշադրություն է դարձվել նաև միջին օղակի (բրիգադիրներ, բաժանմունքների և ֆերմաների վարիչներ) ղեկավար կադրերի պատրաստմանն ու տեղավորմանը[74]։

Կոլտնտեսություններում ու սովխոզներում թերություններ կային աշխատանքի կազմակերպման և վարձատրման գործում, որոնք բացասաբար էին անդրադառնում աշխատանքի վերջնական արդյունքների, կոլտնտեսային և սովխոզային աշխատավորների նյութական շահագրգռվածության բարձրացման վրա։ Ետ մնացող կոլտնտեսություններում ու սովխոզներում ցածր էր աշխատանքային կարգապահությունը։ Անբավարար էր կոլտնտեսությունների մասնակցությունը հանրային աշխատանքներին։

Թույլ էր ետ մնացող կոլտնտեսությունների և սովխոզների նյութատեխնիկական բազան։ Արտադրության մեջ վատ էին արմատավորվում գիտության ու առաջավոր փորձի նվաճումները։ «Տնտեսապես ետ մնացող կոլտնտեսությունների բաղայի վրա վերջին տարիներին կազմակերպված շատ սովխոզներ,— ասված է նույն որոշման մեջ,— չնայած պետության ցուցաբերած զգալի օգնությանը, չեն հասել գյուղատնտեսական արտադրության զարգացման նկատելի հաջողությունների։ 1962 թվականին անասնապահական 56 սով-

74 ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մին. սով. 1963 թ. հոկտեմբերի 25-ի որոշումը։

խոզից 50-ը տնտեսական տարին ավարտել է 2.941 հազար ռուբլի վնասով։ Կոլտնտեսությունների բազայի վրա կազմակերպված 36 սովխոզից 16-ը 1962 թվականը ավարտել է 722 հազար ռուբլի վնասով»[75]։

Հանրապետության կուսակցական և գյուղատնտեսական օրգանների կարևորագույն խնդիրը համարվեց առաջիկա երկու տարվա ընթացքում ետ մնացող կոլտնտեսությունների ու սովխոզների էկոնոմիկայի վերելքը հասցնել մինչև առաջավոր տնտեսությունների մակարդակը և որպես մինիմում՝ արտադրական վարչության միջին ցուցանիշների մակարդակը։

ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը՝ ետ մնացող կոլտնտեսությունների մասին, քննության առնվեցին արտադրական կուսակցական կոմիտեներում, կոլտնտեսային-սովխոզային արտադրական վարչություններում և սկզբնական կուսկազմակերպություններում։ Մշակված միջոցառումների շնորհիվ որոշ չափով բարելավվեց կադրերի որակավորման գործը, կոլտնտեսություններում ու սովխոզներում կազմակերպվեցին գյուղատնտեսական արտադրության առաջավոր փորձի ուսումնասիրման դպրոցներ։ Այսպես. մասսայական կադրերի որակի բարձրացման համար 1964 թվականի հունվարի 1-ից կազմակերպվեցին սովխոզների դիրեկտորների, կոլտնտեսությունների նախագահների եռամսյա դասընթացներ։ Նման դասընթացներ կազմակերպվեցին նաև Մարտունու շրջանի Վարդենիկ, Սիսիանի շրջանի Բռնակոթ, Ալավերդու շրջանի Ուղունլար և Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղերի կոլտնտեսություններում։ Այդ դասընթացներում ներգրավվում էին մոտակա գյուղերի և շրջանների կոլտնտեսությունների ղեկավարները։ Դասընթացներ կազմակերպվեցին նաև տնտեսապես ետ մնացող կոլտնտեսությունների բրիգադիրների և ֆերմաների վարիչների համար։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների մինիստրությունը շրջաններն ուղարկեց գյուղատնտեսական մասնագետների բրիգադներ և գիտական աշխատողներ, որոնք բազմակողմանի օգնություն ցույց տվեցին ետ մնացող տնտեսություններին՝ ճիշտ կազմելու 1964 թվականի արտադրական ֆինանսական պլանները, բարելավելու նորմավորումը։

«Հայգյուղտնտեխնիկա» միավորումը ետ մնացող կոլտնտեսություններին ու սովխոզներին առաջին հերթին բաց թողեց գյուղատնտեսական տեխնիկա, պահեստամասեր, սարքավորում, շինանյութեր և հանքային պարարտանյութեր։

1963 թվականի դեկտեմբերի 1-ից «Հայգյուղտնտեխնիկայի» շրջանային բաժանմունքներում կազմակերպվեցին անասնապահական ֆերմաների մասսայական մեխանիզատորական կադրերի, տրակտորիստների, կոմբայնավարների և մեքենավարների պատրաստման ու վերապատրաստման կարճատև դասընթացներ։

Ետ մնացող կոլտնտեսություններին հատկացվեցին նոր լրացուցիչ վարկեր։ Արդեն 1964 թվականի դրությամբ տնտեսապես ետ մնացող կոլտնտեսություններն ունեին 450 ավտոմեքենա, 430 տրակտոր, 182 կոմբայն, 330 դութան, 200 շարքացան և մեծ թվով զանազան տիպի այլ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ[76]։

Տնտեսապես ետ մնացող կոլտնտեսությունների մեքենատրակտորային պարկը բարձր արտադրողականությամբ օգտագործելու նպատակով 1964 թվականին «Հայգյուղտնտեխնիկա» միավորումը վերցրեց դրանցից 54-ի տեխնիկական սպասարկման, իսկ 1965 թվականից՝ ետ մնացող բոլոր կոլտնտեսություններին տեխնիկապես օգնելու գործը։

Բայց «Հայգյուղտնտեխնիկայի» շրջանային միավորումները և բաժանմունքները անբավարար էին օգնում նը-

---

75 Նույն տեղում։

76 «Հայգյուղտնտեխնիկա» հանրապետական միավորման կոլեգիայի 1964 թվականի հուլիսի 18-ի որոշումը («Հայգյուղտնտեխնիկայի» ընթացիկ արխիվ)։

բանց, դեռևս գործնական աշխատանք չէր տարվում այդ տնտեսություններում արագացնելու մեքենայացումը։

1964 թվականի ապրիլի 18-ին ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների սովետը որոշում ընդունեցին տնտեսապես ետ մնացող կոլտնտեսություններին օգնություն կազմակերպելու մասին։ Ի կենսագործումն այդ որոշման «Հայգյուղտնտեխնիկայի» միավորումը ետ մնացող կոլտնտեսություններին գործնական օգնություն ցույց տալու նպատակով մոբիլիզացրեց բոլոր ուժերը։ Բավարարվեց այդ տնտեսությունների գյուղատնտեսական տեխնիկայի, շինանյութերի և պարարտանյութերի պահանջը, մշակվեցին կոլտնտեսությունների, անասնապահական ֆերմաների լիովին մեքենայացման մանրամասն միջոցառումներ։

1964 թվականին Հայաստանի կուսակցական կազմակերպությունները, սովետական և գյուղատնտեսական օրգանները որոշակի աշխատանք կատարեցին ետ մնացող կոլտնտեսությունների և սովխոզների էկոնոմիկան բարձրացնելու, կազմակերպչորեն-տնտեսապես ամրապնդելու ուղղությամբ։ Լրացուցիչ վարձատրություն սահմանվեց օղակի, բրիգադի, ֆերմայի միջին մակարդակից ավելի ստացված արտադրանքի 25—50 տոկոսի չափով։ Կոլտնտեսություններին բաց թողնվեցին երկարատև վարկեր՝ մասնագետների և մեխանիզատորների համար բնակելի շենքեր կառուցելու համար։ Ներկոլտնտեսային ոռոգման ցանցի կառուցման ու վերակառուցման, ինչպես նաև ոռոգվող հողերի հիմնական հարթեցման աշխատանքներն ամբողջովին կատարվում էր պետական բյուջեի հաշվին։ Կոլտնտեսությունների նախագահների բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների, ինչպես նաև գլխավոր (ավագ) հաշվապահների դրույքների չափերը հավասարվեցին համապատասխան սովխոզների դիրեկտորների և մասնագետների դրույքներին։ Կոլտնտեսությունների տրակտորիստ-մեխանիզատորների, տրակտորիստների, կոմբայնավարների, ավտովարորդների, մեքենավարների, խառատների, փականագործների և արտադրական որակավորում ունեցող այլ անձանց աշխատանքի վարձատրությունը հավասարվեց սովխոզում նույնանման մասնագիտությամբ աշխատողների համար սահմանված տարիֆային դրույքներին և արտադրական նորմաներին։

Պետական բանկի հայկական գրասենյակը հետաձգեց տնտեսապես թույլ կոլտնտեսությունների վարկերի ժամկետանց վճարումները, դրանց համար սահմանվեց 5 տարվա ընթացքում մարելու ժամկետ։ Այդ կոլտնտեսություններից դուրս գրվեցին 116 հազար ռուբլի գումարով պարտքը՝ մեքենա-տրակտորային կայաններից ու ձեռք բերված տեխնիկայի, շենքերի ու սարքավորումների համար։ Շինարարության տեխնիկայի ձեռք բերման ու այլ կապիտալ ներդրումների համար երկարատև վարկերը առաջին հերթին բաց էին թողնվում տնտեսապես թույլ կոլտնտեսություններին, անկախ նախկինում ստացած վարկերի հաշվարկների վիճակից։

ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1964 թվականի ապրիլի 28-ի որոշման համաձայն տնտեսապես թույլ կոլտնտեսություններից դուրս գրվեցին սերմնավարկի պարտքը՝ 73.258 ռուբլի, ինչպես նաև 30 հազար ռուբլու եկամտահարկը և ապահովագրական վճարները։ Այդ կոլտնտեսություններից դուրս գրվեց ճանապարհային շինարարության 265,1 հազար ռուբլու պարտքը։

1964—1966 թվականներին տնտեսապես թույլ կոլտնտեսությունների եկամտահարկը նվազեցվեց 75 տոկոսով։

Այդ միջոցառումները և մյուս ներքին միջոցների արդյունավետ օգտագործումը կոլտնտեսություններին հնարավորություն ընձեռեցին 1964 տնտեսական տարում որոշ հաջողությունների հասնելու, ընդլայնելու հանրային տնտեսությունը, ավելացնելու գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։

1963 թվականի համեմատությամբ հանրապետությունում 1964 թվականին զգալիորեն ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը. հացահատիկինը՝ 3,1 տոկոսով, բամբակի հումքինը՝ 7,7, ծխախոտինը՝ 134,3, շա-

քարի ճակնդեղինը՝ 7,2, կարտոֆիլինը՝ 108, բանջարեղենինը՝ 49,8, պղպեղինը՝ 117,1 տոկոսով[77]։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման շնորհիվ 10,6 միլիոն ռուբլով, կամ 11 տոկոսով, ավելացավ բուսաբուծությունից ստացված համախառն արտադրանքը։ Ավելացավ նաև պետությանը վաճառվող մթերքների քանակը։ 1963 թվականի համեմատությամբ բանջարեղենի վաճառքը ավելացավ 16,1, բոստանային կուլտուրաներինը՝ 7,8 հազար, կարտոֆիլինը՝ 3,2 հազար և ծխախոտինը՝ 4,0 հազար տոննայով։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության և վաճառքի ավելացման շնորհիվ կոլտնտեսությունների դրամական եկամուտները ավելացան 11,5 միլիոն ռուբլով, կամ 1963 թվականի 80,9 միլիոն ռուբլուց 1964 թվականին հասան 102,4 միլիոն ռուբլու[78]։

Այսպիսով, հանրապետության 153 կոլտնտեսությունների, որոնք ֆինանսական ծանր վիճակի մեջ էին, պետությունը ցույց տվեց բազմակողմանի օգնություն։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1964 թվականի մարտի 12-ի «Ետ մնացող կոլտնտեսությունների էկոնոմիկան բարձրացնելու միջոցառումների մասին» որոշումով, Հայաստանի գյուղական կուսակցական կազմակերպությունները լայն աշխատանք ծավալեցին։ Բայց ոչ բոլոր անտեսություններն էին, որ ամբողջովին ոտքի կանգնեցին։ Այդ կոլտնտեսություններից 76-ը 1964 թվականին սովխոզների վերածվեցին։

Կոլտնտեսությունների անտեսական-ֆինանսական գործունեության մեջ դեռևս կային զգալի թերություններ։ Մի շարք շրջաններում 1964 թվականին խիստ թերակատարվեցին գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների՝ խաղողի,

77 ՀՍՍՀ Գյուղատնտեսության մինիստրության կոլեգիայի 1965 թվականի օգոստոսի 30-ի որոշումը։

78 Նույն տեղում։

բամբակի, հացահատիկի ու կերային կուլտուրաների բերքատվության պլանային առաջադրանքները։ Բավական է ասել, որ հեկտարից ստացվեց միայն 24,5 ցենտներ խաղող։ Ցածր էր կերային կուլտուրաների բերքատվությունը։ Անասունների գլխաքանակը ավելանալու փոխարեն պակասել էր, բարձր էր անասունների անկումը, պակասել էր մսի և կաթի համախառն արտադրանքը, շատ էին դեբիտորական պարտքերը։ Առ մեկը հունվարի 1965 թվականի դեբիտորական պարտքերը կազմեցին 3.979 հազար ռուբլի։

Կենսագործելով ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թվականի հոկտեմբերյան և նոյեմբերյան պլենումների որոշումները, Հայաստանի կուսակցական կազմակերպությունները լայն գործունեություն ծավալեցին լենինյան սկզբունքներով վերից վար վերակառուցելու կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների աշխատանքը։ Ստեղծվեցին իրական պայմաններ կուսակցական և սովետական օրգանների բեղմնավոր գործունեության, կոլտնտեսությունները և սովխոզները կազմակերպչորեն և անտեսապես ամրապնդելու համար։

Բայց, ինչպես նշեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1965 թվականի ապրիլյան պլենումը, հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում դեռևս կային լուրջ թերություններ։ Վերջին տարիներում գյուղատնտեսության զարգացման տեմպերը զգալիորեն ետ էին մնում եղած հնարավորություններից։ 1959—1964 թվականներին գյուղատնտեսության մթերքների արտադրության տարեկան միջին աճը, 1954—1958 թվականների համեմատությամբ, զգալիորեն իջել էր։ Նվազել էր գյուղատնտեսական կարևոր կուլտուրաների բերքատվությունը։ 1958 թվականի համեմատությամբ 1964 թվականին կոլտնտեսություններում և սովխոզներում զգալիորեն իջան անասնապահության զարգացման և մթերատվության տեմպերը։ Անբավարար վիճակում էր գտնվում կերի բազան, այն 1958 թվականի համեմատությամբ պակասեց 25 տոկոսով[79]։

79 ՀԿԿ Կենտկոմի 1965 թվականի ապրիլյան պլենումի որոշումը։

Ցածր էր հողագործության կուլտուրան, պայքար չէր տարվում հողի բերրիությունը բարձրացնելու ուղղությամբ, ճիշտ չէին օգտագործվում ոռոգվող հողատարածությունները։ Ճիշտ չէին պլանավորվում գյուղատնտեսական մթերքների մթերումները, պլանները կազմելիս հաշվի չէին առնվում տեղական պայմանները և հնարավորությունները, անտեսվում էր կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը։ Պակասել էին գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները, գյուղատնտեսական արտադրության մեջ անբավարար էին ներդրվում գիտության և առաջավոր փորձի նվաճումները։

ՀԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումը բացահայտեց այն թերությունները գյուղատնտեսության ղեկավարման գործում, որոնք կային հանրապետության կուսակցական, սովետական և գյուղատնտեսական օրգանների աշխատանքում։ Այդ թերությունները աչքի էին գարնում հատկապես կոլտնտեսությունների ու սովխոզների ղեկավար կադրերի ընտրության, տեղաբաշխման և ամրապնդման ասպարեզում։ Նրանք թույլ պայքար էին տանում գյուղատնտեսական արտադրության բարձրացման, աշխատանքային կարգապահության ամրապնդման ուղղությամբ։ Կուսակցության շրջանային կոմիտեները, կոլտնտեսությունների ու սովխոզների սկզբնական կուսակազմակերպությունները դեռևս արմատապես չէին բարելավել քաղաքական աշխատանքը գյուղում։ ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը և հանրապետության Մինիստրների սովետը մշակեցին գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումները, որը և հաստատեց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի ապրիլյան պլենումը։ Նա առաջնակարգ խնդիր համարեց կարճ ժամանակում բարձրացնելու գյուղատնտեսությունը, այն դարձնել շահութաբեր, բարձրացնել՝ բերքատվությունը և անասունների մթերատվությունը, գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը, կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը։ Ուժեղացնել գիտության և առաջավոր փորձի ներդրումը գյուղատնտեսության մեջ, բարելավել քաղաքական-դաստիարակչական աշխատանքը գյուղում։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան և ՀԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումի որոշումներով, գյուղատնտեսության մինիստրությունը ձեռնամուխ եղավ անցյալում ներդրված ցանքաշրջանառությունների վիճակի ստուգմանը և միջոցներ ձեռք առավ ցանքաշրջանառություններում թույլ տրված խախտումները վերացնելու։ Միջոցառումներ մշակվեցին հողային տարածությունների մի զգալի մասը առաջիկա հնգամյակում գյուղատնտեսության մեջ օգտագործելու ուղղությամբ։ Առաջարկություններ մշակվեցին գյուղատնտեսական կուլտուրաների սերմնաբուծությունը բարելավելու, գյուղատնտեսական կուլտուրաների հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարն ուժեղացնելու համար։

Հաշվի առնելով խաղողագործության և պտղաբուծության զարգացման հեռանկարները, առանձնահատուկ ուշադրություն դարձվեց տնկանյութի աճեցմանը պտղատնկարաններում, կոլտնտեսություններում և սովխոզներում։ Միջոցառումներ մշակվեցին՝ առաջիկա երկու տարում խաղողի և պտղատու այգիների նոսրությունը վերացնելու, անասնապահության զարգացման պլանների կատարումն ապահովելու, նախրի կազմում կովերի տեսակարար կշիռը բարձրացնելու, կաթնատվությունն ավելացնելու, մատղաշ և գիրացման ենթակա անասունների կերակրումն ու խնամքը լավ կազմակերպելու։

Հատուկ ուշադրություն դարձվեց տնտեսությունների մասնագիտացման, անասնագլխաքանակի աճը հիմնականում սեփական հոտի վերարտադրության հաշվին կատարելուն, քաղաքամերձ տնտեսություններից հանելու վերարտադրության համար ոչ պիտանի մատղաշներին և նրանց հետագա աճեցումը կազմակերպելուն։ Լուրջ ուշադրություն դարձվեց տոհմային գործի բարելավմանը, արհեստական սերմնավորման ցանցի ընդարձակմանը։ Գիտահետազոտական ինստիտուտներից պահանջվեց շարունակել կովկասյան գորշ ցեղի տավարի, արագածի ցեղախմբի ոչխարի, երևանյան ցեղա-

խմբի հավերի հետագա բարելավմանը նվիրված գիտահետազոտական աշխատանքները։

Արդյունաբերական թռչնաբուծության զարգացման հետ միասին, պահանջվեց մեծ ուշադրություն դարձնել կոլտնտեսային ու սովխոզային խոշոր թռչնաբուծական ֆերմաների կազմակերպմանը։

ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումից հետո մշակվեցին մի շարք միջոցառումներ գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ։ Կոլտնտեսությունների և սովխոզների անասնապահական մթերքների արտադրության շահութաբերությունն ապահովելու և հանրային անասնապահության հետագա զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով 1965 թվականի մայիսի 1-ից գործողության մեջ դրվեցին մսի պետական մթերումների նոր, ավելի բարձր գներ։ Մինչ այդ սահմանված գների նկատմամբ հավելում կատարվեց՝ խոշոր եղջերավոր անասունների մսի գնին՝ 55 տոկոս, խոզի մսի գնին՝ 70 տոկոս։ Հոկտեմբերյանի, Արտաշատի, Վեդու և Երևան քաղաքի Շահումյանի շրջաններում ոչխարների և այծերի մսի գնին հավելում կատարվեց 10 տոկոսով, իսկ մյուս բարձր լեռնային շրջաններում, ինչպես նաև Հոկտեմբերյանի շրջանի Խերիբեկլու և Բախչալար, Էջմիածնի շրջանի Այռավու և Ֆրանգանոց, Արտաշատի շրջանի Ներքին Ջրաշեն, Զովաշեն, Աբովյան, Բարձրաշեն, Դիտակ, Վեդու շրջանի Շաղափլու, Ջիման, Գորովան, Արարատ և Մեծ Վեդի կոլտնտեսություններում և Սովետաշեն, Արաղանի ու Զովաշեն սովխոզներում սահմանվեց 100 տոկոս հավելում։ Կոլտնտեսությունների, սովխոզների և պետական այլ տնտեսությունների, ինչպես նաև բնակչության կողմից պետությանը միս վաճառվելու է մանրածախ գներով, հանելով առևտրական զեղչը[80]։

Միջոցառումներ մշակվեցին կոլտնտեսություններում և սովխոզներում անասնապահական մթերքների ինքնարժեքն իջեցնելու, նյութա-տեխնիկական մատակարարումը բարելավելու, կերի բաղան ամրապնդելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ։

Ցորենի, տարեկանի արտադրության և պետությանը վաճառքն ավելացնելու գործում կոլտնտեսությունների և սովխոզների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով, 1965 թվականի մայիսի մեկից բոլոր շրջանների համար սահմանվեց մեկ տոննա կոնդիցիոն ցորենի համար՝ 90 ռուբլի և տարեկանի համար՝ 85 ռուբլի։ Կոլտնտեսությունների, սովխոզների և այլ տնտեսությունների կողմից ցորենի, տարեկանի և հացահատիկային այլ կուլտուրաների վաճառքի պլանից ավելի տալու դեպքում արվեց 50 տոկոս հավելում[81]։ Լրացուցիչ միջոցառումներ մշակվեցին շաքարի ճակնդեղի արտադրության ավելացման, կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատողների նյութական խրախուսանքի համար։ Սկսած 1965 թվականից կոլտնտեսություններին ու սովխոզներին արտոնյալ գնով շաքար է վաճառվում. ճակնդեղի դաշտերի խոր ցրտահերկ կատարող մեխանիզատորներին, շաքարի ճակնդեղի պլանտացիաների բերքահավաքին մասնակցած կոլտնտեսականներին և սովխոզների բանվորներին բաշխելու համար։

Դրամական պարգևատրումներ սահմանվեցին կոլտնտեսությունների նախագահներին, սովխոզների դիրեկտորներին ու բաժանմունքների կառավարիչներին, կոլտնտեսությունների ու սովխոզների բրիգադիրներին (ջոկատների պետերին) գյուղատնտեսներին, ինժեներներին և մեխանիկներին, ինչպես նաև ոռոգվող ճակնդեղացան շրջանների կոլտնտեսությունների ու սովխոզների հիդրոտեխնիկ-ինժեներներին, հիդրոտեխնիկներին և ջրաբաշխներին։ Սահմանվեց նաև շաքարի ճակնդեղ փոխադրող բանվորներին արտոնյալ գնով շաքար վաճառելու կարգը[82]։

80 ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը, 1965 թ. 30-ը ապրիլի։

81 Նույն տեղում։

82 ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը, 1965 թ. ապրիլ։

Կարևոր նշանակություն տալով մելիորացիայի կիրառմանը, թթու հողերի իրացմանը և կոլտնտեսություններում հողերի բերքատվության բարձրացման ուղղությամբ այլ միջոցառումների իրագործմանը, սահմանվեց, որ առատ խոնավության շրջանների կոլտնտեսություններում հողերի արմատական բարելավումը, աղուտների դիպսացումը, ներառյալ դիպսի արժեքը, նրա փոխադրման և հողին տալու ծախսերը, ինչպես նաև այդ աշխատանքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմելու ծախսերը կատարվելու է պետական բյուջեի հաշվին[83]։

Սահմանվեցին կոլտնտեսությունների նախկին անդամներին, որոնց տնամերձ հողերը հանձնված են սովխոզներին և այլ ձեռնարկություններին ու կազմակերպություններին, ծերության, հաշմանդամության կենսաթոշակներ, իսկ նրանց ընտանիքների անդամներին՝ կերակրողին կորցնելու կենսաթոշակների նոր բարձր նորմաներ[84]։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1965 թվականի ապրիլի մեկի որոշումով, հանրապետության կոլտնտեսություններին ֆինանսական օգնություն ցույց տալու, գյուղատնտեսական մթերքների արտադրության հետագա ավելացման, կոլտնտեսությունների հանրային ֆոնդերի ու եկամուտների ավելացման, ինչպես նաև կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով, պետբանկի հայկական գրասենյակը դուրս գրեց հանրապետության կոլտնտեսությունների պարտքը՝ 17,7 միլիոն ռուբլի գումարով, որից երկարատև վարկեր՝ 15 միլիոն ռուբլի։

Տարեկետվեց մթերող կազմակերպություններից կոլտնտեսությունների ստացած 1,5 միլիոն ռուբլու ավանսի պարտքը հինգ տարով՝ մինչև 1970 թվականը։ Դուրս գրվեց 125.795 ռուբլու այն ամբողջ պարտքը, որ կոլտնտեսություններն ունեին մեքենա-տրակտորային և նորոգման տեխնիկական կայաններից ձեռք բերած տեխնիկայի, շենքերի և սարքավորումների համար։

ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հանձնարարությամբ՝ գյուղատնտեսության մինիստրությունը, կուսակցության շրջկոմները, շրջսովետների գործկոմները և գյուղատնտեսության շրջանային վարչությունները քննության առան կոլտնտեսությունների տնտեսական վիճակը և լրացուցիչ միջոցառումներ մշակեցին նրանց արտադրությունը բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու, ճիշտ ծախսելու հանրային միջոցները։

Կազմվեց Հայկական ՍՍՀ-ի 1966—1970 թվականների գյուղատնտեսության զարգացման կապիտալ ներդրումների պլան, սահմանվեցին հացահատիկի, արևածաղկի և կարտոֆիլի գնման կայուն գներ։ Սահմանվեց եկամտահարկի հաշվարկման նոր կարգ, ըստ որի եկամտահարկը հաշվարկվելու է կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրման ֆոնդի միայն այն մասի 8 տոկոսով, որը գերազանցում է կոլեկտիվ տնտեսության մեկ աշխատողի միջինը՝ ամսական 60 ռուբլուց։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումի որոշումներով ՀԿԿ Կենտկոմը և Հայաստանի կառավարությունը վճռական քայլերի դիմեցին կոլտնտեսությունների էկոնոմիկան և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու, հողերի բարելավման ծախսերը պետական բյուջեի հաշվին կատարելու, ցորենի, տարեկանի, շաքարի ճակնդեղի պլանների գերակատարման համար կոլտնտեսականներին հավելումներ տալու, կոլտնտեսություններին ֆինանսական օգնություն ցույց տալու ուղղությամբ։

Այդ միջոցառումները արդեն 1965 թվականին տվեցին դրական արդյունքներ։ Գյուղատնտեսական մթերքների գնումների ծավալը զգալիորեն մեծացավ. կարտոֆիլինը՝ 33 տոկոսով, բանջարեղենինը՝ 29, խաղողինը՝ 38, մրգինը՝ 36 տոկո-

83 Նույն տեղում։

84 Նույն տեղում։

սով[85]։ Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIV համագումարը նշեց, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1965 թվականին, 1963 թվականի համեմատությամբ, աճեց 19,6 տոկոսով։

«Գյուղի աշխատավորները,— ասված է համագումարի բանաձևում,— հաղթահարելով կլիմայական անբարենպաստ պայմաններից առաջացած դժվարությունները, 1965 թվականին, 1963 թվականի համեմատությամբ, խաղողի արտադրությունն ավելացրին 2,1 անգամ, պտուղներինը՝ 3,5 անգամ, ծխախոտինը՝ 2,7 անգամ, խորդենունը՝ 1,7 անգամ»[86]։

Զգալիորեն ավելացավ նաև շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, բանջարեղենի, մսի և ձվի արտադրությունը։ Գյուղատնտեսական մթերքների արտադրության աճի շնորհիվ 1965 թվականին հաջողությամբ կատարվեցին հացահատիկի, շաքարի ճակնդեղի, պտուղների, բոստանային կուլտուրաների, ծխախոտի, մսի, բրդի և այլ մթերքների մթերման պլանները[87]։

Համագումարն արձագանքեց, որ ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965 թ.) պլենումի մշակած միջոցառումների իրականացումը թույլ տվեց զգալիորեն ամրապնդել հանրապետության կոլտնտեսությունների և սովխոզների նյութա-տեխնիկական բազան, բարձրացնել նրանց էկոնոմիկան և գյուղատնտեսության աշխատողների նյութական շահագրգռվածությունը[88]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հանրապետության բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և ինտելիգենցիայի ջանքերով, հաջողությամբ կատարվեց ժողովրդական տնտեսության զարգացման 1965 թվականի պլանը։ Նախորդ տարվա համեմատությամբ զգալիորեն աճեցին արդյունաբերության արտադրանքը,

85 «Սովետական Հայաստան», 1965, № 302։

86 Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIV համագումարի բանաձևը, Երևան, 1966, էջ 11։

87 Նույն տեղում, էջ 12։

88 Նույն տեղում, էջ 12։

մանրածախ ապրանքաշրջանառությունը, բանվորների ու ծառայողների թիվը, նրանց աշխատանքի արտադրողականությունը, եկամուտները։ Ավելացավ շահագործման հանձնված տների քանակը, բնակչության կենցաղային սպասարկման աշխատանքների ծավալը, հանրակրթական միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը։ Գերակատարվեցին արդյունաբերության, տրանսպորտի և կապի, կապիտալ շինարարության, ժողովրդի նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման պլանները։ 1965 թվականին նախորդ տարվա համեմատությամբ բնակչությանը վաճառվեց ավելի շատ կենսամթերք և արդյունաբերական ապրանքներ։

Սրանք էին այն հիմնական կովանները, որոնք ամրապնդեցին Հայաստանի բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը ետպատերազմյան տարիներին։

ԳՅՈՒՂԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԻՆ

Նախորդ բաժիններում հանգամանորեն ծանոթացանք մեր հանրապետության բանվոր դասակարգի, սովետական պետության ցույց տված օգնությանը գյուղին, որը բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի կարևոր ու բնորոշ կողմն է։ Ինչպես նկատեցինք, բանվոր դասակարգը այդ դաշինքում միշտ հանդես է եկել որպես ղեկավար ուժ։

Սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր ժամանակաշրջանում դաշինքն ունի ուրույն հրատապ խնդիրներ։ Մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում դաշինքի հիմնական նպատակն էր՝ աշխատավորական երկու դասակարգերի ուժերը ներդնել լուծելու կոմունիստական հասարակություն կառուցելու խնդիրները։ Հայտնի է, որ մեր երկրի սոցիալիստական արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ, 1950 թվականին աճեց 15 անգամ, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ մոտ երկու անգամ։ Ճիշտ է, մեր կուսակցության ինդուստրացման կուրսը անպայմանորեն պետք է հասցներ արդյունաբերության բուռն զարգացմանը, բայց գյուղատնտեսության զար-

գացումը տակավին խիստ ետ էր մնում։ Գյուղատնտեսության ետ մնալու օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները բացահայտվեցին Սովետական Միության կոմունիստական կուսակցության համագումարներում և Կենտրոնական կոմիտեի պլենումներում։ Կուսակցությունը ցույց է տվել սովետական ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, երկրում սննդամթերքների առատություն ստեղծելու մոտակա ուղիները և աշխատավորության ջանքերն ուղղել այդ խնդրի կատարմանը։

Աշխատության մեջ գյուղին ցույց տրվող օգնությունը շարադրվեց ավելի հանգամանորեն։ Հարցի լուսաբանումը միակողմանի կլիներ, եթե բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ներկայացվեր միայն գյուղին ցույց տրվող օգնությամբ։ Մեր հանրապետությունից բերված փաստերով փորձեցինք ցույց տալ նաև թե ինչպես կոլտնտեսային գյուղը ակտիվորեն է մասնակցում սոցիալիզմի կառուցմանը և կոմունիստական հասարակարգի շինարարությանը։ Նա իր հերթին բազմակողմանի օգնություն է ցույց տալիս քաղաքին, սոցիալիստական արդյունաբերությանը։

Ամփոփելով բերված բազմաթիվ փաստերը, կարելի է ընդգծել բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման այն երեք ձևերը, որոնք հանդիսանում են գյուղի աշխատավորության օգնությունը քաղաքին, արդյունաբերությանը.

ա) Գյուղը սննդամթերքներով ապահովում է քաղաքին և սպառում արդյունաբերության արտադրանքի մի մասը։

բ) Գյուղատնտեսությունը հանդիսանում է արդյունաբերության հումքի բազան։

գ) Գյուղը քաղաքին բավարարում է բանվորական ուժով։

Գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրության նպատակն է գյուղի և քաղաքի բնակչության կենսամակարդակի բարելավումը։ Նյութական բարիքների արտադրության ընդլայնման բազայի վրա է խարսխված բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը։

Վերջին հաշվով կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան ստեղծվում է ոչ միայն արդյունաբերության, այլ նաև գյուղատնտեսության ոլորտում։ Պարզ ու հասկանալի է, որ գյուղի աշխատավորության փոխադարձ օգնությունը քաղաքին հանդիսանում է կոմունիստական հասարակարգի կառուցման վճռական նախապայմաններից մեկը։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության փոխադարձ կապը, օգնությունը հանդիսանում է սովետական հասարակարգի առավելություններից մեկը, նրա հզորության, ուժի աղբյուրը։ Առանց այդ կապի և օգնության անհնար է պատկերացնել սոցիալիստական շինարարության հաղթանակները մեր երկրում, առանց այդ կապի և օգնության հնարավոր չի լինի իրականություն դարձնել կոմունիստական շինարարության վիթխարի այն խնդիրները, որ կանխատեսել է կոմունիստական կուսակցությունը։

Այսպիսով, բանվոր դասակարգին, քաղաքային բնակչությանը և բանակին սննդամթերքով ապահովելու գործը դա գյուղի կողմից քաղաքին ցույց տրվող մեծագույն օգնությունն է։

Սովետական իշխանության տարիներին էական տեղաշարժեր կատարվեցին քաղաքային և գյուղական բնակչության քանակական կազմի մեջ։ Եթե 1926 թվականին Հանրապետությունում կար 881.300 մարդ, որից քաղաքում էին ապրում միայն 19 տոկոսը, իսկ գյուղում 81 տոկոսը, այսինքն քաղաքային բնակչությունը կազմում էր մեկ հինգերորդից էլ պակաս, ապա 1959 թվականի հունվարին Հանրապետությունում կար 1.763.000 մարդ, որից քաղաքում էր ապրում 881.800 մարդ, այսինքն ավելի շատ, քան ամբողջ Հայաստանի բնակչությունը 1926 թվականին, իսկ գյուղական բնակչության թիվը մոտավորապես այնքան էր, որքան քաղաքային բնակչությունը, այսինքն 50 տոկոսը։ Յոթնամյակի տարիներին քաղաքային բնակչության թիվը շարունակեց ավելանալ, կազմելով բնակչության 56 տոկոսը։

Հասկանալի է, որ 1926 թվականին 167 հազար քաղա-

քային բնակչությունը սննդամթերքով ապահովելը ավելի դյուրին էր, քան 1965 թվականի 1280 հազար բնակչին։ Առաջին հերթին անհրաժեշտ էր բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Սրանով հասկանալի և բնական է, որ շահագրգռված էին և՛ գյուղի, և՛ քաղաքի բնակչությունը, և՛ պետությունը։ Այդ անհրաժեշտ էր ամենից առաջ մեր հանրապետությանը, ուր յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա միջին հաշվով ապրում է 72 մարդ, Վեդու, Արտաշատի, Երևանի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի և Լենինականի շրջաններում՝ 100—200 մարդ։ Այդպիսով Հայաստանը Սովետական Միության ամենախիտ բնակչություն ունեցող հանրապետություններից մեկն է։ Կենսական խնդիր է ապահովել բնակչությանը սննդամթերքով։ Այդ խնդիրը միշտ գտնվել է ինչպես տեղական կուսակցական կազմակերպությունների, սովետական, տնտեսական մարմինների, այնպես էլ Սովետական Միության կոմունիստական կուսակցության, միութենական կառավարության ուշադրության կենտրոնում։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում լայն աշխատանքներ տարվեցին գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման ուղղությամբ։ Ձեռք բերվեցին որոշակի հաջողություններ։ Այդպես, եթե հացահատիկային կուլտուրաների մեկ հեկտարից ստացվել է՝ 1953 թվականին 7,2 ցենտներ, ապա 1965 թվականին հասավ 11,7 ցենտների, կարտոֆիլը 105 ցենտներից 111 ցենտների, բանջարեղենը՝ 107 ցենտներից 215 ցենտների, բարձրացավ խաղողի, պտղի և գյուղատնտեսական մյուս կուլտուրաների բերքատվությունը։ Ավելացավ անասունների մթերատվությունը։ Գյուղատնտեսական կուլտուրաների և անասունների մթերատվության բարձրացման շնորհիվ ավելացան պետական մթերումների և գնումների չափերը։

Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIV համագումարի ընդունած բանաձևում նշվեց, որ կենսագործելով ՍՄԿԿ XXII համագումարի և ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումի որոշումները, հանրապետության աշխատավորները նոր հաջողությունների հասան գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում։

Ինչ խոսք, որ գյուղի օգնությունը քաղաքին դրանով չի սպառվում։ Այդ օգնությունը չի սահմանափակվում մեր հանրապետության սահմաններում և մասշտաբներում։ Ինչպես Սովետական Միության բազմաթիվ արդյունաբերական կենտրոնների բանվոր դասակարգի, ի թիվս բոլոր հանրապետությունների ու մարզերի, Հայաստան է ուղարկվում գիտության և տեխնիկայի վերջին խոսքով ստեղծված սարքավորում, այնպես էլ Սովետական Միության գյուղատնտեսության հարուստ շրջանները մեզ են ուղարկում անհրաժեշտ կենսամթերքներ։ Գաղտնիք չէ, որ մեր հանրապետությունում արտադրված հացը մեր բնակչությանը բավարարում է մի քանի ամիս միայն։ Մնացածը մեզ ուղարկում են Սովետական Ռուսաստանը, Ուկրաինան, Հյուսիսային Կովկասը և ուրիշներ։ Այդ կարգով էլ եղբայրական հանրապետություններից մենք ստանում ենք շատ ուրիշ սննդամթերքներ։

Այստեղ իր վառ արտացոլումն են գտնում սոցիալիստական պլանային տնտեսության առավելությունները։ Այդ առավելությունների շնորհիվ հետզհետե ավելի է ամրապնդվում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը։

Հայաստանում գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր դեր են կատարում տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների ավելացումը և բերքատվության բարձրացումը։ Տեխնիկական կուլտուրաներից կոլտնտեսությունները ավելի շատ եկամուտ են ստանում, քան մյուս կուլտուրաներից։ Կնշանակի տեխնիկական կուլտուրաների ավելացումը մեծ նշանակություն ունի ոչ միայն արդյունաբերությունը հումքով ապահովելու, այլ հենց գյուղատնտեսության էկոնոմիկայի ամրապնդման համար։

Հանրապետությունում մշակվող բամբակի ցանքատարածությունը յոթնամյակի տարիներին աստճանաբար կրճատվեց և շուտով կհանվի ցանքաշրջանառությունից։ Բամ-

բակը ցանվում էր Հոկտեմբերյանի, Արտաշատի, Էջմիածնի, Շահումյանի և Վեդու շրջաններում։ 1953 թվականի 18 հազար հեկտարի դիմաց բամբակի ցանքատարածությունը կազմում էր՝ 1964 թվականին, 4,2 հազար հեկտար։ Բամբակի փոխարեն աճեց խաղողագործությունը, որն ավելի եկամտաբեր է։ 1953 թվականին խաղողի այգիների տարածությունը 18,1 հազար հեկտարից, 1965 թվականին հասավ 40 հազար հեկտարի, պտղատու այգիները՝ 18,2 հազար հեկտարից՝ մոտ 35 հազար հեկտարի։ Խաղողը, միրգը, բանջարեղենը արդյունաբերական վերամշակման են ենթարկվում և ստացվում է գինի, կոնյակ, պահածոներ և այլն, որոնք իրենց որակով համաշխարհային ճանաչում են գտել։

Գյուղատնտեսությունը միշտ էլ հանդիսացել է արդյունաբերության հումքային բազա։ Դժվար է նույնիսկ թվարկել, թե գյուղից ինչ են ստանում արտադրական ձեռնարկությունները մշակման համար։ Սահմանափակվենք թեթև և սննդի արդյունաբերության ևս մի քանի ճյուղերից բերված փաստերով և ցույց տանք, թե ինչպիսի ուղիղ կապ կա արդյունաբերական ձեռնարկությունների և գյուղատնտեսության միջև։

Հայաստանը պատած է սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկությունների լայն ցանցով, որոնց թիվը հասնում է ավելի քան 220-ի։ Հանրապետության գյուղատնտեսության աշխատավորները արդյունաբերական ձեռնարկությունների պատվերները կատարում են պատվով։ Թեթև և սննդի արդյունաբերությունը ապահովելով գյուղատնտեսության անհրաժեշտ հումքով, հնարավորություն ստեղծվեց զգալիորեն ավելացնել արդյունաբերական այդ ճյուղերի համախառն արտադրանքը։ Այդ մասին է վկայում հենց այն, որ թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թվականի համեմատությամբ, 1965 թվականին աճել է ավելի քան 700 տոկոսով, իսկ սննդի արդյունաբերությունը 350 տոկոսով։ Բերենք մի քանի օրինակ, եթե 1950 թվականին հանրապետությունում արտադրվել է 31,4 միլիոն պայմանական տուփ պահածո, ապա 1964 թվականին արտադրվել է 138,4 միլիոն պայմանական տուփ, նույն ժամանակում գինու արտադրությունը 772 հազար դեկալիտրից հասավ՝ 4945 հազար դեկալիտրի։ Եթե 1958 թվականին արտադրվել է 45 հազար շիշ շամպայն գինի, ապա 1964 թվականին արտադրվել է 453 հազար շիշ։ Եթե 1950 թվականին արտադրվել է 2029 հազար զույգ կաշվե կոշիկ, ապա 1964 թվականին արտադրվել է 6674 հազար զույգ։ Նույն ձևով զարգացան թեթև և սննդի արդյունաբերության մյուս ճյուղերը։

Արդյունաբերության այդ վերելքը պայմանավորված է հումքային բազայի ամրապնդմամբ, որը ապահովում է գյուղատնտեսությունը։ Դա, իհարկե, գյուղատնտեսության աշխատողների մեծ օգնությունն է քաղաքին, արդյունաբերությանը և բանվոր դասակարգին։

Մեր հանրապետության կոլտնտեսային էկոնոմիկայի բարձրացման գործում կարևոր տեղ է բռնում ծխախոտը, որը թանկարժեք տեխնիկական կուլտուրա է և լայն տարածում է գտել շատ կոլտնտեսություններում։ Երևանի ծխախոտի ֆաբրիկան աշխատում է կոլտնտեսություններից ստացված հումքով։ Հայաստանի ճակնդեղի բազայի վրա է աշխատում Սպիտակի շաքարի գործարանը։ Հայաստանի կոլտնտեսային գյուղատնտեսությունը ապահովում է սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկությունները հումքով, դա կոլտնտեսային գյուղացիության օգնությունն է սոցիալիստական արդյունաբերությանը։

Զարգացող արդյունաբերությանը բանվորական ուժ մատակարարելը հանդիսանում է քաղաքին ցույց տրվող օգնության ձևերից մեկը։ Կոլեկտիվացման շնորհիվ, գյուղատնտեսության մեջ լայնորեն գործադրվում է ժամանակակից տեխնիկան, բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը և կոլտնտեսություններում ստեղծվում են ազատ ձեռքեր, որոնք պլանավորված կերպով օգտագործվում են արդյունաբերության մեջ։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում ավելի աճեց գյուղատնտեսության մեքենայաց-

ման մակարդակը, դրան համապատասխան գյուղում ավելանում էին ազատ ձեռքերը։ Նախորդ շրջանի համեմատությամբ, մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում, այդ ազատ ուժը ոչ թե փոխադրվում էր հանրապետության խոշոր քաղաքները՝ Երևան, Լենինական և Կիրովական, այլ օգտագործվում էր շրջաններում և գյուղերում ստեղծված արդյունաբերական ձեռնարկություններում։ Հետպատերազմյան տարիներին նոր կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունները տեղաբաշխելիս հաշվի էր առնվում նաև այն, թե ո՞ր շրջանի կոլտնտեսություններում ազատ բանվորական ուժ կա, որպեսզի ներգրավվի արդյունաբերական ձեռնարկություններում։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետությունում զգալիորեն ավելացավ սովխոզների թիվը։ 1950 թվականին հանրապետությունում կար 27 սովխոզ, 1965 թվականին այդ թիվը հասավ 203-ի։ 1949 թվականին կար 1030 կոլտնտեսություն, որոնց մի մասը խոշորացվեց, 1955 թվականին մնացին 872 կոլտնտեսություն։ 1965 թվականին կոլտնտեսությունների թիվը իջավ մինչև 536-ի, այսինքն 336 կոլտնտեսություններ դարձան սովխոզներ։ Կոլտնտեսությունների թվի նվազումը բացատրվում է երկու հանգամանքով, նախ՝ տնտեսապես թույլ գյուղատնտեսական արտելներ, կոլտնտեսականների համաձայնությամբ, դարձան սովխոզներ, որպեսզի պետության օգնությամբ բարձրացվեր սովխոզի վերածված տնտեսությունների էկոնոմիկան և, երկրորդ, արդյունաբերական կենտրոններին գյուղատնտեսական մթերքների մատակարարման գործը բարելավելու, տնտեսությունները մասնագիտացնելու նպատակով, քաղաքամերձ կոլտնտեսությունները նույնպես սովխոզների վերածվեցին։ 336 արտելներ մտնելով պետական-սովխոզային սիստեմի մեջ, նախ համալրեցին գյուղատնտեսական բանվորների շարքերը, և, երկրորդ, այդ նախկին արտելների շարժական և անշարժ գույքը, ֆինանսները պետականացվեցին։ Դա նույնպես կոլտնտեսային գյուղատնտեսության կողմից պետությանը

ցույց տրվող օգնության ձևերից մեկն է։ Այստեղ, տեղին է նշել, որ վերոհիշյալ կոլտնտեսությունները սովխոզների վերածելու գործում սխալներ թույլ տրվեցին, որոնք սկսեցին ուղղվել միայն ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումից հետո։ Գյուղի կողմից քաղաքին ցույց տրվող օգնության ձևերից են նաև էլեկտրակայանների, ճանապարհային շինարարության աշխատանքում պետության հետ մեկտեղ կոլտնտեսությունների մասնակցությունը՝ բանվորական ուժով և դրամական միջոցներով։

Ճիշտ է, այդ աշխատանքների ծախսերի մեծ մասը կազմում են պետական միջոցները, այնուամենայնիվ կոլտնտեսությունները նույնպես մասնակցում են։

Հետպատերազմյան տարիներին, երբ կոլտնտեսությունները սկսեցին տնտեսապես ամրապնդվել, գյուղում ծավալվեց արտադրական ձեռնարկությունների շինարարությունը, դրա հետ մեկտեղ այդտեղ ծավալվեց կուլտուր-կենցաղային հիմնարկների՝ դպրոցների, ակումբների, կուլտուրայի տների, բաղնիքների և այլ շինարարություն։ Կոլտնտեսությունները պետությանը ազատեցին ոչ միայն արտադրական ձեռնարկությունների, այլ նաև կուլտուր-կենցաղային հիմնարկների վրա ծախսեր կատարելուց։ Ճիշտ է, այդ շինարարության համար պետությունը կոլտնտեսություններին բաց է թողնում երկարատև վարկեր, իսկ հաճախ էլ այդ վարկերի մարումից ազատում է գյուղատնտեսական արտելներին, բայց փաստ է, որ գյուղում ծավալվող շինարարական ամբողջ աշխատանքի հիմնական ծանրությունը իրենց վրա են վերցնում կոլտնտեսությունները։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ ակումբավարների, դրադարանավարների երբեմն և գյուղական բժիշկների աշխատավարձը վճարում են կոլտնտեսությունները, պատկերը լրիվ կլինի։ Դա, նույնպես կոլտնտեսությունների կողմից պետությանը ցույց տրվող օգնության ձևերից մեկն է։

Խոսելով բանվորական ուժով քաղաքին ցույց տրվող օգնության մասին, չի կարելի կրկին չհիշել երկրի արևելյան

մարզերում խամ ու խոպան հողերի յուրացման գործում սովետական գյուղացիության՝ ընդ որում մեր հանրապետության գյուղի մարդկանց մասնակցության կարևորությունը։ Ամեն տարի գյուղատնտեսական աշխատանքի եռուն շրջանում Հայաստանից հազարավոր գյուղացիներ են մեկնում Ղազախստանի և մյուս վայրերի այն սովխոզները, որտեղ համառ պայքար է ծավալվում հանուն խամ ու խոպանի յուրացման։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԴԱՇԻՆՔԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՎԵՐԵԼՔՈՒՄ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Ինտելիգենցիան և ծառայողները, որպես դասակարգային միջնաշերտ առաջացել են դեռևս անտագոնիստական հասարակարգերում։ Կապիտալիստական երկրներում ինտելիգենցիան և ծառայողները չեն ունեցել և չունեն իրենց սեփական վերաբերմունքը արտադրության միջոցների նկատմամբ։ Այդ միջնաշերտը կապված է հասարակության տարբեր խավերի հետ, արտահայտում է այս կամ այն դասակարգի շահերն ու պահանջները և հենց այդ պատճառով էլ չկա միասնական կամք արտահայտող, ամբողջական դասակարգային խավ։ Ճիշտ է, շահագործողական դասակարգերը ինտելիգենցիայի որոշ մասին օգտագործում են իրենց շահերի և գաղափարախոսության պաշտպանության համար, բայց նրանց երբեք չի հաջողվել ստեղծել մի միասնական դասակարգային խավ։ Կապիտալիստական հասարակարգում ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները ծանոթանալով և ուսումնասիրելով մարքսիզմ-լենինիզմի համամարդկային գաղափարները, վճռականապես խզում են իրենց կապերը կապիտալի հետ և անցնում պրոլետարիատի շարքերը, շատ դեպքերում ղեկավարում կապիտալի դեմ մղվող ազատագրական պայքարը։ Վ. Ի. Լենինը, դեռևս 1913 թվականին, «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» հայտնի աշխատության մեջ ցույց է տալիս, որ կապիտալիզմի պայմաններում յու-

բաքանչյուր ազգ ունի երկու կուլտուրա՝ իշխող վերնաշերտի ու շահագործողների և ժողովրդի ու դեմոկրատիայի կուլտուրա։

«Կա երկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ։ Կա Պուրիշկևիչների, Գուչկովների և Ստրուվեների վելիկոռուսական կուլտուրա,— բայց և կա վելիկոռուսական կուլտուրա, որը բնորոշվում է Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով։ Հենց այդպիսի երկու կուլտուրա էլ կա ուկրաինականության մեջ, ինչպես նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, հրեաների մոտ և այլն»[1]։

Հայ իրականության մեջ եղել է Հ. Ջամուռճյանի, Գ. Այվազովսկու, դաշնակցության և կղերապահպանողական կուլտուրա, եղել է նաև Մ. Նալբանդյանի, Ս. Շահումյանի և հայ լենինյանների ստեղծած փառապանծ կուլտուրան։ Ահա այս վերջինների կուլտուրան էր, որ ժառանգեց Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և դրա հիման վրա ստեղծվեց նոր սոցիալիստական կուլտուրա։

Դաշնակցականների անարգված տիրապետության ժամանակաշրջանում ոչ միայն քայքայվել էր ժողովրդական տնտեսությունը, այլ նաև փակվել էր դպրոցների մեծ մասը, իսկ կուլտուր-լուսավորական հիմնարկների, գիտության, արվեստի և տեխնիկայի զարգացման մասին խոսելն ավելորդ էր։ «Դաշնակցական Հայաստանի իդեոլոգիան մուրացկանությունն է եղել,— գրել է Ալ. Մյասնիկյանը 1921 թվականին,— նրա դաստիարակությունը՝ հարուստների փեշալիզությունը և հասարակական ու քաղաքական պոռնկությունը։ Աշխատավորության կրթություն, գրականություն, արվեստ և գիտություն,— այս ամենը մեռած դրության մեջ էր բուրժուական Հայաստանի օրով։ Նայեցեք Սովետական Հայաստանին և կտեսնեք, որ պատկերը, ճիշտ է՝ դանդաղ քայլերով, բայց

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 20-21։

փոխվում է դեպի լավը։ Հասարակական ու մտավոր,— կուլտուրական կյանքը սկսում է բեղմնավորվել»[2]։

Դաշնակցականների երկու և կես տարվա անփառունակ տիրապետության տարիներին ոչ մի հայերեն գիրք լույս չտեսավ, մինչդեռ 1918—1920 թվականներին «հեռավոր Մոսկվայում մի քանի տասնյակ, մոտ հարյուր գրքույկ, թերթ ու գրական ստեղծվածք լույս ընծայվեց»[3]։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը ձեռնամուխ եղան սոցիալիստական կուլտուրայի ու գիտության ստեղծմանը և զարգացմանը։ Բանն այն էր, որ հայկական ինտելիգենցիայի մի զգալի մասը տասնյակ տարիներ շարունակ գտնվում էր նացիոնալիստական կուսակցությունների, հատկապես բուրժուանացիոնալիստական դաշնակցության կուսակցության գաղափարական ազդեցության տակ և հանրապետությունում սովետական կարգեր հաստատելով, ինտելիգենցիայի այդ մասը անմիջապես սոցիալիստական չդարձավ։ Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծագործական ջանքերի շնորհիվ ինտելիգենցիայի այդ տատանվող մասը աստիճանաբար եկավ այն գիտակցության, որ Սովետական Հայաստանը հայ ժողովրդի միակ փրկությունն է, որ այն դառնում է աշխարհի հայության համար նաև կուլտուրայի և գիտության կենտրոն։ Ստեղծագործական աշխատանքը համակեց նաև սովետական մյուս հանրապետություններում և արտասահմանում ապրող հայ մտավորականներին, նրանք ուրախությամբ Սովետական Հայաստան եկան և իրենց լուման դրեցին մեր տնտեսության, կուլտուրայի և գիտության զարգացման գործում։ Ժողովրդական տնտեսության խնդիրները հաջողությամբ կատարելու համար, անհրաժեշտ էր ունենալ բարձր և միջին որակի շատ մասնագետներ։ Դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախօրեին «Կպահեն արդյո՞ք

2 Ալ Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 377—378։

3 Նույն տեղում, էջ 378։

բոլշևիկները պետական իշխանությունը» աշխատության մեջ Լենինը գրում էր, որ մեզ հարկավոր է բոլոր տեսակի մեծ թվով ինժեներներ, ագրոնոմներ, տեխնիկներ, գիտական կրթված մասնագետներ։ Ղեկավարվելով Լենինյան այդ դրույթով կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ձեռնամուխ եղան տեխնիկայի, գիտության ու կուլտուրայի կադրերի պատրաստմանը, հին մասնագետների ուժերի ռացիոնալ և ճիշտ օգտագործմանը։ Տարեցտարի զարգանալով ժողովրդական տնտեսությունը, ծավալվում էր նաև սոցիալիստական շինարարության մեջ աշխատող կադրերի պատրաստման գործը։

1921 թվականի հունվարին բացվեց Երևանի պետական համալսարանը։ Այն արդեն հոկտեմբերին ուներ գյուղատնտեսական, պատմագրական, մանկավարժական, տեխնոլոգիական և սովետական շինարարության ֆակուլտետներ։ Համալսարանում աշխատանքի անցան հին ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները՝ Հ. Մանանդյանը, Պ. Քալանթարյանը, Մ. Աբեղյանը, Գ. Շիրմազանը, Գ. Էդիլյանը, Յ. Խանզադյանը, Ա. Հակոբյանը, Հ. Նավակատիկյանը, Ա. Տեր-Մկրտչյանը, Ա. Տոնյանը, Մ. Թումանյանը, Ս. Ղամբարյանը և շատ ուրիշներ։ Համալսարանը դարձավ գիտության ու կուլտուրայի բարձրորակ կադրերի պատրաստման առաջին դարբնոցը։ Նոյեմբերի 7-ին Երևանում բացվում է ինդուստրիալ տեխնիկումը՝ շինարարական և էլեկտրատեխնիկական բաժիններով, 1922—1925 թվականներին բացվեցին՝ Լենինականի ինդուստրիալ տեխնիկումը, Օշականի գյուղատնտեսական, Երևանի, Լենինականի, Վաղարշապատի և Ստեփանավանի մանկավարժական տեխնիկումները, Երևանի գիտության ու արվեստի ինստիտուտը և այլն։ Դրանք այն առաջին օջախներն էին, որոնք սկսեցին ստեղծել նոր, սոցիալիստական ինտելիգենցիա։

1925 թվականի մայիսին Երևանում տեղի ունեցան Հայաստանի ինժեներների , տեխնիկների և գյուղատնտեսների, իսկ 1927 թվականին բժիշկների առաջին համագումարները, 1928

թվականին կայացավ գիտության աշխատողների առաջին կոնֆերանսը և այլն, որոնք ամփոփեցին այդ մասնագետների նախորդ տարիներին կատարած աշխատանքը և նշվեցին նրանց նոր խնդիրները։ Ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյակների առաջադրանքների կատարման համար մղվող պայքարի ժամանակաշրջանում ընդարձակվեց բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի պատրաստման ցանցը։ 1928 թվականի վերջերին Երևանում բացվեց Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը, 1930 թվականին Պետական համալսարանի բազայի վրա ստեղծվում են՝ գյուղատնտեսական, բժշկական, շինարարական, մանկավարժական և կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտները, Երևանում սկսում են գործել Սովետական Հայաստանի կառուցվածքների ու ֆիզիոթերապևտիկ ինստիտուտները և այլն։ Ժողովրդական տնտեսության, գիտության, արվեստի ու կուլտուրայի բնագավառներում կատարվող աշխատանքների կոորդինացման, գիտական ղեկավարման նպատակով ստեղծվեց գիտությունների ինստիտուտը, որի կազմում մտան Հ. Հովհաննիսյանը, Գր. Արեշյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Վ. Արծրունին, Ա. Քալանթարը, Լեոն, Հ. Գյուլիքևխյանը, Բ. Գալստյանը, Ա. Գուլոյանը, Հ. Զորյանը, Ա. Թամանյանը, Մ. Թումանյանը, Թ. Թորոմոնյանը, Ա. Իսահակյանը, Ա. Կարինյանը, Ալ. Հակոբյանը, Ս. Հակոբյանը, Ս. Ղամբարյանը, Գ. Ղափանցյանը, Հ. Մանանդյանը, Լ. Ռոտինյանը, Ն. Տեր-Մարտիրոսյանը, Հ. Տեր-Աստվածատրյանը, Ա. Տեր-Պողոսյանը, Ս. Տեր-Հակոբյանը, Ա. Տերտերյանը, Ա. Տոնյանը, Ս. Յուզբաշյանը, Պ. Քալանթարյանը և ուրիշներ։ Այդ ինստիտուտը փաստորեն գիտությունների ակադեմիայի նախատիպն էր։ Այնտեղ աշխատում էին տարբեր գիտությունների ամենանշանավոր ներկայացուցիչները։

Հետագայում, 1935 թվականին բացվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալը, որի առաջին պրեզիդենտն էր ականավոր գիտնական Յու. Լևինսոն-Լեսին-

զը։ Ութ տարի հետո, 1943 թվականի նոյեմբերին, ստեղծվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, որի առաջին կազմում մտան Մ. Աբեղյանը, Ա. Ալիխանովը, Ա. Ալիխանյանը, Հ. Աճառյանը, Հ. Բունիաթյանը, Վ. Գուլբանյանը, Ի. Եղիազարովը, Ա. Թամամշևը, Մ. Թումանյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Խահակյանը, Ս. Կարապետյանը, Խ. Կոշտոյանցը, Ա. Հակոբյանը, Վ. Համբարձումյանը, Գ. Զափանցյանը, Ս. Մալխասյանը, Կ. Պաֆֆենհոլցը, Ա. Տերտերյանը, Լ. Հովհաննիսյանը, Հ. Օրբելին և Լ. Օրբելին։ Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտն էր ականավոր գիտնական Հ. Ա. Օրբելին։ Իսկ 1945 թվականից սկսած մինչև այսօր ակադեմիան ղեկավարում է համաշխարհային համբավ ունեցող գիտնական Վիկտոր Համբարձումյանը։ Եթե 1940 թվականին գիտահետազոտական բոլոր հիմնարկների թիվը 36 էր, ապա 1965 թվականին այն հասավ 116-ի։ Նույն ժամանակամիջոցում գիտական աշխատողների թիվը 424-ից հասավ 5426-ի[4]։

1921—1940 թվականներին Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները տվեցին 7268 շրջանավարտ, իսկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ 13.300 շրջանավարտ[5]։ Ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի զարգացման գործում վճռական նշանակություն ուներ անգրագիտության վերացումը։ 1921 թվականի սեպտեմբերին Հայաստանի ժողկոմսովետը, որը ղեկավարում էր հայտնի լենինյան Ալեքսանդր Մյասնիկյանը, որոշում ընդունեց հանրապետությունում անգրագիտությունը վերացնելու մասին։ Ամենուրեք բացվեցին դպրոցներ, ընդլայնվեց դասատուական կադրերի պատրաստման ցանցը։ Եթե 1914—1915 ուսումնական տարում Հայաստանում կար ընդամենը 459 դպրոց, որից 446-ը տարրական, 6 յոթնամյա և միայն 7 միջնակարգ, որտեղ սովորող աշակերտների թիվը կազմում էր 34 հազար, տարրական դպրոցում 30.000, յոթնամյակում 8 հարյուր, միջնակարգում՝ 3 հազար աշակերտ, ապա 1940—1941 ուսումնական տարում սովորում էին 326.600 աշակերտ, որից 13.500-ը տարրականում, 115 հազարը յոթնամյակում և 198 հազարը միջնակարգում։ Ինչպես տեսնում ենք աշակերտների գերակշռող մասը կենտրոնացված էր միջնակարգ դպրոցներում։ Դա ոչ միայն քանակական, այլ նաև որակական փոփոխություն էր։ Ուշագրավ են դասատուների թվական կազմի փոփոխությունները։ Եթե 1914—1915 թվականներին կար ընդամենը 1100 ուսուցիչ, ապա 1940—1941 թվականներին՝ 11.200, այսինքն ուսուցիչների թիվը աճել էր ավելի քան 10 անգամ։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը շահագրգռված էին բանվորների կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման հարցերով։ Այդ նպատակով բացվեցին բանվորական ֆակուլտետներ։ Առաջին բանֆակները բացվեցին 1923 թվական սեպտեմբերին՝ Երևանում և Լենինականում։ Բավական է ասել, որ 1932—1933 թվականին Հայաստանում գործում էր 11 բանֆակ, ուր սովորում էին 2644 մարդ, ստեղծվեց նաև ֆաբրիկա-գործարանային ուսուցման լայն ցանց։ 1932—1933 թվականներին ֆաբգործուսներում սովորում էին 3425 մարդ[6]։ Որակյալ, կրթված բանվորների պատրաստումը կարևոր քայլ էր հասարակական ու քաղաքական կյանքում բանվոր դասակարգի դերի էլ ավելի բարձրացման։ Առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին ձեռնարկություններում սիստեմատիկաբար կազմակերպում էին տեխնիկական մինիմումի դասընթացներ, որտեղ սովորում էին հաղարավոր բանվորներ։ 1928—1932 թվականներին հանրապետությունով մեկ ծավալվեց անգրագիտության վերացման համար համաժողովրդական շարժումը։ Այդ գործում իր ակտիվ դերը կատարեց Հայաստանի կոմունիստական երիտասարդական միությունը։ Կենսագործելով (Համկ(բ)Կ Կենտկոմի 1931 թվա-

[4] Народное хозяйство Армянской ССР в 1965 г., стат. сб. стр. 276.

[5] Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.) Е., 1940, стр. 114.

[6] Նույն տեղում, էջ 113։

կանի հոկտեմբերի 31-ի որոշումը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը լայն գործունեություն ծավալեց հանրապետությունում անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ։ Եթե 1926 թվականին 9 տարեկանից բարձր հասակ ունեցող բնակչության միայն 34,5 տոկոսն էր գրագետ, ապա 1939 թվականին այն հասավ 83,9 տոկոսի։ «Կուլտուրական հեղափոխությունը բարդ և երկարատև պրոցես է,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում,—երկրի կուլտուրական հետամնացության, որակյալ կադրերի և միջոցների սուր պակասության դժվարին պայմաններում պետությունը ստեղծեց ժողովրդական կրթության նոր սիստեմ, որն ապահովեց բնակչության ընդհանուր գրագիտությունը, գիտության ու կուլտուրայի արագ վերելքը, աճող սերնդի դաստիարակությունը սոցիալիզմի ոգով։ Ժողովրդին ծառայելու անցան հին մտավորականության լավագույն ներկայացուցիչները, ձևավորվեց սոցիալիզմի գործին նվիրված բանվորա-գյուղացիական նոր մտավորականություն»[7]։

Այսպիսով, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում, ստեղծվեց նոր, սոցիալիստական ինտելիգենցիա։ Արդեն 1939 թվականին հանրապետության ինտելիգենցիայի ավելի քան 80 տոկոսը կազմում էին բանվորների և աշխատավոր գյուղացիների զավակները։ Աշխատավորական խավերից ինտելիգենցիայի շարքերի նման համալրումը որակական փոփոխություններ առաջացրեց ինտելիգենցիայի կյանքում։ Այդ ժամանակաշրջանում մեր երկրում վերացան շահագործող դասակարգերը, վերացան մարդու կողմից մարդու շահագործումը ծնող պատճառները, ստեղծվեցին միասնական բանվոր դասակարգ և կոլտնտեսային գյուղացիություն։ Ինտելիգենցիան և ծառայողները դարձան սոցիալիստական հասարակության ակտիվ կառուցողներ, սկսեցին ամբողջովին ծառայել աշխատավոր դասակարգերի շահերին։ Ինտելիգենցիան և ծառայողները դադարեցին միջնաշերտ լինելուց և դարձան սոցիալական նոր խավ։ Նրանք բանվորի ու գյուղացու հետ միասին դարձան արտադրության միջոցների տեր, ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի ակտիվ գործիչներ։ Սոցիալիզմի հաղթանակով, ինչպես բանվոր դասակարգը և կոլտնտեսային գյուղացիությունը, այնպես էլ ինտելիգենցիան և ծառայողներն արդեն հենվում են արտադրության սոցիալիստական եղանակի վրա։ Սոցիալիստական ինտելիգենցիան արմատական շահերով կապվեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության հետ։ Այլ կերպ ասած, սոցիալիզմի հաղթանակով ինտելիգենցիան և ծառայողները այլևս չեն բաժանվում սոցիալական տարբեր շահեր ունեցող խմբերի, ինչպես կապիտալիզմի ժամանակ էր, այլ դարձան սովետական հասարակության շահերն արտահայտող միասնական սոցիալական խավ։ Ինտելիգենցիայի նման արմատական շրջադարձը ամրապնդեց մեր հասարակության սոցիալական, քաղաքական և գաղափարական միասնությունը։ Սոցիալիզմի հաղթանակով մարքսիստական գաղափարախոսությունը դարձավ ամբողջ ժողովրդի, այդ թվում նաև սոցիալիստական ինտելիգենցիայի գաղափարախոսությունը։ Զինված մարքսիզմ-լենինիզմի վեհ իդեաներով, ինտելիգենցիան ակտիվորեն մասնակցում է աշխատավորության մեջ սոցիալիստական գիտակցության զարգացմանը, կոմունիստական դաստիարակությանը։ Սովետական ինտելիգենցիան մեծ դեր է կատարում հասարակական գիտությունների, գրականության ու արվեստի զարգացման ու բարգավաճման, մեր հասարակության կրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման, առողջապահության զարգացման, մարդկանց կոմունիստական գիտակցության և բարոյականության ոգով դաստիարակելու գործում։ Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակի և սոցիալիզմից կոմունիզմի անցման ներկա էտապում ավելի է աճում մտավոր աշխատանքի դերը, հասարակության մեջ անընդհատ

7 ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները։ Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին, Երևան, 1967։

աճում է ինտելիգենցիայի թիվը։ Արդյունաբերության և գյուղատնտեսության մեքենայացումը և աշխատատար պրոցեսների ավտոմատացումը ստեղծում է մի վիճակ, երբ բանվորի և գյուղացու համար արդեն հրամայական պահանջ է դառնում բարձրացնել իրենց կրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակը, նրանք նույնպես դառնում են մտավոր աշխատողներ։ ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի հուլիսյան և 1965 թվականի սեպտեմբերյան պլենումների որոշումների կատարման համար մղվող պայքարի ընթացքում վիթխարի տեղաշարժեր կատարվեցին արդյունաբերության տեխնիկական հագեցվածության բարձրացման ուղղությամբ։ Կուսակցության այդ առաջադրանքը հաջողությամբ կատարվեց շնորհիվ մեր ինտելիգենցիայի։ Եթե 1941 թվականի հունվարի 1-ի տվյալներով հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էին 7,3 հազար բարձրագույն կրթությամբ մասնագետներ, որոնցից ինժեներներ՝ 1400, ագրոնոմներ, զոոտեխնիկներ մեկ հազար, անասնաբույժ, բժիշկ՝ 900, ուսուցիչներ, գրադարանների և կուլտուր-լուսավորական աշխատողներ 3200 մարդ, ապա 1965 թվականի նոյեմբերին մասնագետների ընդհանուր թիվը հասավ 58 հազարի, որից ինժեներներ՝ 13700, ագրոնոմներ, զոոտեխնիկներ և անասնաբույժներ՝ 6300, բժիշկներ՝ 5500, ուսուցիչներ, գրադարանային և կուլտուր-լուսավորական աշխատողներ՝ 23800 մարդ։ Այսպիսով, 1941 թվականի համեմատությամբ մասնագետների թիվը աճեց 7,9 անգամ, որից ինժեներներ՝ 9,8, ագրոնոմներ, զոոտեխնիկներ և անասնաբույժներ՝ 6,3, բժիշկներ՝ 6,1 և ուսուցիչներ, գրադարանների և կուլտուր-լուսավորական աշխատողներ՝ 7,4 անգամ։ Նույն պատկերն է նաև միջին որակի մասնագետներ պատրաստելու բնագավառում։ Եթե 1941 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ մասնագետների թիվը կազմում էր 12100 մարդ, ապա 1965 թվականի նոյեմբերին այն հասավ 48600-ի, ըստ որում տեխնիկների թիվը՝ 1600-ից հասավ 15.600-ի, այսինքն աճեց 9,8 անգամ, ագրոնոմներինը, անասնաբուժակներինը և

անասնատեխնիկներինը՝ 600-ից հասավ 4500-ի, բուժաշխատողների, այդ թվում նաև ատամնաբույժներինը 1900-ից հասավ 13 հազարի, ուսուցիչների, գրադարանների, կուլտուր-լուսավորական աշխատողներինը 6400-ից՝ 8000-ի, այսինքն աճեց 1,3 անգամ։

Ուշագրավ է, որ բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների, գրադարանային, կուլտուր-լուսավորական աշխատողների թիվը այդ 25 տարում աճել էր 7,4 անգամ, ապա միջին որակի մասնագետներինը միայն 1,3 անգամ։ Այդ օրինաչափ երևույթ է, այսուհետև էլ կրճատվելու են միջնակարգ կրթություն ունեցող դասատուների, գրադարանային և կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատողների թիվը և դրա փոխարեն կաճեն բարձրագույն կրթություն ունեցողները։ Դա նույնպես մեր հասարակության զարգացման կարևոր օրինաչափություններից մեկն է։ Հատկանշական է նաև այն, որ եթե ինժեներների թիվը 1950 թվականին կազմում էր 2800 մարդ, ապա 1965 թվականին հասավ 13700 մարդու[8]։ Ինժեներական կադրերի պատրաստումը մեծ ծավալ ստացավ հատկապես ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի հուլիսյան պլենումի որոշումներից հետո։ Բավական է ասել, որ եթե Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը 1960—1961 ուսումնական տարում ուներ 3702 ուսանող, ապա 1965—1966 ուսումնական տարում ուսանողների թիվը հասավ 10,691-ի[9]։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետությունում ստեղծվեցին արդյունաբերական նոր ճեռնարկություններ և ճյուղեր, որոնց համար անհրաժեշտ էր ունենալ բարձր որակի մասնագետներ։ Ելնելով ժողովրդական տնտեսության զարգացման պահանջներից, հատկապես պոլիտեխնիկական ինստիտուտում ստեղծվեցին նոր ֆակուլտետներ ու բաժիններ։

---

8 Народное хозяйство Армянской ССР в 1965 г. Е., 1966, стр. 190—191.

9 Նույն տեղում, էջ 262։

Վերջին տասնամյակում արդյունաբերական ձեռնարկություններում կրճատվում են ծառայողների և օժանդակ աշխատողների թիվը և աճում ինժեներների ու բանվորների թիվը։ Այսպիսով, արտադրական ուժերի զարգացումը անշեղորեն բարձրացնում է տեխնիկական ինտելիգենցիայի դերը և նշանակությունը սոցիալիստական արդյունաբերության մեջ, այդ պրոցեսն արտահայտում է գիտա-տեխնիկական հեղաշրջման պահանջները, որն հետագայում ավելի է ծավալվելու։ Արտադրության պրոցեսների ավտոմատացման շնորհիվ կոմունիստական շինարարության ներկա էտապում, ավելի է մերձենում ինժեների և բանվորի աշխատանքը։ Բանվորը սկսում է տիրապետել մի քանի մասնագիտություն, որը և աստիճանաբար բարձրացնում է նրա կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Ներկայումս գոյություն ունեցող ձեռնարկությունները կզարգանան, կներդրվի նոր տեխնիկա, կարևոր խնդիր կդառնա. «Բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը,— ասված է ՍՄԿԿ Ծրագրում,— ֆիզիկական աշխատանքի ավելի ու ավելի սերտ միացումը մտավոր աշխատանքի հետ, ինժեներա-տեխնիկական աշխատողների տեսակարար կշռի ավելացումը ձեռնարկության կոլեկտիվի կազմի մեջ, փորձնական-հետազոտական աշխատանքների ծավալումը և գիտական ինստիտուտների հետ ձեռնարկությունների կապերի ուժեղացումը»[10]։ Ժողովրդական տնտեսության զարգացման գործում, հատկապես ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի սեպտեմբերյան պլենումի որոշումներից հետո, ավելի քան բարձրացավ տնտեսական գիտությունների դերը։ Այդ որոշումներից հետո ընդլայնվեց տնտեսագիտական ինստիտուտների և ֆակուլտետներում սովորողների ցանցը։ Այժմ ձեռնարկություններում տեղի է ունենում մի ուշագրավ երևույթ, ոչ միայն բանվորներն են ինքվերսալ մասնագետներ դառնում, այլ նաև ինժեներները և տեխնիկները։ Ինժեներա-տեխնիկական աշխատողների մեծ

10 ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, էջ 496—497։

մասը այժմ տիրապետում է ավտոմատիկային, էլեկտրոնիկային, ռադիոէլեկտրոնիկային, կիբեռնետիկային և այլն։ Այդ պրոցեսը տեղի է ունենում նաև գյուղում։ Այժմ տեղի է ունենում մերձեցում և միահյուսում ինժեներա-տեխնիկական անձնակազմի և գիտության ու կուլտուրայի գործիչների ստեղծագործական աշխատանքներում։ Արտադրության զարգացման պրոցեսում ստեղծվում է մասնագետների նոր կերպար, որն օրգանապես զուգակցում է ինժեների և գիտնականի հատկությունները։ Ինժեներա-տեխնիկական աշխատողները ակտիվորեն մասնակցում են սոցիալիստական մրցության բարձր ձևի՝ կոմունիստական բրիգադների շարժման ծավալմանը։

Սովետական Հայաստանում ինտելիգենցիայի աճող ջոկատներից են գիտության, ժողովրդական կրթության, կուլտուրայի, արվեստի, գրականության, մամուլի, կուլտուր-լուսավորական հիմնարկների, առողջապահության հիմնարկների ստեղծագործական կոլեկտիվները։ Տարեցտարի աճում է գիտական հիմնարկությունների և գիտնականների թիվը։ Հայաստանի գիտությունների ակադեմիան դարձել է հանրապետության գիտության կենտրոնը։ Պատմության, գրականության, լեզվի հնէաբանության ինստիտուտները և մատենադարանը դարձել են հայագիտության անփոխարինելի կենտրոններ։ Իրենց մեծագույն հայտնագործություններով մեր ակադեմիկոսներից ոմանք արդեն արժանացել են համաշխարհային հռչակի։ Տարեցտարի ավելանում է ակադեմիայի իսկական անդամների և թղթակից անդամների թիվը։ Այժմ գիտության այդ տաճարն ունի 68 ակադեմիկոս և թղթակից անդամ։ Հանրապետությունում աճում է նաև գիտության աշխատողների թիվը։ Այսպես, եթե 1948 թվականին կար 1873 գիտական աշխատող, ապա 1965 թվականին այն հասավ 7837-ի։ Այդ ժամանակաշրջանում գիտության դոկտորների թիվը 91-ից հասավ 254-ի, իսկ գիտության թեկնածուները՝ 536-ից 2039-ի։ Սովետական դպրոցը սովորեցնում

ու դաստիարակում է կոմունիզմի աճող սերունդը։ Ուսուցիչները դրանք ինտելիգենցիայի ամենաբազմամարդ և կարևոր ջոկատներն են։ Ժողովրդական ուսուցիչը անգնահատելի դանձ է սոցիալիստական կուլտուրայի զարգացման և պրոպագանդման մեջ, նա պատրաստում է կոմունիստական հասարակության գիտակից և կրթված կադրեր։ Ակումբների, գրադարանների, թանգարանների և մյուս կուլտուր-լուսավորական հիմնարկների միջոցով կազմակերպվում է միլիոնավոր մարդկանց դաստիարակությունը։ Նրանց միջոցով մշտապես պրոպագանդվում են մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, սոցիալիստական գիտության ու կուլտուրայի նվաճումները։ Կոմունիստական շինարարության ներկա էտապում, է՛լ ավելի է բարձրանում գիտության ու կուլտուրայի աշխատողների դերը՝ մարդու դաստիարակության գործում, նրանց խնդիրն է բոլոր աշխատավորներին բարձրացնել մինչև ինտելիգենցիայի կուլտուրական մակարդակին, ժողովրդին տալ գիտելիքների հարստությունը, կուլտուրան, նվաճել բնությունը և այն օգտագործել մարդկանց բարեկեցության համար։ Նրանք մշակում են կոմունիստական հասարակության կառուցման գիտական հիմքերը։ Մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը ամենամասսայական միջոցներն են ժողովրդի գաղափարական և կուլտուրական դաստիարակության գործում։ Մեծ վերելք է ապրում սովետահայ գրականությունը, թատրոնը, կինոն, երաժշտությունը և կերպարվեստը։ Գրականության ու արվեստի աշխատողներն իրենց գաղափարական և բարձր գեղարվեստական ստեղծագործություններով անմիջականորեն ներգործում են նոր, կոմունիզմ կառուցող մարդու ձևավորման վրա։

Սովետական Հայաստանի ինտելիգենցիան, համագործակցած բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության հետ, միասնական ուժերով ստեղծում են գիտության ու կուլտուրայի բարձր տիպը՝ կոմունիզմի նյութական և հոգևոր կուլտուրան։

ՆՈՐԸ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդումը դրսևորվում է նաև քաղաքի կողմից գյուղին ցույց տրվող կուլտուրական օգնությամբ։ Սոցիալիստական գյուղի բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման, կոլտնտեսային գյուղացիությանը կոմունիստական շինարարությանն ակտիվորեն ներգրավելու գործում խորապես շահագրգռված են նաև բանվոր դասակարգը և ինտելիգենցիան։ Նրանք ամեն ինչ անում են բարձրացնելու գյուղի կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Գյուղում ծավալված կուլտուրական հեղափոխության շնորհիվ վերացավ անգրագիտությունը, ընդարձակվեց դպրոցական, կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցը, գյուղ մտավ ժամանակակից տեխնիկան, ստեղծվեց գյուղական ինտելիգենցիայի ստվար կազմ։

Կոմունիստական հասարակարգ կառուցելու կարևոր նախադրյալներից մեկն էլ նոր մարդու, կոմունիստական հասարակարգի մարդու, հետագա աճն ու ձևավորումն է։ Կոմունիզմի կառուցման պլանները կենսագործել կարող են այն մարդիկ, որոնց մեջ ներդաշնակորեն զուգակցվում են հոգևոր հարստությունը, բարոյական մաքրությունը և ֆիզիկական կատարելությունը։

Մարդկանց, հատկապես մանուկների ու երիտասարդների կոմունիստական դաստիարակության գործում մեծ դեր է կատարում սովետական դպրոցը։ Տարրական, միջնակարգ, բարձրագույն ուսումնական հաստատություններում, տեխնիկումներում և մեքենավարների և այլ դասընթացներում սովորում են տասնյակ հազարավոր գյուղացիների զավակներ։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մշտական հոգ են տանում ուսուցման, կադրերի պատրաստման գործը բարելավելու ուղությամբ, կադրերի դաստիարակությունը սերտորեն կապելով կոմունիստական շինարարության խնդիրների հետ։

1946—1965 թվականներին ուշագրավ փոփոխություններ տեղի ունեցան մեր Հանրապետության գյուղական դպրոցների կյանքում։ Դրանք արտահայտվում էին առաջին հերթին ուսուցչական կազմի քանակական և որակական փոփոխություններով։ Եթե 1953—1954 ուսումնական տարում գյուղական վայրերում կար 958 դպրոց՝ 10747 ուսուցիչներով[11], ապա 1965—1966 ուսումնական տարում՝ 906 դպրոց 13470 ուսուցիչներով[12]։ Այդ ժամանակաշրջանում գյուղերի խոշորացման և մի շարք գյուղեր քաղաքներ դառնալու շնորհիվ գյուղական դպրոցների թիվը պակասել է։ 1953 թվականի 1035 գյուղերից 1965 թվականի հուլիսի 1-ին մնացել էր 962 գյուղ[13]։

ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո, գյուղական դպրոցների ուսուցչական կոլեկտիվները, ելնելով աճող սերնդի դաստիարակության լենինյան սկզբունքներից, ուսուցումը սերտորեն կապեցին գործնական աշխատանքի հետ։ Գյուղական դպրոցներում աշակերտների պոլիտեխնիկական ուսուցումը կիրառվում է երկու ձևով. ստեղծվում են աշակերտական արտադրական բրիգադներ, որոնք աշխատում են կոլտնտեսություններում, և երկրորդ՝ դպրոցին կից ուսումնա-փորձնական տնտեսությունում։ Պոլիտեխնիկական ուսուցման շնորհիվ գյուղական դպրոցի աշակերտները ոչ միայն յուրացնում են ագրոտեխնիկան և ծանոթանում գյուղատնտեսության մեխանիզացիային, այլև ինքնուրույն փորձեր են դնում աճեցնելու բանջարեղեն, մրգատու ծառեր և գյուղատնտեսական կուլտուրաների սերմեր։ Փորձնական աշխատանքը մեծ ծավալ ստացավ գրեթե բոլոր դպրոցներում։ Դրա շնորհիվ կոլտնտեսությունները ստացան նյութական մեծ օգուտ։ 1955—1956 թվականներից Հայաստանի գյուղերում մեծ ծավալ ստացավ անասնապահական ֆերմաների շեֆությունը։ 9000 կոմերիտականներ և դպրոցականներ աշխատում էին ֆերմաներում։

Դպրոցականները աշխատանքային այդ կոլեկտիվներում ձեռք են բերում գյուղատնտեսական արտադրության փորձ և գիտելիքներ, դաստիարակվում են կոլեկտիվիզմի ոգով, հարգանքով են վերաբերվում աշխատող մարդու նկատմամբ, սովորում անձնական շահերը զուգակցել ամբողջ կոլեկտիվի շահերին։ Դպրոցական երիտասարդները աշխատանքում ձեռք են բերում բարձր բարոյական հատկանիշներ, նրանք աշխատանքը համարում են հասարակական հանրօգուտ գործ։

1—4-րդ դասարաններում մտցվեց ձեռքի աշխատանքը, 5—7-րդ դասարաններում՝ գործնական աշխատանքը, 8—10-րդ դասարաններում՝ արդյունաբերության և գյուղատնտեսության հիմունքների դասավանդումը։ 34 միջնակարգ դպրոցներում մտցվեց մասնագիտացված ուսուցում՝ արդյունաբերական և գյուղատնտեսական մասնագիտություններից, կազմակերպվեց 75 ուսումնաարտադրական բրիգադ, որտեղ ընդգրկվեցին դպրոցների բարձր դասարանների աշակերտները[14]։

1958 թվականի դեկտեմբերին ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիան օրենք ընդունեց «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ՍՍՀՄ-ում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին», որը սահմանեց ժողովրդական կրթության նոր հիմունքներն ու զարգացման ուղիները մեր երկրում։ Օրենքի ուժ ստացան սովետական դպրոցի հիմնական խնդիրները՝ աշակերտներին պատրաստել կյանքի, հանրօգուտ աշխատանքի համար, բարձրացնել հանրակրթական և պոլիտեխնիկական ուսուցման մակարդակը, երիտասարդությանը դաստիարակել սոցիալիստական հասարակարգի սկզբունքների նկատմամբ խոր հարգանքի ոգով, կոմունիզ-

11 Народное хозяйство Армянской ССР в 1965 г. Е., 1967.

12 Հայկական ՍՍՀ Վիճակագրական վարչության 1965 թ. ընթացիկ արխիվ։

13 Նույն տեղում։

14 Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի հինգերորդ գումարման առաջին սեսիայի (1959 թ. ապրիլ) սղագր. հաշվետվությունը, էջ 35։

մի տգով։ Պետության և կոլտնտեսությունների համատեղ միջոցներով ծավալվեց գյուղերում դպրոցական, բժշկասանիտարական և կուլտուր-կենցաղային ու նախադպրոցական մանկական հիմնարկների շինարարությունը։ Այդ գործում լավ նախաձեռնություն հանդես բերեցին կոլտնտեսությունները։ 1957 թվականին Արտաշատի շրջանի աշխատավորները և կոլտնտեսությունները լայնորեն ծավալեցին կուլտուր-կենցաղային և արտադրական օբյեկտների շինարարությունը։ Նախատեսվեց այդ նպատակով երեք տարում ծախսել 117.475 հազար ռուբլի։ Եռամյակում կոլտնտեսությունների միջոցներով կառուցվեցին և շահագործման հանձնվեցին 13 դպրոց, 16 ակումբ, 11 բաղնիք, 5 հիվանդանոց-բուժարան, 14 մանկամսուր, պիոներական պալատ, կոլտնտեսականների համար հանգստյան տուն, պիոներական ճամբար, հիվանդանոց, 10 սպորտային հրապարակ, 53 տարբեր տեսակի արտադրական ձեռնարկություններ, կոլտնտեսականների խնայողությունների հաշվին 2200 անհատական տներ և այլն։ Շրջանի բոլոր կոլտնտեսականները, բանվորները և ծառայողները, կոմերիտականները և պիոներները շաբաթօրյակների միջոցով ակտիվորեն մասնակցեցին այդ շինարարությանը։

Մյուս շրջանները հետևելով արտաշատցիների օրինակին, իրենք նույնպես ծավալեցին կուլտուր-կենցաղային և արտադրական, միջկոլտնտեսային օբյեկտների շինարարությունը։ Այդ նպատակով 1961 թվականին կոլտնտեսություններն առանձնացրին 2740,2 հազար ռուբլի[15], նորակառույց դպրոցներում պետք է տեղավորվեին 9140 աշակերտ։ Հանրապետությունում կոլտնտեսությունների միջոցներով կառուցվեց 82 դպրոց[16]։ Դպրոցների հետ մեկտեղ կոլտնտեսությունները սկսեցին կառուցել նաև հիվանդանոցների, բուժկայանների, մանկական նախադպրոցական հիմնարկների

15 Դրամի նոր մասշտաբով։

16 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը 1961 թ. մարտ, էջ 234—243։

շենքեր։ Դպրոցական շենքերի կառուցման համար ծախսվեց 2456 հազար ռուբլի։

1962 թվականին կոլտնտեսությունների միջոցներով դպրոցական նոր շենքեր կառուցվեցին և հներն ընդարձակվեցին Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում։

Ալավերդու, Ազիզբեկովի, Կիրովականի, Կրասնոսելսկի, Ապարանի, Վեդու, Սիսիանի, Էջմիածնի, Ախուրյանի, Կալինինոյի, Իջևանի, Հոկտեմբերյանի և Ամասիայի շրջանների 30 գյուղում կառուցվեցին մանկական-նախադպրոցական հիմնարկների նոր շենքեր։

Բուժական հիմնարկների շենքեր կառուցվեցին 17 գյուղում։

Գյուղում դպրոցական և բուժական օբյեկտների շինարարության համար Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի ռեզերվից առանձնացվեցին նյութերի ու սարքավորումների ֆոնդեր։ Բացի դրանից Հայկոոպը վաճառեց մեծ քանակությամբ շինանյութեր։ Կոլտնտեսությունների միջոցներով կառուցվող դպրոցական և բուժական հիմնարկների շինարարությանը «Հայգյուղտնտտեխնիկա» միավորումը ցույց էր տալիս տեխնիկական ղեկավարություն և օգնություն։ Այդ նպատակով, միավորմանը տրամադրվեց 350 տոննա մետաղ։

Հայկական ՍՍՀ լուսավորության և առողջապահության մինիստրությունները վերահսկում էին գյուղական դպրոցների ու բուժական հիմնարկների շինարարությանը, կազմակերպում էին բաղմակողմանի օգնություն։ Կուլտուրական շինարարության գործում բանվոր դասակարգը և գյուղացիությունը հանդես են գալիս դաշնակցած։ Պետական հիմնարկներն իրենց բանվորական կոլեկտիվներով օգնության ձեռք են մեկնում գյուղի կուլտուրական նոր վերընթացին։

Կոլտնտեսային գյուղի աշխատավորության մեջ խոշոր դաստիարակչական աշխատանք են կատարում կուլտուր-լուսավորական հիմնարկները՝ ակումբները, կուլտուրայի տները և այլն։ Այդ հիմնարկների գործունեությունը 1953—

1965 թվականներին ամբողջովին վերակառուցվեց։ Նրանց հիմնական խնդիրը դարձավ Սովետական Միության կոմունիստական կուսակցության համագումարների և Կենտրոնական կոմիտեի պլենումների որոշումների պրոպագանդան։ Այդ ոգով կազմակերպվեց քաղաքական, կուլտուր-մասսայական աշխատանքը։ Կոմունիստական շինարարության գործում զգալիորեն բարձրացավ ամբողջ հասարակայնության դերը կուլտուրական շինարարության հարցերում։ Շարքային կոլտնտեսականները, մեխանիզատորները, գյուղատնտեսության մասնագետները, ուսուցիչները, բժիշկները, դարձան կուլտուրական-մասսայական բազմաթիվ լավ գործերի նախաձեռնողներ։ Նրանք ակտիվորեն մասնակցում էին գյուղական ակումբների և կուլտուրայի տների խորհուրդների աշխատանքներին։ Գյուղական ինտելիգենցիայի ներկայացուցիչները հասարակական կարգով ղեկավարում էին գեղարվեստական ինքնագործունեությունը, կազմակերպում գրքի, քաղաքական և գիտական գիտելիքների, առաջավոր փորձի պրոպագանդան։ Գյուղի կուլտուրան բարձրացնելու գործում վիթխարի աշխատանք են կատարում հանրապետական և շրջանային մամուլը, ռադիոն։ Տեղական կոմերիտական կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվեցին կուլտուրայի համալսարաններ, գյուղատնտեսական առաջավորների դպրոցներ, նոր թափ ստացավ գյուղի բարեկարգումը և կանաչապատումը, շաբաթօրյակների միջոցով կուլտուրական շինարարության ծավալումը, հասարակական կարգով ակումբների վերանորոգումը, ինքնագործ խմբերի կազմակերպումն ու ղեկավարումը։ Ամենուրեք խրճիթ-ընթերցարանները վերածվեցին ակումբների, բացվեցին գյուղական նոր ակումբներ, ծավալվեց կուլտուրայի տների կառուցումը և կահավորումը։ Գյուղական ակումբները, կուլտուրայի տները և գրադարանները կոլտնտեսականների համար կազմակերպեցին դրույցներ, բարձրաձայն ընթերցանություններ, դասախոսություններ, թեմատիկ և հանդիպման երեկոներ, ցուցադրական ագիտացիա և այլն։ Շատ տեղերում կազ-

մակերպված ցուցադրական ագիտացիան կոնկրետ էր, նպատակասլաց, բովանդակալից և արտացոլում էր ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների առաջադրած կարևոր, կենսական խնդիրները և սերտորեն կապվում էր տվյալ կոլտնտեսության, սովխոզի, ֆերմայի, բրիգադի անելիքների և առաջավորների փորձի մասսայականացման հետ։ Կուլտուրայի տները, ակումբներն ու գրադարանները գործուղվեցին որակյալ կադրեր։

Կուսակցությունը և սովետական օրգաններն էլ ավելի ուժեղացրին գյուղում տարվող քաղաքական ու կուլտուր-լուսավորական աշխատանքները։ Այդ գործում ներգրավվեցին ոչ միայն քաղաքային, այլ նաև գյուղական ինտելիգենցիայի ուժերը։ Երևանում սկսեց լույս տեսնել «Հայաստանի կոլտնտեսական» ամսագիրը, որը կարևոր դեր է կատարում գյուղատնտեսության առաջավորների փորձի պրոպագանդման և գյուղի կուլտուրական վերելքում։

Գյուղում տարվող քաղաքական, կուլտուր-լուսավորական աշխատանքներում մտցվեցին նոր ոճ և նոր մեթոդներ, որոնք փոխադրվում էին քաղաքից։ Այդ ամենը կենսագործվում էր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և սոցիալիստական ինտելիգենցիայի համատեղ ուժերով։

Գյուղական կուսակցական կազմակերպությունները և կուլտուր-լուսավորական հիմնարկները վերակառուցեցին պրոպագանդիստական աշխատանքները, այն սկսեցին ավելի սերտորեն կապել կոմունիստական շինարարության գործնական խնդիրների հետ։

Միայն Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի վարչության կենտրոնական դասախոսական բյուրոն 1954 թվականին կազմակերպել է 4424 դասախոսություն, զգալի չափով բարելավվեց գյուղատնտեսական գիտելիքների պրոպագանդան։

նման թեմաներով, այդ տարում, գյուղական վայրերում կազմակերպվել է 823 դասախոսություն[17]։

Գյուղում տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքներում դեռևս կային թերություններ, որոնց վերացման գործում կուսակցական ու սովետական օրգանները և կուլտուրայի մինիստրությունը լայն գործունեություն ծավալեցին։ 1954 թվականի սեպտեմբերի 8-ին Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիան քննարկեց գյուղական աշխատավորության կուլտուրական սպասարկման վիճակը Բասարգեչարի շրջանում և բացահայտվելով թերությունները, միջոցներ մշակեց դրանք վերացնելու ուղղությամբ։ 1955 թվականի հունիսի 11-ին կոլեգիան անդրադարձավ այդ որոշման կատարման ընթացքին։

Վերոհիշյալ որոշումից հետո Բասարգեչարի շրջսովետի գործկոմի կուլտուրայի բաժինը ակումբներում և գրադարաններում սիստեմատիկաբար կազմակերպեց ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների որոշումների ուսումնասիրությունը։ Ակումբներում ստեղծվեցին գյուղատնտեսական գրականության անկյուններ, հաջողությամբ պրոպագանդվում և մասսայականացվում էր գյուղատնտեսության առաջավորների փորձը։ Շրջանի 23 ակումբներում, Շիշկայա, Կոշաբուլաղ, Արունք, Տաշքյանդ, Ն. Շորժա և այլ գյուղերում ստեղծվեցին ագրոտեխնիկայի խմբակներ։ Բարելավվեց աշխատավորության շրջանում տարվող դասախոսական պրոպագանդայի վիճակը։ Մինիստրության կոլեգիայի որոշումից հետո Ծովակ, Մ. Մազրա գյուղերում և երկու ՄՏ կայաններում կազմակերպվեց դասախոսությունների գյուղական միավորումներ։ Աշխուժացավ շրջանի կուլտուրայի բաժնին կից դասախոսական խմբակը։ Շրջանում գործում էին 52 ինքնագործ խմբեր, որոնք ելույթներ էին ունենում գյուղական աշխատավորության համար։ Գրագետ ու գործունյա մարդիկ առաջ քաշվեցին ակումբային աշխատանքներում, բարելավվեց կինոսպասարկման գործը։

Զգալիորեն աշխուժացավ շատ շրջանների կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքը։ Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղի ակումբը կուլտուր-լուսավորական աշխատանքը սերտորեն զուգակցելով կոլտնտեսության առջև դրված խնդիրների հետ, օգնում էր կոլտնտեսությանը մոբիլիզացնելու աշխատավորների ուժերը, պայքարելու բերքատվության և անասնաբուծության մթերատվության բարձրացման համար։ Ակումբի աշխատողները կազմակերպում էին ամենօրյա զրույցներ կուսակցության և կառավարության որոշումների մասին, աջակցում էին սոցիալիստական մրցության ծավալմանը, մասսայականացնում կոլտնտեսության առաջավորների աշխատանքի փորձը։ Լեկտորիումում ընդգրկված էր գյուղական մտավորականությունը՝ զոոտեխնիկը, ագրոնոմը, բժիշկը, ուսուցիչները, կուսակցական և սովետական ակտիվը։ Ագիտ-թերթիկը լայնորեն լուսաբանում էր կոլտնտեսության առաջավորների փորձը, բրիգադների կյանքը, խարազանում ետ մնացողներին։ Լավ էր աշխատում ագրոզոոխմբակը, որտեղ ընդգրկված էր 22 հոգի։ Խմբակը ղեկավարում էր կոլտնտեսության ագրոնոմ Վարդուշ Բագալյանը։ Խմբակի անդամների համար ցուցադրվեցին գյուղատնտեսական վեց կինոֆիլմ[18]։

Ակումբն ստանում էր թերթեր, ամսագրեր, գրադարանը համալրվում էր նոր, թարմ գրականությամբ։ Գրադարանից մշտապես օգտվում էին 172 ընթերցողներ։ Գրական խմբակում քննարկվել են Հր. Քոչարի, Ս. Կապուտիկյանի, Ս. Խանդաղյանի և ուրիշ գրողների ստեղծագործությունները։ Գործում էին նաև շախմատի, շաշկու, վոլեյբոլի, ֆուտբոլի խմբակներ։

Ուռուտ գյուղի ակումբի այս ուսանելի փորձը մասսայա-

17 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 14, գ. 137, թ. 9

18 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, կոլեգ. 1954 թ. օգոստոսի 17-ի որոշումը, ֆ. 14, գ. 83, թ. 6։

կանացնելու նպատակով կուլտուրայի մինիստրության կուլտուր-լուսավորական հիմնարկների գլխավոր վարչությունն առանձին բրոշյուր հրատարակեց։

Գյուղական բնակչության մեջ լայն գործունեություն ծավալեց նաև Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի ակումբը։ Կոլտնտեսության գարնան վար ու ցանքի ժամանակ նա դաշտում, այգիներում և ֆերմաներում հաճախակի էր կազմակերպում զրույցներ և ընթերցանություն։ Լեկտորիումի բոլոր անդամները կոլտնտեսականների առաջ հանդես էին գալիս հետաքրքրական զեկուցումներով ու դասախոսություններով, որոնց ընթացքում լայնորեն օգտագործվում էին ակումբում կազմակերպված ցուցահանդեսը և պլակատները, թեմատիկ անկյունները։ Ուշագրավ էր նաև «Մեր գյուղի լավագույն մարդիկ» վերնագիրը կրող ալբոմը, որը պատմում էր համագյուղացիների հայրենիքին մատուցած աչքի ընկնող ծառայությունների մասին։ Ակումբը ուներ 70 մարդուց բաղկացած քառաձայն երգեցիկ խումբ, որը 1955 թվականին մասնակցեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 35-րդ տարեդարձին նվիրված գեղարվեստական ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործության հանրապետական օլիմպիադային և շահեց առաջին կարգի մրցանակ։ Ժողովրդական գործիքների, երգի-պարի, թատերական ինքնագործ խմբերը ելույթներ էին ունենում նաև դաշտերում։ Լավ էին աշխատում նաև ագրո-զոո, նկարչական, կինոտեխնիկայի, շախմատի, հրաձգության, ըմբշամարտի և այլ խմբակները։

1955 թվականի հունվարին[19], ՀԿԿ Կենտկոմը քննության առնելով հանրապետության սահմանամերձ 9 շրջաններում բնակչության մեջ քաղաքական-դաստիարակչական և կուլտուր-կենցաղային աշխատանքների վիճակը, նշեց, որ դրանք մեծ մասամբ տարվում են կյանքից, կոնկրետ խնդիրներից

[19] ՀԿԿ Կենտկոմի 1955 թվականի հունվարի 19-ի որոշումը։ Մլի Հայկական ֆիլիալի արխիվ ֆ. 1, ց. 83, գ. 45, թ. 8։

կտրված, այդ պատճառով էլ շատ հաճախ նպատակին չեն հասնում, քիչ են օգնում գյուղական բնակչության ակտիվության և քաղաքական մակարդակի բարձրացմանը։

Կուսակցության շրջկոմներն անհրաժեշտ ուշադրություն չէին դարձնում սահմանամերձ բնակչության մեջ դասախոսական պրոպագանդայի մակարդակը բարձրացնելուն, ագիտացիոն-մասսայական աշխատանքի բարելավմանը։ Շատ գյուղերում ամիսներով չէին ցուցադրում կինոֆիլմեր, չէին կազմակերպում հանրապետության ստեղծագործական կոլեկտիվների ելույթներ, մի շարք գյուղերում դադարել էին գործել ինքնագործ խմբերը։

Առողջապահության, լուսավորության, կուլտուրայի, առևտրի, կապի մինիստրությունները, Հայկոոպի վարչությունը, կուսակցական շրջկոմները և շրջսովետների գործկոմները հաշվի չէին առնում այդ շրջանների առանձնահատկությունները և անհրաժեշտ ուշադրություն չէին դարձնում բնակչության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավմանը, սահմանապահ գյուղերի բարեկարգմանը։ Անբավարար էր ընթանում դպրոցների, կուլտուր-լուսավորական հիմնարկների շինարարությունը։ Գյուղերի էլեկտրիֆիկացման և ռադիոֆիկացման աշխատանքների ավարտումն անընդհատ ձգձգվում էր, շատ հիվանդանոցներ և բժշկական կայաններ ապահովված չէին մասնագետ կադրերով։

Ելնելով ՀԿԿ Կենտկոմի որոշումից Ղուկասյանի, Ախուրյանի, Անիի, Թալինի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Արտաշատի, Վեդու և Մեղրու կուսակցական շրջկոմները, շրջսովետների գործկոմները և սկզբնական կուսկազմակերպությունները զգալիորեն բարելավեցին բնակչության մեջ տարվող քաղաքական, դաստիարակչական աշխատանքը, բարձրացրին կոլտնտեսականների ակտիվությունը, աշխուժացրին ագիտատորների, պրոպագանդիստների, դասախոսների և կուլտուր-լուսավորական հիմնարկների գործունեությունը, աշխուժացան կուլտուրայի տների, ակումբների գեղարվեստական ինքնագործ խմբերը, հանրապետության երաժշտա-

կան կոլեկտիվները սկսեցին ավելի հաճախ ելույթներ ունենալ այդ շրջանների գյուղերում, որոշ չափով բարելավվեց կինոսպասարկման վիճակը։ Սահմանամերձ գյուղերի կուլտուր-լուսավորական հիմնարկներն ուժեղացվեցին որակյալ կադրերով, կուսակցության շրջանային կոմիտեները, քաղաքական և գիտական գիտելիքների տարածման հանրապետության ընկերությունը այստեղ ուղարկեցին որակյալ դասախոսներ, բժշկական, ուսուցչական, գյուղատնտեսական որակյալ կադրեր։

Երևանի և Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունները վերցրին սահմանամերձ շրջանների շեֆությունը։

Առաջնորդվելով ՀԿԿ Կենտկոմի որոշումով, հանրապետության կառավարությունը փոփոխություններ մտցրեց հատկապես սահմանամերձ շրջանների դպրոցական, բժշկական և կուլտուր-լուսավորական հիմնարկների շինարարական պլաններում, զգալիորեն ընդարձակվեցին դրանք և կրճատվեցին կառուցման ժամկետները, օգնություն ցույց տրվեց կոլտնտեսություններին անհատական բնակարանային շինարարության գործում։ 1955—1956 թվականներին սահմանամերձ շրջանների բոլոր գյուղերը էլեկտրիֆիկացվեցին և ռադիոֆիկացվեցին, բարելավվեց բնակչության ջրամատակարարման գործը։

Գյուղական բնակչության կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու գործում ակտիվորեն հանդես եկան մայրաքաղաքի և Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվները, ինտելիգենցիան, հանրապետության և շրջանային ակտիվը և ստեղծագործական կոլեկտիվները։ 1956 թվականի հուլիսին ՀԿԿ Կենտկոմը անդրադառնալով 1955 թվականի հունվարի 19-ի այդ որոշման կատարման ընթացքին, նշեց, որ սահմանամերձ շրջանների կուսակցության շրջկոմները, շրջսովետների գործկոմները և սկզբնական կուսկազմակերպությունները զգալի աշխատանք էին կատարել սահմանամերձ շրջանների գյուղական բնակչության մեջ մասսայական-քաղաքական և կուլտուր-

լուսավորական աշխատանքների բարելավման ուղղությամբ։ Ուժեղացել են կապերը կուսակցական կազմակերպությունների, բնակչության և սահմանապահների միջև։ Հանրապետական և տեղական օրգանները որոշակի աշխատանք են կատարել սահմանամերձ բնակավայրերի բարեկարգման ուղղությամբ, կառուցվել են կուլտուր-կրթական և տնտեսական շատ ձեռնարկություններ։

Միաժամանակ ՀԿԿ Կենտկոմը նշեց, որ կուսակցության շրջկոմները և սկզբնական կուսկազմակերպությունները դեռևս անբավարար են օգտագործում մասսաների մեջ տարվող քաղաքական աշխատանքի ձևերը, քիչ են կազմակերպում դասախոսություններ՝ աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության, ՍՍՀՄ միջազգային դրության, ժողովուրդների բարեկամության, սովետական հայրենասիրության մասին և այլն։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը, ելնելով ՀԿԿ Կենտկոմի այդ որոշումից, լրացուցիչ միջոցներ հատկացրեց սահմանամերձ շրջանների բնակչության կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու, էկոնոմիկան բարձրացնելու նպատակով։

Անիի, Ախուրյանի, Վեդու, Ղուկասյանի, Մեղրու, Հոկտեմբերյանի, Թալինի և Էջմիածնի շրջսովետների գործկոմները ավելի ընդհուպ զբաղվեցին սահմանամերձ գյուղերի բնակչության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման հարցերով, այդ հիմնարկներն ամրապնդեցին լավագույն կադրերով։ Սահմանամերձ գյուղերում ավելացվեցին կապիտալ ներդրումների գումարները։ Գյուղերի մեծ մասը բարեկարգվեց, բարելավվեցին ճանապարհները, պետական օգնություն ցույց տրվեց բնակչության բնակարանների վերանորոգմանը և անհատական բնակարանային շինարարությանը։ Կոլտնտեսությունների միջոցներով կառուցվեցին 16 և վերանորոգվեցին 10 գյուղական ակումբներ, վերանորոգվեցին դպրոցական և առողջապահական հիմնարկների շենքերը։ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը սահ-

մանամերձ շրջանների կուլտուրայի հիմնարկներին բաց թողեց 107 հազար ռուբլի գույքավորման համար, բացվեցին 16 նոր ակումբներ և գրադարաններ։

1956 թվականին շահագործման հանձնվեց Արտաշատի շրջանի Վ. Արտաշատի, Մեղրու շրջկենտրոնի, Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան և այլ գյուղերի ակումբների տիպային շենքերը։

Սահմանամերձ շրջանների աշխատավորության համար կուլտուրայի տներում, ակումբներում և գրադարաններում ավելի հաճախակի էին կազմակերպվում դասախոսություններ, զեկուցումներ, հանդիպումներ արտադրության առաջավորների, արվեստի ու գրականության նշանավոր գործիչների հետ։

Կենտրոնական դասախոսական բյուրոն տեղերի լեկտորիումների միջոցով 1956 թվականին կազմակերպեց 1300 դասախոսություն և զեկուցում, որին մասնակցեց 77 հազար ունկնդիր։ Դասախոսություններ էին կարդացվել ՍՄԿԿ 20-րդ համագումարի որոշումների, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 6-րդ հնգամյակի խնդիրների, ժողովուրդների բարեկամության, միջազգային դրության մասին և այլն։ Մինիստրության կոլեգիան քննության առավ Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Թալինի, Ղուկասյանի, Վեդու շրջանների աշխատավորության մեջ տարվող կուլտուրական-լուսավորական, քաղաքական-մասսայական աշխատանքների գաղափարական մակարդակի բարձրացման հարցերը։

Սահմանամերձ շրջանների գրադարաններն ուղարկվեց 715.300 ռուբլու արժողությամբ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն գրականություն[20]։ Կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի գլխավոր վարչության ագիտ բրիգադները ելույթներ ունեցան սահմանամերձ շրջաններում, որին ունկնդրեցին 8 հազար մարդ։ Երևանից Ղուկասյանի և Վեդու շրջաններն ուղարկվեցին այդպիսի բազմաթիվ բրիգադներ։

20 Հայկական ՍՍՀ կուլտ. մինիստր. արխիվ, ֆ. 14, գ. 230, թ. 5։

Մինիստրության նախաձեռնությամբ փորձի փոխանակման կարգով Արտաշատի շրջանում կազմակերպվեց միջշրջանային սեմինար, որին մասնակցեցին Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Վեդու և Արտաշատի շրջանների կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատողները։ Զգալիորեն աշխուժացան կուլտուրայի տների և ակումբների գեղարվեստական ինքնագործունեության խմբակները։ Հատկապես աչքի ընկան Արտաշատի շրջանի կուլտուրայի տան երգի-պարի, Թալինի շրջանի Աշնակ գյուղի պարի, Հոկտեմբերյանի շրջանի կուլտուրայի տան, Հոկտեմբեր գյուղի՝ երգի-պարի, Բամբակաշատ գյուղի ակումբի թատերական խմբերը և այլն, որոնք իրենց գեղարվեստական կատարումով ետ չէին մնում մասնագիտական խմբերից։ Այս խմբերը առանձնապես աչքի ընկան Հայաստանում սովետական կարգերի հաստատման 35-ամյա տարեդարձին նվիրված գեղարվեստական ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործությունների հանրապետական օլիմպիադիայում և շահեցին մրցանակներ։

Գյուղական կուլտուր-լուսավորական հիմնարկները սկսեցին ավելի ակտիվ օգնություն ցույց տալ կուսակցական ու սովետական կազմակերպություններին՝ առաջավոր փորձը պրոպագանդելու և արմատավորելու գործում, կուլտուր-մասսայական աշխատանքը կենտրոնացվեց անմիջականորեն դաշտերում, բրիգադներում, ֆերմաներում։ Բոլոր շրջկենտրոններում հրավիրվեցին կուլտուր-լուսավորական աշխատողների խորհրդակցություններ, որտեղ առաջ քաշվեցին ՍՄԿԿ 20-րդ համագումարի որոշումների պրոպագանդման խնդիրները։ Կուլտուրայի տներում, ակումբներում, գրադարաններում կազմակերպվեցին ցուցահանդեսներ՝ նվիրված համագումարի որոշումներին և 6-րդ հնգամյակի առաջադրանքներին։ Գրադարաններում կազմակերպվեցին գրքերի ցուցահանդեսներ, բիբլիոգրաֆիական տեսություններ, նորությունների ցուցափեղկեր։ Լայնորեն մասսայականացվում էին սոցիալիստական աշխատանքի հերոսների, գյուղատնտեսության մյուս անվանի մարդկանց առաջավոր փորձը և գիտության նվաճումները։

ՍՄԿԿ 20-րդ համագումարի որոշումները պրոպագանդելու գործում շրջանային և գյուղական դասախոսական խմբերին օգնելու նպատակով մայիսի սկզբներին Երևան, Լենինական, Կիրովական, Ղափան և Կամո քաղաքներում անցկացվեցին հնգօրյա միջշրջանային մեթոդական սեմինարներ։ Կազմվեցին և տեղերն ուղարկվեցին համագումարի վերաբերյալ հանձնարարական գրականության ցանկեր, գրքեր, կազմակերպվեց գրքատարություն, անցկացվեցին ընթերցողների կոնֆերանսներ, գրքերի քննարկումներ, հանդիպումներ գրողների հետ և այլն։

Կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքի գաղափարական մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպվեցին մեկամսյա դասընթացներ, ուր սովորում էին 400 մարդ։ Երևանի ակումբա-գրադարանային տեխնիկումին կից 1956—1957 թվականների ուսումնական տարվանից ստեղծվեց ակումբա-գրադարանային հեռակա բաժին։ Մոսկվայի և Լենինգրադի կուլտուր-լուսավորական աշխատանքի առաջավոր փորձին ծանոթանալու համար մեր հանրապետությունից գործուղվեցին այդ բնագավառի շատ աշխատողներ, իսկ շրջաններից եկան Երևան։

Ակումբները սկսեցին ավելի հաճախակի կազմակերպել թեմատիկ երեկոներ՝ նվիրված համագումարի որոշումների պրոպագանդմանը։ 1956 թվականի մայիսի 31-ին այդպիսի թեմատիկ երեկո կազմակերպվեց Ազիզբեկովի շրջանի Ելփին գյուղի ակումբում։ Այդ առաջավոր ակումբը (վարիչ Ա. Հախվերդյան), ոչ միայն կոլտնտեսականների մեջ մասսայականացնում էր օրվա նորությունները, այլ նաև գյուղատնտեսական առաջավորների աշխատանքի դրական փորձը, խելացի կերպով կազմակերպում կոլտնտեսականների կուլտուրական հանգիստը։

Ակումբի աշխատանքի մեջ կարևոր տեղ էր զբաղում կուսակցության 20-րդ համագումարի նյութերի ու որոշումների պրոպագանդան։ Այդ նպատակով կազմակերպվեցին մի շարք զեկուցումներ, բարձրաձայն ընթերցանություններ, ցուցահանդես։ Մայիսի 31-ի երեկոյի թեման էր՝ «Գյուղատնտեսության վերելքը 6-րդ հնգամյակում և մեր կոլտնտեսության խնդիրները»։ Զեկուցումով հանդես եկավ գյուղի դպրոցի դիրեկտոր՝ Վ. Մկրտչյանը։ Նախօրոք կազմակերպվեց ցուցահանդես, լույս ընծայվեց պատի թերթի հատուկ համար՝ նվիրված թեմատիկ երեկոյին, ուր լուսաբանվում էին գյուղի Դիմիտրովի անվան կոլտնտեսության նվաճումներն ու խնդիրները։ Երեկոյին հրավիրեցին իրենց մրցակից հարևան Զեյվա գյուղի Սվերդլովի անվան կոլտնտեսության ներկայացուցիչներին։ Այդ հետաքրքրական թեմատիկ երեկոն հասավ իր նպատակին և դրական արդյունք տվեց։ Թեմատիկ նման երեկոներով աչքի ընկավ նաև Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի ակումբը։

Գյուղական ակումբների աշխատանքները բարելավելու նպատակով հանրապետության կուլտուրայի մինիստրությունը պարբերաբար անց էր կացնում ստուգատեսներ։ 1954 թվականի ստուգատեսն ընթացավ ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի և Հայաստանի կոմունիստական կուսակցության 17-րդ համագումարի որոշումների կատարման նշանաբանով։ Ստուգատեսի օրերին (հուլիս-նոյեմբեր) կազմակերպվեցին շուրջ 72500 դասախոսություններ, զեկուցումներ և զրույցներ[21]։

Հանրապետության ՄՏԿ-ներում ստեղծվեցին դասախոսների նոր միավորումներ, աշխուժացան նաև ակումբներին կից գյուղական դասախոսների միավորումները։ Ստուգատեսի ընթացքում ավելի ակտիվացավ շրջանային ու գյուղական կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունը կուլտուր-լուսավորական հիմնարկների նկատմամբ, որի շնորհիվ գյուղական ակումբների մի զգալի մասը հիմնականում կատարելով ստուգատեսի պայմանները՝ դարձավ առաջավոր։

Ամփոփելով ստուգատեսի արդյունքները, լավագույն ա-

21 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1954 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը։

կոմբներ ճանաչվեցին Արտաշատի շրջանի Անաստասավան, Շամշադինի շրջանի Ղրղի, Ստեփանավանի շրջանի Ուռուտ, Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ, Կամոյի շրջանի Նորադուզ, Ղափանի շրջանի Վ. Գիրաթաղ, Սիսիանի շրջանի Դարբաս, Ազիզբեկովի շրջանի Ելփին, Արթիկի շրջանի Փանիկ, Ապարանի շրջանի Մելիք, Կրասնոսելսկի մշակենտրոնի, Անիի շրջանի Լուսաղբյուր, Էջմիածնի շրջանի Արագած և Հրազդանի շրջանի Ֆանտան գյուղերի ակումբները։ Նման ստուգատեսներ անցկացվեցին նաև 1956, 1959, 1961, 1965 թվականներին, որոնք նոր լիցք տվեցին ակումբների աշխատանքին։

Կուսակցության և կառավարության ամենօրյա հոգատարության շնորհիվ հետզհետե ավելի բարելավվեց գրադարանների աշխատանքը, որոնք դարձան գրքի պրոպագանդայի, կոլտնտեսային գյուղացիության կուլտուրական մակարդակի բարձրացման կարևոր օջախներ։ Այսպես, օրինակ, Մարտունու շրջանի Զոլաքար գյուղի գրադարանը, տեղական կազմակերպությունների օգնությամբ, աշխատավորության լայն շրջանում հաջողությամբ կազմակերպեց գրքի պրոպագանդան։ 1954 թվականի հոկտեմբերին գրադարանն ուներ 400 ընթերցող, որից 335-ը կոլտնտեսականներ էին։ Ընթերցողները ինն ամսում ստացել էին 5000 գիրք[22]։ Գրադարանում կազմակերպվել էր գյուղատնտեսական անկյուն, որտեղ սիստեմատիկաբար ցուցադրվել են գյուղատնտեսական գրքեր, մամուլից համապատասխան հոդվածներ և այլն։ Գրադարանը հատուկ աշխատանք էր կատարում կոլտնտեսային արտադրության առաջավորների փորձը լուսաբանող գրականության պրոպագանդման ուղղությամբ։ Ինչպես գրադարանում, այնպես էլ դաշտերում և ֆերմաներում պլանավորված ձևով անց են կացվել գյուղատնտեսական գրքերի կոլեկտիվ քննարկումներ, զրույցներ, բարձրաձայն ընթերցանություններ։

22 ՀՍՍՀ կուլտ. մինիստրության կոլեգիայի 1954 թ. հոկտեմբերի 19-ի որոշումը, Մինիստրների սովետի արխիվ, ֆ. № 1, գ. 86, թ. 31։

Գրադարանը ամեն կերպ օգնում էր քաղլուսցանցի սովորողներին, նրանց համար կազմելով գրականության հանձնարարական ցուցակներ և առանձնացնելով անհրաժեշտ գրականություն։ Սիստեմատիկ պրոպագանդում էր նաև գեղարվեստական գրականությունը, հաճախակի կազմակերպում ընթերցողների կոնֆերանսներ, գրական երեկոներ, գրքի տեսություններ և այլն։ Ընթերցողների պահանջները բավարարելու համար գրականություն էր ստացվում շրջանային և Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանից։ Ստեղծվել էր մեկ մշտական շրջիկ գրադարան՝ անասնապահական ֆերմաներում և երեք գրքատարներ՝ բրիգադներում։

Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի որոշումով Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի մեթոդական կաբինետը բրոշյուր հրատարակեց նվիրված Զոլաքարի ինքնուրույն գրադարանի աշխատանքի փորձին։ Այդ գրադարանի գրքային ֆոնդը հարստացնելու նպատակով մինիստրությունը բաց թողեց 3000 ռուբլու արժողությամբ գրականություն[23]։ Գրադարանի աշխատանքը լավագույն ձևով կազմակերպելու համար Զոլաքարի ինքնուրույն գրադարանի վարիչ Մ. Թովմասյանը պարգևատրվեց Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության պատվոգրով։ Գրադարանին բաց թողնվեց լրացուցիչ գույք։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 40-ամյակի առթիվ անցկացվեց մասսայական գրադարանների հանրապետական ստուգատես, որը զգալիորեն նպաստեց նրանց աշխատանքի գաղափարական մակարդակի բարձրացմանը, գրքի պրոպագանդայի բարելավմանը, ընթերցողների ավելացմանը։

Ստուգատեսի ընթացքում պարզվեց, որ մասսայական գրադարանների ընթերցողների թիվը, 1956 թվականի համեմատությամբ, ավելացել էր մոտ 25 հազարով, իսկ գրքի ընթացքը 380 հազար կտորով։

23 Նույն տեղում, թ. 15։

Մասսայական գրադարաններն ակտիվորեն պրոպագանդել են ՍՄԿԿ 20-րդ համագումարի և Կենտկոմի պլենումների որոշումները, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 40-ամյակի նյութերը։ Գրադարաններն իրենց աշխատանքով օգնում էին կուսակցական կազմակերպություններին՝ աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու և հաջողությամբ կենսագործելու կոմունիստական շինարարության խնդիրները։

Գրադարանների գործունեությունը սերտորեն կապված էին կոլտնտեսությունների առջև դրված տնտեսական կոնկրետ խնդիրների հետ։ Նրանք աշխատավորության համար կազմակերպում էին դասախոսություններ, զրույցներ, արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորների հանդիպումներ, գրքի տեսություններ, ընթերցողների կոնֆերանսներ և այլ մասսայական միջոցառումներ։ Ստուգատեսի ընթացքում որոշ չափով բարելավվեց նաև գրադարանների նյութա-տեխնիկական բազան։ Յոթանասուն գրադարաններ տեղափոխվեցին ավելի հարմարավետ շենքեր, ձեռք բերվեց լրացուցիչ գույք և կահույք (Գուգարքի շրջանի Բզովդալ, Դեբեդ, Սպիտակի շրջանի Սարահարթ, Աշտարակի շրջանի Օշական և այլ գյուղերի գրադարաններ)[24]։

Ստուգատեսի աշխատանքները հատկապես հաջող անցկացվեց Ստեփանավանի, Շամշադինի, Գուգարքի շրջաններում, Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում, որտեղ շատ գրադարաններ օրինակելիորեն կազմակերպեցին բնակչության սպասարկումը։

Ստուգատեսի արդյունքները քննարկվեցին շրջանային-քաղաքային կուլտուրայի աշխատողների հավաքներում և մշակվեցին միջոցառումներ՝ գրադարանների աշխատանքների հետագա բարելավման համար։ Բրոշյուրներ հրատարակվեցին լավագույն գրադարանների փորձի մասին։

24 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 1, գ. 313, թ. 10—12 (կոլեգիայի 1958 թ. հունվարի 10-ի որոշումը)։

Մինիստրության կոլեգիայի որոշմամբ «Հայկական ՍՍՀ լավագույն գրադարան» կոչման արժանացան Շամշադինի շրջանի Ղրղի, Ալավերդու շրջանի Ղաչաղան, Արտաշատի շրջանի Վերին Արտաշատ, Գուգարքի շրջանի Ժդանով, Ստեփանավանի շրջանի Կույբիշևո, Գորիսի շրջանի Քարահունջ, Սիսիանի շրջանի Դարբաս, Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան գյուղերի գրադարանները, Արտաշատի, Շամշադինի, Վեդու, Մարտունու, Անիի շրջանային գրադարանները։

«Հայկական հանրապետության լավագույն քաղաքային գրադարան» կոչման արժանացան՝ Դիլիջանի, Գորիսի, Էջմիածնի № 1, Կիրովականի Մ. Գորկու անվան, Լենինականի Ավ. Իսահակյանի անվան, Լենինականի № 4, Երևանի Ավ. Իսահակյանի անվան, Երևանի Լենինյան շրջանի № 4 քաղաքային գրադարանները[25]։

Մանկական գրադարաններից այդ կոչմանն արժանացան 11 շրջանային ու քաղաքային գրադարաններ[26]։ Գրադարանների առավել աչքի ընկնող աշխատողներից 36 հոգի գործուղվեցին Մոսկվայի և Լենինգրադի խոշոր գրադարանների փորձին ծանոթանալու համար։ Գրադարանային 114 աշխատողներ պարգևատրվեցին միութենական և հանրապետության մինիստրությունների պատվոգրով։

Կոմունիստական շինարարության հոյակապ ծրագրի կենսագործումը մասսայական գրադարանների առաջ խնդիր է դրել առավելագույն կերպով օգտագործել գրքային ֆոնդերը, կատարելագործել ընթերցողների սպասարկման ձևերը, բավարարել գրքի նկատմամբ աշխատավորների օրավուր աճող պահանջները։ Ելնելով այդ նոր խնդիրներից, Մոսկվա քաղաքի և Մոսկվայի մարզի մի շարք գրադարաններ նախաձեռնություն վերցրին անցնելու ընթերցողների սպասարկման նոր մեթոդին՝ բաց գրադարակների ձևին։

25 Նույն տեղում, էջ 12։

26 Նույն տեղում։

Աշխատավորների սպասարկման այս ստեղծագործական ձևը կարճ ժամանակամիջոցում լայն տարածում գտավ երկրի գրադարաններում։ Հայաստանի քաղաքային, շրջանային, մանկական և գյուղական 20 գրադարաններ, 1959 թվականի ապրիլից անցան ընթերցողների սպասարկման նոր մեթոդին[27]։ Այդ նպատակով, Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը հրապարակեց և տեղերն ուղարկեց համապատասխան մեթոդական նամակ։

ՍՄԿԿ Կենտկոմը 1959 թվականին որոշում ընդունեց «Երկրում գրադարանային գործի վիճակի և նրա բարելավման միջոցառումների մասին», որի հիման վրա համապատասխան որոշում ընդունեց նաև ՀԿԿ Կենտկոմը։

Սովետական իշխանության տարիներին մեզանում գրադարանային գործը նշանակալից զարգացում է ապրել։ Աճել է գրադարանների քանակը, ընթերցողների թիվը և գրքի ընթացքը։ Եթե 1913 թվականին Հայաստանում հաշվվում էր 13 գրադարան, մոտ 120 հազար կտոր գրքային ֆոնդով, ապա 1959 թվականի վերջերին արդեն կային 2800 մասսայական, գիտա-տեխնիկական, դպրոցական, կոլտնտեսային և այլ տիպի գրադարաններ՝ շուրջ 16,5 միլիոն գրքային ֆոնդով։

Հայաստանի գրադարանային աշխատողները ղեկավարի գործ են կատարել գրքի պրոպագանդման ուղղությամբ։ Գրադարանները նպաստում են աշխատավորության հանրակրթական, քաղաքական, կուլտուրական և գիտատեխնիկական մակարդակը բարձրացնելու, գործնական օգնություն են ցույց տալիս աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործին։ Գրադարանները տարեկան սպասարկում էին ավելի քան կես միլիոն ընթերցողների, որոնց տրվել է մոտ 10 միլիոն գիրք։ Գրքային ֆոնդերը առավելագույն չափով օգտագործելու նպատակով կազմակերպվում

27 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրութ. կոլեգիայի 1959 թ. մայիսի 25-ի որոշումը։

էին շրջիկ գրադարաններ, գրքատարություն դեպի անասնապահական ֆերմաները, արդյունաբերական ձեռնարկությունները և այլն։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Թատերական ինքնագործունեությանը զարկ տալու նպատակով 1954 թ. հոկտեմբերին անցկացվեց հանրապետական ստուգատես։ Դրան մասնակցեցին գյուղական և քաղաքային 467 ինքնագործ խմբեր՝ 3800 կատարողներով։ Հանրապետության ստուգատեսին հանդես եկան 46-ը, որտեղ ընդգրկված էին 350 կատարողներ։ Ստուգատեսի ընթացքում գյուղական ակումբներում, կուլտուրայի տներում և այլ տեղերում կազմակերպվեցին 60 նոր խմբեր։

Թատերական ինքնագործ խմբերի ստուգատեսն առանձնապես հաջող անցկացվեց Երևանում, Լենինականում, Ազիզբեկովում, Ղուկասյանում, Շամշադինում և այլ շրջաններում։ Առաջին կարգի մրցանակը՝ 6000 ռ. տրվեց Ղուկասյանի շրջանային կուլտուրայի տան թատերական ինքնագործ խմբին։ Մրցանակներ ստացան նաև Ազիզբեկովի շրջանային կուլտուրայի տան և Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի խմբերը[28]։

Թատերական ինքնագործ խմբերի հանրապետական ստուգատեսն անցկացվեց նաև 1958 թվականի մարտի 15-ից մինչև հոկտեմբերի 30-ը, որը գեղարվեստական ինքնագործունեության հետագա զարգացման նոր խթան հանդիսացավ։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի 1961 թվականի հունվարյան պլենումի որոշումներով, վերանայվեց և հաստատվեց հանրապետության թատրոնների խաղացանկը, առաջնությունը տրվեց ժամանակակից թեմատիկային։ 1961 թվականի ապրիլից սկսվեցին մայրաքաղաքի թատրոնների հյուրախաղերը հանրապետության շրջաններում։ Երևանում, Լենինականում և Կիրովականում անցկացվեց «Ոսկե աշուն»։ Երևա-

28 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1954 թ. նոյեմբերի 17-ի որոշումը, արխիվ, ֆ. 1, գ. 87, թերթ 13։

նում, Լենինականում, Կիրովականում, Ստեփանավանում, Նոյեմբերյանում անցկացվեցին երգի տոներ, որոնք հանդիսացան կուլտուրական կարևոր միջոցառումներ։

Քաղաքի և գյուղի միջև կուլտուրական համագործակցությունն ուժեղացնելու գործում խոշոր նշանակություն ստացան շրջանային, քաղաքային հանրապետական և համամիութենական օլիմպիադաները և ֆեստիվալները։

1954 թվականին անցկացվեցին գեղարվեստական ինքնագործունեության քաղաքային և շրջանային օլիմպիադաներ, որոնք զգալի չափով բարձրացրին աշխատավորության հետաքրքրությունը դեպի ինքնագործ արվեստը, աչքի ընկան իրենց մասսայականությամբ և բազմազանությամբ։ Օլիմպիադայի ընթացքում կոլտնտեսություններում, սովխոզներում, ՄՏ-կայաններում, հիմնարկ-ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում կազմակերպվեցին 130 նոր ինքնագործ խմբեր։

Օլիմպիադային մասնակցեցին երգեցիկ, երգի-պարի, թատերական, խորեոգրաֆիկ խմբեր, ժողգործիքների անսամբլներ, փողային և լարային նվագախմբեր, ինչպես և բոլոր ժանրերի անհատ կատարողներ։ Ընդհանուր առմամբ օլիմպիադային մասնակցեցին 330 ինքնագործ խումբ, որոնցում ընդգրկված էին շուրջ 13.000 կատարողներ[29]։

Գեղարվեստական ինքնագործունեության քաղաքային և շրջանային օլիմպիադաներում աչքի ընկնող մասնակիցներին խրախուսելու նպատակով Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության պատվոգրով պարգևատրվեց 63 ինքնագործ խումբ և 95 անհատ կատարող։

Ինքնագործ խմբերին օգնելու նպատակով Երևանից շրջաններն ու գյուղերն ուղարկվեցին արվեստի մասնագետներ։ Այդ աշխատանքների կազմակերպմանը ակտիվ մասնակցություն ունեցան ՀԱՄԽ-ը, ՀԼԿԵՄ կենտկոմը, Հայարդխորհուրդը, լուսավորության մինիստրությունը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 35-ամյակին նվիրված գեղարվեստական ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործության հանրապետական օլիմպիադան նպաստեց գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։ Նախորդ տարիների համեմատությամբ օլիմպիադան աչքի ընկավ իր կազմակերպվածությամբ, մասսայական բնույթով, ընդգրկվեցին բազմաթիվ նոր կոլեկտիվներ ու մենակատարներ։ Օլիմպիադային մասնակցեցին բանվորներ, կոլտնտեսականներ, կոլտնտեսուհիներ, ուսանողներ և ինտելիգենցիայի բազմաթիվ ներկայացուցիչներ՝ թվով շուրջ 25 հազար մարդ։ Դրանցից մոտ 5500-ը ելույթ ունեցան Երևանում։ Օլիմպիադայի նախապատրաստման և անցկացման ընթացքում ստեղծվեցին գեղարվեստական ինքնագործունեության 140 նոր կոլեկտիվներ։ Մասնակիցների թվում էին Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի ակումբը, Կիրովականի շրջանի Լեռնապատ, Ֆիոլետովո, Լերմոնտովո գյուղերի ակումբները, Շամշադինի, Կրասնոսելսկի շրջանային կուլտուրայի տները, Երևանի հայէլեկտրագործարանը, Լենինականի № 1 և 2 կուլտուրայի տները, Շահումյանի շրջանի միջարտելային ակումբը և ուրիշ շատ գեղարվեստական ինքնագործ խմբեր։

Օլիմպիադան մեծապես նպաստեց գեղարվեստական ինքնագործունեության կոլեկտիվների գաղափարական ու գեղարվեստական աճին, նրանց խաղացանկի բարելավմանը և ինքնագործունեության լավագույն կոլեկտիվների ու մենակատարների հայտնաբերմանը։

Գեղարվեստական ինքնագործունեության որակական աճի բարձրացման լավագույն օրինակներ ցուցաբերեցին Լենինականի Սևյանի անվան կուլտուրայի պալատի, գուլպաարիկոտաժ ֆաբրիկայի, Ղափանի և Արտաշատի կուլտուրայի տների երգի-պարի անսամբլները, Երևանի և Լենինականի ուսուցչի տների քառաձայն երգեցիկ խմբերը, ինչպես նաև մի շարք մենակատարներ և այլ կոլեկտիվներ։

---

29 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 14, գ. 190, թ. 13։

Օլիմպիադիայի ընթացքում կազմակերպվեց նաև կերպարվեստի ու կիրառական արվեստի ինքնագործ ստեղծագործողների շուրջ 300 լավագույն գործերի ցուցահանդես, որին հանրապետության 400 ինքնուս վարպետներից մասնակցեցին 86 լավագույն քանդակագործներ, ստեղծագործողներ, գորգագործներ, փորագրողներ։

Ուշադրության արժանի էր Երևանի, Լենինականի, Կիրովականի, Նոյեմբերյանի, Աշտարակի, Ղափանի, Արտաշատի, Ղուկասյանի, Արթիկի, Շամշադինի, Կամոյի, Հոկտեմբերյանի, Սպիտակի, Անիի, Սևանի սովետական և արհմիութենական կազմակերպությունների, կուլտուրայի բաժինների թափած ջանքերը գեղարվեստական ինքնագործունեության օլիմպիադան կազմակերպելու և անցկացնելու գործում։ Օլիմպիադայում առանձին աչքի ընկած կոլեկտիվները, մենակատարները, նրանց ղեկավարներն ու կազմակերպիչները արժանացան պարգևների։ Այդ թվում՝ Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի երգեցիկ խումբը, Ղափանի շրջանի կուլտուրայի տան երգի-պարի անսամբլը, Արտաշատի, Ղուկասյանի, Հոկտեմբերյանի շրջանների անսամբլները, Թալինի շրջանի Աշնակ գյուղի և Ապարանի շրջանի Ալագյազի կուլտուրայի տների, Կիրովականի շրջանի Լեռնապատ և Ժդանով գյուղերի ակումբների պարի խմբերը[30]։

Ինչպես միշտ աչքի ընկավ նաև Եղեգնաձորի շրջանի Ելփին գյուղի երգի-պարի ինքնագործ խումբը, որը կազմված էր 60—70 կոլտնտեսականներից։ Խումբը ղեկավարում էր ուսուցիչ Հարությունյանը։ Խումբը աչքի ընկավ նրանով, որ կատարում էր բացառապես Դարալագյազի ժողովրդական շուրջպարերը։

Հանրապետության աշխատավորների պարծանքն է հանդիսանում Թալինի շրջանի Աշնակ գյուղի ակումբի պարի

30 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1955 թ. դեկտեմբերի 26-ի որոշումը, կուլտ. մինիստ. արխիվ, ֆ. 14, գ.160, թ. 6։

խումբը։ 1915 թվականին թուրքական բարբարոսների յաթաղանից ազատված սասունցիները բնակություն հաստատեցին Թալինի և Աշտարակի շրջաններում։ Սովետական իշխանության տարիներին տնտեսապես ամրապնդվեց և ուժեղացավ Աշնակի կոլտնտեսությունը, բարձրացավ սասունցիների կուլտուր-կրթական մակարդակը։ Աշխատավոր գյուղացիները զբաղվում են բարձր եկամտաբեր ծխախոտագործությամբ, այգեգործությամբ, հացահատիկի մշակությամբ, անասնապահությամբ։ Աշնակի ակումբը դարձավ գյուղի կուլտուրական կարևոր օջախներից մեկը։ Նրա սասունական պարերի խումբը մեկ անգամ չէ, որ մասնակցել է հանրապետական, համամիութենական և համաշխարհային ֆեստիվալներին ու շահել առաջնություն, արժանանալով ոսկե և արծաթե մեդալների։ Աշնակի պարի խմբի հաջողությունները պատահական չէին։ Այդ գործում կարևոր դեր էր կատարում գյուղի ակումբը (վարիչ Հմայակ Հովսեփյան) և նրա խորհուրդը։ Սկսած 1937 թվականից խումբը սիստեմատիկաբար մասնակցում է օլիմպիադաներին և միշտ արժանանում խրախուսանքի։

Շատ ջանքեր թափեց Աշնակի պարի խումբը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 20-ամյակին նվիրված օլիմպիադային մասնակցելու համար, շահեց առաջին տեղերից մեկը և արժանացավ հանրապետության մայրաքաղաքի արվեստասեր հանդիսատեսի սիրուն և հարգանքին։ Հենց այդ ժամանակից էլ Աշնակի պարի խումբը դարձավ բոլոր օլիմպիադաների մշտական մասնակիցը։

Հայրենական պատերազմ մեկնեցին Աշնակի պարի խմբի շատերը, այդ պատճառով էլ խումբը դադարեց գործելուց։ Պատերազմի հաջող ավարտից հետո խումբը վերականգնվեց կոլտնտեսական Գրիգոր Մադաթյանի ղեկավարությամբ։

Հայաստանը պատրաստվել էր նշելու սովետական կարգերի հաստատման 35-ամյակը։ Աշնակի խումբը նույնպես պատրաստվում էր դրան։ Կոլտնտեսական Գրիգոր Մադաթյանը որը արդեն ծերացել և հիվանդ էր, խմբի ղեկավարությունը հանձնեց սասունցիների տրադիցիաներին լավ ծանոթ, պա-

րի խմբի ակտիվ մասնակից, կոլտնտեսության ֆերմայի վարիչ Թովմաս Ղազարյանին։ Պարի խումբը 1955 թվականին օլիմպիադայում մեծ հաջողության հասավ։

Աշխարհը պատրաստվում էր 1957 թվականի երիտասարդության օլիմպիադային։ Դրան պատրաստվում էր նաև Հայաստանի երիտասարդությունը։ Պատրաստվում էր նաև Աշնակի սասունական պարերի խումբը, որի գեղարվեստական վարպետությունը է՛լ ավելի բարձրացնելու և ֆեստիվալի կոնկուրսին նախապատրաստելու նպատակով, ղեկավար նշանակվեց ժողովրդական պարարվեստի վարպետ, արվեստի վաստակավոր գործիչ Վահրամ Արիստակեսյանը։ Նա սկզբում խումբը համալրեց աղջիկներով, խմբի ծրագրում բացի տղամարդկանց պարերից, տեղ գտան աղջիկների և միացյալ պարերը, որը նոր թարմություն մտցրեց ծրագրում և ազատեց միօրինակությունից։

1957 թվականին մասնակցելով հանրապետական օլիմպիադային, խումբը շահեց առաջին տեղը, պարգևատրվեց ոսկե մեդալով և առաջադրվեց մասնակցելու համամիութենական ֆեստիվալին, իսկ ֆեստիվալի եզրափակիչ համերգում նրա ելույթը դիտողների հիշողության մեջ վառ կմնա երկար տարիներ[31]։

Աշնակցիների խումբը համամիութենական երիտասարդական ֆեստիվալում շահեց երկրորդ տեղը, ստանալով արծաթե մեդալ և առաջադրվեց համաշխարհային վեցերորդ ֆեստիվալի կոնկուրսի թեկնածու։ 1958 թվականի հուլիսին Մոսկվայի Միությունների տան Սյունաղարդ դահլիճում Աշնակի սասունական պարերի խումբը մրցման մեջ մտավ համաշխարհային 6-րդ ֆեստիվալի 83 երկրների ժողովրդական պարերի խմբերի հետ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում էր իր ժողովրդի պարարվեստը, պաշտպանում իր երկրի պատիվը։ Խումբը համաշխարհային 6-րդ ֆեստիվալում շահեց

31 Գրում է օլիմպիադիայի մասնակից ՀՍՍՀ արվեստի վաստ. գործիչ Մ. Քրիշչյանը։ Տե՛ս Աշնակի խմբի աշխատանքի փորձից, էջ 32, 1958։

երկրորդ տեղը, արժանացավ արծաթե մեդալի և դափնեկրի կոչմանը, բարձր պահելով Սովետական Միության և հայ ժողովրդի արվեստի պատիվը[32]։

Ֆեստիվալն աչքի ընկավ իր մասսայական բնույթով, բազմաթիվ ինքնագործ գեղարվեստական կոլեկտիվների ու մենակատարների ելույթներով։ Ֆեստիվալի ընթացքում կազմակերպվել էր երիտասարդ նկարիչների, քանդակագործների և կիրառական արվեստի վարպետների գործերի ցուցահանդես, որտեղ ներկայացված էին ավելի քան 500 գործ։ Այդ ցուցահանդեսները հաճախեցին ավելի քան 62 հազար մարդ։

Շրջանային և քաղաքային ֆեստիվալներում ելույթներ էին ունեցել ինքնագործունեության ավելի քան 1450 կոլեկտիվ, ուր ընդգրկվել էին շուրջ 35 հազար երիտասարդ։ Երևան քաղաքում ֆեստիվալին մասնակցեցին 31 երգեցիկ խումբ, 44 երգի-պարի անսամբլ, ժողովրդական գործիքների 15 անսամբլ, 15 պարի խմբակ, 14 էստրադային նվագախումբ, ինչպես նաև մենակատարներ՝ երգիչներ, նվագողներ, ասմունքողներ, պարողներ, մարզիկներ և այլն։

Համամիութենական ֆեստիվալին Հայաստանից մասնակցող կոլեկտիվները և մենակատարները արժանացան պատվավոր գնահատականների, նրանք ստացան 8 ոսկյա, 6 արծաթյա, 4 բրոնզյա մեդալներ և մեկ խրախուսագիր[33]։

Միջազգային երիտասարդական ֆեստիվալին Հայաստանի 13 նկարիչների 55 աշխատանք հավանության արժանացավ՝ միութենական ժյուրիի կողմից և նրանցից լավագույնները ներկայացվեցին Վիեննայի ցուցահանդեսին[34]։

1958 թվականի մայիսի 11-ից մինչև 26-ը Երևանում, Բաքվում և Թբիլիսիում տեղի ունեցավ «Անդրկովկասյան

32 Նույն տեղում, էջ 32։

33 Կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 14, գ. 258, թ. 6։

34 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1959 թ. մայիսի 11-ի որոշումը։

գարուն» սովետական երաժշտության առաջին ֆեստիվալը, որն անցավ մեծ հաջողությամբ։ Դա խոշոր իրադարձություն էր, ուր դրսևորվեց Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի եղբայրական ժողովուրդների բազմերանգ երաժշտական կուլտուրայի ծաղկումն ու բարգավաճումը։ «Երաժշտական գարունում» կատարվեցին եղբայրական հանրապետությունների կոմպոզիտորների օպերային, բալետային, սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններից լավագույն գործերը։

Ֆեստիվալի արդյունքների քննարկումը ցույց տվեց, որ Անդրկովկասի կոմպոզիտորները թարմություն և նորություն են մտցրել երաժշտական կուլտուրայի մեջ։ Նշվեց, որ օպերային և բալետային ստեղծագործությունների ասպարեզում կոմպոզիտորները հասել են լավ հաջողությունների (Ֆ. Ամիրով «Սևիլ», Ա. Բաբաև «Արծվաբերդ», Ա. Ռուկիայ «Անկոչ հյուրեր», Գ. Եղիազարյան «Սևան»). նշվեց նաև Անդրկովկասի կոմպոզիտորների նվաճումները սիմֆոնիկ և կամերային երաժշտության ասպարեզում։

Հանրագումարի բերելով համերգներից ստացված տպավորությունները, նշվեց, որ անդրկովկասյան կոմպոզիտորները ներկայումս կարող են լուծել արդիականության շատ թեմաներ, ստեղծել սովետական մարդկանց բազմակողմանի կյանքն արտացոլող գեղարվեստական վառ երկեր[35]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին նվիրված գեղարվեստական ինքնագործունեության ժողովրդական ստեղծագործության օլիմպիադան անցավ որպես կուլտուրայի մասսայական տոն և հանդիսացավ աշխատավորության և ժողովրդական տաղանդների աճի վառ վկայություն։ Օլիմպիադան անցկացվեց բոլոր քաղաքներում և շրջաններում, որին մասնակցեցին ավելի քան 2000 գեղարվեստական ինքնագործ խումբ՝ շուրջ 35 հազար մասնակիցներով։ Օլիմպիադան նպաստեց ինքնագործ արվեստի գաղափարա-գեղարվեստական մակարդակի հետագա զարգացմանը, գեղարվեստական ինքնագործ խմբերի կազմում բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի և ուսանողության մասսայաբար ընդգրկմանն ու աշխատավորության գեղարվեստական սպասարկման գործի բարելավմանը։

Օլիմպիադայի նախապատրաստման և անցկացման ընթացքում ստեղծվեց գեղարվեստական ինքնագործունեության 160 նոր կոլեկտիվ։

ՌԱԴԻՈՅԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՑԱՆՑԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղի կյանքում, վիթխարի դեր են կատարում ռադիոն և հեռուստատեսությունը։ Նրանց միջոցով ոչ միայն սերտ կապ է հաստատվում քաղաքի և գյուղի միջև, այլև գյուղը կապում է ամբողջ երկրի հետ։ Ռադիոն և հեռուստատեսությունը հանդիսանում են գյուղի բնակչության բազմակողմանի դաստիարակության մեծ դպրոց։ Հանրապետության կուլտուրայի մինիստրությունը միջոցառումներ մշակեց գյուղական ակումբների լրիվ ռադիոֆիկացման համար։ 1954 թվականի մայիսին ամբողջովին ավարտվեց գյուղական կուլտուր-լուսավորական հիմնարկների ռադիոֆիկացումը։ Ռադիոյի միջոցով կոլտնտեսականների համար, գյուղատնտեսական թեմաներով, կազմակերպվում է դասընթացների հաղորդումներ։ Գյուղական ակումբներին կից ստեղծվել են ռադիոսիրողների խմբակներ։ Ռադիոյի միջոցով գյուղատնտեսության առաջավորների փորձի և ագրոնոմիական գիտության նվաճումների պրոպագանդան կոլտնտեսային աշխատավորության մեջ ուժեղացնելու նպատակով, Կիրովականի, Արովյանի, Ղուկասյանի, Ստեփանավանի, Ղափանի, Կամոյի, Բասարգեչարի, Հրազդանի, Արթիկի, Թալինի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Արտաշատի, Իջևանի, Վեդու, Գորիսի և Շամշադինի շրջաններում 1955 թվականի հունվարի 1-ից ստեղծվեցին ռադիոհաղորդումների խմբագրություններ և հատկացվեցին համապատասխան աշխատողների հաստիք և դրամական միջոցներ։ Այժմ հանրապետության բոլոր

35 ՀՍՍՀ կուլտ. մին. արխիվ, ֆ. 1, գ. 322, թ. 13—14, 1958 թ. 27-ը մայիսի։

գյուղերը ռադիոֆիկացված են, իսկ շրջանների և գյուղերի մեծ մասը օգտվում է հեռուստատեսությունից։

Կուսակցության Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո որոշ չափով բարելավվել էր գյուղական բնակչության կինոսպասարկումը, սակայն բնակչության կինոսպասարկման գործում դեռևս կային լուրջ թերություններ։ Հաճախ անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում գեղարվեստական, դոկումենտալ և գիտա-հանրամատչելի լավագույն կինոֆիլմերի ցուցադրումը կազմակերպելու վրա։ Զգալի թերություններ կային կինոֆիլմերի ցուցադրման, հանդիսատեսների կուլտուրական սպասարկման բնագավառում։ Զափանի, Գորիսի, Բասարգեչարի, Վեդու, Սիսիանի, Ալավերդու և մյուս շրջանների առանձին գյուղական բնակավայրերում ամիսներով կինոֆիլմեր չէին ցուցադրվում։ Բասարգեչարի, Ախուրյանի, Աշտարակի, Ապարանի և այլ շրջանների շատ գյուղերում կինո-թատրոնների շենքերը գտնվում էին անմխիթար վիճակում։

Գյուղատնտեսության մինիստրության գյուղատնտեսական պրոպագանդայի և գիտության գլխավոր վարչությունը անբավարար էր զբաղվում գյուղատնտեսական ֆիլմերի ցուցադրումը կազմակերպելու հարցերով։ Կոլտնտեսությունների վարչությունները, գյուղական կուսակցական կազմակերպությունները թերագնահատում էին բնակչության կուլտուրլուսավորական մակարդակի բարձրացման և աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործում կինոյի կարևոր դերը։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն, 1955 թվականի մարտին, քննության առնելով գյուղական բնակչության մեջ կինոսպասարկման վիճակը, բացահայտեց մի շարք թերություններ։ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը, կուսակցության շրջկոմները և շրջսովետների գործկոմները, ելնելով ՀԿԿ Կենտկոմի որոշումից, միջոցառումների դիմեցին վերացնելու գյուղական կինոցանցի աշխատանքում տեղ գտած թերություններ։ Կենսագործելով Կենտկոմի որոշումը գյուղերի մեծ մասում, առնվազն ամիսը երկու անգամ, ցուցադրվում էին կինոնկարներ, ընդլայնվեց գյուղատնտեսական, գիտահանրամատչելի, խրոնիկալ, դոկումենտալ և ուսումնական ֆիլմերի ցուցադրումը։ Առաջնակարգ տեղ հատկացվեց կինոյի միջոցով ագրո-զոոտեխնիկական գիտության և առաջավոր փորձի պրոպագանդմանը։ Որոշ չափով լավացավ կինոֆիլմերի ցուցադրման որակը, գյուղի կինոմեխանիկների համար հաճախ շրջկենտրոններում գումարվում էին որակի բարձրացման սեմինարներ։ Գիտության նվաճումների, կոլտնտեսությունների և կոլտնտեսականների առաջավոր փորձը լայնորեն պրոպագանդելու նպատակով, 1953 թվականի դեկտեմբերի մեկից մինչև 1954 թվականի ապրիլի մեկը, կազմակերպվեց գյուղատնտեսական ֆիլմերի ֆեստիվալ և կոլտնտեսային լայն մասսաները ծանոթացան առաջավոր միչուրինյան ագրոբիոլոգիայի և գյուղատնտեսության առաջավորների փորձի հետ։

1955 թվականի ապրիլին Երևանում գումարվեց կինոցանցի, կինոպրոկատի և կուլտուրայի աշխատողների խորհրդակցություն, ուր քննարկվեց գյուղական բնակչության կինոսպասարկման վիճակի բարելավման հարցերը։ Սովետական ագրոբիոլոգիական գիտության նվաճումները և գյուղատնտեսության աշխատողների առաջավոր փորձը պրոպագանդելու գործում ակտիվ օժանդակություն ցույց տալու նպատակով, 1956 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի մեկը անցկացվեց գյուղատնտեսական կինոֆիլմերի նոր ֆեստիվալ։

Գյուղական բնակչության կինոսպասարկումը լավագույն կերպով կազմակերպելու, պետական առաջադրանքները բոլոր ցուցանիշներով ժամկետից շուտ կատարելու, նյութատեխնիկական միջոցառումների պահպանման ու խնամքի նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու համար, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության 1958 թվականի ապրիլի 7-ի հրամանով տարբեր շրջաններից մինիստրու-

թյան պատվոգրով պարգևատրվեցին 41 հոգի[36]։ 1958 թվականի ընթացքում կոլտնտեսություններում և սովխոզներում կազմակերպվել էր 3875 գյուղատնտեսական կինոսեանսներ[37]։

Տարեցտարի ընդարձակվում է կինոցանցը։ Եթե 1954 թվականին պետական կինոցանցը սպասարկել էր 7600 հազար հանդիսատեսի, ապա 1958 թվականին ավելի քան 12 միլիոն հանդիսատեսի։ Սկսած 1954 թվականից Հայաստանի կինոցանցը բոլոր ցուցանիշներով կատարում է պետական առաջադրանքները։ Բայց կինոցանցի աճի տեմպը չի ապահովում համատարած կինոֆիկացումը։ 1957 թվականի հունիսի դրությամբ 879 կոլտնտեսություններից և սովխոզներից միայն 340-ում կար ստացիոնար կինոկետ[38]։ Խիստ ցածր էր բնակչության հաճախումները։ Քաղաքում ամեն մի բնակիչ տարեկան կինո էր հաճախում 10—11 անգամ, իսկ գյուղում՝ 4 անգամ, որը խիստ ցածր էր միության միջինից։ Այդ տեսակետից դրությունն առանձնապես վատ էր Մարտունու, Բասարգեչարի, Աղիզբեկովի, Ալավերդու, Սևանի, Սպիտակի, Թալինի, Շահումյանի, Էջմիածնի և Կամոյի շրջաններում։

1958—1965 թվականներին զգալի աշխատանք կատարվեց գյուղական բնակչության կինոսպասարկման բարելավման ուղղությամբ։ Ստացիոնար կինոթատրոնների թիվը 1953 թվականի 286-ից 1965 թվականին հասավ 482-ի։ Ավելացավ հանդիսատեսների թիվը։ Եթե 1958 թվականին գյուղում հաշվում էր 3512 հազար հանդիսատես, ապա 1963 թվականին այդ թիվը հասավ 5651 հազարի։ Զգալիորեն բարելավվեց կինոցուցադրման որակը։ 1963 թվականին կոլտնտեսություններում և սովխոզներում տրվեց գյուղատնտեսա-

36 Հայկական ՍՍՀ կուլտ. մինիստր. արխիվ, ֆ. 1, գ. 310, թերթ. 39—41։

37 Հայկական ՍՍՀ կուլտ. մինիստր. կոլեգիայի 1959 թ. փետրվարի 6-ի որոշումը։

38 Հայկական ՍՍՀ կուլտ. մինիստր. կոլեգիայի 1959 թ. հունիսի 15-ի որոշումը։

կան ֆիլմերի 8300 սեանս, որը դիտել են 912 հազար հանդիսատես։

Չնայած դրան, կինոսպասարկման մակարդակը դեռևս ետ է մնում գյուղական բնակչության աճող պահանջներից։ Հայաստանի գյուղական բնակչության կինոսպասարկումը բարելավելու նպատակով բարձրացվեց գյուղական կինոցանցում ֆիլմերի շրջանառությունը, լրացվեց մնայուն կրկնվող ֆիլմերով։

Երևանի կինոստուդիան, սկսած 1951 թվականից զգալի աշխատանք է կատարել սովետական ֆիլմերը հայերեն լեզվով թարգմանելու գործում։ Կրկնօրինակվեց 105 մասսայական ֆիլմ, 1952 թ.՝ 43 անուն, որից 14-ը գեղարվեստական լիարժեք ֆիլմեր, 1953 թ.՝ 36 անուն—152 մաս կինոֆիլմ, որից 10-ը գեղարվեստական։ Այդ ժամանակամիջոցում կրկնօրինակված էր 14 անուն՝ 36 մաս գյուղատնտեսական ֆիլմեր[39]։ Հետագա տարիներին կինոֆիլմերի կրկնօրինակումը ավելի մեծ չափեր ընդունեց։ 1961 թվականին Հայկական ՍՍՀ 167 գյուղերում, կինոֆիլմերի ցուցադրման տեղերում, կառուցվեցին պարզ տիպի կինոապարատուրային շենքեր։

Համաձայն ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1962 թվականի մարտի 15-ի որոշման Հայաստանում ընդլայնվեց գյուղատնտեսական թեմաներով գիտահանրամատչելի խրոնիկալ-դոկումենտալ և ուսումնական ֆիլմերի ցուցադրումը։ Դրանց ցուցադրումը կոլտնտեսություններում ու սովխոզներում կատարվում էր անվճար։

Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը 1962—1963 թվականների ընթացքում բոլոր գյուղական ստացիոնար կետերում տեղադրել տվեց երկպոստ կինոապարատներ։ Ստեփանավանի, Վեդու, Կամոյի, Կալինինոյի, Սևանի, Արտաշատի, Հոկտեմբերյանի, Իջևանի շրջաններում անցկացվեց համատարած կինոֆիկացում։ Նոր կինոթատրոններ կազմակերպվեցին Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Էջմիածնում, Կամոյում, Գորիսում, Աղիզբեկովում,

39 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրութ. արխիվ, ֆ. 1, գ. 34, թ. 5։

Մեղրիում, Սիսիանում, Մարտունիում, Հոկտեմբերյանում։ Լայնէկրան կինոթատրոններ կազմակերպվեցին Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Հրազդանում, Արտաշատում, Հոկտեմբերյանում, Արթիկում, Դիլիջանում, Ղափանում, Սպիտակում և Թալինում։

ՄԱՄՈՒԼԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, թերթը ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ ու կոլեկտիվ ագիտատոր է, այլ նաև կոլեկտիվ կազմակերպիչ։ Սոցիալիստական շինարարության անցած ժամանակաշրջանում, մամուլը պատվով է կատարել իր դերը։ Հանրապետական «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Սովետ Էրմանիստանի», «Ավանգարդ» թերթերը, «Լենինյան ուղիով», «Հայաստանի գյուղատնտեսություն», «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրերը, շրջանային մամուլը և մյուս թերթերն ու ամսագրերը հետպատերազմյան ժամանակաշրջանում կուսակցության ղեկավարությամբ մոբիլիզացրին աշխատավորության ուժերը՝ կատարելու ժողովրդական տնտեսության զարգացման հոյակապ ծրագրերը, կոմունիստական շինարարության վիթխարի խնդիրները։ Առանձնապես գնահատելի է մամուլի աշխատանքը հանուն ժողովրդական տնտեսության զարգացման առաջադրանքների կատարման, համաժողովրդական սոցիալիստական մրցության ծավալման, քաղաքի և գյուղի առաջավոր մարդկանց փորձի մասսայականացման, տարածման ուղղությամբ։

Ղեկավարվելով կուսակցության համագումարների որոշումներով, կուսակցության Կենտկոմի և սովետական կառավարության ցուցումներով, ինչպես և ՀԿԿ համագումարների, Կենտկոմի, կառավարության որոշումներով, մամուլը անցած տարիներին հետևողականորեն պայքարում էր արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի, արվեստի ու գրականության նոր վերելքի, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, երկրի պաշտպանողականության ամրապնդման համար։ Մամուլը իր էջերում բազմակողմանիորեն լուսաբանում է սովետական ժողովրդի ստեղծագործական

կյանքը, փառաբանում արդյունաբերության ու գյուղատնտեսության աշխատանքային հերոսներին, ցույց տալիս սովետական ինտելիգենցիայի ստեղծագործական աշխատանքը։

Թերթերը, ամսագրերը, հանդեսները, ռադիոն պրոպագանդում են մարքս-լենինյան գաղափարախոսությունը, հետևողականորեն մերկացնում են բուրժուական, նացիոնալիստական գաղափարախոսությունը, սովետական ժողովրդին դաստիարակում պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սովետական հայրենասիրության ոգով։

Մամուլը առաջնակարգ տեղ է հատկացնում կուսակցական շինարարությանը, պայքարում է կուսակցության սկզբունքներն անշեղորեն կենսագործելու համար, ծավալում սկզբունքային քննադատություն, համախմբում աշխատավորությանը կոմունիստական կուսակցության շուրջը։

Տարեցտարի աճում են ոչ միայն թերթերի ու ամսագրերի անունները, այլև նրանց տպաքանակը։ 1954 թվականին լույս էին տեսնում 79 անուն թերթ և ամսագիր, 1965 թվականին դրանց թիվը հասավ 92-ի։

Հայաստանի բոլոր շրջաններն ունեն իրենց տպագիր թերթերը։ Բազմատիրաժ թերթեր են հրատարակում նաև խոշոր նոր ձեռնարկությունները, գործարանները և ուսումնական հաստատությունները։

Մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում առանձնակի տեղ են գրավում կոլտնտեսային բազմատիրաժ թերթերը։ Դրանցից առաջինը լույս տեսավ Կոտայքի (այժմ Աբովյան) շրջանի Հրազդան գյուղում 1957 թվականի հունվարին։ Թերթը հրատարակվեց գյուղի անունով՝ «Հրազդան»։ Այնուհետև սկսեց լույս տեսնել Ախուրյանի շրջանի Ապատան, Հրազդանի շրջանի Ալափարս, Արտաշատի շրջանի Այգեզարդ, Հրազդանի շրջանի Աթարբեկյան, Ալավերդու շրջանի Շնող, Վեդու շրջանի Արարատ, Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր և Նալբանդյան, Կամոյի շրջանի Հացառատ և Նորադուզ և մյուս շրջանների այլ գյուղերում։ 1961 թվականին

հանրապետության 27 գյուղերում լույս էին տեսնում կոլտնտեսային բազմատիրաժ թերթեր։ Այդ թերթերի էջերում լուսաբանվում էին տվյալ կոլտնտեսության էկոնոմիկայի, աշխատանքի կազմակերպման, գյուղի կուլտուրական շինարարության հարցերը, պրոպագանդում առաջավորների փորձը, ծավալում քննադատություն հանրային աշխատանքները լքողների դեմ և այլն։ Կոլտնտեսային բազմատիրաժ թերթերի լույս ընծայումը ուշագրավ երևույթ է սովետահայ պարբերական մամուլի պատմության մեջ[40]։ Ցավոք պետք է նշել, որ այդ թերթերից շատերը դադարեցին գործելուց։ Ժամանակն է, որպեսզի կրկին բարձրացվի այդ հարցը և նոր թափով ծավալվի կոլտնտեսային բազմատիրաժ թերթերի հրատարակումը։

Այսպիսով, քաղաքի և գյուղի, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում խոշոր դեր է կատարել և շարունակում է կատարել մամուլը։ Նրա միջոցով ամեն օր, մատչելի ձևով գյուղ են փոխադրվում քաղաքի կուլտուրական նվաճումները և դրանք դառնում են կոլտնտեսական լայն խավերի սեփականություն։ Մամուլը իր շուրջն է համախմբում բանգյուղթղթակիցների հսկա բանակը, որն արտահայտում է այդ երկու համերաշխ դասակարգերի շահերը, կյանքը, աշխատանքը և ձգտումները։ Այս տարիներին անընդհատ աճել են բանգյուղթղթակիցների շարքերը։ Դա սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործում բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և ինտելիգենցիայի ակտիվության արտահայտությունն է։ 1956 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը Երևանում տեղի ունեցավ բանգյուղթղթակիցների հանրապետական համագումարը։ Մինչ այդ տեղերում կայացան բանգյուղթղթակիցների, մամուլի և ռադիոյի աշխատողների ժողովներ ու կոնֆերանսներ, որոնց աշխատանքներին

40 Վ. Ամիրբեկյան, Կոլտնտեսային բազմատիրաժ թերթերը, Հայպետհրատ, 1961։

մասնակցեցին ավելի քան երեսուն հազար բանվորներ, կոլտնտեսականներ և ինտելիգենցիայի ներկայացուցիչներ[41]։ Համագումարն արձանագրեց մամուլի և ռադիոյի բեղմնավոր գործունեությունը աշխատավորությանը կոմունիստական ոգով դաստիարակելու, սոցիալիստական շինարարության խնդիրները հաջողությամբ լուծելու գործում։

Մամուլի աշխատողների համագումարից հետո ավելի ծավալվեց բանգյուղթղթակիցների շարժումը, այն համալրվեց բանվորներով, կոլտնտեսականներով, արդյունաբերության և գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի նոր ներկայացուցիչներով։ Մամուլը սկսեց ավելի խորը պրոպագանդել կուսակցության 20,21, 22-րդ համագումարների որոշումների կատարման և սոցիալիստական մրցության ընթացքը, ինչպես նաև ժողովուրդների բարեկամությունը և այլն։ Բարելավվեց շրջանային թերթերի գործունեությունը։

Բանգյուղթղթակիցներին օգնելու նպատակով՝ «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունը հրատարակում էր «Բանգյուղթղթակցի թերթիկ», Պետհրատը հրատարակեց հինգ բրոշյուր «Մամուլի աշխատողի գրադարան» մատենաշարով։ Ընթերցողների և ռադիոլսողների առաջ խմբագրությունները ավելի հաճախ էին հանդես գալիս հաշվետվությամբ, «Սովետական Հայաստան» և «Կոմունիստ» թերթերի խմբագրություններում ստեղծվեցին բանգյուղթղթակցի առանձնասենյակներ, որտեղ ելույթներ էին ունենում փորձված լրագրողներ, արվեստի և գրականության, գիտության և տեխնիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության մարդիկ։

ՍՄԿԿ Կենտկոմի 1960 թվականի հունվարի 9-ի «Արդի պայմաններում կուսակցական պրոպագանդայի խնդիրների մասին» որոշումը կարևոր խնդիր դրեց կուսակցական կազմակերպությունների առջև։ Կենտկոմի որոշումը պարտավո-

41 Հայկական ՍՍՀ Կենտկոմի 1957 թ. հունվարի 29-ի № 74 որոշումը (ՄԼի հայկական ֆիլիալի արխիվ)։

լրեցնում էր քաղաքական աշխատանքը սերտորեն կապել գործնականի, արտադրության խնդիրների հետ։ Կենտկոմը պահանջում էր նոր ձևերով և մեթոդներով, հարուստ բովանդակությամբ մասսայական միջոցառումներ կազմակերպել և կոլտնտեսային ու սովխոզային աշխատավորության մեջ արթնացնել ամենապայծառ խոհեր ու զգացմունքներ, օգնել նրանց յոթնամյակի երկրորդ տարվա տնտեսական խնդիրները հաջողությամբ կատարելու գործում։ Ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի որոշումից, նոր ձևեր ու մեթոդներ մտցվեցին ագիտացիոն պրոպագանդիստական աշխատանքներում։ Գործի դրվեցին «Խոսող թերթերը», «Հերոսների գրքերը», «Յոթնամյակի առաջավորների պատկերասրահները», «Կոլտնտեսային տարեգրությունները» և այլն, որոնք աշխատավորության մեջ առաջացրին մեծ հետաքրքրություն և աշխուժություն։ Յուրաքանչյուր ակումբ դարձավ իր գյուղի, ավանի, ձեռնարկության պատմության օջախը։ Ակումբներում ավելացան այցելուների թիվը, ակումբի ակտիվիստների մեջ աճեց հետաքրքրությունը դեպի իրենց աշխատանքը։

Կուսակցական լուսավորության տները, ակումբները սկսեցին ներկայացնել մեր հարուստ առօրյան, հերոսական իրադարձություններով լի կյանքը, սովետական մարդկանց խիզախումներն ու ստեղծագործական ակտիվությունը։ Կյանքի մեջ մտավ արժանավոր, լավագույն աշխատողի, բանվորի և կոլտնտեսականի պատվին մեծարման երեկոների կազմակերպումը։

Մասսաների կոմունիստական դաստիարակության գործում կարևոր դեր էին խաղում «Օգտակար խորհուրդների» երեկոները, ուր անց էին կացվում զրույցներ՝ բարեկիրթ ձևերի վերաբերյալ, ցույց էր տրվում, թե ինչպես կարելի է գեղեցիկ և ճաշակով հագնվել, ինչպես տոնական սեղան պատրաստել, թե ինչ նշանակություն ունի երաժշտությունը մարդու դաստիարակության գործում և այլն։ Կազմակերպում էին «Մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի» ցուցահանդեսներ։

Այդ երեկոների և ցուցահանդեսների կազմակերպմանը մասնակցում էին կուսակցական լայն ակտիվը, արտադրության առաջավորները, գեղարվեստական ինքնագործունեության խմբերը և այլն։ Նման երեկոներին դասախոսություններով, զրույցներով կամ կոնսուլտացիաներով հանդես էին գալիս բժիշկներ, ուսուցիչներ, դերձակներ, հացթուխներ, խոհարարներ և այլն։ Ելույթներ էին ունենում ինքնագործ խմբերը, կազմակերպվում էր գրքի ցուցահանդեսներ, պարեր, հնարամիտ խաղեր։

Կոլտնտեսությունների ու սովխոզների ակումբներում լույս էին ընծայվում մարտական թերթիկներ «Հաշվի առեք յուրաքանչյուր բոպեն» վերնագրով, ուր մասսայականացվում էին աշխատաժամը անարտադրողաբար վատնելու դեմ մղվող պայքարի փորձը, խստորեն քննադատում էին այն պորտաբույծներին, որոնց հանցանքով կորչում էին բոպեները և ժամերը։ Աշխատավորությանը սովետական հայրենասիրության բարձր զգացմունքով դաստիարակելու համար կազմակերպվում էին զոհված համագյուղացի ռազմիկների հիշատակին նվիրված երեկոներ։ Դրանց մասնակից էին դարձնում գյուղի ամբողջ բնակչությանը։ Երեկոյի կազմակերպիչները այցելում էին զոհված ճակատայինների հարազատներին։ Ներկայացվում էին զոհվածների նամակները, լուսանկարները, անձնական իրերը, թերթերից վերցրած նյութեր, պատերազմական տարիների թռուցիկներ, շնորհագրեր, անհատական պարգևներ, նկարներ և այլն։ Հերոսների մասին զեկուցումից հետո, երեկոյի մասնակիցները հանդես էին գալիս հիշողություններով և կոչ էին անում ակտիվորեն պայքարել հանուն խաղաղության, ընդդեմ պատերազմի։ Երեկոյին հանդես էին գալիս պիոներներ, այնուհետև ինքնագործունեության խմբեր, որոնք կատարում էին մեծ մասամբ զոհված ճակատայինների սիրած երգերը։ Նման երեկոների կազմակերպման աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էր գյուղի կոմերիտական կազմակերպությունը։

17—243

Գյուղական կուսակցական կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվեցին յոթնամյակի առաջավորների պատկերասրահներ, դրանց արժանանում էին այն մարդիկ, որոնք պատվով էին կատարում գյուղատնտեսության առաջադրանքները։

«Յոթնամյակի առաջավորների պատկերասրահները», որ սկսեցին կազմակերպվել 1960 թվականից, լուսաբանում էին յոթնամյակի առաջին տարվա արդյունքներն ըստ բնագավառների (դաշտավարության, այգեգործության, անասնապահության և այլն)։ Ցուցադրվում են նյութեր նաև գյուղի բարեկարգման, գյուղի կուլտուրայի ու կենցաղի մասին։ Պատկերասրահում հատուկ տեղ էին գրավում գյուղատնտեսության մեքենայացման առաջավորները։ Մի քանի ակումբներում լույս էին ընծայվում «Օրվա նորություններ» վերնագրով խոսող թերթը։ Այդ թերթը պատրաստելու համար ձեռք էին բերում մագնիտաֆոն և ժապավենի վրա ձայնագրում թերթի բովանդակությունը։ Թերթը պատմում էր կոլտնտեսության առօրյայի, արտադրության առաջավորների նոր ձևերի ու մեթոդների մասին։ Խոսող թերթը խարազանում էր նաև թերությունները։

Կուսակցական-լուսավորության տներում և ակումբներում կազմակերպում էին մեր բազմաբովանդակ կյանքն արտահայտող զեկուցումներ, զրույցներ, կոնսուլտացիաներ և այլն, որոնք բարձրացնում էին հատկապես գյուղական բնակչության քաղաքական, մտավոր ու կուլտուրական մակարդակը։

Ակումբներում կազմակերպում էին երեկոներ և բանավոր ամսագրեր նաև հետևյալ թեմաներով. «Աշխատանքը մեր օրերում փառքի և պատվի գործ է», «Բարեխիղճ հանրօգուտ աշխատանքի մեջ է կյանքի իմաստը», «Կոմունիզմը կգա միլիոնների անձնվեր աշխատանքով», «Առանց աշխատանքի մարդու գոյությունն անիմաստ է» և այլն։

ՍՄԿԿ 22-րդ համագումարը նշեց, որ «Ներկայումս գաղափարական աշխատանքում գլխավորը ՍՄԿԿ ծրագրի խոր պարզաբանումն է. սովետական հասարակության աշխատավորներին կոմունիզմի հաղթանակի համար՝ պայքարի մեծ պլանով զինելը, բոլոր աշխատավորների մոբիլիզացումը նոր ծրագրի կենսագործման համար։ Այդ խնդրի իրականացմանը պետք է ենթարկել մասսաների վրա կուսակցության գաղափարական ներգործության բոլոր միջոցները՝ պրոպագանդան, ագիտացիան, մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն, կուլտուր-լուսավորական աշխատանքը, գրականությունը և արվեստը»[42]։

Կուսակցության նոր ծրագրում մարմնավորված են մեր երկրի աշխատավորության իղձերն ու հույսերը։

Մեր հանրապետության կուսակցական կազմակերպությունները լայն մասսայական բացատրական աշխատանք ծավալեցին համագումարի որոշումների շուրջը, նրանք բացատրում էին այն մեծ դերը, որ ունի սովետական յուրաքանչյուր քաղաքացի կոմունիզմի կառուցման խնդիրները իրականացնելու գործում։ Համագումարի որոշումներն աշխատավորության մեջ պրոպագանդելու համար բացառիկ դեր կատարեց մամուլը։ Կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեները կազմակերպեցին դասախոսություններ համագումարի որոշումների և կուսակցության ծրագրի մասին։ Համագումարի որոշումների և կուսակցության ծրագրի պրոպագանդման գործում ներգրավվեցին ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները։ Համագումարին նվիրված զրույցներում, դասախոսություններում, թեմատիկ երեկոներում, ագիտբրիգադների ելույթներում առաջ էին քաշվում տվյալ գործարանի, ֆաբրիկայի, կոլտնտեսության, սովխոզի առաջ դրված խնդիրները։ Այս ամենը թևավորում, մոբիլիզացնում էին աշխատավորության ուժերը և նրանց մղում նոր սխրագոր-

42 ՍՄԿԿ 22-րդ համագումարի նյութերը, էջ 418։

ծությունների։ Մեր կուսակցության 22-րդ համագումարի որոշումների շուրջը լայն ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք ծավալվեց կոլտնտեսային գյուղում։ Ակումբներում ու կուլտուրայի տներում կազմակերպվեցին ցուցահանդեսներ, նվիրված ՍՍՀՄ արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի զարգացման առաջիկա քսան տարվա հեռանկարներին։ Ցուցահանդեսներում բազմաթիվ նյութեր կային նաև նվիրված Հայաստանի 1961—1980 թվականների զարգացման հեռանկարներին։

ՍՄԿԿ 20—22-րդ համագումարներից հետո զգալիորեն բարելավվեց հասարակական հիմունքներով գործող կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքը։ Կուլտուրայի տներում, ակումբներում, գրադարաններում, վարչություններում և խորհուրդներում ընդգրկվեցին հասարակական հիմունքներով աշխատելու մեծ թվով բանիմաց մարդիկ, մասավորականների լավագույն ներկայացուցիչներ, որոնք դարձան գրքի հասարակական պրոպագանդիստներ, կուլտուրայի համալսարանների կազմակերպիչներ, դասախոսներ, գեղարվեստական ինքնագործունեության խմբակների և կոլեկտիվների ղեկավարներ։

1961 թվականին Երևանի շրջանային սովետների գործադիր կոմիտեներին կից արդեն ստեղծվել էին հասարակական հիմունքներով կուլտուրայի բաժիններ[43]։ Այդ օրինակը շուտով փոխադրվեց գյուղական շրջանները։

Այդ աշխատանքներն ավելի մեծ ծավալ ստացան ՍՄԿԿ 22-րդ համագումարից հետո։ Հասարակական հիմունքներով կուլտուրայի բաժիններ ստեղծվեցին Ստեփանավանի, Ալավերդու, Սպիտակի, Իջևանի, Սևանի, Կամոյի, Հրազդանի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Արտաշատի, Գորիսի, Ղափանի շրջաններում։ Շատ դաշտավարական բրիգադներում, անասնապահական ֆերմաներում ստեղծվեցին հասարակական հիմունքներով գրադարաններ, կարմիր անկյուններ և այլն։

43 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1961 թ. հունվարի 23-ի որոշումը։

ՍՄԿԿ 22-րդ համագումարի որոշումները և նյութերը գյուղական աշխատավորության մեջ լավագույն ձևով պրոպագանդելու նպատակով Երևանից շրջաններն ուղարկվեցին 9 բրիգադ, որոնք տեղերում մեթոդական և գործնական օգնություն ցույց տվեցին։ Համագումարի որոշումները աշխատավորության սեփականությունը դարձնելու նպատակով, բոլոր ակումբներում, կուլտուրայի տներում, գրադարաններում և թանգարաններում կազմակերպվեցին դասախոսություններ, զեկուցումներ, թեմատիկ և հարց ու պատասխանի երեկոներ, ցուցահանդեսներ, ցուցափեղկեր և շատ ուրիշ հետաքրքիր միջոցառումներ։ Բացի այդ կազմակերպվեցին հանդիպումներ ՍՄԿԿ 22-րդ համագումարի պատգամավորների, արդյունաբերության, գյուղատնտեսության առաջավորների և կուլտուրայի անվանի գործիչների հետ։ Շատ ակումբներում կազմակերպվեցին համագումարի նյութերն ուսումնասիրող խմբակներ։

Կուլտուր-լուսավորական հիմնարկներից շատերը վերակառուցեցին իրենց աշխատանքը։ Իջևանի շրջանի կուլտուրայի տունը կազմակերպեց «Երջանիկ մանկություն», «Երիտասարդ մայրերը», «Ժողովուրդների բարեկամություն» երեկոներ։ Այդ երեկոներից մի քանիսին մասնակցում էին նաև եղբայրական Վրաստանից ու Ադրբեջանից հրավիրված հյուրերը, Ռուսաստանից հրավիրված էին Հայրենական պատերազմի ակտիվ մասնակից ռուս սպաները և այլն։

Կուլտուրայի համալսարանների ուսումնական պալատներում մտցվեց ՍՄԿԿ 22-րդ համագումարի նյութերի ուսումնասիրումը։

Թանգարաններում ավելացան ինտերնացիոնալիզմի, հայրենասիրության, կոմունիստական բարոյականության վերաբերյալ ցուցանմուշները։ Հայաստանի պատմության թանգարանը կազմակերպեց հինգ շրջիկ ցուցահանդես, որոնք եղան շրջկենտրոններում և արդյունաբերական վայրերում։

Համագումարի որոշումների պրոպագանդմանը նվիրված նյութեր ցուցադրվեցին Երևան քաղաքի պատմության, Կամոյի, Լենինականի, Գորիսի գավառագիտական թանգարաններում[44]։

Պայքարի հարուստ ավանդներ ունի Արթիկի շրջանի Փանիկ գյուղը։ Լենինականցիների հետ միասին փանիկցիները 1920 թվականի մայիսին բարձրացրեցին ապստամբության դրոշը՝ տապալելու դաշնակցականների արյունոտ տիրապետությունը և սովետական կարգեր հաստատելու Հայաստանում։ Սովետական իշխանության տարիներին նախկին Քյավթառլուն՝ ներկայիս Փանիկը դարձել է մեր հանրապետության գեղեցիկ և բարեկարգ գյուղերից մեկը՝ տուֆակերտ շենքերով, միջնակարգ դպրոցով, հիվանդանոցով, կապի բաժանմունքով, կուլտուրայի օջախներով։ Էլեկտրաէներգիան, ռադիոն, հեռուստատեսությունը, թերթն ու գիրքը հաստատուն մուտք են գործել փանիկցիների կենցաղը։ Այդ ամենը ձեռք է բերվել հերոսական աշխատանքի շնորհիվ։ Բայց անգամ 1962 թվականին Փանիկում կային մարդիկ, որոնք հանրօգուտ աշխատանք չէին կատարում ու խանգարում էին ազնիվ աշխատանք կատարողներին։ Անհրաժեշտ էր անբանների, ձրիակերների դեմ վճռական պայքար կազմակերպել։ Կուսակցական կազմակերպության ջանքերով այդ գործում ներգրավվեցին դպրոցի ուսուցիչները, հանրակական դրուժիններիկները, գյուղի մեխանիզատորները և ուրիշ ակտիվ կոմերիտականներ։ Միատեղ մշակվեց անցկացվելիք զրույցների ծրագիր։ Որոշվեց պարբերաբար հրավիրել թեմատիկ հավաքներեկոներ, նվիրված կուսակցության 22-րդ համագումարի որոշումներին։

Առաջին հավաքը անվանվեց «Ձրիակերը տեղ չունի մեր երկրում»։ Մեծ պաստառների վրա գրված այս հայտարարությունը հետաքրքրեց շատերին։ Մինչև այդ գյուղի «Նոր ուղի»

44 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1963 թ. հունվարի 19-ի որոշումը (մին. ընթաց. արխիվ)։

պատի թերթում ձրիակերների դեմ լույս տեսան մի շարք հոդվածներ, որոնցից մեկում ուղղակի ասվում էր. «Ձրիակերները մեր հիանալի պարտեզի մոլախոտերն են»։ Երեկոն կազմակերպված անցկացնելու համար մոբիլիզացրին կոմերիտականներին, որոնք հրավիրեցին ոչ միայն առաջավոր կոլտնտեսականներին, այլ նաև անբաններին, ձրիակերներին։ Առաջավոր կոլտնտեսականներից բացի, հավաքում ելույթ ունեցան նաև աշխատանքը լքողներից շատերը, որոնք ինքնաքննադատությամբ ընդունելով իրենց թույլ տված սխալները, խնդրեցին նորից ընդգրկել կոլտնտեսային աշխատանքում։

Գյուղի աշխատավորության բազմակողմանի դաստիարակության գործում կարևոր դեր կատարեց «Ամեն մի լավ բան ստեղծվում է աշխատանքով» ցուցահանդեսը։

Մեծ պաստառների վրա գրված էին կուսակցության ծրագրից բերված «Աշխատանքով է ստեղծվում այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդկանց ապրելու և զարգանալու համար» տողերը։ Այնուհետև փակցված էին կոլտնտեսության առաջավորների լուսանկարները, թերթերից և ամսագրերից նյութեր, որոնք վկայում էին սովետական մարդկանց ստեղծագործական եռանդի, գյուղում տարվող կուլտուրական աշխատանքի մասին և այլն։

1961 թվականին, մեր հանրապետությունում կային շրջանային ու գյուղական կուլտուրայի տներ՝ 88, արհմիութենական կուլտուրայի պալատներ և քաղաքային ակումբներ՝ 45, գյուղական, կոլտնտեսային և այլ գերատեսչական ակումբներ՝ 974։ Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում ու մի շարք ավաններում ու շրջկենտրոններում գործում էին 19 կուլտուրայի և հանգստի զբոսայգիներ և 23 զանազան տիպի թանգարաններ, գործում էին տարբեր տիպի 2653 գրադարաններ, որոնց գրքային ֆոնդը հասնում էր 17 միլիոն օրինակի, ստացիոնար և շրջիկ կինոսարքերի և կինոթատրոնների թիվը հասնում էր 662-ի, ռադիոընդունիչներինը և ռադիոկետերինը՝ 287.500-ի, հեռուստացույցները՝ 38 հազարի։

Եղբայրական հանրապետությունների աշխատավորության կուլտուրական սպասարկման առաջավոր փորձը ուսումնասիրելու նպատակով 1964 թվականին կազմակերպվեցին Հայաստանի գրադարանային, ակումբային հիմնարկների, թանգարանների լավագույն աշխատողների և ինքնագործ խմբերի փոխայցելությունները միութենական տարբեր քաղաքներ։ Հայաստանից նման խմբեր մեկնեցին Մերձբալթյան հանրապետություններ, Ուկրաինա, Լենինգրադի մարզ, Սևաստոպոլ, Բաթումի, Ազով քաղաքները։

Զգալիորեն բարելավվեց գրադարանների գործունեությունը, նրանց աշխատողների կազմը։ Գրադարանները դարձան քաղաքական, հանրակրթական, գիտա-տեխնիկական, գյուղատնտեսական և պրոֆեսիոնալ գիտելիքների մասսայական պրոպագանդայի իսկական օջախներ՝ կուսակցական կազմակերպությունների հենակետային բազաները աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործում։

Բարձրացավ գրադարանային աշխատողների մակարդակը, գրադարանային աշխատանքում արմատավորվեց ընթերցողների սպասարկման նոր մեթոդը՝ ընթերցողների ազատ մուտքը դեպի գրքային ֆոնդերը։ Լավ սովորություն դարձավ նաև այն, որ ամեն տարի գրադարանային աշխատողները հաշվետվություններ էին տալիս ընթերցողներին գրադարանի աշխատանքի մասին, աշխուժացվեց գրադարանային խորհուրդների գործունեությունը։ Կուլտուրայի մինիստրությունում ստեղծվեց գրադարանային առանձին բաժին, որը ղեկավարում է գրադարանային ցանցը և վերահսկում բոլոր գերատեսչությունների գրադարանները և կոորդինացնում նրանց աշխատանքը։

Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանը ուժեղացրեց գործնական և մեթոդական օգնությունը բոլոր գրադարանների նկատմամբ, մասսայականացնում էր առաջավոր գրադարանների փորձը, ընթերցողների տարբեր խավերի համար հրատարակում գրականության

հանձնարարական ցանկեր և մատենագրական ձեռնարկներ։ Ստեղծվեց գրքի փոխանակման հանրապետական կենտրոն, որի բազայի վրա ընդլայնվեցին կապերն ինչպես միության սահմաններում, այնպես էլ միջազգային մասշտաբով։

1961 թվականից նոր հրատարակվող գրքերը գրադարաններին տրվում է դասակարգման ինդեքսով և հրատարակչական ծանոթագրություններով, որով հեշտացվում է գրքի ընտրության գործը։

Կենսագործելով հասարակական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում հասարակության լայն մասնակցությունը ապահովելու մասին ՍՄԿԿ 22-րդ համագումարի որոշումները, Հայաստանի գրադարանային հիմնարկները, կուսակցական, սովետական և կոմերիտական կազմակերպությունների հետ համատեղ, մեծ աշխատանք են կատարում հասարակական կարգով բնակչությանը գրադարանային գրքերով ապահովելու ուղղությամբ։ Առանձին բնակավայրերում, հիմնարկներում և ձեռնարկություններում ստեղծվեցին հասարակական հիմունքներով գործող 15 գրադարան, 12 հազար գրքային ֆոնդով։ Այս գրադարաններն էական օգնություն են ցույց տալիս պետական և արհմիութենական գրադարաններին, գրքերը յուրաքանչյուր ընտանիքի հասցնելու մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը կենսագործելու ուղղությամբ։

Հասարակական հիմունքներով գրադարանների ողջ գործունեությունը խարսխվում է հասարակայնության ստեղծագործական նախաձեռնության, ինքնագործունեության և ակտիվության վրա։

1963 թվականի հուլիսից մինչև դեկտեմբերի վերջը անցկացվեց հասարակական հիմունքներով գրադարանների համամիութենական ստուգատես, որին Հայաստանից մասնակցեցին շուրջ 50 գրադարաններ։ Ստուգատեսի ընթացքում կազմակերպվել էին գրքերի ցուցահանդեսներ, լայնորեն պրոպագանդվեցին ՍՄԿԿ 22-րդ համագումարի որոշումները, ար-

տադրության առաջավորների փորձը, կազմակերպվեցին հանդիպումներ արտադրության առաջավորների, գիտության, կուլտուրայի նշանավոր մարդկանց հետ։ Ստուգատեսի ընթացքում իրենց աշխատանքով հանդես եկան Երևանի № 1 և № 2, Լենինականի հիդրոկայանի, Ալավերդու շրջանի Աթան գյուղի հասարակական կարգով գործող գրադարանները և այլն։ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիան հասարակական հիմունքներով գրադարանների համամիութենական ստուգատեսի ընթացքում աչքի ընկած Լենինականի հիդրոկայանի գրադարանը (վարիչ՝ Ելենա Սահակյան), Երևանի № 1 (վարիչ՝ Վարդան Արթինյան) և Ալավերդու շրջանի Աթան գյուղի (վարիչ՝ Ֆեդյա Հակոբյան) գրադարանները պարգևատրվեցին «Գերազանց աշխատանքի համար» կրծքանշանով[45]։

Ի պատիվ ՍՄԿԿ 22-րդ համագումարի 1961 թվականին կազմակերպվեց ժողովրդական ինքնագործ թատրոնների հանրապետական ստուգատես, որը դրական նշանակություն ունեցավ ժողովրդական թատրոնների գեղարվեստական որակը բարելավելու գործում։ Ստուգատեսի առաջին խաղաշրջանին մասնակցեցին հանրապետության բոլոր 15 ժողովրդական թատրոնները, որոնցից առավել հաջող 9 թատրոններ մասնակցեցին ստուգատեսի վերջին՝ երկրորդ խաղաշրջանին։

Ստուգատեսը ցույց տվեց, որ Աշտարակի, Հոկտեմբերյանի, Ստեփանավանի, Արթիկի, Սպիտակի, Անիի ժողովրդական թատրոնները վերակառուցելով իրենց աշխատանքը, դարձել են շրջանի բնակչության կոմունիստական դաստիարակության կարևոր օջախներ։ Ժողովրդական թատրոնները զգալի աշխատանք են կատարել ներկայացումների գեղարվեստական որակի բարձրացման և խաղացանկը հարստացնելու ուղղությամբ։ Ստուգատեսի երկրորդ խաղաշրջանին

45 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1964 թ. հունիսի 27-ի որոշումը։

մասնակցած 9 թատրոններից վեցը սովետական թեմատիկայով պիեսներ բեմադրեցին։

Կուլտուրայի մինիստրության կոլեգիան ամփոփելով ստուգատեսն անցկացնող կազմհանձնաժողովի և ժյուրիի առաջարկները, առաջին կարգի դիպլոմով պարգևատրեց Արտաշատի շրջանային կուլտուրայի տան ժողովրդական թատրոնին (թատրոնի ռեժիսյոր Ս. Հովհաննիսյան, նկարիչ Գևորգ Ոսկանյան), Վաղարշ Վաղարշյանի «Օղակում» դրամայի բեմադրության համար։ Երկրորդ կարգի դիպլոմով պարգևատրվեց Հոկտեմբերյանի շրջանային կուլտուրայի տան ժողովրդական թատրոնը (ռեժիսյոր Ռ. Սարգսյան, նկարիչ Ա. Փարվանյան), Ա. Արբուզովի «Իրկուտսկյան պատմություն» պիեսի բեմադրության համար։ Երրորդ կարգի դիպլոմով պարգևատրվեցին՝ Սպիտակի շրջանային կուլտուրայի տան ժողովրդական թատրոնը (ռեժիսյոր Ս. Սահակյան, նկարիչ Ս. Մուրադյան) Ֆ. Կոնի «Բոլոր կանանց ամուսինը» վոդևիլի և Անիի շրջանային կուլտուրայի տան ժողովրդական թատրոնը (ռեժիսյոր Գ. Գեմոյան, նկարիչ Գ. Հեպոյան) Ալ. Դյումայի «Լրտեսի հետքերով» պիեսի բեմադրության համար։

Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության պատվոգրով պարգևատրվեցին Ստեփանավանի շրջանային կուլտուրայի տան ժողովրդական թատրոնը՝ Գ. Բորյանի «Նույն հարկի տակ» պիեսի բեմադրության համար (ռեժիսյոր Ս. Խամբեկյան, նկարիչ Թ. Վարդանյան) և Արթիկի շրջանային կուլտուրայի տան ժողովրդական թատրոնը Մ. Քոչարյանի «Ինչ ցանես այն կհնձես» պիեսի բեմադրության համար (ռեժիսյոր Ս. Զապյան, նկարիչ Ֆ. Դարբինյան)։

Կուլտուրայի տների կուլտուր-լուսավորական աշխատանքների գաղափարական մակարդակը բարձրացնելու և կուլտուրական սպասարկումը օրինակելիորեն կազմակերպելու նպատակով, 1955 թվականի հուլիսի մեկից մինչև դեկտեմբերի մեկը անցկացվեց կուլտուրայի տների հանրապետական ստուգատես։ Դրա նախապատրաստման և անցկացման հարցերը քննության առնվեցին շրջանային ու քաղաքային սովետ-

ների գործկոմների նիստերում և մշակեցին ու իրագործեցին կոնկրետ միջոցներ[46]։ Դրականն այն է, որ ստուգատեսի ընթացքում շատ կուլտուրայի տներ զգալիորեն բարելավեցին իրենց գործունեությունը։ Հանրապետության կուլտուրայի տներին կից գործում էին 124 գեղարվեստական ինքնագործ խմբեր, որոնք հաջողությամբ մասնակցել էին գեղարվեստական ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործության օլիմպիադային։ Ստուգատեսի ընթացքում կազմակերպվեցին 32 խմբակներ։ Իրենց դրական աշխատանքով առանձնապես աչքի ընկան Ստեփանավանի, Ղափանի, Երևանի 26 կոմիսարների անվան շրջանի № 1, Արթիկի, Էջմիածնի, Դիլիջանի, Կիրովականի, Շամշադինի, Արտաշատի կուլտուրայի տները։

Գյուղի կուլտուրան քաղաքի կուլտուրայի մակարդակին հասցնելու գործում մեծ դեր են կատարում գրողները և արվեստի ստեղծագործական կոլեկտիվները։ Սովետահայ գրողները իրենց գեղարվեստական ստեղծագործություններով, կոլտնտեսականների շրջանում ունեցած ելույթներով մեծ աշխատանք են կատարում աշխատավորությանը կոմունիստական ոգով դաստիարակելու գործում։

Ինչպես ամբողջ սովետական, այնպես և սովետահայ գրողների կոմունիստական շինարարությունը պատկերող երկերը վաղուց դարձել են գյուղական ինտելիգենցիայի, աշխատավորական լայն մասսաների սեփականությունը։ Սովետական գրողների դրական հերոսները միշտ օրինակ են ծառայել նաև կոլտնտեսային աշխատավորության համար։ Հայաստանի գրողների միությունը, սովետահայ գրողներն ավելի սերտորեն են կապվում կոլտնտեսային գյուղի հետ։ Նրանց թեմատիկայում ոչ միայն կարևոր տեղ է գրավում սոցիալիստական գյուղի կյանքի առօրյայի գեղարվեստորեն վերհանումը, այլ նաև պարբերաբար հանդիպումները կոլտնտեսային աշխատավորների հետ, նրանց առաջ գրողների հրապարակային ելույթները։ Արդեն լավ սովորություն է դարձել գրողների երկերի քննարկումը գյուղական ակումբներում, ընթերցողների լայն շրջանում, որին մասնակցում են նաև հեղինակները։ Նույն գործն են կատարում նաև երաժիշտները, կերպարվեստագետներն իրենց ստեղծագործություններով, կոլտնտեսականների առջև ունեցած իրենց ելույթներով։

Գնալով ավելի է բարելավվում գյուղական բնակչության գեղարվեստական սպասարկումը։ Տարեցտարի ընդլայնվում են թատերական և երաժշտական կոլեկտիվների ելույթները գյուղական աշխատավորության առաջ։ 1953 թվականին Երևանի Սունդուկյանի անվան թատրոնը ելույթ է ունեցել երկու շրջանում, 1962 թվականին տվել է 87 ներկայացում՝ Հոկտեմբերյանի, Արթիկի, Արտաշատի, Էջմիածնի, Աշտարակի շրջկենտրոններում և գյուղերում։ Եթե Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնը 1953 թվականին ոչ մի ներկայացում չէր տվել գյուղական աշխատավորության համար, 1962 թվականին տվել է 63 ներկայացում՝ Ալավերդու, Հոկտեմբերյանի, Իջևանի, Կրասնոսելսկի, Կալինինոյի, Ստեփանավանի և այլ շրջաններում։ Մայրաքաղաքի թատերական կոլեկտիվները ավելի հաճախ են հանդես գալիս գյուղական աշխատավորության առաջ։

1959—1960 թվականներին քաղաքներում, շրջկենտրոններում և 20 խոշոր գյուղերում կազմակերպվել են ավելի քան 80 կուլտուրայի համալսարան՝ երաժշտության, գրականության, թատերական և կերպարվեստի ֆակուլտետներով, որոնցում ընդգրկվել են մոտ 16 հազար ունկնդիր։ Այդ համալսարաններում դասախոսություններով հանդես են եկել Հայաստանի կուլտուրայի և գիտության, գրականության, արվեստի և այլ բնագավառների ականավոր գործիչներ ու մասնագետներ։ Այդ համալսարանները աշխատավորական լայն մասսաներին հաղորդակից էին դարձնում ժամանակակից գիտության նվաճումներին, նպաստում էին նրա ընդհանուր և մասնագիտա-

[46] Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 14, գ. 150, թ. 19։

կան կրթության մակարդակի բարձրացմանը, զարգացնում գեղարվեստական ճաշակը։

1965 թվականին գործում էին ավելի քան հարյուր ժողովրդական համալսարան, որոնք ունեին կուլտուրայի, մանկավարժական, քիմիայի, գյուղատնտեսության, տնտեսագիտության, առողջապահության, իրավաբանական, արվեստի, գիտա-տեխնիկական բաժիններ։ Այդ համալսարաններում սովորում էին ավելի քան 20 հազար մարդ։ Իրենց առջև դրված խնդիրները հաջողությամբ են լուծում ոչ միայն Երևանի, Լենինականի, Կիրովականի, այլև մի շարք շրջանային կենտրոնների՝ Իջևանի, Մեղրու, Արտաշատի, Ալավերդու, Ախուրյանի ժողովրդական համալսարանները։ Այդ տեղերում դասախոսություններով հանդես էին գալիս ականավոր գիտնականներ, գրականության, արվեստի գործիչներ, բժիշկներ, ինժեներներ, տնտեսագետներ, պատմաբաններ և փիլիսոփաներ։

1964 թվականի հոկտեմբերից մինչև 1965 թվականի ապրիլը հայտարարվեց ժողովրդական համալսարանների համամիութենական ստուգատես, որը խթան հանդիսացավ նրանց հետագա գործունեության համար։ Ստեղծվեց ժողովրդական համալսարանների կոորդինացիոն միացյալ խորհուրդ, որին տրվեց գործունեության ավելի լայն իրավունքներ։ Այդ խորհուրդներում ընդգրկվեցին շահագրգռված կազմակերպությունների ներկայացուցիչները, կազմվեց բոլոր ժողովրդական համալսարանների համար միասնական պլան։ Բարձրացվեց կարդացվող դասախոսությունների որակը, գաղափարական մակարդակը, զգալիորեն պակասեց ունկնդիրների հոսունությունը։

Գյուղական աշխատավորության կյանքում տեղի են ունենում լուրջ որակական փոփոխություններ։ Մի ժամանակ հայ գյուղում չկար անգամ տարրական դպրոց, այժմ այնտեղ գործում է կուլտուրայի համալսարան։ Այդպիսի մի համալսարան կա Արտաշատում։ Համալսարանի առաջին պարապմունքը տեղի ունեցավ 1960 թվականի հոկտեմբերի վերջերին և Կոմիտասի մասին հագեցված դասախոսություն կարդաց արվեստագիտության թեկնածու Սամսոն Գասպարյանը։

Այնուհետև կուլտուրայի համալսարանում ելույթներ ունեցան հայկական թատրոնի ականավոր ներկայացուցիչներ Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը, Դավիթ Մալյանը, Մետաքսյա Սիմոնյանը և ուրիշներ։ Համալսարանում երկու անգամ հյուր է եղել ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը։ Առաջին անգամ ունկնդիրները քննարկեցին նրա «Հետադարձ հայացք» երկհատոր գիրքը, իսկ երկրորդ անգամ մեծանուն դերասանը դասախոսություն կարդաց «Հայ թատերական մտքի պատմությունից» թեմայով։

Համալսարանում ելույթներ են ունեցել գրողներ, գրականագետներ։ Բանաստեղծ Պարույր Սևակը դասախոսություն է կարդացել սովետահայ պոեզիայի նվաճումների մասին, իրենց նոր ստեղծագործություններով հանդես եկան Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Համո Սահյանը, Պարույր Սևակը, Սաղաթել Հարությունյանը։ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ դասախոսություններով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը։

Համալսարանի ուսումնական ծրագրերում մեծ տեղ էին գրավում էքսկուրսիաները։ Մաշտոցի մասին դասախոսությունից հետո ունկնդիրները մեկնեցին էքսկուրսիա Օշական գյուղը։ ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի մասին դասախոսություն լսելուց և կարճամետրաժ կինոնկարը դիտելուց հետո, կազմակերպվեց էքսկուրսիա դեպի մեծ վարպետի արվեստանոցը։

Համալսարանում դասախոսություններ կարդացվեցին Ալ. Սպենդիարյանի, Միքայել Նալբանդյանի, Լև Տոլստոյի, Միխայիլ Շոլոխովի, Գլինկայի և ուրիշների մասին։ 1960 թվականի վերջերին կուսակցության Արտաշատի շրջկոմը ամփոփելով համալսարանի մեկ տարվա արդյունքները, արձանագրել է, որ նա որոշակի աշխատանք է կատարել իր ունկնդիրների գաղափարական մակարդակի բարձրացման, նրանց մեջ

գեղարվեստական ճաշակ պատվաստելու և զարգացնելու ուղղությամբ։ Շրջկոմի բյուրոն բացահայտեց նաև համալսարանի թերությունները և նշեց դրանց վերացման ուղիները։ Վերանայվեց և ուժեղացվեց համալսարանի գիտխորհրդի կազմը։

Կուլտուրայի համալսարանները դարձել էին աշխատավորության գեղարվեստական և գեղագիտական դաստիարակության, նրանց քաղաքական ու կուլտուրական աշխարհայացքի ընդլայնման գործուն ձևը։ Կուլտուրայի համալսարանները ապահովված են ծրագրերով, հրատարակվել է «Օգնություն կուլտուրայի համալսարանին» գիրքը, ինչպես և համալսարանի ունկնդրի գրքույկը։ Աշխատավորության դաստիարակության գործում շնորհալի աշխատանք են կատարում և ուսանելի փորձ են կուտակել Նոր Արեշի, արվեստի աշխատողների տան, Երևանի, Լենինականի, Արտաշատի, Աբթիկի, Ալավերդու, Ստեփանավանի և ուրիշ շրջանային կուլտուրայի տների համալսարանները և Երևանի ռադիո-համալսարանը։ Մտավորականության շատ ներկայացուցիչներ խանդավառությամբ հանդես են գալիս համալսարանի ունկնդիրների առջև գրականության, երաժշտության, նկարչության, թատրոնի, պատմության և մեր կուսակցության քաղաքականության հարցերի մասին։ Դասախոսությունների ընթացքում օգտագործվում են նաև կինոֆիլմերի, կերպարվեստի ու երաժշտական գործերի դիտումները և ունկնդրումները։ Բայց հարկ է նշել, որ դեռևս շատ համալսարաններ անկանոն էին գործում, նրանց աշխատանքներում կային լուրջ թերություններ, գլխավորն այն էր, որ կուլտուրայի շատ համալսարաններ սահմանափակվում էին միայն գրականության և արվեստի հարցերի ուսումնասիրությամբ[47]։

Ղեկավարվելով կուլտուրայի համալսարանների մասին ՍՄԿԿ Կենտկոմի և ՀԿԿ Կենտկոմի որոշումներով կուսակցական, կոմերիտական կազմակերպությունները լայն աշխատանք ձեռնարկեցին համալսարաններում դեռևս եղած թերությունները վերացնելու և նրանց գործունեությունն ուղղվեց աշխատավորության կոմունիստական դաստիարակության, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների, առաջավոր փորձի, կուլտուրայի, գրականության և արվեստի պրոպագանդային։ Բարձրացվեց համալսարանի դասախոսությունների գաղափարական մակարդակը, ընդլայնվեց կուլտուրայի համալսարանների ցանցը, ստեղծվեցին նոր ֆակուլտետներ։ Համալսարանների ունկնդիրների համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ, կինոնկարների ցուցադրումներ, համապատասխան բեմադրությունների քննարկում և այլն։

Այսպիսով, մեր ուսումնասիրության ժամանակահատվածում խոշոր տեղաշարժեր կատարվեցին սովետահայ գյուղի կուլտուրական կյանքում։ Հայկական գյուղը արագությամբ փոխում է իր կերպարանքը, նահապետական խարխլված հյուղակների փոխարեն շարք են մտնում ճարտարապետական բարձր ճաշակով, կոմունալ ու կենցաղային հարմարություններով կառուցված բնակելի շենքեր, դպրոցներ, ակումբներ, կուլտուրայի տներ, հիվանդանոցներ, բուժարաններ և այլն։ Այդ տարիներին զգալիորեն բարելավվեց դպրոցների, կուլտուրական-լուսավորական հիմնարկների գործունեությունը։ Նրանց աշխատանքներն ավելի սերտորեն կապվեցին կոմունիստական շինարարության գործնական խնդիրների հետ։

Քանակապես ու որակապես աճեց գյուղական ինտելիգենցիան, որը դարձավ կուսակցական կազմակերպությունների հենարանը՝ գյուղում քաղաքական և կուլտուրական-մասսայական միջոցառումներ ձեռնարկելու և իրականացնելու գործում։

Բարձրացավ գյուղական հասարակայնության դերը կուլտուրական հարցերի լուծման գործում։ Կուլտուրական շինարարության ծավալմանը ակտիվորեն մասնակցում են գյուղական ակտիվը, հասարակական կազմակերպությունները,

---

47 Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի 1961 թ. հունվարի 4-ի որոշումը։

առաջին հերթին կոմերիտմիությունը։ Գրողների և արվեստի ստեղծագործական միությունները ավելի սերտորեն կապվեցին սովետական գյուղի հետ, անմիջականորեն դարձան կոլտնտեսային աշխատավորության հոգևոր կուլտուրայի կերտողները։ Վերջին 15 տարում Հանրապետությունում մեծ ծավալ ստացավ նոր քաղաքների շինարարությունը, առաջացան նորանոր քաղաքներ, դրանց թիվը հասավ 23-ի, իսկ քաղաքատիպ վայրերինը՝ 27-ի։ Այդ ամենը հնարավորություն տվեցին քաղաքի ձեռք բերած կուլտուրական նվաճումները փոխադրել գյուղ։ Սոցիալիստական քաղաքի շինարարությունը ուղեկցվում է հզոր էլեկտրակայանների կառուցումով, ռադիոյի և հեռուստատեսության կայաններով, արվեստի հիմնարկներով, ուսումնական հաստատություններով, ուժեղանում է տրանսպորտային և հաղորդակցական կապը քաղաքների և գյուղերի միջև։ Այս ամենը դրական ազդեցություն են թողնում գյուղի հասարակական կյանքի զարգացման վրա։ Հայաստանում այժմ չկա մի գյուղ, որը խճուղային և այլ ճանապարհով չկապվի շրջկենտրոնների և քաղաքների հետ, չկրի սոցիալիստական քաղաքի կուլտուրայի բարերար ազդեցությունը։ 1953—1965 թվականներին մեծ ծավալ ստացավ կուլտուրական ապրանքների արտադրությունը, ապրանքներ, որոնք արագությամբ թափանցում են գյուղ և դառնում կոլտնտեսականների սեփականությունը։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մշտական հոգատարություն են հանդես բերում կոլտնտեսային գյուղի ինտելիգենցիայի աճման ու դաստիարակության նկատմամբ, համալրում նրա շարքերը։ Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ու տեխնիկումներում սովորում են գյուղից եկած բազմաթիվ երիտասարդներ, որոնք ավարտելով ուսումը, քաղաքի կուլտուրայի նվաճումները տանում են գյուղ։

Այսպիսով, 1953—1965 թվականներն ընկած ժամանակաշրջանում Հանրապետության գյուղի և քաղաքի միջև ավելի քան ամրապնդվեցին կուլտուրական կապերը։ Գյուղում նոր

թափով ծավալվեց կուլտուր-կենցաղային հիմնարկների շինարարությունը, որը մեծ մասամբ կատարվում է պետության և կոլտնտեսության համատեղ ջանքերով։

Կոլտնտեսային աշխատավորության կենցաղ են թափանցել մարդատար ավտոմեքենաները, սառնարանները, լվացքի, կարի մեքենաները և բազմաթիվ այլ կենցաղային իրեր, դրանով գյուղական բնակչությունը աստիճանաբար հասնում է քաղաքի բնակչության մակարդակին։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի զարգացումն ու ամրապնդումը ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը։ Այդ ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն ծավալեցին նաև գյուղական կուսակցական կազմակերպությունները։

Մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում Հայաստանի կոմունիստական կուսակցության անդամների թիվը 50 հազարից հասավ հարյուր տասը հազարի։ Աճեց գյուղական կուսակցական կազմակերպությունների թիվը։

Գյուղական կուսակցական կազմակերպությունները քանակապես ու որակապես աճեցին հատկապես 1958 թվականից հետո, երբ վերացան ՄՏԿ-ները և նրանց ինժեներատեխնիկական ու մեխանիզատորական կադրերը՝ ագրոնոմները, զոոտեխնիկներն ու անասնաբույժները փոխադրվեցին անմիջապես կոլտնտեսություններ։ Գյուղատնտեսության այս մասնագետների մեծ մասը կոմունիստներ էին։ Դրանով աճեց կոմունիստների թիվը նաև գյուղատնտեսական արտադրության մեջ։ Գյուղական կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ակտիվացան կոմերիտական և հասարակական մյուս կազմակերպությունները։

Կուսակցությունը գլխավորելով բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության տնտեսական ու քաղաքական զարգացումը՝ ավելի քան ամրապնդեց սովետական հասարակության քաղաքական-բարոյական միասնությունը, որը հանդիսացավ մեր օրերում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի կարևոր բովանդակությունը։ Այդ անխախտ

դաշինքը դարձավ հզոր ուժ՝ սովետական ժողովրդի միասնությունը, երկրի քաղաքական, տնտեսական և կուլտուրական վերելքը կազմակերպելու համար։

Հենվելով բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ամրակուռ դաշինքին, կոմունիստական կուսակցությունը մեծագույն հաղթանակներ տարավ կոմունիզմի կառուցման ճանապարհին։ Այժմ հանրապետությունում չկա մի կոլտնտեսություն, որը չունենա իր կուսակցական կազմակերպությունը։ Աշխուժացավ կուսակցական աշխատանքը քաղաքում և գյուղում։ Ուժեղացավ քաղաքական պրոպագանդան, մասսաների կոմունիստական դաստիարակության գործը, ակտիվացավ սովետական հասարակայնությունը։ Այդ ժամանակաշրջանում քանակապես և որակապես աճեց նաև գյուղական ինտելիգենցիան, որը կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ակտիվացրեց իր գործունեությունը գյուղական բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման գործում։ Աճեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ստեղծագործական ակտիվությունը։ Սոցիալիստական մրցության նոր ձևերը քաղաքից փոխադրվեցին գյուղ։ Այժմ շատ կոլտնտեսություններում ծավալվում է կոմունիստական աշխատանքի վիթխարի շարժումը և պայքարը հանուն հարուստ հեկտարի։ Գյուղում նոր թափ ստացավ կուլտուր-կենցաղային հիմնարկների շինարարությունը։ Այժմ Հայաստանում չկա մի գյուղ, որը չունենա ակումբ, գրադարան, դպրոց, ռադիո, հեռախոս և այլն, լայնորեն ծավալվում է գեղարվեստական ինքնագործունեությունը, որը քաղաքի ստեղծագործական կոլեկտիվների դրական ազդեցության շնորհիվ օրեցօր բարձրացնում է իր որակը, դառնում գյուղական բնակչության հոգևոր կյանքի դաստիարակության հզոր միջոց։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրման ենթակա ժամանակաշրջանում (1953—1965 թթ.) սովետական երկրում պատմական տեղաշարժեր կատարվեցին, էլ ավելի ամրապնդվեց երկու դասակարգերի դաշինքը, որը հանդիսացավ հուսալի, ամուր հենարան ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների զարգացման, կոմունիստական շինարարության խնդիրների լուծման գործում։

Այդ տարիներին կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աննախընթաց թափով զարգացավ մեր հանրապետության էկոնոմիկան՝ ստեղծվեցին արդյունաբերության նոր, ավելի զարգացած ճյուղեր, որոնք զգալի փոփոխություններ մտցրին հանրապետության կյանքում։ Ոչ միայն քանակապես, այլև որակապես աճեց բանվոր դասակարգը։ Արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ ստեղծվեցին Հայաստանի բոլոր շրջաններում և շատ գյուղերում, դրա շնորհիվ աճեցին, զարգացան սոցիալիստական նոր քաղաքներ, ավաններ։ Այժմ հանրապետությունն ունի 23 քաղաք և 27 քաղաքատիպ ավան։ Հայաստանում չկա մի շրջան, որը չունենա արդյունաբերական մի քանի ձեռնարկություն, ուր համախմբված բանվորական կոլեկտիվներն իրենց կազմակերպվածությամբ, աշխատանքային բարձր արտադրողականությամբ, կուլտուրայով, սոցիալիստական ապրելակերպով, քաղաքական բարձր գիտակցականությամբ ներգործում են գյուղերի աշխատավորների վրա, նպաստում կոլտնտեսությունների էկոնոմիկայի վերընթաց զարգացմանը։ Սոցիալիստական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ

գյուղատնտեսությունը ենթարկվեց համակողմանի մեքենայացման։ Արդյունաբերական շատ ձեռնարկությունների կոլեկտիվներ հաջողությամբ կատարում են գյուղատնտեսության պատվերները։ Բանվոր դասակարգն իր շարքերից գյուղ ուղարկեց հազարավոր մեխանիզատորներ։ Խորացնելով ու զարգացնելով իր դաշինքը կոլտնտեսային գյուղացիության հետ, բանվոր դասակարգն ավելի ակտիվորեն նպաստեց գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը և զարգացմանը։ Այդ ժամանակամիջոցում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի բնորոշ կողմերից մեկն այն էր, որ ավելի մեծ չափերով ամրապնդվեցին արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական կապերը, որոնք արտահայտվեցին գյուղատնտեսության տեխնիկական զինման, թեթև և սննդի արդյունաբերությունը հումքով բավարարելու, քաղաքի և գյուղի միջև առևտուրը և ապրանքափոխանակությունը ուժեղացնելու միջոցով։

Կոմպլեքսային մեքենայացումը, ավտոմատացումը, քիմիայի նվաճումների ներդրումները տեղի են ունենում ոչ միայն արդյունաբերության, այլ նաև գյուղատնտեսության մեջ։ Բանվոր դասակարգի օրինակով կոլտնտեսային գյուղացիությունը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը։ Քաղաքի տեխնիկական համակողմանի օգնության շնորհիվ երկրում լայնորեն ծավալվեց գյուղատնտեսության մեքենաների նոր տեսակների ստեղծումը, որը հնարավորություն տվեց մեքենայացնել աշխատատար պրոցեսների զգալի մասը։ Գյուղատնտեսության մեջ կոմպլեքսային մեքենայացման և տեխնիկական առաջադիմության համար պայքարն ավելի վճռական սկսվեց հատկապես ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո։ Կենսագործելով կուսակցության և կառավարության առաջադրանքները, արդյունաբերության ձեռնարկությունների բանվորները, ինժեներները և կոնստրուկտորները սերտ համագործակցված գիտնականների հետ՝ կարճ ժամանակում ստեղծեցին գյուղատնտեսական մեքենաների նոր, կատարելագործված բազմաթիվ տեսակներ, ավտոմատ

սարքավորումներ և այլն, որոնք լայն օգտագործում գտան հողագործության և անասնապահության մեջ։

Մեր ուսումնասիրության ընդգրկած ժամանակաշրջանում, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման հիմնական միջոցներից մեկը այն էր, որ ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ զգալիորեն աճեցին պետական ներդրումները։ Սակայն 1961—1964 թվականներին գյուղատնտեսության մեջ ներդրումները կրճատվեցին։ ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թվականի հոկտեմբերյան պլենումից հետո ուղղվեց այդ սխալը և ավելացան գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները։

Տարեցտարի աճում էր բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ստեղծագործական ակտիվությունը։ Դրա լավագույն արտահայտությունն այն է, որ բանվոր դասակարգը մտնելով սոցիալիստական մրցության, իսկ վերջին տարիներին նրա բարձրագույն ձևի՝ կոմունիստական աշխատանքի վիթխարի շարժման մեջ, պայքարում է գյուղատնտեսությանը տալ ավելի շատ տրակտորներ, մեքենաներ և այլ սարքավորումներ։ Կոլտնտեսային գյուղացիությունը նույնպես մտնելով համաժողովրդական սոցիալիստական մրցության մեջ, պայքարում է ավելացնելու գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, առավելապես օգտագործելու բոլոր ռեզերվները, ինտենսիֆիկացնելու գյուղատնտեսությունը և այլն։

Աշխատավորական երկու դասակարգերի մեջ դաշինքն ամրապնդվում էր նաև գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման շնորհիվ։ Այդ տարիներին Հանրապետության բոլոր կոլտնտեսությունները էլեկտրիֆիկացվեցին, որի շնորհիվ ավելի լայն հնարավորություն ստեղծվեց մեքենայացնելու գյուղատնտեսության աշխատատար շատ պրոցեսներ, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը։

Դրան զուգընթաց լայնորեն ծավալվեց ջրաշինարարությունը, որը հնարավորություն տվեց փոխել Հանրապետության գյուղատնտեսության ուղղությունը, քիչ եկամտաբեր

կուլտուրաները աստիճանաբար դուրս էին մղում ցանքաշրջանառությունից և դրանց փոխարեն ընդարձակվում էին տեխնիկական և բարձր եկամտաբեր կուլտուրաներ։

Հատկապես յոթնամյակի առաջին տարուց սկսած մեծ ծավալ ստացավ միջգյուղական և միջշրջանային ճանապարհաշինարարությունը, որը գյուղը կապում է արդյունաբերական կենտրոնների, կուլտուրական օջախների հետ։ Ինչպես գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիան, այնպես էլ ջրաշինարարությունն ու ճանապարհաշինարարությունն առաջ է մղվում պետության և կոլտնտեսությունների միջոցներով։ Բանվորների և կոլտնտեսականների համատեղ գործունեությունը այս բնագավառներում ևս ավելի քան ամրապնդում է բանվորների և գյուղացիների դաշինքը։ Վերջապես դաշինքի ամրապնդման մյուս կարևոր միջոցառումներից էր բանվորների, կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացումը, որը 1961—1964 թվականներին թերագնահատվել էր, հետին պլանի վրա մղվել։

Այդ ժամանակաշրջանում գյուղատնտեսության և արդյունաբերության վերակառուցման անվան տակ փաստորեն թերագնահատված էին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդող ու խարսխող օղակներից ամենակարևորը՝ աշխատավորների դեպուտատների սովետները, որոնք հեռու էին քաշվել ժողովրդական տնտեսության այդ երկու ճյուղերի համատեղ ղեկավարությունից։ Միևնույն վայրում ստեղծվեցին իրարից անջատ և անկախ՝ արդյունաբերական և գյուղատնտեսական կուսակցական և արտադրական կոմիտեներ ու սովետներ։ Ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի մարտյան պլենումը, այդ արհեստական բաժանումը չէր բխում կյանքի թելադրանքից, այլ հետևանք էր սոցիալիստական շինարարության անցած հարուստ փորձի անտեսման։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում խոշոր ավանդ մտցրին ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան և սեպտեմբերյան

պլենումները, որոնք բացահայտեցին մեր երկրի գյուղատնտեսության և արդյունաբերության ղեկավարման մեջ տեղ գտած թերությունները, նշեցին նրանց վերացման ուղիները։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ծավալելով համաժողովրդական պայքար գյուղատնտեսության նոր վերելքի համար, Հայաստանի բանվոր դասակարգը ավելի ուժեղացրեց օգնությունը կոլտնտեսային գյուղին։ Կուսակցության կենտկոմի մարտյան պլենումից հետո, զգալի բեկում մտցվեց գյուղատնտեսության զարգացման մեջ, ուժեղացավ գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը, գերակատարվեցին տրակտորների, շարժիչների, ավտոմեքենաների, էլեկտրաշարժիչների, հացահատիկային կոմբայնների մտցված մասերի կենտրոնացված վերանորոգման 1965 թվականի պլանները։ Հայաստանի բոլոր շրջաններում ստեղծվեցին գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման մասնագիտացված խոշոր արհեստանոցներ։ Մեծ գործ կատարվեց կոլտնտեսային արտադրության աշխատատար պրոցեսների մեքենայացման ուղղությամբ։ Գերակատարվեցին խոշոր եղջերավոր անասունների ջրամատակարարման, ավտոմխոցների տեղակայման, կերերի մատակարարման և մեքենայական կթի 1965 թվականի պլանները։ Եթե 1964 թվականին Հայաստանի գյուղատնտեսությանը տրվել է 120 հազար տոննա հանքային պարարտանյութ, 1965 թվականին տրվեց 170 հազար տոննա[1]։ Հանրապետության կոլտնտեսություններն ունեն պահանջվող բոլոր քիմիական նյութերը և պայքարում են բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ։ Դա, իհարկե, գիտության խոշոր նվաճումն է։ Գերակատարվեցին ջրաշինարարության ինչպես 1965 թվականի, այնպես էլ յոթնամյա պլանները։

Կենսագործելով ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումի

---

1 «Հայգյուղտնտեխնիկա» հանրապետական միավորման ընթացիկ արխիվ։

որոշումները, հանրապետության գյուղատնտեսությունը գերակատարեց տեխնիկական, բանջարա-բոստանային, հացահատիկային կուլտուրաների և անասնապահական մթերքների արտադրության 1965 թվականի պլանները։ Արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա զարգացման նոր ուղիներ նշեց ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի սեպտեմբերյան պլենումը։

Հայտնի է, որ 1936 թվականին Սովետական Միության երկրորդ սահմանադրությամբ արձանագրվեց մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի փաստը։ «Սոցիալիզմը,— ասված է ՍՄԿԿ ծրագրում,— որի անխուսափելիությունը գիտականորեն կանխագուշակել էին Մարքսը և Էնգելսը, սոցիալիզմը, որի կառուցման պլանը կանխագծել էր Լենինը, Սովետական Միությունում ռեալ իրականություն դարձավ»[2]։

Բայց դա սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը չէր, այդ ժամանակ Սովետական Միությունը սոցիալիստական միակ երկիրն էր, որ շրջապատված էր կապիտալիստական երկրներով և առկա էր կապիտալիստական վտանգը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, որը դարձավ մեր դարաշրջանի հասարակության առաջընթաց զարգացման հիմնական արդյունքը։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծումով վերացավ կապիտալիզմի վերականգնման վտանգը ՍՍՀՄ-ում։ Սովետական Միությունում վերջնականապես հաղթանակեց սոցիալիզմը և թեակոխեց կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանը։

Սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովրդի հեղափոխական-վերափոխիչ գործունեության գլխավոր արդասիքն է։

«ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի պատմական նշանակությունն այն է,— ասված է Հոկտեմբերյան սոցիալիստա-

2 ՍՄԿԿ 22-րդ համագումարի նյութերը, էջ 434։

կան մեծ հեղափոխության հիսունամյակի առթիվ ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի թեզիսներում,— որ մեր կուսակցության ու ժողովրդի փորձով նոր հասարակարգի կառուցման մարքս-լենինյան տեսությունը գտավ իր լայն և անհերքելի հաստատումը։ Սովետական հասարակարգը գործնականորեն ցույց տվեց, որ մարքսիզմ-լենինիզմի գիտական տեսության կենսագործումը լիովին համապատասխանում է բանվորների ու գյուղացիների, բոլոր աշխատավորների արմատական շահերին, որ համակողմանի սոցիալական առաջադիմությունը հնարավոր է հասարակության միայն սոցիալիստական զարգացման ուղիներում, որ միայն սոցիալիզմն է ժողովուրդներին բերում սոցիալական ու ազգային ազատագրություն, իսկական դեմոկրատիա, կայուն խաղաղություն և ազատություն»[3]։

Սոցիալիզմի հաղթանակով շահագործման և ճնշման փոխարեն հաստատվեց աշխատավոր դասակարգերի և ազգերի բարեկամություն, համագործակցություն և փոխօգնություն, ստեղծվեց իսկական ժողովրդապետություն։ Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը ստեղծեց տնտեսական սոցիալ-քաղաքական և հոգևոր նախադրյալներ կոմունիստական հասարակարգի կառուցմանն անցնելու համար։

«Սոցիալիզմը օրինաչափորեն վերաճում է կոմունիստական հասարակարգի,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում։— Կոմունիզմի կառուցման ամուր հիմքն են կազմում սոցիալիզմի այնպիսի նվաճումները, ինչպիսին են հանրային սեփականությունը, արտադրողական հզոր ուժերը, տնտեսության պլանային վարումը և սոցիալական հարաբերությունների զարգացումը, շահագործումից ազատ լինելը, բոլորի համար աշխատանքի պարտադիր լինելը և բոլորի համար աշխատելու հնարավորության ապահովումը, սոցիալիստական դեմոկրատիան, հասարակության սոցիալ-քաղաքական

3 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին. ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի թեզիսները, Երևան, 1967, էջ 36։

ու գաղափարական միասնությունը, գիտության ու կուլտուրայի նվաճումները»[4]։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը ստեղծում է կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան։ Դա սոցիալիզմից կոմունիզմի անցման ժամանակաշրջանն է, որի խնդիրն է՝ զգալիորեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ապահովել նյութական ու հոգևոր բարիքների առատություն, վերացնել քաղաքի և գյուղի, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները, հաստատել գիտական աշխարհայացք և կոմունիստական բարոյականություն։ Ստեղծվում են պայմաններ իրականացնելու կոմունիզմի հիմնական սկզբունքը՝ «Յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների»։

Բանվոր դասակարգը լինելով սովետական հասարակության ամենաառաջավոր, կազմակերպված ուժը, իր ղեկավար դերն իրագործում է նաև կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում։ Այժմ էլ ավելի է բարձրացել նաև հասարակական կազմակերպությունների՝ արհեստակցական միությունների, կոմունիստական երիտասարդական միության, կոոպերացիայի, կոլտնտեսությունների, սպառողական, բնակարանային-շինարարական կոոպերացիայի և կոոպերատիվ մյուս կազմակերպությունների նշանակությունը։ Այդ կազմակերպությունները հանդիսանում են կոմունիստական շինարարության մեջ մասսաների ներգրավման, կոմունիստական դաստիարակության և հասարակական ինքնավարության դպրոցի ձևերից մեկը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդող կարևոր օղակները։

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում խոշոր նշանակություն ունի սովետական մարդկանց կուլտուրական մակարդակի բարձրացումը, կուլտուրական հեղափոխությունը, որը սկսվել է Մեծ Հոկտեմբերից։ Կոմունիստական հասարակարգի կուլտուրան կդառնա մարդկության կուլտուրական զարգացման նոր՝ բարձրագույն աստիճանը։ Կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում էլ ավելի կծաղկեն թատրոնը, մասսայական ինքնագործունեությունը և ժողովրդական ստեղծագործության մյուս ձևերը։

Աշխատավորների նաև մյուս հասարակական միավորումները՝ գիտական, տեխնիկական և գիտա-լուսավորական ընկերությունները, ռացիոնալիզատորների ու գյուտարարների կազմակերպությունները, գրողների, լրագրողների, նկարիչների, երաժիշտների միությունները, կուլտուր-լուսավորական, սպորտային ընկերություններն ավելի բարերար ներգործություն ունեն բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության հոգևոր կյանքի վրա։

Քաղաքը, բանվոր դասակարգը բազմաթիվ թելերով է կապվում գյուղի հետ, գյուղը բարձրացնում զարգացման ավելի բարձր աստիճանի։

Բայց, ինչպես նշված է մեր կուսակցության ծրագրում, սոցիալիստական կարգերի հաղթանակից հետո էլ մարդկանց գիտակցության մեջ և վարքագծում պահպանվում են կապիտալիզմի մնացուկներ, որոնք արգելակում են հասարակության առաջընթաց շարժումը։ Ներկա էտապում գաղափարական աշխատանքն ավելի հզոր գործոն է դարձել։ Բարձրանում է սովետական մարդկանց գիտակցությունն, ավելի լրիվ ու լայնորեն է ծավալվում նրանց ստեղծագործական ակտիվությունը, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, աշխատանքի կոմունիստական ձևերի և մարդկանց միջև նոր հարաբերությունների զարգացման միջև, հետևապես այնքան ավելի արագորեն են լուծվում կոմունիզմի կառուցման խնդիրները։

Հասկանալի է, որ մարդկանց գիտակցությունից կապիտալիզմի մնացուկների վերացումը տեղի է ունենում ոչ միայն քաղաքում, այլ նաև գյուղում, նոր մարդու ձևավորումը նույնպես ընդգրկում է սովետական ամբողջ հասարակությու-

---

[4] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի թեզիսները, Երևան, 1967, էջ 38։

նը։ Կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում ակտիվորեն մասնակցում են բանվոր դասակարգը, գյուղացիությունը և ինտելիգենցիան։ Այդ պայքարում ավելի քան ամրապնդվում է նոր հասարակություն կառուցող դասակարգերի անխախտելի դաշինքը։

Դաշինքի ամրապնդման գլխավոր գործոններից մեկը՝ սովետական ժողովուրդների լենինյան բարեկամության հետագա ամրապնդումն է։ Այդ բարեկամությունը պետք է ամրապնդել ինչպես ազգային հանրապետության ներսում ապրող տարբեր ազգերի միջև, այնպես էլ միութենական հանրապետությունների, սոցիալիստական երկրների աշխատավորության միջև։

* * *

Սովետական Միության կոմունիստական կուսակցության 23-րդ համագումարը կանխանշեց ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակի՝ 1966—1970 թվականների զարգացման հեռանկարները։ Կուսակցությունը հնգամյակի հիմնական խնդիրը համարեց՝ ապահովել մեր հասարակության նշանակալի առաջընթացը կոմունիստական շինարարության ուղիով, էլ ավելի զարգացնել կոմունիզմի նյութա-տեխնիկական, բազան, ամրապնդել երկրի ռազմական հզորությունը։ «Կուսակցությունը,— ասված է համագումարի որոշման մեջ,—հնգամյակի գլխավոր տնտեսական խնդիրն է համարում՝ գիտության ու տեխնիկայի նվաճումների ըստ ամենայնի օգտագործման, ամբողջ հանրային արտադրության ինդուստրիալ զարգացման, նրա արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա ապահովել արդյունաբերության հետագա նշանակալի աճ, գյուղատնտեսության զարգացման արագ ու կայուն տեմպեր և դրա շնորհիվ էապես բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը, ավելի լրիվ բավարարել բոլոր սովետական մարդկանց նյութական ու կուլտուրական պահանջմունքները»[5]։

Հնգամյա պլանով նախատեսվում է մեծացնել ազգային եկամուտը 38—41 տոկոսով, բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտներն ավելացնել 1,3 անգամ։ Համագումարը նախատեսում է գյուղական և քաղաքային բնակչության կենսամակարդակի հետագա մերձեցման միջոցառումներ, հաղթահարելով քաղաքի ու գյուղի սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերությունները, էլ ավելի ամրապնդել բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, ամբողջ սովետական ժողովրդի միասնությունը։

Հնգամյակի տարիներին արդյունաբերությունը կաճի 1,5 անգամ, զգալիորեն կմեծանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման այդ ժամանակաշրջանում նոր զարգացում ու ամրապնդում կապրի եղբայրական երկու դասակարգերի ամուր դաշինքը։ Տնտեսական և սոցիալական խոշոր խնդիրների լուծման շնորհիվ էլ ավելի կամրապնդվեն բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի քաղաքական հիմքն ու նյութական բազան։ Հետագա զարգացում կստանա մեր երկրի ժողովուրդների եղբայրական դաշինքը։ Էկոնոմիկայում տեղի կունենան խորը որակական փոփոխություններ, կկատարելագործվեն սոցիալ-տնտեսական հարաբերությունները և կաճեն արտադրողական ուժերը։ Ավելի կմերձենան արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տեմպերը։

Բանվոր դասակարգի և գյուղացիության մարտական դաշինքը ստեղծվել, ամրապնդվել ու զարգացել է մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա։ Կուսակցությունը ուսուցանում է, որ տեսությունը միշտ պետք է հարթ պրակտիկայի ճանապարհը, լուսավորի մեր առաջընթացը։ Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների կենսագործումը սերտորեն կապված է աշխատավորության ստեղծագործական ուժերի ծաղկման, նոր մարդու դաստիարակության հետ։

5 ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, Ե., 1967, էջ 362։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

Գլուխ առաջին. Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի սոցիալ-քաղաքական հիմքերի ամրապնդումը . . . 19

Մարքսիզմ-լենինիզմը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մասին 19

Դաշինքի սոցիալական հիմքերը 35

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը . . 40

Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը 56

Դաշինքի քաղաքական հիմքերը 66

Գլուխ երկրորդ. Դաշինքի դերը գյուղատնտեսության զարգացման գործում 71

Սեպտեմբերյան պլենումների որոշումներով . . 75

Նյութական շահագրգռվածության բարձրացումը և պետության օգնությունը 90

Քաղաքի շեֆությունը գյուղին 106

Գյուղատնտեսության տեխնիկական զինումը . . 126

Գիտության նվաճումների ներդրումը գյուղատնտեսության մեջ 146

Նոր խնդիրներ 162

Գյուղի օգնությունը քաղաքին 193

Գլուխ երրորդ. Դաշինքի դերը գյուղի կուլտուրական վերելքում 203

Սովետական Հայաստանի ինտելիգենցիան . . . 203

Նորը կուլտուր-լուսավորական հիմնարկներում . . 217

Ժողովրդական ինքնագործունեություն 239

Ռադիոյի և կինոյի ցանցի ընդարձակումը . . . 247

Մամուլը գյուղում 252

Քսաներկուերորդ համագումարից հետո . . . 259

Եզրակացություններ 277

Բենիկ Սարգսի Օհանջանյան
Беник Саркисович Оганджанян

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1953—1965 թթ.)

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր Վ. Մ. Ամիրբեկյան
Հրատ. խմբագիր Ա. Ա. Հովակիմյան
Կազմը՝ Յու. Հ. Առաքելյանի
Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ Լ. Ս. Սարաֆյան

ՎՖ 04580 Հրատ. № 3069, ԽՀԽ 1166, պատվեր 243, տպաքանակ 1000

Հանձնված է արտադրության 11/III 1969 թ., ստորագրված է տպագրության 1/IV 1970 թ., տպագրական 18,13 մամուլ, պայմ. 14,86 մամուլ, հրատ. 12,23 մամուլ, թուղթ № 1, 84×108 1/32; Գինը 1 ռ. 12 կ.:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24